ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկում

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
(ԵՊՄԿ/DCI) - Բելգիա

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՂԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ.

ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

(JUST/2013/JPEN/AG/4581)
Մարտ, 2014 թ. – Փետրվար, 2016 թ.

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝ Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպություն (ԵՊՄԿ) - Բելգիա

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ՝

Լյուդվիգ Բոլցմանի անվան մարդու իրավունքների ինստիտուտ (**Ավստրիա**), Տարտուի համալսարանի սոցիալական հետազոտությունների ինստիտուտ (**Էստոնիա**), Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպություն (**Ֆրանսիա**), Իռլանդիայի քրեաիրավական բարեփոխումների հավատարմագրային հիմնադրամ (**Իռլանդիա**), Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպություն (**Իտալիա**), Լատվիայի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (**Լատվիա**), Կրթական և սոցիալական համայնքների ազգային ընկերակցություն (**Լյուքսեմբուրգ**), Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպություն (**Նիդեռլանդներ**), Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ (**Լեհաստան**), Տիմիշոարայի Արևմտյան համալսարանի CICOP հետազոտական կենտրոն (**Ռումինիա**), «Proyecto Solidario» (**Իսպանիա**):

ԱՍՈՑԱՑՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ՝

Երեխայի իրավունքների կենտրոն (**Սերբիայի Հանրապետություն**), Հովարդի անվան քրեաիրավական բարեփոխումների լիգա (Մեծ Բրիտանիայի **Միացյալ Թագավորություն**), Ընդդեմ խոշտանգումների համաշխարհային կազմակերպություն (**ԸԽՀԿ/OMCT**), Եվրոպայի խորհուրդ (**ԵԽ**):

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ՝

Իլիանա Բելո (Շվեյցարիա), Էնն-Սոֆի Բոնետ (Ֆրանսիա), Բեռնար դե Վոս (Բելգիա), Մալկոլմ Էվանս (Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն), Փոլա Ջեք (Իռլանդիա), Ֆիլիպ Դ. Ջաֆի (Շվեյցարիա), Ուրսուլա Քիլքելի (Իռլանդիա), Թոն Լիֆարդ (Նիդեռլանդներ), Սոնյա Մնեքեն (Բելգիա), Նիքիլ Ռոյ (Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն), Նևևենա Վակովիկ (Սերբիայի Հանրապետություն):

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԵՊՄԿ) ԲԵԼԳԻԱՅԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԹԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Բենուա Վան Կիրսբիլկ (ղեկավար), Սառա Գրանդֆիլս (համակարգող-հետազոտող), Անդրեա Սալսեդո Կախա (ծրագրի ղեկավար), Պիեռ-Իվ Ռոսեթ (հետազոտող), Մարին Բրաուն (հետազոտող), ինչպես նաև Նատաշա Դելահոթ, Իոաննա Գիմնոպուլոու, Ալեխանդրա Յուրիբե Ռեստրեպո, Ջասթին Մինոթ և Իսալին Դեգելդրե (փորձնակներ):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկում

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
(ԵՊՄԿ/DCI) - Բելգիա

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳԻՐԸ

Սույն Գործնական ուղեցույցի հեղինակն է **Սառա Գրանդֆիլը**՝ Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպության (ԵՊՄԿ) նախագահ և Բելգիայի գրասենյակի տնօրեն և **Բենուա Վան Կիրսբիլկի** ղեկավարությամբ: Խմբագրությանն իրենց փորձագիտությամբ նպաստել են ամբողջ Եվրոպայից ներգրավված **14 գործընկերներն ու ասոցացված գործընկերները** և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ***«Երեխաների իրավունքները ճաղերից այն կողմ»*** ծրագրի **11 բարձրակարգ միջազգային փորձագետներից** բաղկացած բազմամասնագիտական թիմը:

ԵՊՄԿ Բելգիայի թիմի անդամները, մասնավորապես **Անդրեա Սալսեդո Կախան և Պիեռ-Իվ Ռոսեթը** ու մեծապես օժանդակել են սույն Ուղեցույցի կյանքի կոչմանը և մշակմանը:
Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպության (ԵՊՄԿ) Բելգիայի գրասենյակն այս ծրագրի գլխավոր գործընկերն է: ԵՊՄԿ-Բելգիայի աշխատանքի նպատակն է պահպանել և պաշտպանել երեխաների իրավունքները Բելգիայում և այլ երկրներում՝ համագործակցելով ողջ աշխարհում 47 գործընկերներից և այլ ասոցացված գործընկերների ցանցից բաղկացած ազգային կառույցների հետ: ԵՊՄԿ-ի կողմից իրականացվող հիմնական գործողություններն են՝ վերապատրաստումներ, կրթություն և իրազեկվման մակարդակի բարձրացում, երեխաների իրավունքների խախտման պարագայում միջոցների ձեռնարկում և պետության կողմից երեխաների հիմնարար իրավունքները հարգելու նկատմամբ վերահսկողության և մշտադիտարկման ապահովում: Միջամտության հիմնական ոլորտներն են՝ անչափահասների արդարադատությունը և երեխաների համար արդարադատության հասանելիությունը, երեխաներին անազատության մեջ պահելը, տեղաշարժի մեջ գտնվող երեխաների իրավունքները, երեխաների՝ մասնակցություն ունենալու և խոսքի ազատության իրավունքները:

Այս Ուղեցույցը ***«Երեխաների իրավունքները ճաղերից այն կողմ»*** **ծրագրի** հիմնական արդյունքն է: Ծրագիրը սկիզբ է առել այն դիտարկումից, թե երեխաներին անազատության մեջ պահելու տարատեսակ վայրեր այցելություն ենթադրող մշտադիտարկման կառուցակարգերը Եվրոպայում չունեն երեխաներին վերաբերող հատուկ Ուղեցույցներ, որոնք կարող են օգտագործվել որպես իրենց մշտադիտարկման այցերի նախապատրաստման, իրականացման և հետագա քայլերի կոնկրետ հղման աղբյուր: Հետևաբար, ծրագրի նպատակն է մշտադիտարկում իրականացնող մասնագետներին ապահովել հատկապես երեխաներին և նրանց անազատության մեջ պահելու վայրերին վերաբերող գործնական և մեթոդաբանական գործիքով: Այս Ուղեցույցը հնարավորինս կիրառական դարձնելու նպատակով ծրագիրը մշակվել է այնպես, որ այն սկսվի զուգահեռաբար 13 ԵՄ պետություններում և Սերբիայում դաշտային ուսումնասիրություններ կատարելով՝ մշտադիտարկման և բողոքարկման առկա կառուցակարգերի աշխատանքի և ձևավորված պրակտիկայի ընդհանուր պատկերը ստանալու համար: Այս ուսումնասիրության արդյունքում հրապարակվել է 14 ազգային զեկույց և մեկ ընդհանուր եվրոպական ամփոփ զեկույց: Հետևաբար, Ուղեցույցը հիմնված է այս ձեռքբերումների և ծրագրի ամբողջ թիմի փորձառության, տարբեր ոլորտների մասնագիտական կարողությունների, խորհրդածությունների, երեք միջազգային սեմինարների ու գործընկերների բազմաթիվ փոխայցերի ժամանակ համատեղ իրականացրած աշխատանքի և ծրագրի ողջ ընթացքում փորձագետների ներդրումների վրա:
Այս ծրագրի բոլոր վերջնարդյունքները զետեղված են կայքում՝

www.childrensrightsbehindbars.eu

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հեղինակները ցանկանում են շնորհակալություն հայտնել բոլոր գործընկերներին, ասոցացված գործընկերներին և ***«Երեխաների իրավունքները ճաղերից այն կողմ»*** ծրագրի փորձագետներին՝ սույն Գործնական ուղեցույցի շուրջ խորհրդածությունների, նախապատրաստման, դիտողություններ անելու և վերանայման գործում իրենց ունեցած չափազանց արժեքավոր ներդրման համար: 14 երկրներում կատարված հետազոտությունները, դրանցից բխած ազգային զեկույցները, դրանք ամփոփող եվրոպական զեկույցը, ինչպես նաև 2014 և 2015 թվականներին Բրյուսելում անցկացված 3 սեմինարներին ամբողջ թիմի մասնակցությունը չափազանց օգտակար և կառուցողական էին այս Ուղեցույցը պատրաստելու առումով: Մենք առանձնակի գնահատում ենք ներգրավված անձանցից յուրաքանչյուրի նվիրվածությունը, ջանքերն ու ճկունությունը:

Մենք շնորհակալություն ենք հայտնում նաև այս ծրագիրը ֆինանսավորող հիմնական կառույցին՝ Եվրոպական միությանը, ինչպես նաև համաֆինանսավորող կառույցներին՝ Եվրոպայի խորհրդին, «Fonds Houtman»-ին, «Loterie Nationale»-ին և «Wallonie-Bruxelles International»-ին, առանց որոնց հնարավոր չէր լինի իրականացնել այս ծրագիրը:

Ավելին, մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել այնպիսի գործընկերոջ, ինչպիսին ԽԿԿ-ն (CPT) է՝ ծրագրին իր կամավոր մասնակցության համար, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այն բոլոր կազմակերպություններին, մշտադիտարկման և բողոքարկման կառուցակարգերի անդամներին, դատավորներին, փաստաբաններին, պաշտոնատար անձանց, երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի ղեկավարներին ու աշխատակիցներին, փորձագետներին, հետազոտողներին և այլ առանցքային դերակատարների, որոնք իրենց աջակցությունն են ցուցաբերել այս ծրագրի շրջանակում իրականացված ուսումնասիրությանն ու աշխատանքներին: Մենք սրտանց շնորհակալություն ենք հայտնում Էյշլինգ Հեֆերնանին, Փոլա Ջեքին և Քլեր Բրիսեթին՝ այս Ուղեցույցի սրբագրման արժեքավոր աշխատանքը կատարելու համար:

Ոչ պակաս կարևորությամբ մենք սրտանց ցանկանում ենք շնորհակալություն հայտնել այն բոլոր երեխաներին ու երիտասարդներին, որոնք համաձայնվեցին հանդես գալ այս ծրագրի շրջանակում և ներկայացնել անազատության մեջ պահվելու և այդ հանգամանքներում իրենց իրավունքները հարգված լինելու իրենց կենսափորձը:

Եվ վերջում, առանձնահատուկ և սրտանց շնորհակալություն ԵՊՄԿ-Բելգիայի ամբողջ թիմին ու փորձնակներին՝ վերջին երկու տարվա ընթացքում իրենց աշխատանքի, նվիրվածության և այս ծրագիրն իրագործելու գործում ունեցած անսահման ներդրման համար: Յուրաքանչյուր ոք տարբեր մակարդակներում իր նպաստն է բերել այս ծրագրին:

ԱՌԱՋԱԲԱՆ

Ավելի քան 25 տարվա ընթացքում ամբողջ Եվրոպայով մեկ ԽԿԿ-ի կալանքի վայրեր կատարած այցելությունների փորձից ելնելով՝ կարող ենք ասել, որ անազատության մեջ գտնվող երեխաները հաճախ վատ վերաբերմունքից տուժելու ավելի մեծ վտանգի են ենթակա քան չափահասները:

Դժբախտաբար, ԽԿԿ-ն չափազանց հաճախ է հանդիպել այնպիսի իրավիճակների, երբ երեխաների հանդեպ վերաբերմունք է դրսևորվել ոստիկանների կամ անազատության մեջ պահելու վայրերի աշխատակիցների կողմից կիրառված «դաստիարակչական» ապտակից մինչև բռունցքով, ոտքով ու ոստիկանական մահակով հարվածներ: Մենք հանդիպել ենք նաև անչափահասների, որոնք բռնության են ենթարկվել այլ բանտարկյալների կողմից, հատկապես ընդհանուր ննջասենյակներում, և անչափահասների, որոնց տեղավորել են չափահաս բանտարկյալների հետ նույն բանտախցում՝ առանց երեխաների առանձնահատուկ կարիքները հաշվի առնելու: Շատ դեպքերում ոստիկաններն անչափահասներին վերաբերվում են որպես չափահաս անձանց, և նրանց տարիքին համապատասխան իրավական պաշտպանությունն իրավապահ մարմինների կողմից գործնականում չի իրականացվում: Ներգաղթի հիմքով անազատության մեջ պահելու վայրերում երեխաները կարող են գտնվել ծանր պայմաններում՝ առանց կրթության կամ մարզական միջոցառումների հասանելիության և առանց նրանց իրավունքները պաշտպանող խնամակալների ներկայության: Հոգեբուժական և սոցիալական պաշտպանության հաստատություններում մենք հանդիպել ենք երկար ժամանակ իրենց մահճակալներին կապված կամ մեկուսարաններում պահվող երեխաների: Նման գործելակերպը բացարձակապես անընդունելի են:
Իր այցելությունների միջոցով ԽԿԿ-ն փորձել է փոխլրացնել միջազգային փաստաթղթերով, մասնավորապես ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա» (1989 թ.) և «Անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոններ» փաստաթղթերով (2008 թ.) սահմանված չափորոշիչները: 1998 թվականին այն սահմանեց մի շարք երաշխիքներ, որոնք պետք է երաշխավորվեին քրեական օրենսդրության շրջանակում իրենց ազատությունից զրկված բոլոր անչափահասների համար: Այս չափորոշիչները թարմացվել և ընդլայնվել են ԽԿԿ-ի 2014 թվականի Ընդհանուր զեկույցում՝ նախանշելով այն երաշխիքները, որոնք պետք է ապահովվեն, և նկարագրելով հաստատության այն տեսակը, որտեղ պետք է նրանք պահվեն, ու այն հատուկ խնամքը, որը լավ վերապատրաստված և նվիրված աշխատակազմը պետք է ապահովի նրանց համար:

Անազատության մեջ պահվող երեխաներին խոշտանգումներից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանելը ենթադրում է հավաքական ջանք: Այն պահանջում է ոչ միայն ազգային ու միջազգային կանխարգելիչ կառուցակարգերի, այլև մարդու իրավունքների հարցերով զբաղվող հաստատությունների՝ մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի պատգամավորների, դատական համակարգի ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության դերակատարների և հետազոտողների ներգրավում:

Հաշվի առնելով վատ վերաբերմունքի կանխարգելման գործում իրենց դերի կարևորությունը՝ մշտադիտարկման գործառույթներ իրականացնող մարմինները դա պետք է անեն պրոֆեսիոնալ կերպով: Սա պահանջում է այցելությունների հստակ մեթոդաբանություն չափորոշիչների իմացություն և երեխաների վրա բացասական ազդեցություն ունեցող խնդիրների մասին պատկերացում, ինչպես նաև երեխաների հետ իրենց կենսափորձի մասին հարցազրույց վարելու համար անհրաժեշտ հմտություններ, նրբանկատություն և իրազեկվածություն:

Հենց սրանում է սույն Ուղեցույցի կարևորությունը: Այն մշակվել է հաշվի առնելով մի շարք ազգային ու միջազգային կառույցների գործնական փորձը և հենվելով այս ոլորտում աշխատող փորձագետների փորձի վրա: Ուղեցույցի նպատակն է աջակցել մշտադիտարկում իրականացնող մարմիններին և հզորացնել նրանց կարողությունները, որպեսզի արդյունավետ կերպով իրականացվեն երեխաներին անազատության մեջ պահելու վայրեր կատարվող այցելությունները, մշակվի կիրառական գործիքներով հագեցած քայլ առ քայլ մոտեցում, որը կուղղորդի, թե ինչպես պետք է կազմակերպվի այցը և որ խնդիրները պետք է ուսումնասիրվեն:
Իմ կարծիքով, այս Ուղեցույցը պետք է դառնա երեխաներին անազատության մեջ պահելու վայրեր մշտադիտարկման արդյունավետ այց կատարելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր կազմակերպության գործիքակազմի մաս:

Միկոլա ԳՆԱՏՈՎՍԿԻ

Խոշտանգումների կանխարգելման

եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳԻՐԸ 4
ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ 5
ԱՌԱՋԱԲԱՆ 6
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 13

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 14
1.1. Առանցքային բառերի ու արտահայտությունների սահմանումներ 16
1.2. Անազատության մեջ գտնվող երեխաները և միջազգային ու եվրոպական իրավական դաշտը 19
1.3. Ո՞ւմ համար է այս Ուղեցույցը 21
1.4. Գործնական ուղեցույցի հիմնավորումը 22
1.5. Գործնական ուղեցույցի նպատակները 23
1.6. Ինչպե՞ս օգտվել այս Ուղեցույցից 24

2. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 25
2.1. Երեխաներին անազատության մեջ պահելու համատեքստը և ձևերը 25
2.2. Անազատության մեջ գտնվող երեխաների խոցելիության համատեքստը 28

3. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ 31
3.1. Մշտադիտարկման իրավահենք մոտեցումը 31
3.2. Երեխաներին անազատության մեջ պահելու մշտադիտարկման առարկան 32
3.3. Արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու համար անհրաժեշտ հիմնարար պահանջները 34
3.4. Մշտադիտարկում իրականացնելու հիմնական սկզբունքները 38
3.5. Մշտադիտարկում իրականացնելու տարբեր կառուցակարգերի ընդհանուր նկարագրություն 41
Ա. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ 41
Բ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ 42
Գ. ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ 43

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

4.1. Մշտադիտարկման ռազմավարության մշակումը.....50

Ա. Երեխաներին անազատության մեջ պահելու ընդհանուր համատեքստը հասկանալը.....50

Բ. Մշտադիտարկում իրականացնելու նպատակների սահմանում 51

Գ. Մշտադիտարկման ծրագրի ընդհանուր ժամանակացույցի սահմանում 52

Դ. Այցելելու նպատակով երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի ընտրություն 52

Ե. Մշտադիտարկման այցերի բնույթի, տևողության և հաճախականության սահմանում.....53

Զ. Մշտադիտարկման թիմի նկարագրությունը 57

Է. Էթիկական ուղենիշերի և երեխաների պաշտպանության քաղաքականության ընդունում.....59

Ը. Այց կատարող այլ մարմինների վերաբերյալ տեղեկատվություն և հաղորդակցում, համագործակցություն նրանց հետ..... 60

4.2. Այցի նախապատրաստումը.....63

Ա. Այցի կոնկրետ նպատակների սահմանում.....63

Բ. Մշտադիտարկում իրականացնող թիմի ձևավորում և նախապատրաստում.....64

Գ. Փաստաթղթերի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքագրում 64

Դ. Նախնական կապերի հաստատում նախքան այցը..... 66

Ե. Այցի ծրագիրը.....67

Զ. Աջակցող փաստաթղթերի նախապատրաստումը 67

Է. Նյութական և նյութատեխնիկական ապահովման կարգավորումներ..... 68

4.3. Այցի իրականացումը 70

Ա. Նախնական հանդիպում հաստատության ղեկավարի հետ 70

Բ. Շենքային և կեցության պայմանների ուսումնասիրություն 72

Գ. Գրանցամատյանների և այլ փաստաթղթերի ուսումնասիրություն.....73

Դ. Հարցազրույցներ երեխաների հետ 75

Ե. Հարցազրույցներ աշխատակիցների հետ 83

Զ. Հարցազրույցներ անազատության մեջ գտնվող երեխաների հետ սերտ կապի մեջ գտնվող արտաքին աշխարհի անձանց հետ 84

Է. Եզրափակիչ հանդիպում հաստատության ղեկավարի հետ. Այցի ամփոփում 84

4.4. Հետևող մշտադիտարկման այցեր / Կատարման ենթակա գործողություններ 86

Ա. Ներքին զեկույցներ 87

Բ. Ներքին վերլուծություն և զեկույց 87

Գ. Արտաքին զեկույցներ.....87

Դ. Առաջարկությունների նախագծի մշակում..... 89

Ե. Զեկույցների տարածում..... 90

Զ. Զեկույցներին և առաջարկություններին հետևող գործողություններ 91

Է. Զեկույցների և առաջարկությունների ազդեցության գնահատում.....92

Ը. Հետևող լրացուցիչ հնարավոր գործողությունների ռազմավարություններ 92

5. ԱՅՑԻ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ 95

5.1. Անազատության մեջ պահելու ընթացակարգերը 96

Ա. Անազատության մեջ պահելու ընթացակարգը և դրա այլընտրանքային միջոցները 96

Բ. Փաստաբանի / օրինական ներկայացուցչի հասանելիությունը.....97

Գ. (Ոստիկանություն) ձերբակալելը, կալանավորելը և այլն 99

Դ. Տեղափոխում, ժամանում և ընդունում 101

Ե. Գրանցումներ..... 102

Զ. Ազատ արձակում և հետխնամք.....103

5.2. Անձնակազմ/ կադրային ապահովում 105

Ա. Անձնակազմի համալրում, վերապատրաստում և վարքագիծ.....105

5.3. Անվտանգություն և երաշխիքներ..... 111

Ա. Խոշտանգում և այլ վատ վերաբերմունք 111

Բ. Մեկուսացում և մենախուց տեղավորել.....112

Գ. Ուժի կիրառում և զսպման կառուցակարգեր 113

Դ. Խուզարկություն.....115

Ե. Երաշխիքային հիմնահարցեր 118

Զ. Բռնություն երեխաների միջև.....119

5.4. Կարգ և կարգապահություն 118

Ա. Կարգապահական ընթացակարգեր և գրանցամատյաններ 118

Բ. Բողոքարկման կառուցակարգեր 121

5.5. Նյութական պայմաններ 124

Բ. Բնակության պայմաններ և գերբնակեցում 125

Գ. Սնունդ և խմելու ջուր 126

Դ. Սանհանգույցներ և հիգիենա 127

Ե. Լուսավորություն և օդափոխություն 128

Զ. Հագուստ և անկողին 129

Է. Անձնական կյանքի իրավունք
(օրագիր, անձնական պարագաներ պահել և այլն) 130

5.6. Սոցիալ-մանկավարժական կանոնակարգում,
սոցիալ-կրթական ռեժիմ և անձնական զարգացում 131

Բ. Մասնակցություն 134

Գ. Կապ արտաքին աշխարհի հետ 135

Դ. Կրթություն և մասնագիտական ուսուցում 137

Ե. Աշխատանք և վարձատրվող գործունեություն 138

Զ. Բացօթյա վարժանք, ազատ ժամանց և
մշակութային գործունեություն 139

Է. Կրոնական դավանանք և պաշտամունք 140

Ը. Բարեկեցություն և խորհրդատվություն 141

Թ. Վերաինտեգրմանը/ազատ արձակմանը
նախապատրաստելուն ուղղված գործողություններ 142

5.7. Առողջապահություն 143

Ա. Բժշկական խնամքի հասանելիություն
(գնահատում, փաստաթղթավորում, տեղեկատվություն) 143

Բ. Բուժանձնակազմ (արտաքին և ներքին) 146

Գ. Վատ վերաբերմունքի վերաբերյալ բժշկական
տեղեկատվության փաստաթղթավորում և հաղորդում 147

Դ. Աղջիկների հատուկ կարիքներ 148

Ե. Հոգեկան առողջության խնդիրներով երեխաներ 150

Զ. Կախյալության խնդիրներով (թմրամիջոցներից,
ալկոհոլից և այլն) երեխաներ 151

Է. Ինքնավնասման կամ ինքնասպանության ռիսկին
ենթակա երեխաներ 152

Ը. Սեռական հարցեր (սեռական կողմնորոշման իրավունք, սեռական առողջություն, վարակիչ հիվանդություններ և այլն) 153

6. ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ 155

6.1. Բողոքարկման կառուցակարգերի նպատակներն ու խնդիրները 156

6.2. Որո՞նք են բողոքարկման համակարգերի հիմնական սկզբունքները 157

Բ. Երեխայի նկատմամբ զգայունություն 157

Գ. Անվտանգություն 158

Դ. Արդյունավետություն 158

6.3. Ո՞ւմ կարող են երեխաները բողոքել 160

7. ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 161

ՀԱՎԵԼՎԱԾ 1: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (պարզեցված տարբերակ) 162

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Անազատության մեջ գտնվող երեխաների հետ մշտադիտարկման ընթացքում անցկացվող հարցազրույցի ընթացակարգեր և էթիկական նկատառումներ 166

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Երեխայի պաշտպանության քաղաքականություն 169

ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՄԻԵԴ – Նախադեպային իրավունք 171

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ («Պեկինյան կանոններ»)
ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ	Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ («Հավանայի կանոններ»)
ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ	Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ («Տոկիոյի կանոններ»)
ԱԻԵԿ	Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոններ
ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ	Անչափահասների իրավախախտ վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշեր («Ռիադյան ուղենիշեր»)
ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ	Բանտարկյալների հետ վարվեցողության վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ («Մանդելայի կանոններ»)
ԵԲԿ	Եվրոպական բանտային կանոններ
ԵԻԿ	ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
ԻՀ	ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով հանձնաժողով
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԿԱՈՒ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի երեխայակենտրոն արդարադատության մասին ուղեցույցներ
ԵՄ	Եվրոպական միություն
ԸՄ թիվ 10	Երեխայի իրավունքների հարցերով հանձնաժողովի՝ Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս երեխաների իրավունքների մասին Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10
ԽԴԿ	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա
ԽԴՀ	ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով հանձնաժողով
ԽԿԵ	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտե
ԽԿԿ	Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե
ԽԴԿԿԱ	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն
ԿԱՄ-եր	Կանխարգելման ազգային մեխանիզմ(ներ)
ԿԲՀՎԿ	Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և կին դատապարտյալների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ
ԿԽՄԿ	Կարմիր խաչի միջազգային կոմիտե
ՀԿ-ներ	Հասարակական կազմակերպություն(ներ)
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԱՀ	Մարդու իրավունքների ազգային հաստատություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
ՍՀՓ	Կալանքի կամ ազատությունից զրկելու ցանկացած տեսակի ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքների համալիր փաթեթ
ՏՀՀ	Տեսահսկման համակարգ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Անազատության մեջ գտնվող երեխաները գտնվում են բռնության, չարաշահման և խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու բարձր ռիսկի տակ: Երեխային նույնիսկ շատ կարճ ժամանակահատվածով անազատության մեջ պահելը կարող է քայքայել երեխայի հոգեբանական ու ֆիզիկական առողջությունը և խաթարել ճանաչողական զարգացումը: Անազատության մեջ գտնվող երեխաների մոտ նկատվում է դեպրեսիայի ու տագնապի բարձր ռիսկ, և նրանց մոտ հաճախ են դրսևորվում հետտրավմատիկ սթրեսային խանգարման ախտանիշեր: Երեխաներին անազատության մեջ պահելու ազդեցության վերաբերյալ զեկույցները վկայում են ինքնասպանության ու ինքնավնասման, հոգեկան խանգարման ու զարգացման հետ կապված խնդիրների բարձր ցուցանիշների մասին:

Անազատության մեջ գտնվող երեխաների բացառիկ խոցելիությունը պահանջում է խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի կանխարգելման առումով ավելի բարձր չափորոշիչներ ու ավելի ընդգրկուն երաշխիքներ: Հատուկ ուշադրության և վերանայված չափորոշիչների կարիք ունեն այնպիսի հատուկ գործելակերպեր ու հիմնահարցեր, ինչպիսիք են խտրազատումը (սեգրեգացիա), անազատության մեջ պահելու վայրերի կազմակերպումն ու կառավարումը, կարգապահական ներգործության միջոցները, վերականգնողական հնարավորությունները, հատուկ որակավորում ունեցող աշխատակազմի ուսուցումը, ընտանեկան աջակցությունն ու այցելությունները, այլընտրանքային միջոցների առկայությունը, համարժեք մշտադիտարկումն ու վերահսկողությունը»:

Հատուկ զեկուցողի զեկույցը խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին, Խուան Ե. Մենդեզ [Juan E. Mendez] A/HRC/28/68/ 5 մարտի, 2015 թ.

Երեխաների կարիքներն ու իրավունքներն առանձնահատուկ են և տարբերվում են չափահասների կարիքներից ու իրավունքներից: Երեխաների վրա անազատության մեջ պահելու համընդհանուր ճանաչում գտած ու բոլորին հայտնի վնասակար ազդեցությունները ենթադրում են, որ այդ միջոցին պետք է դիմել միայն ծայրահեղ դեպքում: Միշտ պետք է առաջնահերթություն տրվի անազատության մեջ պահելուն այլընտրանք հանդիսացող միջոցների կիրառմանը: Երբ անազատության մեջ պահելը կիրառվում է որպես ծայրահեղ միջոց, ապա դա պետք է լինի միայն բացառիկ դեպքերում, բխի երեխայի լավագույն շահից և լինի հնարավորինս կարճ ժամանակահատվածով: Դրա նպատակը պետք է լինի երեխաներին հասարակության մեջ վերաինտեգրելու համար նախապատրաստելը, կրթելը և վերականգնողական աշխատանքներ տանելը: Միջազգային իրավունքում ամրագրում ստացած այս առանցքային սկզբունքները երեխաներին անազատության մեջ պահելու ցանկացած դրսևորման նախապայմաններն են:

Անազատության մեջ գտնվելով՝ երեխաները շարունակում են ունենալ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (ԵԻԿ) շրջանակում նրանց համար սահմանված բոլոր իրավունքները: Սակայն անազատության մեջ պահելու վայրերի պայմաններն ու դրանցում երեխաների հանդեպ դրևորվող վերաբերմունքը ոչ միշտ են համապատասխանում երեխաների առանձնահատուկ կարիքներին ու կոնկրետ իրավունքնե-

րին: Սա վերաբերում է պատշաճ կրթության հասանելիությանը, ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապին, անձնական կյանքի, ֆիզիկական վարժությունների, ժամանցի և հանգստի կարիքներին, առողջության իրավունքին և արդարադատության հասանելիությանը:

Մյուս կողմից, իրենց տարիքով, հասունության մակարդակով և հոգեբանական փխրունությամբ և նրանց բարեկեցության ու զարգացման վրա անազատության մեջ պահելու երկարատև վնասակար ազդեցություններով պայմանավորված՝ երեխաներն անազատության մեջ գտնվող անձանց ամենախոցելի խմբերից մեկն են: Ավելին, անազատության մեջ գտնվող անձին շատ հաճախ ոչ պատշաճ կենսապայմաններում պահելը, որտեղ կեցության, հիգիենայի, առողջապահության և սնուցման պայմանները ոչ միշտ են երաշխավորում հարգանքը մարդկային արժանապատվության հանդեպ, սաստկացնում է խտրականության, չարաշահման ու բռնության նկատմամբ անազատության մեջ գտնվող երեխաների խոցելիությունը:

Այս համատեքստում **էական նշանակություն ունի երեխաների անազատության մեջ պահելու վայրերում պարբերական ու անկախ մշտադիտարկման իրականացումը:** Մշտադիտարկման նպատակն է ապահովել երեխաների հիմնարար իրավունքների նկատմամբ պրոակտիվ հարգանքը՝ նվազեցնելով խոշտանգումների, բռնության, չարաշահման կամ երեխաների իրավունքների ցանկացած այլ խախտման վտանգ **(կանխարգելիչ դեր)**, և ապահովել, որ բոլոր պահանջվող երաշխիքները, այդ թվում՝ բողոքարկման իրավունքը, գործեն արդյունավետ կերպով՝ նրանց իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու նպատակով **(պաշտպանական / քննչական դեր)**:

1.1. Առանցքային բառերի ու արտահայտությունների սահմանումներ

Երեխա

«Երեխա է համարվում տասնութ (18) տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ»: (ԵԻԿ, Հոդված 1)

Սույն Ուղեցույցի նպատակներով մենք օգտագործելու ենք **«երեխա»** եզրույթը, այլ ոչ թե «դեռահաս», «անչափահաս» կամ «պատանի», նույնիսկ եթե 17 տարեկան երիտասարդ անձը անպայմանորեն իրեն չի վերագրում «երեխա» եզրույթը:

Անազատության մեջ պահել

Հավանայի կանոնների Հոդված 11-ով, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության (ԽԴԿԿԱ) Հոդված 4.2-ով և Պատիժների և այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների (ԱԻԵԿ) Կանոն 21.5-ով անազատության մեջ պահելը սահմանվում է որպես ***«Դատական, վարչական կամ այլ մարմնի հրամանով անձին կալանավորելու կամ ձերբակալելու ցանկացած ձև կամ անազատության մեջ պահելու պետական կամ մասնավոր հաստատությունում անձին տեղավորելը, որտեղից այդ անձն իրավունք չունի իր կամքով հեռանալ»***:

Այս սահմանման ընդգրկումը կիրառական գործելակերպի վերածելիս՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտեն (ԽԿԵ) մեկնաբանություն է տարածել՝ նշելով *«որ պետք է հնարավորինս ընդգրկուն մեկնաբանություն տալ՝ առավելագույնի հասցնելու ԿԱՄ-ի (Կանխարգելման ազգային կառուցակարգեր) աշխատանքի կանխարգելիչ ազդեցությունը»:*

«Ցանկացած վայր, որտեղ անձը գտնվում է անազատության մեջ (հեռանալու ազատություն չունենալու իմաստով) կամ որտեղ (...) անձին կարող են զրկել ազատությունից, պետք է լինի ԽԴԿԿԱ-ի ազդեցության շրջանակում, եթե դա վերաբերում է այնպիսի իրավիճակի, երբ պետությունը կամ կիրառում է կամ ակնկալվում է, որ կկիրառի կարգավորող գործառույթ»:[1]

Վայրեր, որտեղ երեխաները կարող են զրկված լինել ազատությունից

Ցանկացած տեսակի պետական կամ մասնավոր՝ քրեակատարողական, ուղղիչ, կրթական, պաշտպանական, սոցիալական, բուժական, բժշկական, վարչական հաստատություն, որտեղից երեխային չի թույլատրվում հեռանալ իր կամքով:

Այս Ուղեցույցի շրջանակներում մենք կօգտագործենք «**անազատություն**» և ոչ թե

1 Տես ԽԴԿԿԱ-ի Հոդված 4-ի շրջանակի վերաբերյալ ԽԿԵ-ի մեկնաբանությունը:

«կալանավորում» եզրույթը՝ այս Ուղեցույցի ընդգրկման շրջանակն ընդլայնելու նպատակով ներառելու համար փակ հաստատությունները, որոնք պարտադիր չէ, որ լինեն բանտանման կամ ենթադրեն ազատազրկում:

Ամբողջ Ուղեցույցում հետևյալ եզրույթները՝ ***«հիմնարկություն, հիմնարկ, կենտրոն և հաստատություն»*** օգտագործվելու են հավասարապես՝ մատնանշելով այն վայրերը, որտեղ երեխաները կարող են զրկված լինել ազատությունից:

Տես Բաժին 2.1., էջ 23

Բացառություններ.
Այն վայրերը, որտեղ երեխայի՝ հաստատությունից հեռանալու իրավունքը չի սահմանափակվում, ընդգրկված չեն այս Ուղեցույցի շրջանակում:

Մշտադիտարկման իրականացման անկախ կառուցակարգեր

Մարմիններ, որոնք անազատության մեջ պահելու հաստատությունների մշտադիտարկում են ձեռնարկում՝ տվյալ վայր այցեր (հայտարարված կամ չհայտարարված) կատարելու միջոցով:

Մշտադիտարկումը ներառում է **այց** հաստատություն, որի արդյունքում կազմվում է այցի մասին բանավոր կամ գրավոր զեկույց, շահագրգիռ մարմիններին և անազատության մեջ գտնվող երեխաների պաշտպանության գործում ազգային ու միջազգային մակարդակում ներգրավված այլ դերակատարներին ուղղված **հանձնարարականների** ձևակերպում, այդ հանձնարարականների կատարմանը **հետևող գործողություններ**:

Ասանազատության մեջ պահելու վայրերում մշտադիտարկման այցերի համար պատասխանատու մարդկանց նկարագրելու համար այս Ուղեցույցում կօգտագործվի **«մշտադիտարկում իրականացնող անձինք»** եզրույթը:

Բացառություններ.

Այս Ուղեցույցի նպատակներով այցերի կամ ստուգայցերի հետևյալ տեսակները արտաքին անկախ մարմնի կողմից մշտադիտարկման իրականացում . չեն համարվում

- **Քաղաքացիական հասարակության կողմից կատարվող ոչ պաշտոնական ուսումնասիրություն**

  Երբ քաղաքացիական հասարակության դերը սահմանափակվում է համայնքի և անազատության մեջ պահելու վայրի միջև կապ ապահովելով, օրինակ, երբ մշակութային, կրոնական կամ կրթական խմբերը կամ անհատներն աշխատում են այդ հաստատությունների ներսում:

- **Կառավարական կառույցների կողմից կատարվող ներքին վարչական ստուգումներ**

  Երբ վարչական մարմինների դերը սահմանափակվում է ազգային չափորոշիչների, վարչական ուղեցույցների ու կանոնակարգերի հետ աշխատակազմի և ընթացակարգերի համապատասխանության հսկողությամբ: Չնայած նրանց դերը շատ կարևոր է հատկապես հաշվետվողականության առումով, այն հազվադեպ է ներառում ավելի լայն մոտեցում, որը կանդրադառնա այն-

պիսի հարցերի, ինչպիսիք են անազատության մեջ գտնվող երեխաների արժանապատվությունն ու հիմնարար իրավունքները: Ներքին ստուգումներն ու արտաքին մշտադիտարկումը պետք է միաժամանակ առկա լինեն և մշակեն հաղորդակցման ուղիներ՝ ստեղծելով անազատության մեջ պահելու վայրերում հսկողության ուժեղ ու փոխլրացնող ցանցային համակարգ:

Տես Բաժին 3.5., էջ 40

Բողոքարկման կառուցակարգեր

Բողոքարկման կառուցակարգերը ներառում են անազատության մեջ գտնվող երեխաների կողմից այս համատեքստում առկա պայմանների, վերաբերմունքի և տրամադրվող խնամքի մասին ներկայացվող խնդրանքների և (կամ) բողոքների վարման ընթացակարգերը/գործընթացները:

Դրանք կարող են հասցեագրվել **ներքին պատկան մարմիններին**, որոնք պատասխանատու են երեխաներին անազատության մեջ պահող հաստատության համար, ինչպես նաև **անկախ արտաքին մարմիններին** (օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին, մարդու իրավունքների ազգային հաստատություններին, մշտադիտարկում իրականացնող անկախ մարմիններին, դատական մարմիններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և այլն):

Այս կառուցակարգերը կարող են լինել **անհատական կամ կոլեկտիվ**, **ոչ ֆորմալ** (օրինակ՝ բանավոր խնդրանք կամ միջնորդություն) կամ **ֆորմալ** (գրավոր եղանակով բողոք ներկայացնելով և ընթացակարգով), **բանավոր** (օրինակ՝ աշխատակազմին ուղղված խնդրանք) կամ **գրավոր** (օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված նամակ):

Տես Բաժին 6., էջ 147

1.2. Անազատության մեջ գտնվող երեխաները և միջազգային ու եվրոպական իրավական դաշտը

Անազատության մեջ գտնվող երեխաների նկատմամբ կիրառելի միջազգային ու տարածաշրջանային չափորոշիչները ներառում են հետևյալ փաստաթղթերը, սակայն չեն սահմանափակվում դրանցով.

Ա. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Իրավական պարտադիր ուժ ունեցող

- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (ԽԴԿ), 1984 թ.
- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (ԵԻԿ), 1989 թ.
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (ԽԴԿԿԱ), 2002 թ.

Նորմատիվային

- Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ («Պեկինյան կանոններ»), 1985 թ.
- Կալանքի կամ ազատությունից զրկելու ցանկացած տեսակի ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքների համալիր փաթեթ (ՍՀԹ), 1988 թ.
- Անչափահասների իրավախախտ վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշեր («Ռիադյան ուղենիշեր»), 1990 թ.
- Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ («Հավանայի կանոններ»), 1990 թ.
- Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ («Տոկիոյի կանոններ»), 1990 թ.
- Երեխայի իրավունքների հարցերով հանձնաժողովի՝ Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս երեխաների իրավունքների մասին Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10 (ԵԻԿ - ԸՄ թիվ 10), 2007 թ.
- Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և կին դատապարտյալների նկատմամբ կիրառվող ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ («Բանգկոկյան կանոններ» կամ ԿԲՀՎԿ), 2010 թ.
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտեի (ԽԿԵ) ուղեցույցները կանխարգելման ազգային կառուցակարգերի վերաբերյալ, 2010 թ.

- Բանտարկյալների հետ վարվեցողության վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ («Մանդելայի կանոններ»), 2015 թ.

Բ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Իրավական ուժ ունեցող

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ), 1950 թ.
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիա, 1987 թ.
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունք

Նորմատիվային

- Եվրոպական բանտային կանոններ (ԵԲԿ), ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից, 2006 թ.
- Պատիժների և այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոններ (ԱԻԵԿ), ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից, 2008 թ.
- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի երեխայակենտրոն արդարադատության մասին ուղեցույցներ (ԵԿԱՈՒ), 2010 թ.
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի ստանդարտների (ԽԿԿ/Տեղ) վերանայված տարբերակ, 2015 թ.

1.3. Ո՞ւմ համար է այս Ուղեցույցը

Սույն գործնական Ուղեցույցը նախատեսված է երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մանդատով, օրենքով կամ առանձնահատուկ համաձայնագրով մշտադիտարկում իրականացնելու կամ դրանք այցելելու **իրավասություն ունեցող մասնագետների լայն շրջանակի** կողմից օգտագործվելու համար: Սա ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- **Մշտադիտարկում իրականացնող միջազգային և տարածաշրջանային մարմինների փորձագետներն ու անդամները,** ինչպես օրինակ՝ ԽԿԵ-ն, ԽԿԿ-ն և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը, ինչպես նաև այնպիսի կառույցներ, ինչպիսիք են ՅՈՒՆԻՍԵՖ-ը, ՄԱՓԳՀ-ն կամ ԿԽՄԿ-ն (հակամարտությունների տարածքների հատուկ դեպքերի համար),
- **Կանխարգելման ազգային կառուցակարգերի (ԿԱԿ) անդամները,** որոնք, որպես այդպիսին, ստեղծվել կամ նշանակվել են ԽԴԿԿԱ-ի շրջանակում,
- **Մշտադիտարկում իրականացնելու համար օրենքով սահմանված այլ մարմիններ,** օրինակ՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունները, Երեխաների հարցերով հանձնակատարները, Մարդու իրավունքների պաշտպանները, և այլն,**Մշտադիտարկում իրականացնող հատուկ մարմինները,** օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը,
- Անչափահասների գործերով մասնագիտացված դատավորները,
- **Քաղաքացիական հասարակության մշտադիտարկում իրականացնող անձինք և հասարակական կազմակերպությունները** (ՀԿ-ներ),
- Ազգային և ԵՄ **խորհրդարանականները**,
- Մի քանի կառույցներից բաղկացած մշտադիտարկում իրականացնող մարմինները,
- **Փաստաբանները:**

Տես Բաժին 3.5., էջ 40

Սույն Ուղեցույցում ներկայացված տեղեկությունները օգտակար կլինեն նաև երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի **ղեկավարության, վարչակազմի և աշխատակիցների** համար՝ իրենց առօրյա աշխատանքները կատարելիս, ներքին ուսումնասիրություններ իրականացնելիս և մշտադիտարկում իրականացնող մարմնի այցի ժամանակ:

Լինելով ԵՄ ծրագրի արդյունք՝ սույն Ուղեցույցն ունի **եվրոպական ընդգրկում**: Այնուամենայնիվ, տարբեր համատեքստերը կամ ազգային առանձնահատկությունները արտացոլելու նպատակով որոշ փոփոխություններ կատարելով՝ մեթոդաբանությունն ու բովանդակությունը կարելի է տեղայնացնել և կրկնօրինակել՝ աշխարհի տարբեր երկրներում երեխաներին անազատության մեջ պահելու կառույցներ այցելություններ կատարելու ժամանակ օգտագործելու համար:

1.4. Գործնական ուղեցույցի հիմնավորումը

Հայտնի է, որ անազատության մեջ պահելու վայրեր կատարվող պարբերական, արտաքին և անկախ մշտադիտարկման այցերը առանցքային գործիք են խոշտանգումները և մարդու իրավունքների այլ խախտումները կանխարգելելու և հիմնարար իրավունքները պաշտպանելու համար: Այդուհանդերձ, փորձը ցույց է տալիս, որ չնայած մի շարք ազգային և (կամ) միջազգային կառուցակարգերի մշտադիտարկման այցեր են իրականացնում նման վայրեր: ***«Երեխաների իրավունքները ճաղերից այն կողմ»*** ծրագրի շրջանակում կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կառուցակարգերը հազվադեպ են կենտրոնանում միայն երեխաների համար նախատեսված հաստատությունների վրա և (կամ) այդ հաստատություններ այցելելիս իրենց մշտադիտարկման քաղաքականության ու մեթոդաբանության մեջ հազվադեպ են ունենում երեխաների իրավունքների վրա կենտրոնացված մոտեցում: Դրանից բացի՝ երեխաների համար նախատեսված փակ հաստատություններ մշտադիտարկման այցեր հաճախ կատարում են այն նույն մարմինները, որոնք այցելում են չափահասներին անազատության մեջ պահելու վայրեր: Նրանք հաճախ չունեն երեխաների խնդիրների, երեխաներին անազատության մեջ պահելու առումով կիրառվող հատուկ կանոնների, չափորոշիչների ու ցուցիչների, և երեխաների հետ հարցազրույց վարելու ժամանակ կիրառվելիք կոնկրետ սկզբունքների ու մեթոդների (հաղորդակցության) վերաբերյալ գիտելիքներ, կարողություններ և պատրաստվածություն: Հաճախ բացակայում են նաև նման վայրերում մշտադիտարկում իրականացնելու համար երեխաների առանձնահատկությունները հաշվի առնող և կիրառական գործիքակազմերը:

Հետևաբար, սույն Ուղեցույցը մշակվել է այնպես, որ անդրադառնա այս բոլոր մտահոգություններին՝ ձևավորի **երեխային առնչվող նրբությունները հաշվի առնող և կանխարգելիչ մոտեցում** պարունակող **կիրառական գործիքակազմ,** հաշվի առնելով այն բոլոր առանձնահատուկ կարիքներն ու կողմերը, որոնք երեխաներին ավելի խոցելի դարձնում անազատության մեջ պահվելու ժամանակ իրենց իրավունքների ցանկացած խախտման նկատմամբ:

1.5. Գործնական ուղեցույցի նպատակները

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ

Այս Ուղեցույցի ընդհանուր նպատակն է բարելավել երեխաներին անազատության մեջ պահելու պայմանները՝ մշտադիտարկում իրականացնող մարմիններին ապահովելով կիրառական գործիքով, որը կնպաստի նրանց կարողությունների կատարելագործմանը, որպեսզի արդյունավետ ու համարժեք ձևով կանխարգելեն անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքների չարաշահման կամ խախտման ցանկացած ռիսկ ու ձև, և ամրապնդեն անազատության մեջ գտնվող երեխաների արժանապատվությունն ու նրանց հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքը:

Բ. ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

- **Շեշտադրել** անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքներին և նրանց անազատության մեջ պահելու վայրերի անկախ մշտադիտարկմանը վերաբերող **միջազգային ու տարածաշրջանային չափորոշիչները,**
- **Բարձրացնել** տարբեր կառուցակարգերի **իրազեկվածության մակարդակը՝** այն կարևոր՝ կանխարգելիչ ու պաշտպանական/քննական դերի մասին, որ նրանք կարող են կատարել երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մշտադիտարկում իրականացնելու ժամանակ,
- **Նախանշել մշտադիտարկման հիմնական սկզբունքներն ու երեխաներին անազատության մեջ պահելու գործնական կողմերը**, որոնց վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը այցեր կատարելիս,
- **Տրամադրել գործնական և մեթոդաբանական կողմնորոշում՝ երեխաներին անազատության մեջ պահելու** վայրեր արդյունավետ մշտադիտարկման այցեր նախապատրաստելու, իրականացնելու և հետագա քայլեր ձեռնարկելու համար,
- **Ընդգծել, թե ինչպես կարող են մշտադիտարկման մասին զեկույցներն ու գործուն առաջարկությունները** կանխել երեխաների իրավունքների չարաշահման ցանկացած ձև և կառուցողական երկխոսության գործընթացի միջոցով հաստատությունների ներսում հանգեցնել փոփոխությունների,
- **Խթանել արդյունավետ հաղորդակցություն ու համագործակցություն** մշտադիտարկում իրականացնող ազգային, տարածաշրջանային և միջազգային մարմինների միջև՝ երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկման առնչությամբ:

1.6. Ինչպե՞ս օգտվել այս Ուղեցույցից

Այս Ուղեցույցը մշակվել է այնպես, որ, կախված երեխայի իրավունքների, երեխաներին անազատության մեջ պահելու, մշտադիտարկման գործընթացի ու մեթոդաբանության ոլորտներում օգտվողների փորձից ու գիտելիքների մակարդակից տրամադրի **տարբեր մակարդակի գործնական խորհուրդներ**:
Այս նպատակով Ուղեցույցի **ԲԱԺԻՆ 2-ը և 3-ը,** որոնք վերաբերում են **երեխաներին անազատության մեջ պահելու համատեքստին և մշտադիտարկման իրականացման կառուցակարգերին**, առավել նկարագրական բնույթ ունեն, ուստի նախատեսված են երեխաներին անազատության մեջ պահելու մշտադիտարկելու հասկացության հետ նոր ծանոթացող օգտագործողների համար:

ԲԱԺԻՆ 4-ը, որը վերաբերում է **մշտադիտարկման իրականացման մեթոդաբանությանը**, ավելի շատ գործնական աշխատանքի ուղղվածություն ունի և նախատեսված է օգտագործողներին մշտադիտարկման գործընթացից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո աջակցելուն՝ երեխաների ու նրանց առանձնահատուկ պահանջների հետ կապված մեթոդները բարելավելու նպատակով: Պայմանական նշանները, մասնավորապես, օգտագործողներին կօգնեն մշտադիտարկման գործընթացի նախապատրաստման, իրականացման ու հետագա գործողությունների առումով նույնականացնել երեխաներին վերաբերող առանձնահատուկ հիմնախնդիրները:

ԲԱԺԻՆ 5-ը ներառում է **երեխաներին անազատության մեջ պահելու առումով կիրառվող առավել կարևոր չափորոշիչները ու երեխաներին վերաբերող ցուցիչները**՝ մանրամասնելով այն հենանիշները, որոնք մշտադիտարկման գործընթացի ընթացքում պետք է օգտագործվեն մշտադիտարկում իրականացնող անձանց կողմից, առանձնացնելով այն մարդկանց, որոնց հետ պետք է հարցազրույց վարել, նշելով այն վայրերը, որոնք պետք է առանձնակի ուշադրությամբ ուսումնասիրել, այն փաստաթղթերն ու գրանցամատյանները, որոնք պետք է ուսումնասիրել, ինչպիսի հարցեր պետք է տալ և որ կոնկրետ ինչ խնդիրների պետք է հատուկ ուշադրություն դարձնել՝ կախված տվյալ հաստատության տեսակից և դրանում անազատության մեջ գտնվող երեխաների տարբեր խմբերից:

ԲԱԺԻՆ 6-ը նվիրված է **բողոքարկման կառուցակարգերին**՝ որպես մշտադիտարկում իրականացնող մարմինների կողմից այցերի ժամանակ ուշադրության արժանի առանձնահատուկ հարցի ՝ երաշխավորելու համար երեխաների՝ լսված լինելու, մասնակցության և բողոքարկելու իրավունքների արդյունավետությունը, հասանելիությունը և գործուն լինելը:

Ուղեցույցի վերջում օգտագործողները կգտնեն **ԵԻԿ-ի պարզեցված տարբերակը (ՀԱՎԵԼՎԱԾ 1)**, օգտակար գործիքներ, այդ թվում՝ քաղաքականությունների և ուղեցույցների օրինակներ **(Էթիկական ուղեցույցներ՝ ՀԱՎԵԼՎԱԾ 2, Երեխաների պաշտպանության քաղաքականություն՝ ՀԱՎԵԼՎԱԾ 3)**, և **ՄԻԵԴ-ի համապատասխան որոշումների** այբբենական **ցանկը (ՀԱՎԵԼՎԱԾ 4)**: Ուղեցույցի վերջին բաժինը **(ԲԱԺԻՆ 7)** վերաբերում է մեր կայքէջին, որտեղ առկա է հղում վերաբերելի **տեղեկություններին, լրացուցիչ ընթերցանության նյութերին և այլ օգտակար նյութերին ու փաստաթղթերին**:

Երեխային վերաբերող առանձնահատուկ հարց

Մեջբերում

Հարց

Կարևոր տեղեկություն

2. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

- ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՀՈՒՄ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ:
- ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՀԵԼ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ:
- Ո՞Վ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՀՈՒՄ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

2.1. Երեխաներին անազատության մեջ պահելու համատեքստը և ձևերը

Բոլոր երեխաներին, առանց տարբերակման, տարբեր պատճառներով կարելի է պահել անազատության մեջ: Ավելին, անազատության մեջ պահելը կարող է ունենալ տարբեր ձևեր և կարող է տեղի ունենալ տարբեր համատեքստերում:

Քրեական արդարադատության համատեքստում երեխաներին անազատության մեջ կարելի է պահել հանցանքի կատարման մեջ կասկածվելու, մեղադրվելու կամ դրա համար դատապարտման հիմքով[2]: Այս երեխաներին կարող են ձերբակալել և ենթարկել կալանքի, նրանց նաև կարող են դատապարտել ազատազրկման հետ կապված պատիժների: Հետևաբար, այս երեխաներին կարող են պահել.

- Ձերբակալված, բերման ենթարկված անձանց պահելու վայրերում, այդ թվում՝ ոստիկանության կամ այլ իրավասու մարմինների մեկուսարաններում, տրանսպորտային միջոցներում,
- Դատարանի խցերում,
- կալանավորվածներին պահելու վայրերում,
- ազատազրկման հետ կապված պատիժների իրականացման վայրերում, այդ թվում՝ ուղղիչ հիմնարկներում:

Երեխաներին անազատության մեջ պահելու երկրորդ կարևոր համատեքստը, վերաբերում է **երեխայի պաշտպանության կամ երեխայի խնամքի համակարգին**: Այս համատեքստում երեխաները կարող են ինչպես պետական ենթակայություն ունեցող, այնպես էլ մասնավոր հաստատություններում անազատության մեջ պահվել պաշտպանության, կրթության նկատառումներով կամ հաշմանդամություն կամ ֆիզիկական կամ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունենալու պատճառով: Այս երեխաներին կարող են պահել.

2 Մի շարք երկրներում, քրեական արդարադատության համատեքստում ազատությունից զրկված երեխաների հետ սերտորեն առնչվում են այն երեխաները, որոնք (ենթադրաբար) կատարել են կարգավիճակային՝ ստատուսային իրավախախտումներ, այն է՝ արարքներ, որոնք հանցավոր չեն դիտվում չափահասների կողմից կատարվելու պարագայում, սակայն այդպիսին են հանդիսանում երեխաների կողմից դրսևորվելիս, ինչպես օրինակ՝ փողոցում ապրելը, մուրացկանությամբ զբաղվելը, դասերից փախչելը [truancy], և այլն, կամ այն երեխաները, որոնք ունեն թմրամիջոցների, թունանյութերի, հոգեներգործուն նյութերի կամ ալկոհոլի չարաշահման հետ կապված խնդիրներ: Այս երեխաները կարող են ի վերջո զրկվել ազատությունից վերը նշված հաստատություններից մեկում կամ թմրամոլների վերականգնողական կենտրոնում

- Կրթական հաստատություններում և վերականգնողական կենտրոններում,
- Երեխաների ազատ տեղաշարժը բացառող դպրոցներում,
- Հոգեբուժական հաստատությունում,
- Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված հաստատություններում,
- Հաստատություններում, որտեղ երեխաներին կարող են տեղավորել կամ հոսպիտալացնել (կամավոր կամ կամքին հակառակ)՝ հանուն նրանց իսկ պաշտպանության,
- Երեխաների խնամքի հաստատություններում[3],
- Թմրամոլների վերականգնողական կենտրոններում,
- Մեկուսարաններում, պատժախցերում (նույնիսկ բաց հաստատություններում), որտեղ երեխաներին կարող են պահել՝ հանուն նրանց պաշտպանության կամ անվտանգության կամ կարգապահական նպատակներով:

Երեխաներին անազատության մեջ պահելու մեկ այլ համատեքստ է **միգրացիան**: Առանց ուղեկցության կամ ընտանիքից առանձնացված երեխաները, ապաստան հայցող երեխաները, միգրանտ երեխաները մեկ այլ երկիր մուտք գործելիս կամ կոնկրետ երկիրը լքելիս կարող են պահվել անազատության մեջ մենակ կամ իրենց ընտանիքի անդամների հետ միասին: Տեղաշարժի մեջ գտնվող այս երեխաներին կարող են պահել.

- Ընդունելու կամ արտաքսելու կենտրոններում,
- Անազատության մեջ պահելու կենտրոններում,
- Հետադարձ չվերթերում,
- Վարչական կարգով անազատության մեջ պահվելու ցանկացած դրսևորման ներքո:

Վարչական կարգով անազատության մեջ պահելը կիրառվում է նաև որպես ընդհանուր եզրույթ՝ վարչակազմի կողմից տարբեր պատճառներով, օրինակ՝ հանրային անվտանգության նկատառումներից ելնելով կիրառված ազատությունից զրկման Շդրսևորումներն ընդգրկելու համար: Այլ ձևերը ներառում են զինվորական կալանքը կամ վարչական իրավախախտումներ կատարելու համար արգելանքի վերցնելը:

Անազատության մեջ պահելու համատեքստերի ու ձևերի այս ոչ սպառիչ ցանկը ներառում է մի շարք վայրեր, որտեղ երեխաները զրկվում են ազատության՝ իրենց հիմնարար իրավունքից: Այնուամենայնիվ, հաստատությունների տարբեր տեսակներն ու իրավիճակները կարող են ինչպես միմյանցից առանձնացված, այնպես էլ մեծապես փոխկապակցված լինել: Օրինակ՝ քրեական արդարադատության համատեքստում հայտնված երեխաները կարող են, ի վերջո, հայտնվել երեխաների պաշտպանության հաստատություններում կամ հակառակը:

Վարչական կարգով արգելանքը կարող է կիրառվել նաև օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ: Երեխաները կարող են նաև մի համատեքստից տեղափոխվել մյուսը: Օրինակ՝ սա կարող է պատահել միգրանտ երեխաների հետ, որոնք հայտնվում են քրեական արդարադատության համակարգում կամ այն երեխաների

3 ՀՀ-ում երեխաների խնամքի հաստատություններ են, մասնավորապես, ընդհանուր, մասնագիտացված, ընտանեկան տիպի մանկատները, գիշերօթիկ խնամքի հաստատությունները, հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները:

հետ, որոնց քրեական արդարադատության համակարգից տեղափոխել են երեխայի պաշտպանության համակարգ:

Ավելին, տարբերություններ կան հատուկ երեխաների համար նախատեսված ու այդպիսին չհանդիսացող հաստատությունների և պետական ու մասնավոր հաստատությունների միջև:

Հավանայի կանոնները սահմանում են, որ ազատությունից զրկումը կարող է որոշվել *«որևէ դատական, վարչական կամ այլ պետական մարմնի կարգադրությամբ»*: Գործնականում անազատության մեջ պահելու վերաբերյալ որոշում կարող են կայացնել.

- Դատարանները կամ (անչափահասների գործերով մասնագիտացված) դատավորները,
- Ոստիկանությունը կամ իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք,
- Դատախազության կառույցները:

2.2. Անազատության մեջ գտնվող երեխաների խոցելիության համատեքստը

Տեղավորման վերը նշված բոլոր ձևերի ընդհանուր հատկանիշն այն է, որ դրանք երեխաներին զրկում են իրենց ազատությունից և որ այնտեղ տեղավորված երեխաներին չի թույլատրվում հեռանալ սեփական կամքով: Ազատությունից զրկելը երեխաներին դնում է **ուժերի անհավասարակշռությունից** առանձնահատուկ կախյալ վիճակում, այսինքն, երեխաները սովորաբար մնում են այնպիսի հաստատություններում, որտեղ, հնարավոր է, բացակայի թափանցիկությունը, և որտեղ նրանց պահում են ամբողջությամբ ռեժիմից ու վարչակազմից կախյալ վիճակում: Սա ինքնին երեխաներին դարձնում է խոցելի:

Անազատության մեջ գտնվող երեխաների տարիքը, հասունության մակարդակը, զարգացման փուլը, գենդերային, էթնիկ պատկանելությունը, հոգեբանական փխրունությունը և տրավմայի հավանական ենթակայությունը, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամությունը, թմրամիջոցների, թունանյութերի, հոգեներգործուն նյութերի կամ ալկոհոլի չարաշահումը, կրթական մակարդակը, վարչական կարգավիճակը և ընտանեկան վիճակը, ավելանալով ուժերի անհավասարակշռության համատեքստին, նրանց բռնության ենթարկվելու ռիսկի առումով դնում են չափահասների ու ազատության մեջ գտնվող իրենց հասակակիցների համեմատ առավել խոցելի իրավիճակում:

Այդ ռիսկերը կարող են բխել **աշխատակազմի անդամներից կամ այլ երեխաներից կամ հենց հաստատությունում կիրառվող ռեժիմից**: Օրինակ՝ հատկապես ռիսկային է ոստիկանների կողմից ձերբակալության գործընթացը. ձերբակալությունը կարող է լինել կամայական, կարող է կիրառվել անհամաչափ ուժ, ինչպես նաև վերբալ բռնություն կամ սպառնալիք, երեխաները հնարավոր է տեղեկացված չլինեն իրենց իրավունքների մասին, ծնողները, խնամակալները, օրինական ներկայացուցիչները կամ իրավական օգնությունն հասանելի չլինի:

Ի խախտումն միջազգային չափորոշիչների, որոնցով սահմանվում է, որ երեխան պետք է առանձնացվի մեծահասակներից, «եթե միայն չի համարվում, որ երեխայի լավագույն շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել» (ԵԻԿ, Հոդված 37(գ)), **երեխաներին մեծահասակներից կամ երեխաներին միմյանցից չառանձնացնելը** նույնպես կարող է վնասակար լինել: Նրանք կարող են ավելի շատ ենթարկվել բռնության, և սա վտանգում է վերականգնվելու և հասարակության մեջ վերաինտեգրվելու նրանց կարողությունը: Օրինակներ. նախնական կալանքի տակ գտնվող երեխաներին պահելը՝ դատապարտված երեխաների հետ, իմիգրացիոն նպատակներով երեխաներին ազատությունից զրկել մեծահասակների հետ նույն վայրերում, աղջիկներին ու կանանց անազատության մեջ պահելը նույն վայրում, կամ տղաներին ու աղջիկներին՝ առանց առանձնացնելու, կամ փոքր ու ավելի մեծ տարիքի երեխաներին միասին պահելու և այլն:

Կարգապահական ներգործության ու անվտանգության միջոցների և պատժիչ մոտեցման անհամաչափ կիրառումը նույնպես կարող է լինել բռնության ու զայրույթի, ուժեղ հոգեբանական խանգարման, տրավմայի ու դեպրեսիայի պատճառ, արդյունքում հանգեցնելով բռնի վարքագծի, ինքնավնասման կամ ինքնասպանության:

Ի խախտումն միջազգային չափորոշիչների, որոնցով հանձնարարվում է, որ երեխաներին չպետք է պահել մենախցերում և որ խափանման ու կարգապահական ներգործության միջոցներն ու միջոցառումները պետք է կիրառվեն համաչափորեն՝ միայն

անվտանգության նկատառումներից ելնելով, մեկուսացումն ու մենախուց տեղավորելը դեռևս հաճախ են օգտագործվում ոչ միայն որպես մյուսների և (կամ) իրենց համար պաշտպանական, այլև որպես կարգապահական ներգործության միջոց:

Երեխաների վրա անազատության մեջ պահելու այլ բացասական ազդեցություններից են **անհատականացված խնամքի, բուժման և (կամ) կրթադաստիարակչական ծրագրերի** բացակայությունը կամ ոչ պատշաճ լինելը, ինչպես նաև **ֆիզիկական ակտիվության, հանգստի, ժամանցի և ընտանիքի ու արտաքին աշխարհի հետ կապի բացառումը** կամ դրանց սահմանափակ հասանելիությունը, ինչը, մի կողմից, խոչընդոտում է վերականգնվելու և համայնքում վերաինտեգրվելու իրականացումը և, մյուս կողմից, դառնում է ապամոտիվացման, անգործության պատճառ և նպաստում է բռնության ու վատ վերաբերմունքի ռիսկի առաջացմանը:

Երեխաների իրավունքների խախտման և նրանց վերաինտեգրմանը խոչընդոտող հավանական աղբյուրներ են երեխային պահելու **շենքային պայմանների անհամապատասխանությունը** երեխայի կարիքներին ու կոնկրետ իրավունքներին **երեխայի տանից ու ընտանիքից՝ շենքի գտնվելու վայրի հեռավորությունը**:

Աշխատակիցների նախնական ու շարունակական համապատասխան վերապատրաստումների բացակայությունը և աշխատանքային դժվար միջավայրը նույնպես կարող են հանգեցնել ոչ պատշաճ վերաբերմունքի ու խնամքի և երեխաների իրավունքների խախտման:

Որոշ երեխաներ իրենց **առանձնահատուկ խոցելի վիճակի** հետևանքով գտնվում են խտրականության և (կամ) չարաշահման ենթարկվելու բարձր ռիսկի տակ և ավելի շատ ուշադրություն են պահանջում, երբ խոսքը վերաբերում է երաշխիքներին ու կանխարգելմանը: Սա վերաբերում է աղջիկ երեխաներին, օտարերկրացի երեխաներին կամ տեղաշարժի մեջ գտնվող երեխաներին, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող երեխաներին, էթնիկ կամ կրոնական փոքրամասնություններին պատկանող երեխաներին և լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր կամ ինտերսեքսուալ երեխաներին:

3. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

«Անկախ և բարձր որակավորում ունեցող մշտադիտարկում իրականացնող անձանց է պետք լիազորել նախապես հայտարարված սուգայցերը կանոնավոր կերպով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ նախապես չհայտարարված սուգայցերը իրականացնելու համար. նրանք պետք է հատուկ ուշադրություն դարձնեն հաստատություններում գտնվող երեխաների հետ գաղտնիության պայմաններում զրույցների վարմանը»:

Երեխայի իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10

3

3.1. Մշտադիտարկման իրավահենք մոտեցումը

ԵԻԿ-ը սահմանում է երեխաներին տրված իրավունքների ընդհանուր շրջանակը, և վերը նշված բոլոր կանոնները, չափորոշիչներն ու սկզբունքները սահմանում են անազատության մեջ պահվելու պարագայում նրանց կոնկրետ իրավունքները՝ հաշվի առնելով, որ ազատության իրավունքից բացի, նրանք ունեն նույն իրավունքները, ինչ ազատության մեջ բնականոն կյանքով ապրող երեխաները: Դրանք են՝ գոյատևելու և զարգանալու իրավունքը, խտրականության չենթարկվելու իրավունքը, մասնակցության իրավունքը և իրենց վրա ազդեցություն ունեցող բոլոր որոշումներում երեխայի լավագույն շահը որպես առաջնային նկատառում հաշվի առնելու իրավունքը: Երեխաների իրավունքները փոխկապակցված են, և դրանց պետք է մոտենալ համակողմանի տեսանկյունից:

Առաջին հերթին, ԵԻԿ-ն ընդգծում է, որ երեխաներին անազատության մեջ պահելը պետք է լինի որպես ծայրահեղ միջոց և որքան հնարավոր է կարճ ժամանակահատվածով, և երեխաներին անազատության մեջ պահելու բացահայտ ու գլխավոր նպատակը պետք է լինի նրանց կրթությանը, վերականգնմանը նպաստելը և հասարակության մեջ վերաինտեգրվելուն նախապատրաստելը:

Մշտադիտարկման իրավահենք մոտեցման **մեկնակետը երեխաների իրավունքների ու կարիքների դիտարկումն է**, ինչից էլ մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է սկսեն իրենց մշտադիտարկման առաջադրանքը՝ մի կողմից՝ վերահսկելու համար այդ իրավունքների արդյունավետ պահպանությունը, պաշտպանությունն ու կենսագործումը, (պաշտպանական/ քննական դեր), մյուս կողմից՝ երաշխավորելու համար դրանց անխախտությունն ու չարաշահումից զերծ մնալը(կանխարգելիչ դեր):

Իրավահենք մոտեցման նպատակն է **երկարաժամկետ հեռանկարում ամրապնդել**

իրավունքը կրողների (երեխաների) կարողությունը՝ իրենց իրավունքները հարգելու նկատմամբ պահանջով հանդես գալու, դրանց խախտման կամ իրենց հանդեպ դրսևորված չարաշահման հետևանքով պատճառված վնասների համար իրավական ու օրինական կերպով և փոխհատուցում և խախտված իրավունքների վերականգնում պահանջելու համար:

Ի հակադրություն դրա՝ միայն կարիքների վրա հիմնված մոտեցումն ուղղված է կարճաժամկետ հեռանկարում նրանց չբավարարված կարիքները հոգալուն ու անհապաղ բավարարում ապահովելուն՝ առանց կարիքի մեջ գտնվող մարդկանց դիրքերը ապագայի կտրվածքով ամրապնդելու:

Այսպիսի մոտեցումը նաև փորձում է **զարգացնել պատասխանատվություն կրողների (պատկան մարմինների) կարողությունը**, որպեսզի հարգեն, պաշտպանեն ու երաշխավորեն երեխայի այս իրավունքները, այլ ոչ թե «պարզապես» բավարարեն նրանց կարիքները: Այն ուղղված է անազատության մեջ պահելու հետ կապված բարդությունները **համակողմանի մոտեցմամբ** հարթելուն՝ հաշվի առնելով անհատների և անազատության մեջ պահելու համար պատասխանատու համակարգերի միջև առկա կապն ընդհանրապես:

Վերջապես, իրավահենք մոտեցումը ջանում է ապահովել **պատկան մարմինների հաշվետվողականությունը:**

3.2. Երեխաներին անազատության մեջ պահելու մշտադիտարկման առարկան

Երեխաներին անազատության մեջ պահելու մշտադիտարկումը ներառում է տեղում կատարվող այցերի միջոցով **երեխաների տարբեր և փոխկապակցված իրավունքների** ուսումնասիրություն, որոնք երեխաների՝ անազատության մեջ գտնվելու ժամանակ պետք է երաշխավորվեն և պաշտպանվեն պատկան մարմինների կողմից՝ ուշադրություն դարձնելով.

ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Անազատության մեջ պահելու վայրին վերաբերող, **կիրառելի բոլոր իրավական ու վարչական միջոցներին ու հրահանգներին** ՝ ուշադրություն դարձնելով երեխաների պաշտպանությանը, երեխաների լավագույն շահի, նրանց կյանքի իրավունքի, ֆիզիկական ու հոգեբանական անձեռնմխելիության, խտրականության չենթարկվելու և մասնակցության իրավունքների երաշխավորմանը:

Եվ ավելի կոնկրետացված, սակայն չսահմանափակվելով.

- Նրանց անազատության մեջ պահելու **կեցության/նյութական պայմաններին**,
- **Խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից**, ինչպես նաև ընդհանրապես բռնությունից **պաշտպանությանը**,
- **Անազատության մեջ պահելու վայրի կանոնակարգին և անազատության մեջ պահելու նպատակի իրագործմանը** (ուղղում, հանցագործությունների կանխում), ինչպես նաև ազատվելուց հետո տրամադրվող օգնության շարունակականությանը,

- Կրթության, միջին մասնագիտական կրթության, աշխատանքի, ֆիզիկական ակտիվության, հանգստի ու ժամանցի հասանելիության,
- **Բուժօգնության/առողջապահական խնամքի** և համապատասխան սոցիալական, հոգեբանական և (կամ) հոգեբուժական աջակցության հասանելիությանը,
- Երեխաներին մեծահասակներից և իրարից **անջատ պահելուն**,
- Հաստատության **աշխատակիցների ու ղեկավարների** աշխատանքի ընդունմանը, ընտրությանը, կազմին, որակավորմանը, պահվածքին, երեխայի հիմնահարցերի վերաբերյալ նախնական ու շարունակական վերապատրաստմանը,
- Ընտանիքի, արտաքին աշխարհի հետ **շփմանը** և **իրավաբանական օգնության և փաստաբանի հասանելիությանը**,
- **Պաշտպանության միջոցներին**, այդ թվում՝ պաշտպանության և օգնություն ստանալու, ինչպես նաև բողոքարկման իրավունքների հասանելիությանը, և արձանագրության կարևորությանը,
- **Երեխաների անվտանգությանը**, այդ թվում՝ աշխատակիցների ու երեխաների և հենց երեխաների միջև փոխհարաբերություններին,
- Աղջիկների և առանձնակի ռիսկի խմբում գտնվող երեխաների այլ խմբերի նկատմամբ կիրառվող **կոնկրետ միջոցներին ու հավասար վերաբերմունքին**:

Երեխաներին վերաբերող ցուցիչների ամբողջական ու մանրամասն ցանկը, որ մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է նկատի ունենան իրենց այցերի կատարման ընթացքում, զետեղված է Բաժին 5-ում, որտեղ հաշվի է առնված միջազգային ու տարածաշրջանային չափորոշիչների ողջ ծավալը: Տեղական համատեքստի կարևորությունը նույնպես պետք է հաշվի առնել՝ համապատասխան չափանիշներ մշակելիս, սակայն տեղական չափանիշները երբեք չպետք է ավելի ցածր լինեն միջազգային չափորոշիչներով սահմանվածներից:

3.3. Արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու համար անհրաժեշտ հիմնարար պահանջները

- ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
- ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՒՅԹ
- ԱՅՑԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ
- ԶԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ
- ՀԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՀԵՏՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերոհիշյալ միջազգային ստանդարտները վերաբերում են այն չափանիշների շարքին, որ մշտադիտարկման իրականացման կառուցակարգերը պետք է կյանքի կոչեն՝ իրենց առաքելությունը գործուն և արդյունավետ ձևով կատարելու, այսինքն, անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքների նկատմամբ հարգանքը երաշխավորելու համար:

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Առաջին և հավանաբար ամենակարևոր հատկանիշը [մշտադիտարկման իրականացման մեխանիզմի] անկախությունը/ ինքնավարությունն է թե՛ այն պատկան մարմնից, որից կախված է (մասնավորապես, մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների, նրանց ընտրության գործընթացի, կազմի, զեկույցների ու առաջարկությունների առումով) և թե՛ այցելության հաստատություններից ու դրանց ղեկավար վարչակազմից:

ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՒՅԹ

Մշտադիտարկման իրականացման մեխանիզմը պետք է ներքին կառույցից տարբեր լինի: Այն պետք է իր վերահսկողության առարկայից անջատ լինի՝ շահերի բախումից կամ կողմնակալության վտանգից խուսափելու համար:

ԱՅՑԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկման այցերը, որպես կանոն, պետք է տեղի ունենան հնարավորինս կանոնավոր կերպով, ինչը չի նշանակում անպայմանորեն հաճախակի, սակայն ենթադրում է պարբերականություն այցերի պարբերականությունը թիմերին հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչել վայրը, ինչպես նաև աշխատակիցներին ու երեխաներին, և օգնում է վստահելի հարաբերություններ հաստատել նրանց հետ, ինչը հիմնարար նշանակություն ունի նրանց երկուսի հետ կառուցողական երկխոսության մեջ մտնելու համար՝ պատշաճ հարգանք ցուցաբերելով նրանց անկախության

և անկողմնակալության նկատմամբ: Երեխաների համար հատկապես դժվար կարող է լինել անծանոթ մեծահասակներին վստահելը, և դա սովորաբար ժամանակ, նրբանկատություն, ճկունություն ու համբերություն է պահանջում՝ մինչև երեխան կզգա, որ կարող է ազատ հաղորդակցվել:

Այցերը շատ ավելի արդյունավետ կերպով կնպաստեն երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի պայմանների ու երեխաների նկատմամբ վերաբերմունքի կայուն բարելավմանը, եթե տեղի ունենան պարբերական ու կանոնավոր կտրվածքով: Ավելին, կանոնավոր մշտադիտարկման այցերը հնարավորություն են տալիս գնահատելու պրակտիկայի էվոլյուցիան (փոփոխությունները և բարելավումները) և նախկինում տրված հանձնարարականների իրականացման աստիճանը:

Ինչևէ, (ազգային կամ ԵՄ) խորհրդարանականների կամ այլ մարմինների կողմից կատարվող եզակի, ոչ ֆորմալ մշտադիտարկման այցերը շարունակում են արդյունավետ լինել, սակայն նրանց գործառույթն ավելի շատ դիտելն ու զեկուցելն է, քան կանխելը:

Տես Բաժին 4.1. / Ե., էջ 51

3

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտադիտարկման իր առաքելությունը լիարժեք և պատշաճ ձևով կատարելու համար մշտադիտարկում իրականացնող թիմը պետք է ունենա հետևյալ կարողությունները.

- Կատարել չհայտարարված այցեր,
- Մուտք ունենալ թե պետության տարածքում և թե հաստատության ցանկացած հատվածում երեխաներին անազատության մեջ պահելու բոլոր վայրեր,
- Ունենալ անազատության մեջ պահելու վայրի պայմանների, երեխաների նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի և, այդ թվում՝ կիրառվող անվտանգության ու կարգապահական ներգործության բոլոր միջոցների մասին տեղեկություններից ու արձանագրություններից օգտվելու հնարավորություն,
- Ազատ ընտրել, թե անազատության մեջ պահելու վայրերից ո՞րն այցելել և ո՞ր երեխաների հետ հարցազրույց վարել,
- Ունենալ աշխատակիցներից յուրաքանչյուրին այցելելու հնարավորություն,
- Անազատության մեջ գտնվող երեխաներից ստանալ չբացված (կոնֆիդենցիալ) նամակներ/հաղորդագրություններ և դրանց առնչությամբ ձեռնարկել հետագա քայլեր,
- Հետամուտ լինել երեխաների իրավունքների չարաշահման կամ խախտման մասին հայտարարություններին (անձամբ կամ ուղարկելով իրավասու մարմիններին),
- Մշակել, տարածել և կյանքի կոչել զեկույցում նշված հետևող գործողությունները, այդ թվում՝ բարելավմանն ուղղված հանձնարարականները:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Յուրաքանչյուր մշտադիտարկման այց պետք է նաև ներառի հարցազրույցներ անազատության մեջ գտնվող երեխաների հետ՝ որպես մասնակցության նրանց իրավունքի արտահայտություն: Այս հարցազրույցները կարող են արժեքավոր տեղեկություններ տալ փակ հաստատության կանոնակարգի մասին, իսկ մշտադիտարկում իրականացնող անձանց կարող են ապահովել զեկույցի համար անհրաժեշտ որակական տվյալներով: Այնուամենայնիվ, երեխաների հետ հարցազրույց վարելն իսկապես նուրբ գործ է և մի գործընթաց, որի համար անհրաժեշտ է երեխաների հետ հաղորդակցման հատուկ վերապատրաստում կամ փորձ, պատշաճ պատրաստվածություն, համարժեք իրականացում, և պետք է կիրառվի նրբանկատ ու ճկուն ձևով: Մշտադիտարկում իրականացնող անձինք կարող են երեխաների հետ հարցազրույց վարելիս բախվել խնդրահարույց էթիկական խնդիրների հետ: Նրանք պետք է միշտ օգտվեն էթիկական Ուղեցույցներից *Տես Բաժին 4.1. / Է., էջ 56 և Հավելված 2, էջ 158,* անազատության մեջ գտնվող երեխաների հետ հարցազրույց վարելիս պահպանման ենթակա բոլոր սկզբունքների վերաբերյալ տեղեկատվության. *Տես Բաժին 3.3., էջ 32*, հարցազրույց վարելու եղանակի և տարածված խնդիրներին արձագանքելու առանձնահատուկ մեթոդաբանության համար *Տես Բաժին 4.3. / Դ., էջ 73*:

Ամեն դեպքում, երեխաների հետ հարցազրույցները միշտ պետք է վարել՝ հիմնվելով կամավորության ու գաղտնիության սկզբունքի վրա և կիրառելով երեխային առնչվող նրբությունները հաշվի առնող մոտեցում, երեխայի ընտրությամբ՝ երրորդ անձի ներկայությամբ կամ առանց նրա *Տես Բաժին 3.3., էջ 32*: Երեխաներին պետք է տալ մշտադիտարկման գործընթացի արդյունքների մասին տեղեկանալու իրավունք:

ԶԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Այցերի ընթացքում հավաքած փաստերի մասին զեկույցները պետք է ներկայացնել ճիշտ[4], ժամանակին և ճիշտ մարդկանց:

Զեկույցները պետք է ներառեն այն բոլոր կողմերն ու հարցերը, որոնք արծարծվել ու բացահայտվել են այցերի ընթացքում: Եթե նախորդ այցից ի վեր նկատվել են բարելավումներ, ապա դրանց մասին պետք է հատուկ նշել, և յուրաքանչյուր լավ գործելակերպի մասին, որը կարող է ոգևորիչ լինել, նույնպես պետք է նշել: Մտահոգություններն ու խնդիրները պետք է քննարկել հաստատությունների ղեկավարների հետ՝ նախքան զեկույցներն անազատության մեջ պահելու վայրի համար պատասխանատու պատկան մարմիններին հասցեագրելը: Զեկուցման գործընթացը պետք է տեղի ունենա այցն ավարտելուց հետո հնարավորինս շուտ:

Բարելավումներին ուղղված հանձնարարականները, որոնք ներառված են զեկույցում, պետք է գրված լինեն կառուցողական և հասանելի ձևով և պետք է տեղայնացվեն նրանց համար, ում համար նախատեսված են: Դրանք պետք է քննարկել երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի ղեկավարների հետ և հասցեագրվեն այցելած հիմնարկության համար պատասխանատու պատկան մարմնին, հատկապես դրա այն մակարդակին, որն ունի փոփոխություն կատարելու լիազորություն: Հաս-

4 Երբեմն, ելնելով երեխայի շահից, ցանկալի չէ մանրամասն զեկույց ներկայացնել, օրինակ, երբ մեղադրական հայտարարությունները դեռևս ներքին մանրազնին ուսումնասիրության են ենթարկվում, երբ դրանք բավարար չափով հիմնավորված չեն կամ երբ ճնշամիջոցների վտանգ են առաջացնում:

տատությունների ղեկավարությունը պետք է զեկույցը ստանալուց հետո արձագանքի հանձնարարականներին:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ունենան զեկույցներն ու հանձնարարականները հրապարակելու լիազորություն: Նրանք պետք է հարգեն հարցազրույցների գաղտնիության սկզբունքը (ընդհանրապես, և հատկապես երեխաների հետ հարցազրույցների)՝ ճնշամիջոցների ցանկացած վտանգ կանխարգելելու նպատակով:

ՀԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանձնարարականներ մշակելը և հասցեագրելը՝ առանց դրանց կատարման նկատմամբ կանոնավոր հետվերահսկման, ազդեցություն ունենալ չի կարող:: Շատ կարևոր է հետևել հանձնարարականներին և ապահովել դրանց արդյունավետ իրականացումը: Այն, թե ինչ ծավալի բարելավումներ ու փոփոխություններ են կատարվել՝ ի պատասխան տրված հանձնարարականների, պետք է նշել հաջորդող զեկույցներում: Գործընթացի ընթացքում կարելի է նաև կազմակերպել ղեկավարների և (կամ) պատկան մարմինների հետ հաջորդական հանդիպումներ, ինչպես նաև այլ ռազմավարություններ՝ հանձնարարականների արդյունավետ իրականացումը կենսագործելու նպատակով:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երեխաների անազատության մեջ պահելու վայրեր այցեր կատարող մշտադիտարկման իրականացման տարբեր կառուցակարգերը պետք է առնվազն հաղորդակցվեն և, հանուն լավագույն գործելակերպի, համագործակցեն միմյանց և առանցքային դերակատարների հետ:

Նրանք պետք է հայտնեն իրենց ունեցած տեղեկություններն ու բացահայտումները և դրանք հասանելի դարձնեն մշտադիտարկում իրականացնող ազգային, տարածաշրջանային ու միջազգային այլ մարմիններին, առանցքային պատկան մարմիններին (վարչակազմ, նախարարություններ, պատգամավորներ և այլն), քաղաքացիական հասարակության խմբերին և երբեմն, ըստ նպատակահարմարության և հատուկ ուշադրություն դարձնելով բովանդակությանը, լրատվամիջոցներին: Մշտադիտարկում իրականացնող մարմիններին, որոնք մտադիր են այցելել նույն վայրերը, հարկավոր է տեղեկացնել այցերի համապատասխան պլանավորման մասին, և նրանք պետք է իրենց այցերը կատարեն փոխլրացնող կարգով (խուսափելով անհարկի կրկնօրինակումներից), արդեն հավաքագվրած փաստերն ամբողջացնելով իրենց սեփական տեսանկյունից ու պատկերացումներից, ապահովելով կոնկրետ խնդիրների կամ մտահոգությունների նկատմամբ հետվերահսկողությունը: Դրանից բացի, որոշ դեպքերում, նրանք պետք է կատարեն համատեղ այցեր:

Ինչ վերաբերում է մշտադիտարկում իրականացնող մարմիններին, որոնք գործում են գաղտնիության սկզբունքի հիման վրա, երբ բացահայտումներ ու վերջնարդյունքներ փոխանակելն անհնար է, մշտադիտարկում իրականացնող մյուս մարմինները պետք է, նվազագույնը ջանան խուսափել համընկնումներից կամ կրկնօրինակումից:

3.4. Մշտադիտարկում իրականացնելու հիմնական սկզբունքները

- ՉՎՆԱՍԵԼ
- ԻՄԱՆԱԼ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
- ՀԱՐԳԱՆՔ ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ/ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ
- ՎՍՏԱՀԵԼԻՈՒԹՅՈՒՆ
- ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ
- ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
- ՆՐԲԱՆԿԱՏՈՒԹՅՈՒՆ
- ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
- ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մշտադիտարկումը պետք է իրականացնել հիմնարար սկզբունքներին համապատասխան: Այս համատեքստում հիմնարար նշանակություն ունի այն, որ նրանք, ովքեր կատարում են նման այցեր, հասկանան, հիշեն և հարգեն ստորև թվարկված մի շարք հիմնարար էթիկական սկզբունքներ[5]:

Ա. ՉՎՆԱՍԵԼ

Հաճախ երեխաներին անազատության մեջ պահելու վայրի մշտադիտարկում իրականացնելիս շահերի բախում է ծագում տեղեկություններ ձեռք բերելու անհրաժեշտության և անազատության մեջ գտնվող երեխաների անվտանգության միջև, օրինակ՝ ճնշամիջոցների ենթարկվելու վտանգը հարցազրույց տալու հավանական թեկնածուների նկատմամբ, կամ ոչ պատշաճ հարցազրույցի հետևանքով հասցված հոգեբանական ու հուզական վնասը կամ տրավման: Մշտադիտարկման այցեր կատարելիս միշտ գլխավորն ու առաջնահերթը պետք է լինի հաստատությունում երեխաների անվտանգությունը: Այց կատարող մարմնի կողմից ոչ մի գործողություն չպետք է վտանգի այն:

Բ. ԻՄԱՆԱԼ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է լավ տիրապետեն թե՛ իրենց մշտադիտարկում կատարելու մանդատ տվող, և թե՛ այցելվող հաստատություններում անհրաժեշտ վերաբերմունքն ու պայմանները սահմանող միջազգային, տարածաշրջանային ու ազգային չափորոշիչներին:

5 Այս սկզբունքների համար ոգեշնչման աղբյուր են եղել գլխավորապես մոնիտորինգի 18 հիմնական սկզբունքները, որոնք սահմանված են ՄԻԳՀԳ-ի *«Մարդու իրավունքների մշտադիտարկման մասին ուսումնական ձեռնարկ»-ի* Գլուխ V-ում (2001 թ.), Մասնագիտական ուսումնական շարք թիվ 7, ՄԱԿ: Այս սկզբունքներն ավելի մանրամասն տես ԽԿԱ-ի (APT) *«Կալանավայրերի մշտադիտարկում. Գործնական ուղեցույց»-ում*, (2004 թ.), էջ 27-32:

Գ. ՀԱՐԳԱՆՔ ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ/ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Այց կատարող մարմնի դերն է ստուգել անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքների պահպանումը պատկան մարմինների/անձանց կողմից, իսկ սրան լավագույնս կարելի է հասնել փոխադարձ հարգանքի նվազագույն հիմք ստեղծելու միջոցով: Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է հարգեն պատկան մարմինների/անձանց գործունեությունը և տարբերակեն հիերարխիկ աստիճաններն ու նրանց պարտականությունները, որպեսզի կարողանան խնդիրներին հասցեագրել ճիշտ մակարդակ:

Փոխադարձ հարգանքի այս դրսևորումը չի նշանակում, որ պատկան մարմինները/անձինք որևէ ազդեցություն ունեն մշտադիտարկում իրականացնող թիմի վրա, և ոչ մի դեպքում այն չպետք է անդրադառնա նրա անկողմնակալության ու անաչառության վրա:

Դ. ՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Վստահությունը վճռորոշ նշանակություն ունի հաջող մշտադիտարկման համար, և մշտադիտարկում իրականացնող անձինք չպետք է տան այնպիսի խոստումներ, որ չեն կարողանալու կատարել: Երեխաների հետ հարցազրույց վարելիս հատկապես կարևոր է ապահովել, որ երեխաներն իմանան այն սահմանների մասին, թե ինչի կարող են հասնել մշտադիտարկում իրականացնող անձինք, և որ տրամադրված ցանկացած տեղեկություն անանուն է ու գաղտնի:

Ե. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է պահպանեն իրենց ստացած տեղեկությունների գաղտնիությունը, քանի որ հակառակ դեպքում դա կարող է լուրջ հետևանքներ ունենալ թե՛ հարցազրույց տված անձի համար և թե՛ մշտադիտարկում իրականացնող անձի վստահելիության առումով: Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկել արձանագրած տեղեկությունները, ինչպիսին հարցազրույց տված անձանց ինքնությունն է, անանուն պահելու համար, օրինակ՝ գաղտնանուններ օգտագործելու միջոցով:

Զ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է գիտակցեն թե՛ իրենց իսկ անվտանգությունը, թե՛ նրանց անվտանգությունն, ում հետ շփման մեջ են մտնում, և թե՛ հաստատության անվտանգությունը՝ որպես ամբողջություն:

Է. ՆՐԲԱՆԿԱՏՈՒԹՅՈՒՆ

Անազատության մեջ գտնվող երեխաների հետ հարցազրույց վարելիս խիստ կարևոր է, որ մշտադիտարկում իրականացնող անձինք նրբանկատ լինեն՝ ուշադրություն դարձնեն երեխաների հավանական տրավմային, հոգեբանական խանգարմանը ու (կամ) փխրունությանը, ինչպես նաև նրան, որ որոշ իրադարձություններ հիշելը երեխաների համար կարող է ունենալ տրավմատիկ ազդեցություն: Նրանք պետք է իմանան երեխաների հետ հաղորդակցման հմտությունների մասին և վերապատրաստված լինեն դրանց կիրառման առումով:

Ը. ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է արձանագրեն իրական փաստեր և կազմեն հիմնարկության մասին օբյեկտիվ է և հույզերից կամ կանխակալ մտքերից զերծ զեկույց:

Թ. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է համոզված լինեն, որ պատկան մարմինները/անձինք գիտեն հաստատությունում մշտադիտարկում իրականացնելու իրենց մեթոդաբանության և լիազորությունների շրջանակի մասին: Մշտադիտարկում իրականացնող անձանց աշխատանքը պետք է հանրայնացվի նրանց գրավոր զեկույցների և լրատվամիջոցներին զգուշավոր կերպով օգտագործելու միջոցով՝ հանրությանն իրենց աշխատանքի մասին տեղեկացնելու և բանավեճեր հրահրելու, քաղաքականություններ մշակելու ու շահերի պաշտպանությանն ուղղված քայլեր սկսելու համար:

3.5. Մշտադիտարկում իրականացնելու տարբեր կառուցակարգերի ընդհանուր նկարագրություն

Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկման գործընթացում կարող են ներգրավված լինել տարբեր կազմակերպություններ կամ մարմիններ: Յուրաքանչյուր կառուցակարգ կարող է տարբեր տեսանկյուն, տեսլական ու գործառնականություն ապահովել, ինչպես նաև կարող են փոխլրացնել միմյանց՝ պայմանով, որ արդյունավետ կերպով հաղորդակցվեն և համագործակցեն:

Գործնականում տեսնում ենք, որ հաճախ մշտադիտարկման իրականացման բազմաթիվ կառուցակարգեր կան, սակայն քչերն են նախատեսված կամ և ոչ մեկը նախատեսված չէ սոսկ երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկման համար, կամ քչերն են կիրառում կամ ոչ մեկն էլ չի կիրառում երեխայի իրավունքների վրա հիմնված մոտեցում կամ քչերն ունեն կամ էլ ոչ մեկը չունի հատուկ բաժին կամ գործակալ, որին հատուկ հանձնարարված է այդ աշխատանքը:

Սակայն անազատության մեջ գտնվող երեխաների հատուկ կարգավիճակը պահանջում է նման իրողության մեջ հայտնված երեխաների առանձնահատուկ կարիքները, հատուկ խոցելիությունը և իրավունքների հնարավոր խախտումների վտանգավորությունը հաշվի առնող կամ մշտադիտարկում իրականացնող ինքնուրույն ու առանձնահատուկ կառույցի կամ գոյություն ունեցող կառույցի ներսում հատուկ կարգավորումների առկայություն:

Ա. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Ձևավորվել են անազատության մեջ պահելու բոլոր վայրերը, այդ թվում՝ այն վայրերը, որտեղ կարող են լինել երեխաներ, այցելելու և իրենց բացահայտումների մասին կառավարություններին զեկուցելու մանդատով օժտված միջազգային կառույցներ:

Միավորված ազգերի կազմակերպություն. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտե (ԽԿԵ)

ԽԴԿԿԱ-ի շրջանակներում ձևավորված ԽԿԵ-ն, կարող է, առանց շահագրգիռ Կողմ պետության նախնական լիազորության և առանց իր այցերի ծրագրի մասին նախնական տեղեկատվության տրամադրման կանոնավոր այցեր կատարել այն բոլոր վայրեր, որտեղ մարդիկ պահվում են անազատության մեջ:

Այնուհետև, ԽԿԵ-ն գաղտնի զեկույց, այդ թվում՝ հանձնարարականներ է ներկայացնում շահագրգիռ Կողմ պետությանը և, անհրաժեշտության դեպքում, ԿԱՄ-ին: Գաղտնի զեկույցը կարող է հրապարակվել պետության նախաձեռնությամբ: Հանձնարարականները պետության համար պարտադիր բնույթ չունեն, սակայն պետությունները պետք է ուսումնասիրեն դրանք և երկխոսության մեջ մտնեն դրանց իրականացման առնչությամբ: Եթե Կողմ պետությունը հրաժարվում է համագործակցել, Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով հանձնաժողովը կարող է հանդես գալ հանրային հայտարարությամբ կամ հրապարակել զեկույցը՝ ԽԿԵ-ի առաջարկով:

Ինչ վերաբերում է 2006 թվականից ուժի մեջ մտած ԽԴԿԿԱ-ին, ապա այն վավերացրած Կողմ պետությունները նույնպես պետք է ստեղծեն իրենց Կանխարգելման ազգային կառուցակարգերը (ԿԱՄ)՝ անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկումը նախաձեռնողական (պրոակտիվ) կանխարգելիչ մանդատով իրականացնելու համար:

Տես Բաժին 3.5., էջ 41

ԽԿԵ-ն նաև ունի Կողմ պետություններին ԿԱՄ-եր ստեղծելու մասին խորհրդատվություն տալու և ԽԴԿԿԱ-ի շրջանակում իրենց պարտավորությունները կատարելու ընթացքում նրանց օժանդակություն ու ուսուցում տրամադրելու մանդատ:

Ժնևյան կոնվենցիաներ. Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ)

Ժնևյան կոնվենցիաները ԿԽՄԿ-ին օժտում են և՛ պատերազմի գերիներին, և՛ հակամարտության ժամանակ բռնված քաղաքացիական անձանց, այդ թվում՝ երեխաներին, այցելելու մանդատով: Նրանք այցելում են նաև բռնության այլ իրավիճակներում անազատության մեջ գտնվող մարդկանց: Ըստ Կոնվենցիաների՝ ԿԽՄԿ-ն ունի այցելության վայրերն իր ցանկությամբ ընտրելու լիակատար ազատություն և պետք է կարողանա անազատության մեջ գտնողների հետ հարցազրույց վարել առանց վկաների: Նման այցերի տևողությունն ու հաճախականությունը չի կարող սահմանափակվել: Այնուամենայնիվ, այցերը, բացառիկ դեպքերում ու որպես ժամանակավոր միջոց, կարող են չթույլատրվել՝ ռազմական խիստ անհրաժեշտության նկատառումներից ելնելով: Նրանց այցի նպատակն է ապահովել անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ մարդկային վերաբերմունքը, կանխել բռնությունը և բարելավել պայմանները:

Բ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Կան նաև Եվրոպայի խորհրդի կողմից ստեղծված տարածաշրջանային կառույցներ, որոնք ունեն անազատության մեջ պահելու վայրեր այցելելու և իրենց բացահայտումների մասին կառավարություններին զեկուցելու մանդատ:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ)

ԽԿԿ-ն մշտադիտարկում իրականացնող առաջին միջազգային կառույցն է, որը ստեղծվել է հատկապես կանխարգելիչ այցեր կատարելու համար: Կողմ պետությունների կողմից կոնվենցիան վավերացնելուն պես ԽԿԿ-ն ունեցել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների շրջանակում չափահասներին կամ երեխաներին անազատության մեջ պահելու ցանկացած տեսակի վայրերը ցանկացած պահի անսահմանափակ քանակով անարգել մուտքի իրավունք:

Կոմիտեն կարող է հարցազրույց վարել անազատության մեջ գտնվող ցանկացած անձի կամ իրենց տեղեկատվություն տրամադրելու ունակ այլ անձանց հետ: ԽԿԿ-ն կարող է կատարել պարբերական և ըստ անհրաժեշտության (ad hoc) (այսինքն, «հանգամանքների թելադրանքով») այցեր:

Յուրաքանչյուր այցից հետո համապատասխան Պետությանն ուղարկվում է ԽԿԿ-ի բացահայտումներն ու առաջարկությունները պարունակող զեկույցը, որին տվյալ պետությունը պետք է տա մանրամասն պատասխան: Այցերը հիմնված են ԽԿԿ-ի չափորոշիչների վրա, որոնք ներառում են հատուկ բաժին անազատության մեջ գտնվող անչափահասների մասին[6]: Թե՛ զեկույցը և թե՛ պատասխանը պահվում են գաղտնի, մինչև պետությունը որոշում է հրապարակման թույլտվություն տալ:

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար

Իր մանդատի շրջանակում Հանձնակատարն այցելում է բոլոր անդամ պետություններ՝ մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը մշտադիտարկելու և գնահատելու նպատակով: Նման այցերի ընթացքում նա հանդիպումներ է ունենում կառավարության, Ազգային ժողովի, դատական իշխանության, քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների ազգային կառույցների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Նա նաև զրուցում է մարդու իրավունքների հետ կապված մտահոգություններ ունեցող սովորական մարդկանց հետ և այցելում է մարդու իրավունքներին առնչվող վայրեր, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներ, հոգեբուժական հիվանդանոցներ, ապաստան հայցողների կենտրոններ, դպրոցներ և այլն:

Այցերից հետո տվյալ երկրի իշխանություններին կարող է հասցեագրվել մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի գնահատականը և օրենսդրության և պրակտիկայի մեջ տեղ գտած թերությունները հաղթահարելուն ուղղված առաջարկություններ պարունակող զեկույց կամ նամակ:

Հանձնակատարը նաև կատարում է Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության համար առանցքային նշանակություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ թեմատիկ աշխատանք: Նա խորհրդատվություն և տեղեկատվություն է տալիս մարդու իրավունքների խախտումների կանխարգելման վերաբերյալ և հրապարակում կարծիքներ, փաստաթղթերի ժողովածուներ և զեկույցներ: Մասնավորապես, նա հրատարակել է «Երեխաների իրավունքների մասին» դիրքորոշումային փաստաթուղթ (2010 թ.), Երեխաների ու անչափահասների արդարադատության հարցերի (2009 թ.) և Երեխաների ու մարմնական պատժի (2008 թ.) վերաբերյալ փաստաթղթերի երկու ժողովածու:[7]

Գ. ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Ի վերջո, գոյություն ունեն մշտադիտարկում իրականացնող ազգային մարմիններ, որոնց փոխլրացնում են մշտադիտարկում իրականացնող միջազգային ու տարածաշրջանային մարմիններին: Ստորև ներկայացվում է մշտադիտարկում իրականացնող ազգային մարմինների տարբեր տեսակների ոչ ամբողջական ցանկը, որոնք հատկորոշվել են ***«Երեխաների իրավունքները ճաղերից այն կողմ»*** ծրագրի շրջանակում կատարված ազգային հետազոտության միջոցով:

6 1998 թ. ԽԿԿ-ի գործունեության մասին 9-րդ Ընդհանուր զեկույց, 2015 թ. 24-րդ Ընդհանուր զեկույց

7 Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, «Երեխաների իրավունքների մասին դիրքորոշումները» (CommDH/Position Paper (2010)1), Ստրասբուրգ, մայիսի 3, 2010 թ., «Երեխաները և անչափահասների արդարադատությունը. բարելավումներին ուղղված առաջարկություններ» (2009 թ.), Երեխաները և մարմնական պատիժը. *«Ծեծի չենթարկվելու իրավունքը նույնպես երեխաների իրավունք է»* (2008 թ.)

Օրենքով սահմանված մշտադիտարկում իրականացնող մարմիններ

Սրանք մշտադիտարկում իրականացնող այն մարմիններն են, որոնց պարտականություններն ու գործառույթները սահմանված են օրենքով: Նրանց անկախությունը երաշխավորելու համար նրանք պետք է ստեղծվեն Ազգային ժողովի կողմից և պետք է հաշվետու լինեն Ազգային ժողովին՝ վերջինիս հրապարակային զեկույց ներկայացնելով: Օրենսդրորեն նրանց համար պետք է անարգել մուտք ապահովվի երեխաներին անազատության մեջ պահելու ցանկացած վայր և սահմանվի իշխանություններին զեկույցներ ներկայացնելու պարտականություն, որում սահմանված առաջարկությունների հիման վրա էլ իշխանությունները պետք է հետագա գործողություններ ձեռնարկեն:

ԽԴԿԿԱ-ի շրջանակում ստեղծված ԿԱՄ-եր

ԿԱՄ-երն անկախ արտաքին մարմիններ են (գոյություն ունեցող կամ ստեղծվելիք), որոնք կարող են չհայտարարված այցեր կատարել բոլոր վայրեր, որտեղ մարդիկ, այդ թվում՝ երեխաները, գտնվում են անազատության մեջ, և պետք է պատրաստեն զեկույցներ՝ ներառյալ առաջարկություններ ու հետևեն դրանց իրականացմանը:

Կողմ պետություններն ազատ են ընտրելու այնպիսի մարմին, որը լավագույնս համապատասխանում է իրենց կոնկրետ իրավական համատեքստին (օր.՝ մարդու իրավունքների ազգային հաստատություն, մարդու իրավունքների պաշտպան, խորհրդարանական հանձնաժողով, ՀԿ և այլն), և որոշելու՝ արդյոք ԿԱՄ-ը պետք է լինի եզակի մարմին, թե, օրինակ, պետք է ձևավորի մի քանի կառույցից ու հանձնաժողովից բաղկացած համակարգ՝ հիմնվելով, օրինակ, առաջադրանքի տարածաշրջանային կամ թեմատիկ բաժանման վրա:

ԽԿԵ-ն ընդունել է (2010թ.) Կանխարգելման ազգային կառուցակարգերի մասին ուղեցույցներ, *«որպեսզի լրացուցիչ հստակություն մտցնի ԿԱՄ-երի ստեղծման ու գործարկման առնչությամբ ԽԿԵ-ի ակնկալիքների առումով»*, ինչպես նաև ԿԱՄ-երի ինքնագնահատման վերլուծական գործիք:

Երեխաների հարցերի հանձնակատար / Մարդու իրավունքների պաշտպան / Մարդու իրավունքների ազգային հաստատություններ (ՄԻԱՀ-ներ)

Այս մարմիններն ունեն երեխաների իրավունքների նկատմամբ հարգանքը խթանելու, պաշտպանելու և գնահատելու շատ լայն մանդատ, այդ թվում՝ երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մշտադիտարկում իրականացնելու և անազատության մեջ գտնվող երեխաներից խնդրանքներ ու բողոքներ ստանալու և դրանք ուսումնասիրելու՝ օրենքով սահմանված իրավունք:

Նրանց այցերի խորությունն ու հաճախականությունը, սակայն, կարող են տարբեր լինել: Ավելին, երեխաներին պահելու հաստատությունների մշտադիտարկում իրականացնելը նրանց բազմաթիվ պարտականություններից ընդամենը մեկն է:

Արդյունքում, պահանջվող ժամանակը, համապատասխան մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսները ոչ միշտ են ուղղվում, ինչպես նաև այցերի անհրաժեշտ պարբերականությունը ոչ միշտ է նախատեսված լինում այն երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մշտադիտարկման առաքելության իրականացմանը: Նաև, նման վայրեր այցերը հաճախ ձեռնարկվում են կոնկրետ մեղադրական հայտարարություններ ուսումնասիրելու և առանձին բողոք ուսումնասիրելու և ոչ թե անազա-

տության մեջ պահելու ընդհանուր պայմանները կանխարգելիչ ձևով մշտադիտարկելու և գնահատելու համար:

Կախված իրավիճակից՝ մարդու իրավունքների պաշտպանների և մարդու իրավունքների ազգային հաստատությունների շահավետ հատկանիշներից են.

- Անկախ և արտաքին մարմին լինելը,
- Լայն մանդատը,
- Երեխաներին հատկացվող հատուկ ուշադրությունը,
- Հասանելիությունը,
- Չհայտարարված այցեր կատարելու կարողությունը և ուսումնասիրություն կատարելու լայն լիազորությունները,
- Հրապարակային հաղորդումը Ազգային ժողովին (տարեկան և (կամ) թեմատիկ),
- Ազդեցիկ առաջարկությունները,
- Համագործակցությունը այլ առանցքային դերակատարների հետ:

Մշտադիտարկում իրականացնող հատուկ մարմիններ

Որոշ երկրներում մշտադիտարկում իրականացնող հատուկ մարմինները ստեղծվել են կոնկրետ նախարարության ենթակայության տակ (օր.՝ քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկում իրականացնող կոմիտե, ոստիկանության նկատմամբ հսկողություն իրականացնող տեսչական հանձնաժողով) կամ Ազգային ժողովի ենթակայությամբ, բայց անազատության մեջ պահելու կոնկրետ հաստատությունների համար նախատեսված (օր.՝ հոգեբուժական հաստատություններ, իմիգրացիոն կառույցներ):

Այս կոմիտեներն ու հանձնաժողովներն իրավաբանորեն ձևավորվել են որպես մշտադիտարկում իրականացնող արտաքին կառուցակարգեր: Սակայն նրանց անդամները սովորաբար նշանակվում են համապատասխան նախարարի կողմից:

Նման մարմինները կարող են բաղկացած լինել պաշտոնատար անձանցից, անկախ քաղաքացիական անձանցից, ՀԿ-ների ներկայացուցիչներից ու փորձագետներից (դատավորներ, իրավաբաններ, բժշկական փորձագետներ, սոցիալական աշխատողներ, և այլն): Այս մարմինների ընդհանուր առաքելությունն անազատության մեջ պահելու վայրերի (օր.՝ քրեակատարողական հիմնարկներ կամ ձերբակալվածներին պահելու վայրեր) անկախ վերահսկողությունն է և անազատության մեջ գտնվող անձանց (այդ թվում՝ երեխաների) նկատմամբ վերաբերմունքի մշտադիտարկումը: Դրանից բացի՝ նրանք հաճախ ունենում են հաստատության համար պատասխանատու նախարարությանը օրենսդրության կամ կարգերի ու կանոնակարգերի անհրաժեշտ բարելավման վերաբերյալ խորհրդատվություն տալու մանդատ:

Մշտադիտարկման իրականացում քաղաքացիական հասարակության կողմից

Որոշ երկրներում քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ունեն անազատության մեջ պահելու վայրեր պարբերական այցեր կատարելու համար անհրաժեշտ լիազորություն/հավատարմագրում:

Քաղաքացիական հասարակության կողմից մշտադիտարկման իրականացումը սովորաբար բնութագրվում է իշխանություններից ու թիմի անդամներից բարձր աստիճա-

նի անկախությամբ: Սակայն, մշտադիտարկում իրականացնելու համար իրավական հիմքը հաճախ կարող է թույլ լինել՝ հիմնվելով մեկ կամ մի քանի նախարարությունների կամ նախարարների հայեցողական լիազորությունների վրա: Այս դեպքում քաղաքացիական հասարակության կողմից մշտադիտարկման իրականացումը կարող է կախված լինել իշխանությունների քաղաքական կամքից: Արդյունքում, մի շարք հանգամանքներում որոշ ՀԿ-ներ կարող են չունենալ մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրություն կատարելու համար անհրաժեշտ բոլոր լիազորությունները և չկարողանան, անհրաժեշտ մակարդակի անկախություն դրսևորելով, ազատ զեկուցել իրենց բացահայտումների մասին: Մեկ այլ դժվարություն, որ կարող է խոչընդոտել նրանց աշխատանքի արդյունավետությանը, կարող է լինել նրանց ֆինանսական միջոցների սակավությունը, օրինակ՝ ճանապարհածախսի կամ մշտադիտարկում իրականացնող անձանց վճարների մասին հոգալու առումով: Այնուամենայնիվ, այս խոչընդոտը կարելի է հաղթահարել համագործակցության հարթակներ ստեղծելով՝ սերտ փոխներգործություն ձևավորելու և կազմակերպությունների միջև մշտադիտարկման առաջադրանքները (և պահանջվող ռեսուրսները) բաժանելու միջոցով:

Մշտադիտարկման իրականացում դատական իշխանության կողմից

Դատավորները հաճախ ունեն հաստատությունները վերահսկելու ֆորմալ դեր՝ անազատության մեջ պահելու վայրեր այցելելու և այնտեղի պայմանները ստուգելու, նշանակված միջոցների իրականացմանը հետևելու և երեխաների բողոքները լսելու միջոցով: Նման մշտադիտարկումը լավագույն արդյունք է ունենում, երբ դատավորները կարողանում են համապատասխան ժամանակ ու ռեսուրսներ հատկացնել իրենց աշխատանքի այս մասին: Որոշ երկրներում կա հատուկ դատավոր, որը պատասխանատու է երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի պայմանների վերահսկողության համար: Առանձին գործեր քննելու միջոցով անազատության մեջ պահելու վայրերի մասին ձեռքբերած գիտելիքները կարող են նպաստել, որ նրանք ավելի շատ ուշադրություն դարձնեն ազատազրկման ընդհանուր պայմաններին ու կանոնակարգին և իրենց բացահայտումների մասին զեկուցեն պատկան մարմիններին: Ինչ վերաբերում է երեխաներին, նրանք սովորաբար ճանաչում են դատավորին, և ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեխաների ընկալմամբ նրանք ազդեցիկ են:

Խորհրդարանական ստուգայցեր

Երկրների մեծ մասում ընտրված (ԵՄ կամ ազգային) պատգամավորները, որպես գործադիրի գործունեությունը հանգամանորեն ուսումնասիրելու իրենց գործառույթի մաս, իրավունք ունեն այցելելու ցանկացած վայր, որտեղ մարդիկ, այդ թվում՝ երեխաները, զրկված են ազատությունից: Նրանց դիտարկումները, բացահայտումներն ու առաջարկություններն ամփոփող զեկույցները սովորաբար ներկայացվում են բաց նիստերին: Որպես իրենց օրենսդրական գործառույթի մաս՝ նրանք կարող են նաև իրենց այցից կատարած եզրահանգումներն օգտագործել օրինաստեղծ գործունեության ընթացքում:

Փաստաբաններ

Փաստաբանները կարող են հանդես գալ ոչ ֆորմալ մշտադիտարկում իրականացնողի դերում, երբ իրացնում են իրենց վստահորդներին այցելելու իրավունքը, վստահորդի կողմից ցանկացած ժամանակ անվճար հիմունքներով և առանց սահմանափակման իրենց հետ կապ հաստատելու իրավունքը, իրենց վստահորդի նկատմամբ

կիրառված հարկադրանքի միջոցների մասին տեղեկացված լինելու և այդ հանգամանքներում նրանք օգնելու իրավունքը և այլն:

Փաստաբանների կողմից ոչ ֆորմալ մշտադիտարկման իրականացումը լավագույնս գործում է այն դեպքում, երբ դրան հատկացվում է համապատասխան ուշադրություն, ժամանակ և ռեսուրսներ: Դա չափազանց արդյունավետ է դառնում, երբ փաստաբաններն իրենց բացահայտումների մասին, որոնք փաստաբանական գաղտնիք չեն հանդիսանում, հայտնում են միջամտելու և մեղադրական հայտարարությունների առնչությամբ հետագա քայլեր ձեռնարկելու լիազորություն ունեցող առանցքային հասցեատերերին կամ ծառայություններին

Մշտադիտարկում իրականացնող մարմինները, որոնք կատարում են կանոնավոր մշտադիտարկման այցեր (օրինակ՝ ԿԱՄ-երը կամ իրավունքների պաշտպանները) պետք է որպես լավ գործելակերպ իրենց մասին հայտնեն փաստաբաններին՝ իրենց միջև տեղեկությունների փոխանակման արդյունավետ հաղորդակցման ուղի ստեղծելու համար:

Մշտադիտարկման իրականացում բազմաթիվ գործակալությունների կողմից

Բազմաթիվ երկրներ ունեն ոչ թե մշտադիտարկում իրականացնող սոսկ մեկ մարմին, այլ մի շարք կազմակերպություններ ու գործակալություններ, որոնք կատարում են այս դերը՝ աշխատելով միասին, որպեսզի համապարփակ հսկողություն ապահովեն երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի նկատմամբ: Սա հատկապես վերաբերում է փոքր պետություններին (օրինակ՝ Լյուքսեմբուրգին), որտեղ խթանվում է մշտադիտարկում իրականացնելու այս մոդելը: Բազմաթիվ գործակալությունների կողմից մշտադիտարկման իրականացման դեպքում այս կառույցների միջև համագործակցությունը ոչ միայն արժեքավոր ներդրում է, այլև հիմնարար նշանակություն ունի նրանց առաքելության արդյունավետության համար:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մշտադիտարկում իրականացնող յուրաքանչյուր մարմին պետք է մշակի հստակ մեթոդաբանություն՝ իր այցն արդյունավետ կերպով կատարելու և երեխաների իրավունքների համար պահանջվող չափորոշիչները բավարարելու համար:

Մշտադիտարկում իրականացնելու մեթոդաբանությունը պետք է հիմնված լինի հետևյալ տարրերի վրա.

- մշտադիտարկում իրականացնող մարմնի մանդատի շրջանակը,
- այն նպատակները, որոնց պետք է հասնել,
- իր լիազորությունների շրջանակը,
- առկա և անհրաժեշտ, նյութական, ֆինանսական ու մարդկային ռեսուրսները,
- արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու չափորոշիչները *Տես Բաժին 3.3., էջ 32,*
- այն հիմնական սկզբունքները, որոնք պետք է հարգել մշտադիտարկում իրա-
- կանացնելիս *Տես Բաժին 3.4., էջ 37,*
- բոլոր վերաբերելի չափորոշիչներն ու երեխաներին վերաբերող ցուցիչները *Տես Բաժին 5., էջ 93:*

Մշտադիտարկումը ներառում է երեք անհրաժեշտ փուլ, որոնցից ոչ մեկը չի կարելի անտեսել.

- **Այցի նախապատրաստություն (նախապես)** – *Տես Բաժին 4.2., էջ 60*
- **Այցի իրականացում (ընթացքում)** – *Տես Բաժին 4.3., էջ 67*
- **Այցին հետևող գործողություններ (հետո)** – *Տես Բաժին 4.4., էջ 83*

4.1. Մշտադիտարկման ռազմավարության մշակումը

- ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ՀԱՍԿԱՆԱԼԸ
- ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀՍՏԱԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ
- ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ
- ԱՅՑԵԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
- ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՅՑԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ, ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ
- ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԹԻՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- ԷԹԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ
- ԱՅՑԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Մշտադիտարկում իրականացնող յուրաքանչյուր մարմին պետք է մշակի մշտադիտարկում իրականացնելու ռազմավարություն:

Հենց սկզբից մշտադիտարկում իրականացնելու ռազմավարությունը իր նպատակների կենտրոնում պետք է դնի երեխային, նրա իրավունքները, կարիքներն ու առանձնահատկությունները:

Ա. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ՀԱՍԿԱՆԱԼԸ

Որպեսզի պատկերացում կազմեն այն ընդհանուր համատեքստի մասին, որում տեղի է ունենում երեխաներին անազատության մեջ պահելը, մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է **կատարեն հետազոտություն**՝ տվյալ պետության **երեխաներին անազատության մեջ պահելու իրավական, սոցիալական ու քաղաքական համատեքստի** մասին բոլոր առկա տեղեկությունները և հարցի վերաբերյալ **առկա ամենաթարմ վիճակագրական տվյալները** հավաքելու համար:

Կարևոր տարրեր, որ անհրաժեշտ է նկատի ունենալ.

- **Միջազգային (իրավական) շրջանակը**, որը բաղկացած է՝ երեխաներին անազատության մեջ պահելու առումով տվյալ պետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերից *Տես Բաժին 1.2., էջ17*, Կոնվենցիաներով նախատեսված միջազգային կառույցների ներկայացրած հանձնարարականներից, երեխաներին անազատության մեջ պահելու վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություններից կամ եզրակացություններից, ԽԿԿ-ի չափորոշիչներից ու զեկույցներից, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից *Տես Բաժին 4.1. / Ը., էջ 58 և Հավելված 4., էջ 162,*

- Երեխաներին անազատության մեջ պահելու **ազգային իրավական շրջանակը** (ո՞ւմ կարելի է զրկել ազատությունից, ո՞ր տարիքում, ի՞նչ պատճառով, ո՞ւմ կողմից, ինչպիսի՞ հաստատություն(ներ)ում, որքա՞ն ժամանակով, և այլն) Տես Բաժին *2.1., էջ 23*,
- Երկրում երեխաներին անազատության մեջ պահելու **քաղաքականությանն առնչվող ուղեցույցները** և այս ոլորտում **վերջին շրջանում մշակված քաղաքականությունները**,
- Ուսումնասիրել **տեղական կամ ազգային կանոնակարգերի, ուղեցույցների,** քաղաքականությունների և միջազգային չափորոշիչների **միջև հնարավոր անհամապատասխանությունները**,
- **Այն տարաբնույթ վայրերը, որտեղ երեխաները կարող են զրկված լինել ազատությունից**, այդ վայրերի գործունեությունը կանոնակարգող կարգերն ու կանոնակարգերը, այդ հաստատությունների համար պատասխանատու մարմինները, նրանց կարողությունները, նրանց ռեժիմը, այս վայրերում անազատության մեջ գտվող երեխաների կարգավիճակն ու տարբեր խմբերը և այլն,
- **Երեխաներին անազատության մեջ պահելու տարաբնույթ վայրերում մշտադիտարկում իրականացնող տարբեր կառույցները**, նրանց մանդատը, լիազորությունների շրջանակը, կազմը, վերջին այցի ամսաթիվը, վերջին զեկույցների ու առաջարկությունների բովանդակությունը *Տես Բաժին 3.5., էջ 40*,
- **Տեղեկություններ պրակտիկայի և կոնկրետ միջադեպերի մասին** (հետազոտություն, լրատվամիջոցներ):

Բ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ելնելով իրենց մանդատից և իրենց գործառույթի հիմնավորումից՝ մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է սահմանեն իրենց այցերի **հստակ նպատակներն ու խնդիրները**:

Ընդհանրապես, պայմանավորված Ղեկավար սկզբունքների (ԵԻԿ, Հոդված 37) այն պահանջով, որ երեխաներին անազատության մեջ պահելը պետք է լինի **ծայրահեղ միջոց**, որը կարող է տեղի ունենալ միայն **բացառիկ դեպքերում և հնարավորինս կարճ ժամանակահատվածով՝** ցուցաբերելով պատշաճ հարգանք **երեխայի լավագույն շահի** նկատմամբ, և երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկման նպատակները կարող են լինել.

- **Երաշխավորել, որ երեխաներին անազատության մեջ պահելը ի կատար ածվի** միջազգային, տարածաշրջանային ու ազգային չափորոշիչներով **երեխաներին տրված բոլոր իրավունքներին համահունչ և այնպիսի պայմաններում, որտեղ հարգվում է մարդկային արժանապատվությունը, ապահովվում է երեխաների ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիությունը**,
- **Երաշխավորել, որ երեխաներին անազատության մեջ պահելու հետ կապված նպատակներին,** մասնավորապես, նրանց կրթմանը, վերականգնմանը և հասարակության մեջ վերաինտեգրմանը, **հետամուտ լինեն արդյունավետ կերպով,** և որ համապատասխան ֆինանսական ու մարդկային ռեսուրսներ հատկացվեն ինչպես այդ նպատակների, այնպես էլ ազատվելուց հետո տրամադրվող խնամքի և օժանդակության իրականացմանը,
- **Երաշխավորել,** որ իրավունքների խախտման կամ չարաշահման դեպքում

անազատության մեջ գտնվող երեխաներին արդյունավետ կերպով **հասանելի լինեն իրավական օգնությունն ու բողոքարկման գործուն կառուցակարգերը,**

- **Երաշխավորել և ամրապնդել երեխայի մասնակցության իրավունքի իրականացումը**՝ իրեն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ իր տեսակետներն արտահայտելու իրավունքի կենսագործումը, և որ այդ տեսակետները լսելի լինեն և հաշվի առնվեն՝ երեխայի տարիքին ու հասունությանը համապատասխան:

Իր նպատակներն ու խնդիրները սահմանելիս մշտադիտարկում իրականացնող յուրաքանչյուր մարմին դրանց կյանքի կոչելու նկատմամբ պետք է **իրատեսական** մոտեցում դրսևորի:

Գ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մշտադիտարկման ծրագրի ժամանակացույցը պետք է հիմնված լինի հետևյալ տարրերի վրա.

- մշտադիտարկում իրականացնող մարմնի **մանդատի տևողությունը**,
- **մշտադիտարկման ամբողջական ցիկլի** իրականացման համար պահանջվող ժամանակը (այցի նախապատրաստություն - իրականացում – հետագա քայլեր),
- հնարավորության դեպքում, այցերի **պարբերականությունը** – *Տես Բաժին 3.3., էջ 32*,
- **չհայտարարված և (կամ) ըստ անհրաժեշտության (ad hoc) այցեր** պլանավորելու կարողությունը:

Դ. ԱՅՑԵԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև այցելության վայրի առաջնահերթության որոշումը՝ մշտադիտարկում իրականացնող յուրաքանչյուր մարմին պետք է կատարի **երեխաներին ազատությունից զրկման՝ իր միջամտության շրջանակում գտնվող վայրերի ամբողջական ու թարմացված քարտեզագրում** և հավաքի **այս վայրերի վերաբերյալ բոլոր օգտակար տեղեկությունները** *Տես Բաժին 2., էջ 23 և Բաժին 4.1. / Ա., էջ 48*:

Հաստատություններ կատարվելիք այցերի հերթականությունն այնուհետև կախված կլինի մշտադիտարկում իրականացնող մարմնի սահմանած կոնկրետ նպատակներից:

Հետևյալ (ոչ ամբողջական) **չափանիշները** առանձին կամ ամբողջության մեջ վերցված, կարող են օգնել մշտադիտարկում իրականացնող մարմնին՝ ուշադրության ենթակա տարբեր վայրերի ընտրության գործում.

(Հավանական կամ իրական) ռիսկը, որին ենթարկվում են երեխաները.

- Ոստիկանության կողմից ազատությունից զրկվելը (ձերբակալության ժամանակ, փոխադրման կամ հարցաքննության ընթացքում),
- Նախնական կալանքի մեկուսարանները կամ անչափահասների քրեակատա-

րողական հիմնարկը,

- Հաստատություններ, որտեղ երեխաները պահվում են մեծահասակների հետ միասին (ձերբակալվածներին պահելու վայրեր կամ անչափահասների քրեակատարողական հիմնարկներ, ոստիկանության կողմից ազատությունից զրկել և այլն),
- **Պատժախցերը** կամ նմանատիպ այլ սենյակներ, որտեղ երեխաները պահվում են լրիվ մեկուսացված վիճակում (մենախցեր, այլ),
- Վայրեր, որոնք սովորաբար կապ չունեն անազատության մեջ պահելու հետ (հիվանդանոցներ, իմիգրացիոն (ներգաղթային) կենտրոններ, թմրամոլների վերականգնողական կենտրոններ, այլ):

Հասանելի տեղեկատվություն

- Բողոքարկման արտաքին կառուցակարգերի կողմից արձանագրած բողոքների թիվը (թե՛ բողոքների մեծ քանակությունը, թե՛ իսպառ բացակայությունը),
- Մամուլում տպագրված հոդվածները կամ ուսումնասիրությունները, որտեղ ներկայացվում են կեցության պայմանները, վերաբերմունքը, չարաշահման (բռնության) դեպքերը կամ դրանց վերաբերյալ հայտարարությունները և այլն,
- Այլ աղբյուրներից, օրինակ՝ այց կատարող միջազգային կամ ազգային այլ մարմիններից ստացված տեղեկատվությունը:

Օրինակ

- Երեխաներին անազատության մեջ պահելու տարբեր հաստատությունների շարքում երկրում ամենաներկայացուցչականը համարվող վայրեր, *Տես Բաժին 2.1., էջ 23*,
- Այլ, օրինակ՝ ոչ հաճախ այցելվող, պակաս հասանելի կամ անազատության մեջ պահելու հետ սովորաբար կապ չունեցող վայրեր (հիվանդանոցներ, իմիգրացիոն (ներգաղթային) կենտրոններ, թմրամոլների վերականգնողական կենտրոններ, այլ):
- Անազատության մեջ պահելու տարբեր տիպի վայրերի և (կամ) տարբեր երեխաների խաչաձև ընտրություն (մեծ ու փոքր, տղաներ ու աղջիկներ, կալանքի տակ գտնվող և դատապարտված, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցողներ, այլ):

Ե. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՅՑԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ, ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Երեխաներին անազատության մեջ պահելու վայրեր **այցելելը տեղեկություններ հավաքելու հիմնական աղբյուրը** և **մշտադիտարկման ամենաարդյունավետ գործիքն է**:

Կարող են կատարվել տարբեր տեսակի այցեր և դրանց իրականացումը ևս տարբեր պետք է լինի, հատկապես ժամանակի ընտրության ու հաճախականության առումով՝ կախված դրանց բնույթից ու նպատակից:

Այցի բնույթի գործառույթը

Երկու կարևոր տարբերակում կարելի է կատարել՝ կանխարգելիչ ու ուսումնասիրություն իրականացնող այցերի, ինչպես նաև կանխարգելիչ այցերի՝ մանրակրկիտ ու կայծակնային այցերի միջև:

Կանխարգելիչ այցերը կարող են տեղի ունենալ ցանկացած ժամանակ՝ սովորաբար կանոնավոր հաճախականությամբ: Դրանք նախաձեռնողական (պրոակտիվ) բնույթ ունեն և չեն փորձում արձագանքել առանձին դեպքերի: Դրանց ուշադրության առանցքում է երեխաների իրավունքների ցանկացած խախտման կամ չարաշահման կանխարգելումը, անազատության մեջ պահելու վայրի՝ որպես համակարգի վերլուծությունը (համակողմանիորեն), և անազատության մեջ պահելու հետ կապված բոլոր գործոնների գնահատումը, որոնք կարող են հանգեցնել երեխաների իրավունքների խախտման, այս համատեքստում մարդկային արժանապատվությանը հասցվող այլ վիրավորանքների կամ չարաշահումների: Օրինակ՝ տվյալ հիմնարկության աշխատակիցների գործելակերպը, կամ տվյալ հաստատությունում ընդունված արժեքների կամ առկա վերաբերմունքի արդյունքում այդ վայրերի նկատմամբ կիրառելի, կանոններում կամ կանոնակարգերում ամրագրում ստացած վարվելակերպը:

Կանխարգելիչ այցը, դրական մոտեցման և կառուցողական երկխոսության միջոցով կհանգեցնի այցի համար ընտրված անազատության մեջ պահելու վայրերում բարելավման մշակույթի ձևավորմանը: Այդ իմաստով կարևոր է նաև ուշադրություն դարձնել լավ գործելակերպի դրսևորման դինամիկային և ընդգծել այն:

Ավելին, կանխարգելիչ այցերը կարող են տարբեր ձևով իրականացվել.

- **Մանրակրկիտ այցերն** ավելի երկար կարող են տևել (1-ից մինչև մի քանի օր) և կարող են ընդգրկել մեծ, պրոֆեսիոնալ, բազմամասնագիտական թիմ, որն ուշադրություն կդարձնի անազատության մեջ պահելու վայրի գործունեության բոլոր կողմերին կամ բազմաթիվ կողմերի: Նրանց հիմնական նպատակն է հանգամանորեն փաստագրել իրավիճակը, վերլուծել ռիսկի գործոնները և բացահայտել թե՛ առկա խնդիրները և թե՛ լավ գործելակերպը: Նման այցերը կանոնավոր կերպով իրականացվում են մշտադիտարկում իրականացնող այնպիսի մարմինների կողմից, ինչպիսիք եք, օրինակ՝ ԿԱՄ-երը:
- **«Կայծակնային» այցերն** ավելի կարճ են տևում (մի քանի ժամից մինչև կես օր) և կատարվում են մեկ անձի կամ ավելի փոքր թիմի կողմից: Հիմնական նպատակն է ստանալ անազատության մեջ պահելու վայրի ընդհանուր պատկերը: Այս այցերը նաև նպատակ ունեն զսպող ազդեցություն ունենալ և նպաստել անազատության մեջ պահելու վայրերի թափանցիկությանն ու նրանց ղեկավար կազմի հաշվետվողականությանը: Նման այցեր առավել հաճախ իրականացվում են ԵՄ խորհրդականների կամ Ազգային ժողովի պատգամավորների կողմից:
- **Պաշտպանական/ուսումնասիրման բնույթ կրող այցերը** տեղի են ունենում ի պատասխան անազատության մեջ գտնվող երեխաների կողմից ներկայացված կոնկրետ դեպքի կամ բողոքի: Նման այցերն ավելի հազվադեպ են: Պաշտպանական/ուսումնասիրման բնույթ կրող այցերն ավելի շատ անհատական և ռեակտիվ բնույթ ունեն: Դրանց նպատակն է ուսումնասիրել մեղադրական բնույթ կրող հայտարարությունները, գտնել փաստեր և ուսումնասիրել անազատության մեջ պահելու խնդրահարույց կողմերը, որոնք էլ տվյալ դեպքի կամ իրավունքների խախտման պատճառ են դարձել, որպեսզի վերականգնեն երեխաների իրավունքները և, հնարավորության դեպքում, հատուցեն հասցված վնասը:

Իրենց կանխարգելիչ, պաշտպանական կամ ուսումնասիրության դերից բացի՝ այցերը կարող են ունենալ նաև հետևյալ **գործառույթները**.

- **Տեղեկությունների հավաքագրում** երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում պայմանների ու վերաբերմունքի վերաբերյալ՝ հետագա բարելավումները գնահատելու նպատակով ելակետային հիմք ստեղծելու համար,
- **Վիճակագրական տվյալների հավաքագրում** անազատության մեջ գտնվող երեխաների թվի, բնութագրիչ հատկանիշների և երեխայի իրավունքների կոնկրետ խախտումների մասին (օրինակ՝ արդյոք երեխաները ազատազրկված են մեծահասակների համար նախատեսված քրեակատարողական հաստատություններում, արդյոք նախնական կալանքի տակ գտնվող երեխաների գործերի քննությունը ձգձգվում է, թե ոչ, և այլն),
- Անազատության մեջ գտնվող երեխաների վերականգնման համար պատասխանատու պատկան մարմինների հետ **անմիջական և կառուցողական երկխոսության համար հիմքի ապահովում**,
- **Տեղեկությունների հավաքագրում երեխաների՝ ազատությունից զրկվելու հետ կապված փորձի և իրենց իրավունքների մասին ընկալումների վերաբերյալ,** օրինակ՝ նրանց կարող են հարցնել, թե ինչպես են վերաբերվել իրենց ոստիկանության կողմից անազատության մեջ գտնվող լինելու ժամանակ, հարցաքննության կամ դատական լսումների ժամանակ, մենախցում գտնվելիս, և այլն,
- **Ապահովել, որ երեխաները տեղյակ լինեն բողոքարկման իրենց իրավունքի գոյության մասին** և համոզվել, որ այս իրավունքը նրանք ընկալում են որպես իմաստալի և օգտակար:

Մոդելներ

Չհայտարարված այցերը մշտադիտարկում իրականացնող անձանց հնարավորություն են տալիս, օգտվելով անսպասելիության էֆեկտից, ավելի իրատեսական պատկերացում կազմել անազատության մեջ պահելու այցելած վայրում երեխաների կեցության պայմանների ու նրանց նկատմամբ վերաբերմունքի մասին: Անկանխատեսելիությունը մշտադիտարկում իրականացնող անձանց համար այցի ժամանակ ապահովում է այն առավելությունը, որ հատուկ միջոցներ ձեռնարկված չեն լինում՝ իրավիճակը գեղազարդարելու և (կամ) որևէ հնարավոր խնդիր քողարկելու համար, և աշխատակազմի անդամներին կամ երեխաներին նախապատրաստած չեն լինում հարցազրույցի համար:

Հայտարարված այցերը կազմակերպվում են այնպես, որ անազատության մեջ պահելու այցելվող վայրերը տեղեկացված լինեն մշտադիտարկման այց կատարվելու և դրա նպատակների ու խնդիրների մասին: Այցի նպատակը կարող է լինել նախկին հանձնարարականների կատարմանը հետևելը կամ կոնկրետ խնդիր ուսումնասիրելը:

Տևողություն

Այցերի տևողությունը կախված է այցի **բնույթից ու նպատակից/ գործառույթից**, ինչպես նաև մշտադիտարկում իրականացնող մարմնի (մարդկային ու ֆինանսական) ռեսուրսներից: Այնուամենայնիվ, ամեն դեպքում, այցը պետք է ունենա **պատշաճ տևողություն**, որպեսզի այց կատարած թիմը կարողանա ուսումնասիրել հաստատությունը, դիտարկել անազատության մեջ գտնվող երեխաների կեցության պայմաններն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը, հարցազրույց վերցնել ղեկավարից, աշխատա-

կիցներից ու հարցազրույցին մասնակցելու ցանկություն ունեցող երեխաներից:

Այցի տևողությունը գնահատելու համար կարող են հաշվի առնվել **մի քանի գործոն**.

- այցելվող վայրի չափն ու տեսակը,
- անազատության մեջ գտնվող երեխաների թիվն ու տարբեր խմբերը (մեծ ու փոքր, տղաներ ու աղջիկներ, կալանքի տակ գտնվող և դատապարտված, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցողներ, այլ),
- հաստատության տեղանքը,
- այցելվող վայրի մասին արդեն հավաքված տեղեկատվության ծավալը
- արդյոք մշտադիտարկում իրականացնող նույն մարմինը կամ մեկ այլ կառույց արդեն այցելել է այդ վայր, թե ոչ,
- մշտադիտարկում իրականացնող այլ մարմինների տված խորհուրդները տվյալ վայր այցելությանը հատկացնելու համար անհրաժեշտ նախատեսվող ժամանակի մասին,
- **կիրառվող** անվտանգության կանոնակարգը (որքան ուժեղ է անվտանգությունը, այնքան երկար կտևի հաստատության ներսում շրջելը),
- լեզուները, որով խոսում են անազատության մեջ գտնվող երեխաները, և թարգմանության հավանական անհրաժեշտությունը:

Այցերի հաճախականությունը

Որքան **կանոնավոր** են կատարվում այցերը, այնքան դրանք արդյունավետ են խոշտանգումները կամ դաժան վերաբերմունքը կանխարգելելու և կայուն բարելավում խթանելու առումով:

Սակայն մշտադիտարկում իրականացնող մարմինը պետք է նաև հիշի, որ, մի կողմից, միևնույն վայր կատարվող չափազանց շատ այցերը երեխաների կողմից կարող են դիտվել որպես մշտական ներխուժում և որ, մյուս կողմից, չափազանց հաճախակի այցերը կարող են խաթարել կամ խոչընդոտել աշխատակազմի կողմից ի նպաստ անազատության մեջ գտնվող երեխաների կատարվող աշխատանքը (ուսուցում, միջոցառումներ, այլ):

Հետևաբար, կարևոր է պահպանել հավասարակշռություն արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության և անազատության մեջ գտնվող երեխաների խմբի համար սահմանված, ղեկավարման գործընթացի, ինչպես նաև հաստատությունում տեղի ունեցող միջոցառումների ծրագրին բնորոշ սահմանափակումների միջև: Անսպասելի իրավիճակներ նույնպես կարող են պատահել, ուստի, այց կատարող թիմը պետք է պատրաստ լինի ճկուն լինել, երբ որոշում է իր այցերի տևողությունն ու հաճախականությունը:

Ի լրումն, ավելի հազվադեպ այցերը (օրինակ՝ նրանք, որոնք կատարում են ազգային կամ ԵՄ խորհրդարանականները) կանխարգելման գործառույթից զատ կարող են նաև ունենալ կարևոր մշտադիտարկման ազդեցություն: *Տես Բաժին 3.3., էջ.32*

Զ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԻՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կազմը / Իրավասությունները

Իդեալական տարբերակում, այց կատարող թիմը պետք է կազմված լինի **մշտադիտարկման բարձրորակ** մասնագետներից, ովքեր **կլինեն չափազանց զգայուն, փորձառու և** վերապատրաստված՝ երեխաներին անազատության մեջ պահելու վերաբերյալ:

Իդեալական տարբերակում, թիմը պիտի լինի **բազմապրոֆիլ** և դրա համալրման ժամանակ պետք է հաշվի առնվեն ինչպես մշտադիտարկման այցի համար ընտրված հաստատության տեսակը, այնպես էլ դրանում անազատության մեջ գտնվող երեխաների խմբերը:

Մշտապես օգտակար է թիմում ընդգրկել մշտադիտարկում իրականացնող առնվազն մեկ անձի, որը կունենա իրավաբանական կրթություն: Առանձնահատուկ կարևորություն կարող է ունենալ նաև մասնագիտացած բուժաշխատողի ներկայությունն այն պարագայում, երբ հնարավոր են հաղորդումներ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերի մասին, և/կամ բժշկական գաղտնիության ռեժիմի պայմաններում՝ բժշկական փաստաթղթերին ծանոթանալու և/կամ բժշկական անձնակազմի անդամների հետ շփումները դյուրինացնելու նպատակով: Ի հավելումն, փորձագիտության հետևյալ ոլորտները կարող են օգտակար ձևով լրացնել թիմը. երեխաների իրավունքներ և մասնավորապես՝ անչափահասների արդարադատություն, սոցիալական աշխատանք, կրթություն/ մանկավարժություն, կրիմինալոգիա, մանկական հոգեբանություն և/կամ (մանկական) հոգեբուժություն, և այլն: Չնայած վերոնշյալ հատուկ փորձագիտության և որակավորումների առկայությանը, մշտադիտարկում իրականացնող անձը պետք է նաև մշտապես հիշի, որ մշտադիտարկման այցեր իրականացնելիս միշտ օգտակար է **ողջախոհության կիրառումը** :

Մշտադիտարկման թիմի կազմը պարտադիր պետք է նաև արտացոլի **գենդերային հավասարությունը** և հնարավորության սահմաններում հաշվի առնի այցելության ենթակա հաստատությունում պահվող երեխաների խմբի **էթնիկական, լեզվական և տարածաշրջանային** ծագումը և բնութագիրը: Կարելի է նաև դիտարկել նախկինում անազատության մեջ գտնվող որևէ երեխայի ընդգրկումը. այդ դեպքում նա թիմի որակավորմանը կավելացնի անազատության մեջ պահելու իր սեփական փորձը:

Վերապատրաստում

Մշտադիտարկում իրականացնող անձանց **նախնական վերապատրաստումը, իդեալական տարբերակում,** պետք է պարունակի հետևյալ բաղադրիչները.

- երեխաներին անազատության մեջ պահելուն վերաբերող (ազգային, տարածաշրջանային և միջազգային) իրավական շրջանակը.
- մշտադիտարկման հիմնական սկզբունքները տես – *Բաժին 3.4. – էջ 37.*
- երեխաներին անազատության մեջ պահելուն և երեխաների պաշտպանության ոլորտի քաղաքականությանն առնչվող առանցքային կարիքները, հարցերը և հիմնախնդիրները, ինչպես նաև դրանց հնարավոր պատճառները.

- սոցիալական բացառման և անազատության մեջ պահելու միջև առկա կապերը.
- անազատության մեջ պահելու համատեքստում երեխաների հետ հաղորդակցության էթիկական սկզբունքները, հմտությունները և նրանց հետ հարցազրույցների անցկացման հնարքները.
- երեխաներին անազատության մեջ պահելու վայրեր գործնականում մշտադիտարկման այց իրականացնելու և աշխատակիցների ու ղեկավարների հետ հարցազրույցների անցկացման մեթոդաբանությունը.
- հաշվետվությունների և առաջարկությունների ձևակերպման և հասցեագրման մեթոդները:

Ընթացիկ վերապատրաստման անհրաժեշտությունը հիմնաքարային նշանակություն ունի: Դա ապահովում է վերջին զարգացումների մասին իրազեկվածություն և երեխաներին անազատության մեջ պահելուն առնչվող առանձնահատուկ խնդիրների հետ աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռքբերում: Ի հավելումն, դա թույլ է տալիս ապահովել փորձառության փոխանցմանը նույնատիպ մշտադիտարկում իրականացնող այլ անձանց:

Բանավոր թարգմանություն

Եթե անհրաժեշտ է բանավոր թարգմանություն, ապա թարգմանիչները պետք է **պատշաճ կարգով տեղեկացված լինեն իրենց դերի**, այցին վերաբերող բոլոր մանրամասների մասին և **երեխաներին առնչվող խնդիրների վերաբերյալ պատշաճ նախապատրաստված ու վերապատրաստում անցած լինեն** (պաշտպանություն, գաղտնիություն, հաղորդակցություն, և այլն.).

Բանավոր թարգմանիչներին առնչվող լրացուցիչ մանրամասների համար.

Տես – Բաժին 4.2. / Է. – էջ 65 և Բաժին 4.3. / Դ. – էջ 73

Թիմի մեծությունը

Մշտադիտարկման թիմի մեծությունը հարկ է հարմարեցնել այցելության վայրին և կախված է այցելության բնույթից, դրա նպատակից, անազատության մեջ գտնվող երեխաների քանակից և տարատեսակ խմբերից, հաստատության տեսակից, այլն:

Թիմը կարող է կազմված լինել երկուսից (2) վեց (6) մշտադիտարկում իրականացնող անձանցից, որոնց հնարավոր է, որ ուղեկցեն թարգմանիչներ:

Խորհրդարանականների կողմից մշտադիտարկման իրականացում

Սովորաբար խորհրդարանականները մշտադիտարկում իրականացնում են կամ մենակ, կամ շատ փոքր խմբերով: Վերոնշյալ որակավորումները, փորձառությունները և/կամ վերապատրաստումը, որոնք պահանջվում են մշտադիտարկում իրականացնող այլ մարմինների դեպքում, պարտադիր չէ, որ կիրառելի լինեն խորհրդարանականների դեպքում, որոնք պարտադիր չէ, որ երեխայի իրավունքների մասին ունենան հատուկ գիտելիքներ (գլխավորապես՝ անազատության մեջ պահելու թեմայով): Բնականաբար խորհուրդ է տրվում, որ նախքան որևէ այցելություն կատարելը նրանք

տեղեկանան համատեքստին և մշտադիտարկման տեսակին, խնդիրներին և գործառույթներին համահունչ համարժեք գիտելիքների տիրապետեն:

Է. ԷԹԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԻ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Անազատության մեջ գտնվող երեխաների հետ հարցազրույցների անցկացման էթիկական ուղեցույց

Անազատության մեջ գտնվող երեխաների հետ հարցազրույցների անցկացումը արդյունավետ մշտադիտարկման կենտրոնական և առանցքային տարրերից է: Այն պահանջում է ոչ միայն երեխաներին վերաբերող թեմաներով վերապատրաստում և փորձ, կամ՝ որոշակի մարդկային որակներ (բարձր զգայականություն, համբերատարություն, ապրումակցում, ճկունություն), այլև էթիկական ուղեցույցների մի հստակ համախումբ, որոնց կհետևեն, և կկիրառեն:

Ուղեցույցը, օրինակ, կարող է ներառել հետևյալ բաղադրիչները.

- Մշտադիտարկման այցի շրջանակում երեխաների հետ հարցազրույցների անցկացման ***հիմնական սկզբունքները*** *տես – Բաժին 3.4. – էջ 37.*
- Որևէ հարցազրույցի կամ ֆոկուսային խմբով քննարկմանը երեխայի ***մասնակցության և մասնակցության բացառման չափանիշները*** *տես – Բաժին 4.3. / Դ. – էջ 73.*
- Երեխաների հետ հարցազրույցների ***նախապատրաստման - անցկացման - ամփոփման առանցքային տարրերը*** (նախնական շփումներ, հարցազրույցի ներածություն, իրազեկված համաձայնություն, երրորդ անձի ներկայություն, մշտադիտարկում իրականացնող անձանց վարքագիծ, վերաբերմունք և ընկալումներ, և այլն).
- ***Հարցեր / տարածված խնդիրներ,*** որոնք անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների հետ հարցազրույցներից առաջ, դրանց ընթացքում և դրանց ավարտից հետո:

Ուղեցույցն անդրադառնում է վերոնշյալ բոլոր մտահոգություններին, որպեսզի **երեխաների հետ հարցազրույցները** նախատեսվեն այնպես, որ դրանք անցկացվեն երեխաների համար **ամենաանվտանգ ու ամենահարգալից ձևով:**

Երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը

Բացի այս Ուղեցույցներից՝ մշտադիտարկում իրականացնող թիմը պետք է մշակի երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականություն, որպեսզի կարողանան **երեխայի իրավունքների չարաշահման դեպքի կամ հաշվեհարդարի վտանգի բախվելիս անմիջապես արձագանքել**, և նպաստեն անազատության մեջ գտնվող երեխաների համար ապահով միջավայրի ստեղծմանը:

Երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը կարող է **սահմանել այն բոլոր հանգամանքները**, որոնց կարող են բախվել մշտադիտարկում իրականացնող անձինք, և անդրադառնա բոլոր իրավիճակներին՝ **նախապես սահմանված ու համաձայնեցված արձագանքով և հակազդեցությամբ**:

Օրինակ՝ եթե երեխան բողոքում է բռնությունից կամ այդ մասին հայտարարություն է անում, դեպքը կարելի է ուղղորդել երեխաների հարցերով զբաղվող ծառայությանը,

իսկ արտակարգ իրավիճակի դեպքում՝ ոստիկանությանը, դատախազին, կամ կարելի է պահանջել բուժաշխատողի անհապաղ միջամտություն:

Կարող է նաև հատուկ նշվել, որ չարաշահման կամ իր իրավունքների խախտման մասին հաղորդած երեխայի նկատմամբ ճնշամիջոցներ գործադրելու ռիսկի դեպքում պետք է պահանջել հատուկ կարգավորումներ (օրինակ)՝ նրան իր տարեկիցների կամ աշխատակազմի անդամների անբարենպաստ վերաբերմունքից պաշտպանելու համար տեղափոխել այլ վայր կամ պահանջել հատուկ հսկողություն: Քաղաքականության մեջ նախապես սահմանված ժամանակահատվածում պետք է կազմակերպել հետվերահսկողական այց: Չարաշահումներ կատարելու մեջ կասկածվող աշխատակազմի անդամի տեղափոխումը կամ պաշտոնանկ անելը նույնպես կարելի է դիտարկել որպես պաշտպանության միջոց՝ երեխային դասերից կամ այլ ծառայություններից չկտրելու նպատակով:

Սա նաև ցուցումներ է ապահովում՝ անազատության մեջ գտնվող երեխաների հետ կապ հաստատող մշտադիտարկում իրականացնող անձանց հավաքագրելու և վերահսկելու պատշաճ չափանիշների սահմանման, տարբեր տարիքային խմբերի երեխաների հետ աշխատելու և հարցազրույց վարելու կտրվածքով՝ մշտադիտարկում իրականացնող անձանց վերապատրաստումների, երեխաների անձնական տեղեկությունները, այդ թվում՝ չարաշահումների մասին հայտարարությունների արձանագրություններն ապահով պահելու մասին ուսուցման առումով:

Երեխաներին անազատության մեջ պահելու հաստատություն մշտադիտարկման այց կատարող յուրաքանչյուր անձ պետք է անպայման ստորագրի Երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը:

Տես Հավելված 3., էջ 160

Ը. ԱՅՑ ԿԱՏԱՐՈՂ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ / ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Երբ մշտադիտարկում իրականացնող մի քանի մարմին է աշխատում անազատության մեջ պահելու միևնույն վայրում կամ ունի երեխաների իրավունքների պաշտպանության և ամրապնդման հետ կապված միևնույն մանդատը, խիստ կարևոր է, որ նրանք ստեղծեն հաղորդակցման ու համագործակցության ուղիներ:

Համագործակցության աստիճանը կարող է տարբեր լինել՝ նրանց մշտադիտարկման ծրագրերի, մեթոդների կամ բացահայտումների մասին **տեղեկությունների պարզ փոխանակումից** մինչև **փոխլրացնող այցեր, կոնկրետ հարցերի շուրջ համագործակցություն** կամ նույնիսկ **գործընկերություն**: Որքան զարգացած լինի համագործակցությունը, այնքան արդյունավետ կլինի մշտադիտարկման իրականացման գործընթացը: Այդուհանդերձ, համագործակցության աստիճանը կախված է ոչ միայն մշտադիտարկում իրականացնող մարմինների պատրաստակամությունից, այլև առկա մարդկային ու ֆինանսական ռեսուրսներից և երբեմն էլ կառուցակարգային (ինստիտուցիոնալ) սահմանափակումներից կամ մանդատի առանձնահատկություններից:

Միջազգային մակարդակում ԽԿԵ-ի և մշտադիտարկման այց կատարող տարածաշրջանային գործող կառուցակարգերի (հիմնականում ԽԿԿ-ի) միջև աշխատանքների համակարգումը նախատեսված է ԽԴԿԿԱ-ի Հոդված 31-ով, որով խրախուսվում

է *«խորհրդակցել և համագործակցել՝ կրկնօրինակումներից խուսափելու նկատառումով»*: Երբ զեկույցները գաղտնի են պահվում, նրանք պետք է գոնե խորհրդակցեն միմյանց հետ, իսկ երբ դրանք հրապարակվում են, ԽԿԵ-ի հետ խորհրդակցություններն ու համագործակցությունն ավելի հեշտ են ընթանում: ԽԿԿ-ն նաև նպաստում է փոխներգործությանը և ԿԱՄ-երի հետ գիտելիքների ու լավագույն գործելակերպերի փոխանակմանը՝ նպատակ ունենալով *«աջակցել և ոգեշնչել միմյանց»*: Գործնականում նրանք ակտիվորեն համագործակցում են ԽԿԿ-ի մշտադիտարկման իրականացման գործընթացի տարբեր փուլերում (նախքան, ընթացքում, հետո):[8]

Ազգային մակարդակում մշտադիտարկման իրականացման ազգային կառուցակարգերը պետք է տեղյակ լինեն մարդու իրավունքների միջազգային կամ տարածաշրջանային կառուցակարգերի այցերի և զեկույց ներկայացնելու գործընթացի մասին և հաշվի առնեն նրանց բոլոր համապատասխան բացահայտումները, առաջարկություններն ու եզրահանգումները: *Տես մանրամասն ցանկը ստորև:* Դրանից բացի, նրանք կարող են իրենց ունեցած տեղեկությունները և (կամ) իրենց զեկույցներն ուղարկել մարդու իրավունքների միջազգային կամ տարածաշրջանային կառուցակարգերին:

Օգտակար կարող է լինել նաև միջազգային կազմակերպությունների (ՄԻԳՀԳ դաշտային գրասենյակներ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն) դաշտային գրասենյակների, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների աշխատանքի մասին, որոնց հատուկ ուշադրության կենտրոնում են ազատությունից զրկումը, երեխաների իրավունքները և (կամ) անչափահասների արդարադատությունը, ինչպիսիք են՝ ԽԿԱ-ն (Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա), ԵՊՄԿ-ն (Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպություն), ՄԻԼՄԴ (FiDH) (Մարդու իրավունքների հարցերով լիգաների միջազգային դաշնություն), ԱԱՄԴ-ն (OIJJ) (Անչափահասների արդարադատության միջազգային դիտարան [international juvenile justice observatory]), ԲՄԴ-ն (OIP) (Բանտերի միջազգային հետազոտական կենտրոն [Observatoire International des Prisons]), ԸԽՀԿ-ն (Ընդդեմ խոշտանգումների համաշխարհային կազմակերպություն), ՄԲԲ-ն (Միջազգային բանտային բարեփոխումներ), «Սեյվ դը չիլդրեն»-ը, TDH-ը (Terre des Hommes), Հովարդի անվան բանտային բարեփոխումների լիգան, և այլն:

Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների համակարգը

ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ՄԱՐ-ՄԻՆՆԵՐԸ

- Երեխայի իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով
- Մարդու իրավունքների կոմիտե
- Համընդհանուր պարբերական դիտարկում
- Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով հանձնաժողով
- Խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողով

8 *«ԽԿԿ-ի և ԿԱՄ-երի միջև հարաբերություններ»-ի* մասին լրացուցիչ մանրամասների համար տես ԽԿԿ-ի Ընդհանուր զեկույց թիվ 22-ը (2011-2012), էջ 13-19

ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱ-ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

- Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցող
- Ազատությունից կամայական զրկելու հարցերով աշխատանքային խումբ
- ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի՝ երեխաների հանդեպ բռնության հարցերով հատուկ ներկայացուցիչ

ՄԱԿ-Ի ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
- ՅՈՒՆԻՍԵՖ (երեխաներին անազատության մեջ պահելու մասին ծրագիր)

Մարդու իրավունքների համակարգը Եվրոպայում

- Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտե
- Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար
- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան
- ԵՄ խորհրդարանի անդամներ
- Եվրոպայի խորհրդի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբ (ԳՐԵՏԱ/GRETA)

4.2. Այցի նախապատրաստումը

- ՍԱՀՄԱՆԵԼ ԱՅՑԻ ԿՈՆԿՐԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- ՀԱՎԱՔԵԼ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԻՄ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԱՅՑԻՆ
- ՀԱՎԱՔԵԼ ՎԵՐԱԲԵՐԵԼԻԱՄԲՈՂՋ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՆԱԽՔԱՆ ԱՅՑԸ
- ԿԱԶՄԵԼ ԱՅՑԻ ԾՐԱԳԻՐ
- ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՋԱԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
- ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ՆՅՈՒԹԵՐԸ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՍԱՐՔԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Մշտադիտարկման իրականացման ռազմավարությունը սահմանելուց հետո մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է սկսեն նախապատրաստվել այցին: Նախապատրաստական այս փուլի տևողությանը չպետք է մատների արանքով նայել:

Իհարկե, լավ նախապատրաստած այցն ունի օպտիմալ պայմաններում կատարվելու և ակնկալվող արդյունքներին հասնելու լավագույն նախադրյալները:

Ա. ԱՅՑԻ ԿՈՆԿՐԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Այցի կոնկրետ նպատակների սահմանումը նշանակում է որոշել՝ արդյոք այցը լինելու է.

- **մանրակրկիտ կամ լիարժեք այց՝** նպատակ ունենալով գնահատել անազատության մեջ պահելու ընդհանուր պայմանները՝ երեխաների համար սահմանված իրավունքների ամբողջական փաթեթի առնչությամբ,
- **հետևող այց՝** նպատակ ունենալով գնահատել նախորդ այցի (այցերի) շրջանակում տրված հանձնարարականների կատարման աստիճանը, համոզվել, որ երեխայի իրավունքների խախտման մասին բողոքն արդյունավետ ընթացք է ստացել, բողոքի հայտ ներկայացրած կամ նախորդ այցի ժամանակ հարցազրույցի մասնակցած երեխայի նկատմամբ ճնշումներ չեն գործադրվել, և այլն,
- **իրավիճակային (ad hoc) կամ թիրախային այց՝** նպատակ ունենալով ուսումնասիրել այցի համար ընտրված վայրի պայմանների, առկա վերաբերմունքի կամ ռեժիմի հատուկ կողմերը կամ արձագանքել կոնկրետ միջադեպերի, դեպքերի կամ բողոքների:

Բ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԹԻՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Կազմակերպել թիմի աշխատանքը

Պետք է ընտրել **թիմի ղեկավար**՝ աշխատանքը ղեկավարելու և այցի նախապատրաստումը – իրականացումը - հետվերահսկողական գործընթացը համակարգելու համար:

Թիմի ներսում պետք է սահմանել առաջադրանքների հստակ բաժանում՝ հաշվի առնելով թիմի անդամների տարբեր հմտությունները, կրթությունը, փորձը և կոնկրետ կարողությունները:

Նախապատրաստել այցը

Մշտադիտարկում իրականացնող յուրաքանչյուր անձ պետք է.

- ծանոթ լինի **մշտադիտարկման իրականացման ռազմավարությանը, նպատակներին, խնդիրներին ու առաջադրանքներին**, որոնք պետք է կատարել նախքան այցը, այցի ընթացքում և այցից հետո, և մշտադիտարկման այցի **ժամանակացույցին**,
- ունենա կամ ձեռք բերի **խոր գիտելիքներ համապատասխան** (ազգային, տարածաշրջանային ու միջազգային) **իրավական չափորոշիչների**, **համատեքստի** անհրաժեշտ **տարրերի** և այցելվող անազատության մեջ պահելու վայրում **մտահոգիչ կոնկրետ խնդիրների** մասին,
- ծանոթ լինի **մշտադիտարկման իրականացման այն մեթոդներին ու սկզբունքներին**, որոնց պետք է հետևել մշտադիտարկման այց կատարելու ընթացքում, կամ անցած լինի դրանց վերաբերյալ ուսուցում,
- **նախօրոք,** հաշվի առնելով թիմի յուրաքանչյուր անդամի փորձն ու կոնկրետ հմտությունները, **կատարի** տեղեկություններ հավաքելու, ուսումնասիրելու, կապ հաստատելու, կարդալու և մանրամասն տեղեկություններ ու փաստաթղթեր փոխանակելու իր վրա բաշխված աշխատանքներ,
- **պատրաստ լինի ճկունություն ցուցաբերելու և բարդ իրավիճակների հետ բախվելու** և, մասնավորապես, գիտակցի, որ անազատության մեջ գտնվող բազմաթիվ երեխաներ կամ նրանցից որոշները հնարավոր է որ գտնվեն շատ փխրուն հոգեվիճակում,
- **իմանա, թե ինչպես պետք է գործել** (և երբ պետք է գործել) **երեխայի չարաշահման (հայտարարությունների)** հետ բախվելու դեպքում *Տես Բաժին 4.1. / Է., էջ 56 և Հավելված 3., էջ 160,*
- տեղեկացված լինի և ունենա **կոնկրետ գիտելիքներ նախատեսվող այցելության վայրի տեսակի և տվյալ վայրում պահվող երեխաների կոնկրետ խմբերի մասին**:

Գ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Անկախ նրանից՝ այցը հայտարարված է, թե ոչ, փաստաթղթերի ուսումնասիրությու-

նը, այդ թվում՝ **հետազոտությունը, կապերի հաստատումը և կարդալը**, պետք է կատարել՝ այցի համար ընտրված հաստատության մասին հնարավորինս շատ տեղեկատվություն հավաքելու համար: Հավաքագրվող տեղեկությունները պետք է լինեն **քանակական ու որակական տվյալների** համադրություն:

Տեղեկատվության աղբյուրների հավանական (սակայն ոչ սպառիչ) **ցանկը** ներառում է.

- հենց ինքը՝ մշտադիտարկում իրականացնող մարմինը և նախորդ այցերի ընթացքում բացահայտված տվյալները,
- մշտադիտարկում իրականացնող այլ մարմինների (ազգային, տարածաշրջանային կամ միջազգային) զեկույցները,
- ՀԿ-ների կամ քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների զեկույցները,
- գիտական ուսումնասիրությունները,
- մամուլում տպագրված հոդվածները,
- նախկինում անազատության մեջ պահված երեխաների վկայությունները,
- առանցքային պատկան մարմինների հաշվետվությունները,
- վիճակագրական և այլ տվյալներ,
- անազատության մեջ գտնվող երեխաների կողմից ներկայացված բողոքները,
- հաղորդակցությունը հաստատության հետ համագործակցող պետական ծառայությունների հետ (սոցիալական, բժշկական, կրթական ծառայություններ), և երեխաներին անազատության մեջ պահելու վայրեր այցելող տարբեր մարդկանց հետ(հոգևոր կամ կրոնական հարցերով խորհրդատուներ, սոցիալական աշխատողներ, փաստաբաններ ու իրավախորհրդատուներ, ընտանիքի անդամներ կամ ծանոթներ):

Այցելության համար ընտրված հաստատության մասին տեղեկատվությունը, հնարավորության դեպքում, պետք է ներառի.

- տվյալ հաստատությունում անազատության մեջ գտնվող երեխաների թիվը և հաստատության պաշտոնապես սահմանված տարողունակությունը (օրինակ՝ գերբեռնվածությունը ստուգելու համար),
- երեխաների տարիքը, սեռը և ազգությունը,
- անազատության մեջ պահելու հիմքերը,
- նրանց անազատության մեջ պահելու կարգավիճակը, այսինքն, արդյոք նրանք գտնվում են կալանքի տակ, դատապարտված են, փակի տակ են պահվում իրենց իսկ անվտանգության/պաշտպանության/խնամքի համար՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ կամ հաշմանդամություն ունենալու պատճառով, և այլն,
- որքան ժամանակ է, որ ազատազրկված են հաստատությունում/որքան ժամանակ են ազատազրկված մնալու,
- պատասխանատու պատկան մարմինները և վայրի ղեկավար կազմն ու աշխատակիցները,
- հաստատության տեղանքը և դրա հեռավորությունը մոտակա քաղաքից կամ բնակավայրից,
- հաստատությունում կիրառվող կանոնակարգը և կրթական ծրագիրը,
- տվյալ վայրի կամ այնտեղ պահվող՝ անազատության մեջ գտնվող երեխաների

առնչությամբ ստացված ցանկացած մեղադրական հայտարարություն, բողոք կամ խնդիր, որ հայտնի է:

Դ. ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՆԱԽՔԱՆ ԱՅՑԸ

Կապերի հաստատում անազատության մեջ պահելու վայրի հետ

ՉՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՅՑԻ ԴԵՊՔՈՒՄ հաստատության հետ պետք չէ նախապես կապ հաստատել:

ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՅՑԻ ԴԵՊՔՈՒՄ մշտադիտարկում իրականացնող մարմինը պետք է նախևառաջ կապ հաստատի **հաստատության ղեկավարի** հետ՝ հեռախոսով (ոչ ֆորմալ) կամ պաշտոնական նամակի (ֆորմալ) միջոցով:

Նախապես կապ հաստատելու նպատակը կարող է լինել.

- Բացատրել այցի նպատակը,
- **Տեղեկացնել առաջին այցի հիմնական տարրերի մասին** (օրինակ՝ այցի ամսաթվերը և օրերի թիվը, թիմի կազմը, այցի համար նախատեսած ծրագիրը, և այլն),
- **Դիմել այցի համար կոնկրետ խնդրանքներով** (վայր մուտք գործելու թույլտվություն, ներսում արգելված որևէ պարագա բերելու թույլտվություն, օրինակ՝ դյուրակիր համակարգիչ, լուսանկարչական ապարատ կամ ձայնագրող սարք),
- **Խնդրել ղեկավարին երեխաներին տեղեկացնել** տվյալ վայրում կատարվելիք մշտադիտարկման այցի մասին, *Տես Բաժին 4.2. / Զ., էջ 64*,
- Խնդրել ղեկավարին թիմին տրամադրել շենքի հատակագիծը:

Կապերի հաստատում այլ առանցքային անձանց հետ

Եթե այցելվող հաստատությունում կա **որևէ երիտասարդական խորհուրդ կամ երեխաների հարցերով զբաղվող խորհրդի որևէ տեսակ**, ապա պետք է կապ հաստատել նրանց հետ և խորհրդակցել այն տարրերի շուրջ, որոնց պետք է ուշադրություն դարձնել մշտադիտարկման գործընթացի ընթացքում:

Պետք է կապ հաստատել այցի համար ընտրված **վայրի համար պատասխանատու պատկան մարմինների** հետ՝ առնվազն՝ հայտարարված այցի մասին տեղեկացնելու կամ, ըստ անհրաժեշտության, այց կատարելու համար նրանց թույլտվությունը ստանալու նպատակով:

Օգտակար կարող է լինել նաև մշտադիտարկում իրականացնող մարմնի կողմից այցի համար ընտրված հաստատության հետ գործառութային կապ ունեցող **քաղաքական, դատական կամ վարչական այլ պատկան մարմիններին** տեղեկացնելը: Որպես համագործակցության ու հաղորդակցման մաս, այցի մասին պետք է տեղեկացնել նաև **մշտադիտարկում իրականացնող կամ այց կատարող այլ մարմինների**: **Այս համատեքստում որոշ արտաքին մարմինների** հետ (օրինակ՝ կամավոր հիմունքներով գործող կազմակերպություններ կամ կառույցին մոտ բնակվող բնակիչներ) նույնպես կարելի է կապ հաստատել՝ պարզելու այն հավանական առանցքային հիմնահարցերը, որոնք պետք է ուսումնասիրել այցի ընթացքում:

Ե. ԱՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

Մշտադիտարկում իրականացնող թիմը պետք է կազմի այցի **մանրամասն** և **իրատեսական** ծրագիր: Արդեն նշվել է, որ այցի համար անհրաժեշտ է պատշաճ տևողություն, որպեսզի թիմը բավականաչափ ժամանակ ունենա հարցազրույցի մասնակցող անձի հետ (երեխաներ, ղեկավար, աշխատակիցներ) վստահելի հարաբերություններ հաստատելու, հարցազրույցներն առանց մասնակիցների այս խմբերին, հատկապես երեխաներին, շտապեցնելու վարելու, հաստատությունն ամբողջությամբ ուսումնասիրելու և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու գրանցամատյանները ուսումնասիրելու համար:

Ծրագիրը պետք է ներառի ժամանման և մեկնման ժամանակը, վայր գնալու և այնտեղից վերադառնալու ժամանակը և ճաշելու և ընդմիջումների համար անհրաժեշտ ժամանակը: Ավելին, ծրագրում պետք է տեղ թողնել անսպասելի իրավիճակների համար, որոնք կարող են հետաձգել այլ աշխատանքների կատարումը, բայց կարող են խիստ կարևոր լինել դիտարկելու և զեկուցելու համար:

Հետևաբար անհրաժեշտ է ցուցաբերել **ճկունություն**:

Միշտ ավելի լավ է ավելի շատ ժամանակ տրամադրել կոնկրետ նպատակների համար, քան շատ քիչ ժամանակ՝ չափազանց մեծ, տվյալ ժամանակահատվածում անհասանելի նպատակների համար:

Զ. ԱՋԱԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Աջակցող փաստաթղթերը կարող են ներառել հետևյալը՝

- **Պատշաճ լեզվով գրված տեղեկատվական փաստաթուղթ**, որում ներկայացվում են մշտադիտարկում իրականացնող մարմնի մանդատն ու դերը, այցի նպատակը, նրա պլանավորած օրակարգը, թիմի կազմը, հետևող գործողություններն ու կենսագործման կառուցակարգերը,
- **Հարցաթերթիկներ,** որոնք օգտագործվելու են մարդկանց (այդ թվում՝ երեխաների) հետ հարցազրույց վարելիս,
- **Ստուգաթերթիկ՝ ներառյալ երեխաներին վերաբերող ցուցիչները**, որոնք դիտարկվելու են այցի ընթացքում՝ որպես թիմի կողմից տեղեկությունների ստանդարտացված հավաքագրումը երաշխավորող միջոց:

Շատ կարևոր է, որ այս փաստաթղթերը գրվեն **պատշաճ լեզվով՝ հարմարեցնելով** այն անձին (անձանց), ում հասցեագրված են, հատկապես երեխաների համար՝ հաշվի առնելով նրանց տարիքն ու զարգացման մակարդակը: Տեղեկատվական փաստաթուղթը չպետք է գրված լինի նույն ձևով, երբ դա հասցեագրված է (մեծ կամ փոքր տարիքի) երեխայի, հաշմանդամություն ունեցող երեխայի կամ անազատության մեջ պահելու վայրի աշխատակազմի չափահաս անդամի: Շատ կարևոր է հիշել սա և հաշվի առնել աջակցող փաստաթղթերը կազմելիս: Պետք է նկատի ունենալ նաև դրանց բազմալեզու տարբերակը՝ ապահովելով, որ փաստաթղթերը թարգմանված լինեն այն (բոլոր) լեզուներով, որոնցով խոսում և որոնք հասկանում են հարցազրույցի մասնակիցները:

Է. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փաստաթղթեր և սարքեր

Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է անպայման իրենց հետ տանեն անձը հաստատող **համապատասխան փաստաթղթեր**.

- այցի համար տրված հավատարմագրերի պատճենները (տրված համապատասխան պաշտոնական մարմնի կողմից),
- այցի իրականացման համար նույնականացման փաստաթղթեր (մանդատը, այց կատարելու իրավունք տվող օրենքի հոդվածը, և այլն),
- ցանկացած վերաբերելի նամակագրություն,
- առանցքային անձանց (ի թիվս այլոց՝ պատասխանատու պատկան մարմինների) կոնտակտային տվյալները (էլ. փոստ և հեռախոսահամարներ), որոնք կարող են անմիջապես միջամտել տարածք մուտք գործելիս ծագած արտակարգ իրավիճակի կամ որևէ խնդրի դեպքում:

Մշտադիտարկում իրականացնող թիմին կարող են անհրաժեշտ լինել հետևյալ **սարքերը**.

- դյուրակիր համակարգիչ,
- ձայնագրող սարք,
- լուսանկարչական ապարատ,
- չափերիզներ կամ էլեկտրոնային չափման սարքեր,
- ջերմաչափներ կամ խոնավաչափներ,
- պոլիէթիլենային ձեռնոցներ և ախտահանիչ նյութեր,
- լապտերներ,
- թիմի անդամների միջև հաղորդակցման սարքեր (ռադիոսարքեր):

Հատուկ թույլտվություն կարող է պահանջվել երեխաներին անազատության մեջ պահելու վայրեր այնպիսի սարքերով մուտք գործելու համար, որոնք սովորաբար արգելված են ներսում: Լուսանկարչական ապարատների օգտագործում նախատեսելու դեպքում պետք է սահմանել լուսանկարների օգտագործման վերաբերյալ պատշաճ արձանագրություններ: *Տես Բաժին 4.1., էջ 48 և Հավելված 3., էջ 160*

Ընկալումները և հագուստի նկատմամբ պահանջները

Անազատության մեջ պահելու վայր մտնելիս, հատկապես այնտեղ, որտեղ երեխաներին փակի տակ են պահում, անհրաժեշտ է **արտաքին տեսքի հետ կապված հատուկ նախազգուշական միջոցներ ձեռնարկել**: Իհարկե, մշտադիտարկում իրականացնող մարմնի անկախության, անկողմնակալության ու անաչառության կապակցվածությունը ոչ միայն պետք է գոյություն ունենա որպես այդպիսին, այլ պետք է նաև արտահայտվի մշտադիտարկում իրականացնող անձանց (ու թարգմանիչների) վարքի միջոցով և պետք է նրանց այցի ընթացքում այդպիսին ընկալվի երեխաների կողմից:

Այդ պատճառով **մշտադիտարկում իրականացնող անձինք (և թարգմանիչները)** պետք է հաստատություն այցելելիս հատուկ ուշադրություն դարձնեն իրենց հագուստին: **Հագուստի ձևը** պետք է լինի **լուրջ և պրոֆեսիոնալ**՝ առանց տվյալ հաստատության աշխատակիցների և ղեկավարի հագուստի ձևի հետ շփոթություն առաջացնելու: Հստակ ձևով տարբերվելու համար մշտադիտարկում իրականացնող անձինք կարող են կրել կրծքանշան կամ որևէ տարբերակիչ նշան, ինչպես օրինակ՝ կոնկրետ գույնի կամ մշտադիտարկում իրականացնող մարմնի տարբերանշանով կամ անվամբ բաճկոն կամ վերնաշապիկ: Դրանից բացի՝ հագուստի ձևը պետք է համապատասխանի մշակութային համատեքստին և, ամեն դեպքում, այն պետք է լինի կոռեկտ և հարգալից:

Լոգիստիկայի ապահովում

Չպետք է թերագնահատել լոգիստիկայի ապահովմանը հատկացվելիք անհրաժեշտ **ժամանակն ու ճկունությունը**, սակայն չպետք է նաև թույլ տալ պատկան մարմիններին «նախապատրաստվել» այցին:

Նախքան այցը պետք է հաշվի առնել հետևյալ կողմերը՝

- **Այցի հայտարարում** (հեռախոսազանգեր, նամակներ, թույլտվություններ, տեղեկատվական փաստաթուղթ, ծրագիր),
- Այցի **ամսաթվի (ամսաթվերի), օրվա (օրերի) և ժամի (ժամերի)** նշանակում,
- Ապահովել, որ նախատեսված ժամանակահատվածում այցելվող **վայրը** լինի **հասանելի**,
- Ապահովել, որ **ընտրված ժամանակահատվածում** հնարավոր լինի կատարել գնահատման ենթակա բոլոր կողերի մշտադիտարկում (օրինակ՝ տոնական օրերին այց կատարելիս կարող է հնարավոր չլինի դիտարկել, թե ինչպես է իրականացվում կրթության իրավունքը),
- Ապահովել, որ **անվտանգության նկատառումներից ելնելով հնարավոր լինի** նախատեսված օրերին այց կատարել ու թույլվություն ստանալ,
- Ստանալ **պահանջվող թույլտվությունները**՝ անհրաժեշտ սարքերով մուտք գործելու համար,
- Ապահովել և փորձարկել **անհրաժեշտ սարքերը**,
- Նախապատրաստել բոլոր **պահանջվող փաստաթղթերը**, պատրաստել բավարար թվով պատճեններ և բերել բոլոր անհրաժեշտ նյութերը (թուղթ, գրիչ, կրծքանշան, այլ),
- Կազմակերպել թիմի **ուղևորության և օթևանի** հետ կապված հարցերը,
- Անհրաժեշտության դեպքում պայմանագիր կնքել **թարգմանիչների** հետ՝ նրանց նախապես տրամադրելով համապատասխան բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները, տեղեկացնել իրենց դերի մասին և նախապատրաստել դրան, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, անցկացնել երեխաների հետ հարցազրույց վարելու մասին վերապատրաստում:

4.3. Այցի իրականացումը

Այցը սովորաբար ներառում է հետևյալ քայլերը, որոնք կարելի է փոփոխել՝ կախված հանգամանքներից, և այն հանգամանքից, թե այցի տեսակով ու նպատակով պայմանավորված, որ գործոններին կարելի է ավելի շատ կամ քիչ ժամանակ հատկացնել

- ՆԱԽՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ/ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ
- ՇԵՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ
- ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ
- ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ
- ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԹԻՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
- ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ/ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ

Անկախ նրանից, թե մշտադիտարկման ինչպիսի այց է կատարվում, այցի նպատակն ինքնին, պայմանների և անազատության մեջ գտնվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին տեղեկություններ հավաքելն է: Տեղում այս տեղեկությունները կարելի է ձեռք բերել մի քանի եղանակով և տարբեր աղբյուրներից.

- **մշտադիտարկում իրականացնող անձանց դիտարկումներն ու ընկալումները** (ինչ են տեսնում, լսում և ընկալում),
- անազատության մեջ գտնվող **երեխաների տեսակետները**,
- **ղեկավարի, աշխատակազմի անդամների և այն բոլոր մարդկանց (ներքին և արտաքին) տեսակետները,** որոնք հոգ են տանում այցելած հաստատությունում անազատության մեջ գտնվող երեխաների մասին,
- **տեղեկատվության մի շարք պաշտոնական ու գրավոր աղբյուրների բովանդակությունը՝** արձանագրություններ, գրանցամատյաններ, երեխաներին բաժանված ներքին կանոններ ու փաստաթղթեր:

Հավաքագրած տեղեկությունների ծավալն ակնհայտորեն չպետք է վերլուծել մեկուսի, այլ պետք է կատարել խաչաձև համադրում, որպեսզի պայմանների և անազատության մեջ գտնվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի գնահատումը լինի առավելագույնս ամբողջական և իրականությանը հնարավորինս մոտ:

Ա. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ

Անազատության մեջ պահելու վայր ժամանելուն պես առաջին մարդը, որին պետք է հանդիպել, սովորաբար **հաստատության ղեկավարն** է կամ, խոչընդոտների դեպքում, ղեկավարի աշխատակազմի որևէ ավագ անդամ:

Եթե այցը հայտարարված է եղել, նախնական հանդիպումը հաջորդում է մշտադի-

տարկում իրականացնող թիմի ղեկավարի կողմից առաջին անգամ հաստատված կապին, որը տեղի է ունեցել այցից առաջ՝ հեռախոսազրույցի կամ պաշտոնական նամակի միջոցով:

Քննարկումը վարող մշտադիտարկում իրականացնող անձի վերաբերմունքը և այն, թե ինչպես է ընթանում բուն քննարկումը, վճռորոշ նշանակություն ունեն անազատության մեջ պահելու վայրի համար անմիջականորեն պատասխանատու անձի և մշտադիտարկում իրականացնող թիմի միջև **կառուցողական երկխոսության** ճիշտ հիմքեր գցելու համար:

Քննարկման բովանդակությունը տարբեր կարող է լինել՝ կախված նրանից՝ արդյոք դա առաջին այցն է, թե կրկնվող այց է, սակայն այն կարող է ընդգրկել հետևյալ հավանական (և ոչ սպառիչ) թեմաները.

- **Մշտադիտարկում իրականացնող մարմնի ներկայացում** (դերը, մանդատը, թիմի կազմը, մշտադիտարկման իրականացման մեթոդները), եթե դա առաջին այցն է,
- **Այցի նկարագրություն** (նպատակը, ծրագիրը, երեխաների ու աշխատակիցների հետ հարցազրույցները, շենքում շրջայցի կատարումը, փաստաթղթերի ու գրանցամատյանների ուսումնասիրությունը, բացատրություն այն մասին, թե ինչպես են օգտագործվելու այցի ընթացքում հավաքագրված տեղեկությունները) և այցին հետևող գործողությունների նկարագրություն (զեկույց, հաջորդ այց, կապի պահպանում պատկան մարմինների հետ, և այլն),
- **Հարցազրույցներ երեխաների հետ** (բացատրելով դրա անհրաժեշտությունը, մանրամասն ներկայացնելով մեթոդներն ու սկզբունքները, տալով էթիկական ուղեցույցների և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության օրինակները, եթե դեռևս չեն տրամադրվել, խնդրելով համագործակցել հարցազրույցների համակարգման ու կազմակերպման գործում՝ նշելով, որ դա պետք է արվի խիստ կամավոր հիմունքներով),
- Հարցազրույցներ աշխատակիցների հետ,
- **Տեղեկություններ այցելած հաստատության մասին,** այդ թվում՝ ցանկացած հարց, մտահոգություն կամ խնդիր, որ վերաբերում է, մասնավորապես, որևէ երեխայի, երեխաների կոնկրետ խմբի, բռնության գործադրումով միջադեպի կամ չարաշահումների մասին որևէ հայտարարության,
- **Հաստատության ղեկավարի տեսակետը** հենց հաստատության, աշխատակիցների, ռեժիմի, պայմանների, երեխաների նկատմամբ վերաբերմունքի, մանկավարժական ծրագրի կամ կրթական մոտեցման, հաստատության ղեկավարության առջև ծառացած հավանական խնդիրների մասին, բարելավումներին ուղղված նրա սեփական առաջարկությունները,
- **Վերջնական հանդիպում,** որը նախատեսված է այցի ավարտին
  Տես Բաժին 4.3. / Է., էջ 81,
- **Անհրաժեշտ բոլոր պարզաբանումներն ու տեղեկությունները՝** ի պատասխան ներկայացված որևէ հարցի, մտահոգության, առաջարկության, հանձնարարականի կամ կարիքի:

Բ. ՇԵՆՔԱՅԻՆ ԵՎ ԿԵՑՈՒԹՅԱՆՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Եթե մշտադիտարկում իրականացնող մարմինն **առաջին անգամ** է այցելում տվյալ հաստատություն, օգտակար կարող է լինել բավականաչափ ժամանակ տրամադրել շենքային պայմանների ուսումնասիրությանը՝ հաստատության ամեն վայրում ու սենյակում անազատության մեջ պահելու պայմանների մասին լավ պատկերացում կազմելու համար: Դրա համար թիմը կարող է աշխատանքը բաժանել իր անդամների միջև:

Եթե առաջին այցը չէ, հաստատությունում ընդհանուր շրջայց կատարելը կարող է բավական լինել՝ թերևս ավելի մեծ ուշադրություն դարձնելով այն մի քանի վայրերին, որոնք նախորդ այցի ժամանակ սահմանվել են որպես «ռիսկային» (պատժախուց, խցեր կամ ընդհանուր ննջասենյակներ, և այլն):

Ղեկավարը կամ աշխատակազմի անդամներից որևէ մեկը կարող է շենքում շրջելու համար ուղեկցել մշտադիտարկում իրականացնող թիմի պատվիրակությանը: Այս դեպքում մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է ուշադիր լինեն, որ ամեն տեղ գնան, այդ թվում՝ այն տարածքները, որ աշխատակազմի ուղեկցող անդամը նրանց ցույց չի տալիս, կամ կրկին անդրադառնան երեխաների հետ հարցազրույցներին և (կամ) փաստաթղթերի ու գրանցամատյանների ուսումնասիրությանը, եթե դրանք նախորդ անգամ գրավել են իրենց ուշադրությունը: **Շենքի ուսումնասիրությունը** պետք է ներառի հետևյալ կետերը, սակայն չսահմանափակվի սրանցով.

- այն վայրը, որտեղ պահում են երեխաներին/ուղեկցում են ժամանելուն պես,
- ննջասենյակները / խցերը / ընդհանուր ննջասենյակները,
- մեկուսարանները / առանձնախցերը,
- պատժախցերը,
- բժշկական հարմարությունները,
- կրթական հարմարությունները,
- սոցիալական հարմարությունները,
- ֆիզիկական ակտիվության հարմարությունները (ներսի ու դրսի տարածքները՝ բակերն ու մարզական հարմարությունները),
- սանհանգույցը,
- այցելությունների սենյակները + հեռախոսախցիկը + փոստարկղը,
- կրոնական / հոգևոր սենյակները,
- բողոքների և (կամ) խնդրանքների արկղը,
- անվտանգության աշխատողների սենյակը և տեսահսկման կենտրոնը,
- այլ:

Այս տարբեր տարածքներով շրջելիս մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է **մեծ ուշադրություն դարձնեն** բոլոր գործոններին, որոնք մեծ կարևորություն կարող են ունենալ երեխաների իրավունքների առումով, այդ թվում.

- վայրի ընդհանուր ձևակազմը (բանտանման, պաշտպանական),
- կեցության ընդհանուր պայմանները,
- անվտանգության ապահովման կարգավորումները (ցանկապատ, ճաղավանդակներ, արգելապատնեշներ, փակ դռներ, անվտանգության տեսախցիկներ, զենք կրող աշխատակիցներ, և այլն),

- երեխաների համար նախատեսված տարածքները (ննջասենյակներ, խցեր, ընդհանուր ննջասենյակներ, ներքին բակ, դասասենյակներ, ընդհանուր սենյակներ, ճաշարաններ, լոգասենյակներ, և այլն) և այն վայրերը, որտեղ ծառայություններ են մատուցվում երեխաներին (խոհանոց, լվացքատուն, կրոնական հարմարություններ, այցելությունների սենյակներ, հեռախոսախցիկ, փոստարկղ՝ բողոքարկման հայտ ներկայացնելու համար, և այլն),
- հաստատությունում տիրող ընդհանուր մթնոլորտը,
- աշխատակիցների ու ղեկավարի համար նախատեսված տարածքները՝ գրասենյակները, սանհանգույցը, պահեստը, նկուղներն ու ձեղնահարկերը, և այլն,
- մի կողմից, աշխատակիցների, մյուս կողմից, երեխաների վարքը,
- երեխաների համար նախատեսված տարածքներում նրանց համար թողնված (տեսանելի) փաստաթղթերը (կարգեր ու կանոնակարգեր, բողոքարկման ընթացակարգեր, ծրարներ ու նամականիշներ, կոնտակտային անձանց ցուցակ, և այլն):

Այցի ընթացքում մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է **խոսեն աշխատակազմի հետ**՝ նրանց հարցնելով շենքի ձևակազմի և այն մասին, թե ինչպես են տարբեր բաներ գործնականում կիրառվում (օր.՝ Ո՞ր դեպքերում է օգտագործվում պատժախուցը: Որքա՞ն ժամանակ կարող են երեխաները ցնցուղ ընդունել: Ինչո՞ւ լոգարաններում վարագույր չկա):

Տես Բաժին 5., էջ 93

Գ. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կախված մշտադիտարկում իրականացնող մարմնի՝ ուսումնասիրություն կատարելու լիազորությունից ու կարողություններից՝ կենսական նշանակություն ունի, որ այն **անձնական գործերը, գրանցամատյանները, արձանագրություններն ու այլ փաստաթղթերը** ուսումնասիրվի մշտադիտարկման գործընթացի սկզբում: Այս փաստաթղթերը կարող են օգնել խաչաձև համադրել շենքի դիտարկման, հարցազրույցների ընթացքում քաղած տեղեկատվությունը կամ օգնել ընտրել այցելելու համար առանձնակի հետաքրքրության արժանի վայրերը կամ հարցազրույցի համար համապատասխան մարդկանց, օրինակ.

Ուսումնասիրելու համար առաջին օգտակար փաստաթղթերը **հաստատության կարգերն ու կանոնակարգերն** են, որտեղ մանրամասն ներկայացված են ներքին կանոնները, որոնցով ղեկավարվում է առօրյա կյանքն անազատության մեջ պահելու վայրում: Երեխաներին վերաբերող ցուցիչների համեմատությամբ՝ այս կարգերն արդեն մշտադիտարկում իրականացնող անձանց ընդհանուր պատկեր են տալիս, թե հաստատության տարածքում ինչպես են իրացվում անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքներն ու նրանց նկատմամբ կիրառվող չափորոշիչները:

Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել կարգապահական պատասխանատվության միջոցներին ու ընթացակարգերին, անվտանգության կանոններին, զսպման կառուցակարգերին և թույլատրված ուժի կիրառմանը, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու համար կիրառվող կանոններին (հեռախոս, այցելություններ, և այլն):

Այս վերլուծությունը ցույց կտա այն յուրահատուկ կողմերը, որոնց խաչաձև համադ-

րումը կարևոր կլինի գործնականում դրանց իրականացման առումով՝ մի կողմից՝ երեխաների, և մյուս կողմից՝ աշխատակազմի տեսանկյունից,:

Կարևոր է նաև հաստատություն ժամանելուն պես ուշադրություն դարձնել, թե այս փաստաթղթերն ինչ **լեզվով** են ձևակերպված և **ինչպես են բացատրվել** երեխաներին (և ով է բացատրել):

Պետք է անպայման ուսումնասիրել **երեխայի անձնական գործը**, այդ թվում՝ նրա կրթության, մասնագիտական ուսուցման, սոցիալական խնամքի, խորհրդատվության և, հավանական է, բուժման անհատական ծրագիրը:

Ուսումնասիրության ենթակա **գրանցամատյանները**, եթե այդպիսիք կան, հետևյալն են.

- **գրանցումների, մուտքերի ու ելքերի գրանցամատյանը**
  (որպեսզի իմանանք, թե որքան ժամանակ են երեխաներին պահել հաստատությունում, միաժամանակ քանի երեխա է զրկված ազատությունից՝ գերբնակեցումը գնահատելու համար, որքան հաճախ են կարողացել թույլտվությամբ դուրս գալ կամ տուն արձակուրդ գնալ և այլն),
- **գրանցելու պահին նրանցից վերցրած գույքի գրանցամատյանը**
  (որպեսզի ստուգենք՝ արդյոք գույքացուցակը համապատասխանում է մինչև ազատ արձակելը պահվող գույքին),
- **կարգապահական միջոցների կամ պատժամիջոցների գրանցամատյանը**
  (որպեսզի պարզենք, թե որ երեխաների նկատմամբ է կիրառվել պատժամիջոց, քանի անգամ, ինչ պատճառներով և ինչպիսի միջոցներով է այն կիրառվել),
- **մեկուսի ազատազրկման գրանցամատյանը**
  (որպեսզի պարզենք, թե որ երեխաներին են նախկինում մեկուսացրել, քանի անգամ, որքան ժամանակով, որտեղ, ով և որքան հաճախ են նրանց ստուգել առանձնացված լինելու/պատժախցում գտնվելու ընթացքում),
- **միջադեպերի գրանցամատյանը**
  (որպեսզի հայտնաբերենք այն երեխաներին, որոնք միգուցե որևէ նախկին միջադեպի զոհ կամ մաս են եղել, կամ իմանանք, թե երբ է ուժի կիրառումը համարվել անհրաժեշտ),
- **բողոքների գրանցամատյանը**
  (որպեսզի պարզենք, թե որ երեխաներն են բողոքի հայտ ներկայացրել, ինչ ընթացք է ունեցել բողոքի ուսումնասիրությունը, ինչ ժամկետներում և այլն),
- **բժշկական գրանցամատյանը** (հաշվի առնելով բժշկական գաղտնիությունը)
  (որպեսզի գնահատենք երեխաներին տրամադրվող առողջապահական խնամքի պատշաճ լինելը և, հավանական է, հայտնաբերելու այն երեխաներին, որոնք միգուցե որևէ տեսակի դաժան վերաբերմունքի կամ խոշտանգման զոհ են եղել),
- **այցերի գրանցամատյանը և հեռախոսազանգերի կամ նամակների գրանցամատյանը**
  (որպեսզի գնահատենք արտաքին աշխարհի հետ երեխաների ունեցած կապի մակարդակն ու հաճախականությունը):

Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է ուշադրություն դարձնեն լուսանցքներում կատարված գրառումներին, փակագծերում արված նշումներին, գրառումների հեղինակին, ով է ստորագրել գրանցամատյանը կամ վավերացնող ստորագրություն

դրել, դատարկ դաշտերը, գրառումների պարբերականությունը և այլն: Գրանցամատյաններում (կարգապահական միջոցների, միջադեպերի և այլ) կատարված գրառումների քչությունը կարող է դրական տվյալների նշան չլինել, այլ իրականում կարող է նշանակել, որ գրանցումները պատշաճ կերպով չեն արվում:

Հետաքրքրություն ներկայացնող այլ փաստաթղթեր կարող են լինել.

- հաստիքացուցակները (ներառյալ մասնագիտական փորձն ու գործառույթները),
- աշխատողների աշխատանքային գրաֆիկները,
- շաբաթական ճաշացանկը,
- հիգիենայի ու սանիտարական պայմանների, առողջապահության և այլ կողմերի վերաբերյալ տեսչական հաշվետվությունները,
- արտաքին դերակատարների/կազմակերպությունների հետ պայմանագրերը,
- ինքնավնասման և ինքնասպանության կանխարգելման արձանագրությունը,
- այլ:

Դ. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

«Մասնագետների մեծամասնության համար երեխաների հետ հաղորդակցումը, ընդհանրապես, զգալի մարտահրավերներ է պարունակում, որոնք մեծապես կարելի է հաղթահարել հատուկ նախնական ուսուցմամբ ու շարունակական վերահսկվող գործելակերպով: Անազատության մեջ գտնվող երեխաների դեպքում մասնագետներին խորհուրդ է տրվում հաշվի առնել լրացուցիչ կարևորագույն առանձնահատկություններ: Բոլոր իրավիճակներում մասնագետները պետք է երեխաների հետ հարցազրույց վարելը պատկերացնեն որպես մի աշխատանք, որը պահանջում է դրական ու վստահ վերաբերմունք ու հարգանք՝ իմացական ու հուզական կարողությունների զարգացման փուլում գտնվող անձի նկատմամբ: Սա պահանջում է, որ մասնագետն արագ գնահատի երեխայի զարգացման մակարդակը՝ լեզվի, շփվելիս անկաշկանդ (կաշկանդված) զգալու աստիճանի առումով, և արագ աչքի անցկացնի այլ հավանական նախազգուշական նշանները, որոնք կարող են բնութագրել երեխայի գործողությունները:

Անազատության մեջ գտնվող երեխաների դեպքում ակնկալվում է, որ անծանոթ չափահաս անձի հետ հանդիպումը կարող է նշանակալի անհանգստություն առաջացնել, որի պատճառով մի երեխա կարող է դառնալ ինքնամփոփ ու ավելի քիչ շփվող, իսկ մեկ այլ երեխա կարող է զրուցել հաճոյակամ, սակայն մակերեսային ձևով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չարաշահումների տարածվածությունը հատկապես բարձր է անազատության մեջ գտնվող երեխաների բնակչության շրջանում, լինի դա ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնություն կամ դրանց ցանկացած այլ համադրություն կամ նույնիսկ կրիտիկական աստիճանի բռնության ենթարկվածություն: Այս պատճառով մասնագետը պետք է զգուշավոր վերաբերմունք ցուցաբերի, քանի որ կարող է չշահել տվյալ երեխայի լիակատար վստահությունը, սակայն միշտ վտանգում է ամբողջովին կորցնել այն, եթե հարցազրույց վարելիս չհետևի հիմնական կանոններին: Այդուհանդերձ, պատշաճ պայմաններում մասնագետները պետք է մեծ բավականություն ստանան երեխաների հետ հարցազրույց վարելիս, քանի

որ նրանք հաճախ ամբողջովին կանխատեսելի չեն և ունակ են ստեղծելու հզոր դրական վերաբերմունք»:

Ֆիլիպ Դ. Ջաֆի, հոգեբան, ազատազրկման համատեքստում երեխայի զարգացման հետ կապված հարցերի փորձագետ

Մշտադիտարկում իրականացնող մարմինը պետք է ընդունի **էթիկական ուղեցույցներ**՝ երեխաների հետ հարցազրույցների կարգը սահմանելու համար, որպեսզի դրանք կատարվեն երեխաների համար առավելագույնս անվտանգ ու հարգալից պայմաններում և առանց երեխաներին՝ մշտադիտարկում իրականացնող թիմի հետ խոսելու համար ճնշամիջոցների վտանգի ենթարկելու: Այս իմաստով, ընդհանրապես ընդունված է, որ երեխաների հետ հարցազրույցների ժամանակ հաշվի առնվեն մի շարք տարրեր ու սկզբունքներ, որպեսզի **երեխաները զգան վստահ, ապահով ու անվտանգ**, որպեսզի տրամադրեն անկանխակալ տեղեկություններ, ինչը հարցազրուցավարների համար կարտացոլի *նրանց* իրականությունը: *Տես Բաժին 3.4., էջ 37, Բաժին 4.1. / Է., էջ 56 և Հավելված 2., էջ 158*: Խիստ ցանկալի է, որ երեխաների հետ հարցազրույց վարելու համար պատասխանատու մշտադիտարկում իրականացնող անձը **փորձ** ունենա, իսկ եթե ոչ, լավ **պատրաստություն և ուսուցում** անցած լինի երեխայի ու բարեկեցության հարցերի, ինչպես նաև երեխաների հետ հաղորդակցման մեթոդների շուրջ: Այստեղ էական նշանակություն ունի **հաղորդակցման ոճը**: Ավելին, նրանք պետք է նաև ծանոթ լինեն այն սկզբունքներին ու մեթոդներին, որոնց պետք է հետևել երեխաների հետ հարցազրույց վարելիս *Տես Բաժին 3.4., էջ 37*:

Առաջնահերթություն պետք է տալ **առանձնազրույցներին**, սակայն այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ կամ երբ դա հետաքրքիր է թվում կամ ռազմավարական առումով շահավետ է, օրինակ՝ հետապնդման վտանգից խուսափելու նպատակով, կարելի է հավաքել **ֆոկուս խմբեր**: *Տես էջ 79:*

Նախքան հարցազրույցը սկսելը պետք է հաշվի առնել մի քանի ասպեկտ.

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՅՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ

Երեխաների հետ անկաշկանդ զգալու և նրանց հետ շփվելու համար հաղորդակցման այնպիսի ոճ և լեզու ընտրելու կարողությունը, որոնք հարմար են երեխայի համար և համապատասխանում են նրա տարիքին ու զարգացման փուլին (օր.՝ նրա հետ խաղալով, հատակին նստելով, տեղի բառեր ու արտահայտություններ կամ ժարգոն օգտագործելով, և այլն):

Հասկանալու և հաղորդակցման ոճն ու որոշ թեմաներին անդրադառնալու ձևն երեխաների մշակութային նորմերին հարմարեցնելու կարողությունը:

Գնահատելու, ընկալելու կարողությունը, որ երեխաները կարող են իրենց իրավիճակն ընկալել և իրենց զգացմունքներն արտահայտել մեծահասակներից տարբեր ձևով օր.՝ նրանք կարող են արտահայտվել խորհրդանշական ձևերով, կարող են հորինել բացատրություններ, շեշտել որոշ խնդիրներ և կարևորություն չտալ այլ խնդիրների և այլն):

Վհատության, թշնամանքի, անվստահության կամ կասկածի արտահայտությունները հասկանալու և հանդուրժելու կարողությունը:

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՅՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏ ՊԵՏՔ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼ

Այցելած հաստատությունում առանձնացնել անազատության մեջ գտնվող երեխաների տարբեր ներկայացուցչական խմբեր՝ ըստ տարիքի, սեռի, հատկապես խոցելի երեխաների (որոնք նկարագրվում են որպես անհանգստություն պատճառող, անզուսպ, կարգապահական միջոցների հաճախ ենթարկվող, ահաբեկման զոհեր, պաշտոնական բողոք ներկայացրածներ, և այլն), ոչ միայն նրանց, որոնց առաջարկել են աշխատակազմի անդամները կամ նրանց, որոնք անձամբ են մոտենում մշտադիտարկում իրականացնող թիմին: Անձնական գործերի ու գրանցամատյանների ուսումնասիրությունը կարող է օգնել ընտրել հարցազրույցի համար հավանական թեկնածու երեխաների:

Տես Բաժին 4.3./Գ., էջ.71

Միշտ համոզվեք, որ երեխաները կամովին են համաձայնվել հարցազրույց տալ՝ իրենց տեղեկացված համաձայնությունը տալու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հասկանալի ձևով նրանց տրամադրելուց հետո: Միանշանակ պետք է հարգել այն երեխայի որոշումը, որը չի ցանկանում մասնակցել, սակայն հետաքրքիր կլիներ հասկանալ դրա պատճառները:

Նախազգուշական միջոցներ. Մեծ զգոնությամբ պետք է մոտենալ այն երեխաների հետ հարցազրույցին, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներին. երեխա, որն ունի հստակ ճանաչողական խնդիրներ կամ տրավմայի է ենթարկվել, կամ որի հոգեբանը, երեխայի խնամքի հարցերով զբաղվող աշխատողները կամ սոցիալական աշխատողը լուրջ մտահոգություններ ունեն, որ նման հարցազրույցներին մասնակցելը, հնարավոր է, բացասական ազդեցություն ունենա նրա վրա:

ՈՐՏԵՂ ԵՆ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ, ԵՎ Ո՞Վ Է ՎԱՐԵԼՈՒ

Գտնել մի վայր, որտեղ հնարավորինս շատ մեկուսացվածություն կա և որտեղ երեխան ապահով ու անկաշկանդ է զգում՝ առանց չափազանց շատ շեղող երևույթների: Երեխայի ընտրած սենյակն ակնհայտորեն լավագույն տարբերակն է: Այլապես, որպես առաջնահերթություն պետք է դիտարկել որևէ չեզոք սենյակ, օրինակ՝ ճաշարանը, դասասենյակը կամ այցելությունների սենյակը, սակայն ոչ մի դեպքում պահակների աշխատասենյակը կամ մեկ այլ վայր, որտեղ երեխան կարող է անապահով կամ անկաշկանդ զգալ, կամ որտեղ մեկուսացվածությունը կարող է վտանգված լինել:

ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

«Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է պաշտպանեն անազատության մեջ գտնվող երեխաների մեկուսացվածությունն ու անձնական տվյալներն այնպես, որ երեխաների մասին անձնական տեղեկությունների հասանելիությունը սահմանափակվի նվազագույն թվով մարդկանց համար, որոնց անհրաժեշտ է իմանալ դրանք, և ոչ մի տեղեկություն կամ անձնական տվյալ հասանելի չդառնա կամ չհրապարակվի, հատկապես լրատվամիջոցներում, որոնք կարող են բացահայտել կամ անուղղակիորեն թույլ տալ երեխայի ինքնության բացահայտում, այդ թվում՝ երեխայի տեսքը, երեխայի կամ նրա ընտանիքի նկարագրությունը, անունները կամ հասցեները, ձայնագրություններ ու տեսանկարահանումներ և այլն: Երեխային լուսանկարելուց առաջ պետք է խնդրել նրա թույլտվությունը, իսկ լուսանկարը

կարելի է օգտագործել միայն այն դեպքում, երբ երեխան տվել է իր համաձայնությունը՝ կոնկրետ նպատակով դա օգտագործելու համար: Մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է գիտակցեն այն վտանգը, որ հրապարակվելուն պես իրենց զեկույցները կարող են օգտագործվել անազատության մեջ գտնվող երեխաների շուրջ խնդիրները սենսացիայի առարկա դարձնելու համար և որ այն երեխաները, որոնք մասնակցել են, կարող են սխալ ներկայացվել, և նրանց կարող են կապել օրենքի հետ խնդիր ունեցող երեխաների բարոյական պահվածքի շուրջ տիրող խուճապի հետ: Էական նշանակություն ունի այնպիսի խոսք և պատկերներ օգտագործելուց խուսափելը, որոնք կարող են նվաստացնել, զոհի դերում դնել կամ ամաչացնել երեխաներին, որոնք կատարում են այնպիսի ընդհանրացումներ, որոնք ճշգրտորեն չեն արտացոլում իրավիճակը, կամ որոնք խտրականություն են դնում երեխաների որոշ խմբերի միջև»:

Արդարադատություն երեխաների համար. Տեղեկատու թերթիկ թիվ 2. Մշտադիտարկման իրականացման անկախ կառուցակարգեր անազատության մեջ գտնվող երեխաների համար, Միջազգային բանտային բարեփոխումներ (PRI)

Ո՞Վ Է ՎԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Թիմի անդամներից մի հոգու պետք է նշանակել հարցազրույցը վարելու համար: Սրա համար պահանջվում է կոնկրետ փորձ և (կամ) պատշաճ պատրաստվածություն ու վերապատրաստում երեխաների հարցերի և հաղորդակցման հմտությունների շուրջ:
Տես Բաժին 4.1. / Զ., էջ 54

Հնարավորության դեպքում երեխաներին պետք է առաջարկել հարցազրույց վարող անձի սեռի ընտրության տարբերակ, ինչն առանձնակի կարևոր կարող է լինել այն երեխայի համար, որի նկատմամբ բռնություն է գործադրվել:

Ըստ անհրաժեշտության՝ հարցազրույցին կմասնակցեն պատշաճ կերպով պատրաստված թարգմանիչներ:

Տես Բաժին 4.1. / Զ., էջ 54 և Բաժին 4.2. / Է., էջ 65

ԻՆՉՊԵՍ Է ՁԱՅՆԱԳՐՎԵԼՈՒ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՂՏՆԻ ՊԱՀՎԵԼՈՒ

Թույլատրելու դեպքում կարելի է օգտագործել ձայնագրող սարք՝ սենյակում մարդկանց թիվը կրճատելու նպատակով: Հակառակ դեպքում, մշտադիտարկում իրականացնող երկրորդ անձը պետք է միանա հիմնական հարցազրույցին՝ մշտադիտարկում իրականացնող մյուս անձի համար նշումներ կատարելու համար, որպեսզի նա կարողանա ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել երեխայի վրա և նրա հետ պահպանի տեսողական կոնտակտ՝ երեխայի հետ վստահություն ձևավորելու նպատակով:

Կարևոր է տեղեկացնել երեխային, թե ինչու է ձայնագրվում հարցազրույցը, և ինչպես է պահվելու ձայնագրության գաղտնիությունը:

ԻՆՉ ՏԱՐԱԾՎԱԾ ՀԱՐՑԵՐ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԾԱԳԵԼ

Իմացեք և պատրաստ եղեք հարցազրույցի ժամանակ առերեսվել հետևյալ խնդիրներին կամ հարցերի հետ.

- Երեխաները պատասխանում են հարցերի, որոնց պատասխանները չգիտեն,
- Երեխաները կարևորություն չեն տալիս որոշ հարցերի կամ չափազանցնում են այլ հարցեր, հատկապես այլ երեխաների ներկայությամբ՝ իրենց «վարկանիշը» բարձրացնելու համար,
- Երեխաները հարցազրուցավարին պատմում են այն, ինչ իրենց կարծիքով հարցազրուցավարը ցանկանում է լսել, կամ այն, ինչ նրանց սովորեցրել են աշխատակազմի անդամները,
- Երեխաները ոչինչ չեն ասում, քանի որ վախենում են, որ իրենց հայտնած տեղեկությունների պատճառով մշտադիտարկում իրականացնող թիմի գնալուց հետո կենթարկվեն ճնշամիջոցների,
- Երեխաներ, որոնց մտքի թելը և (կամ) խոսքը դժվար է հասկանալ կամ որին դժվար է հետևել:

Որպես հարցազրույցի նախաբան՝ մշտադիտարկում իրականացնող անձը պետք է այնպես անի, որ երեխաներն իրենց անվտանգ զգան՝ ապահովելով հետևյալը.

- Պատշաճ կերպով ներկայանալ նախքան հարցազրույցը սկսելը և երեխային ներկայանալու հնարավորություն տալ,
- Բացատրել հարցազրույցի նպատակը, ինչի համար են օգտագործվելու նրանց տված տեղեկությունները և այն սահմանափակումները, թե մշտադիտարկում իրականացնող մարմինը ինչ կարող է փոխել կամ ինչ չի կարող փոխել,
- Բացատրել, թե ինչու են հարցազրույցի ընթացքում գրառումներ կատարում/ձայնագրում և ինչպես են դրանք գաղտնի պահվելու,
- Բացատրել, որ երեխաները կարող են ցանկացած պահի ազատ դադարեցնել հարցազրույցը:

Այս ամենից բացի՝ նախքան երեխաների հետ հարցազրույց սկսելը դիտարկեք «սառույցկոտրուկների» կիրառումը: Նախքան սկսելը նստեք և ճաշեք նրանց հետ, խաղացեք կամ միացեք որևէ սպորտային խաղի, նայեք ու քննարկեք երեխաների ձեռքի աշխատանքները (խորհուրդ է տրվում, եթե ժամանակը և անվտանգության միջոցները թույլ են տալիս):

Այնուհետև, տեղեկություններ ձեռքբերելու նպատակով երեխաներին հարցեր ուղղելիս հարցազրուցավարները պետք է **հավատ ու վստահություն** ձևավորեն երեխաների մոտ և ցույց տան, թե որքան **ապահով** կարող են երեխաները զգալ իրենց հետ՝ հետևյալ կերպ.

- Սկսել առօրեական կամ ոչ հակասական հարցերով և աստիճանաբար անցնել ավելի նուրբ հարցերի,
- Կիրառել ոչ պաշտոնական և հանգիստ մոտեցում, որպեսզի օգնեք երեխաներին անկաշկանդ զգալ,
- Հասկանալ, որ որոշ ժամանակ կպահանջվի, մինչև երեխաները բավականաչափ հարմարավետ կզգան խոսել (հատկապես, եթե իրենց մտաբերած դեպքերը տրավմատիկ բնույթ ունեն),

- Կարեկից ձևով հասկանալ երեխաների իրադրությունը և զգացմունքները,
- Ուսումնասիրել երեխաների ռեակցիաները և, անհրաժեշտության դեպքում, ընդհատել կամ դադարեցնել հարցազրույցը, օրինակ՝ գերզգայունակության կամ ագրեսիայի դեպքում,
- Հստակ տարբերակել Ձեր սեփական զգացմունքները երեխաների զգացմունքներից,
- Ցուցաբերել ոչ պնդերես մոտեցում՝ հարգելով երեխաների առանձնությունն ու անձնական տարածքը:

Հարցազրուցավարի պահվածքն ու մարմնի լեզուն նույնպես խիստ կարևոր են: Երեխաների պատմությունները լսելիս հարցազրուցավարները չպետք է որևէ կանխակալ վերաբերմունքի ազդանշան տան: Ավելին, երեխաները պետք է զգան, որ մշտադիտարկում իրականացնող անձինք.

- Վստահում են իրենց,
- Նրանց համարում են իրենց ուշադրության կենտրոնը,
- Չեն դատում իրենց,
- Կարեկից են նրանց զգացածի ու արտահայտվելու ձևի նկատմամբ,
- Համբերատար են,
- Անկեղծ հետաքրքրություն են ցուցաբերում նրանց տեսակետների ու կարծիքների և նրանց ներկա դրության նկատմամբ,
- Հավաքագրում են այս տեղեկությունները, որպեսզի նպաստեն բոլոր երեխաների համար ավելի լավ պաշտպանության զարգացմանը:

Դրանից բացի, որպեսզի համոզված լինի, որ **անկողմնակալ տեղեկություններ** է հավաքում, հարցազրուցավարը պետք է.

- Խրախուսի երեխաներին, որ իրենց ունեցած տեղեկությունները հայտնեն ու իրենց պատմությունները պատմեն իրենց իսկ բառերով՝ նրանց տալով բաց հարցեր,
- Բացատրի, որ ընդունելի է հարցազրուցավարին ասել, որ չգիտեն հարցի պատասխանը,
- Բացատրի, որ նրանք պետք է ուղղեն հարցազրուցավարին, եթե նա սխալվում է կամ ճիշտ չի ասում,
- Խուսափի ուղղորդող հարցերից կամ մեկնաբանություններից, որոնց պատճառով երեխաներին կթվա, որ իրենց ստիպում են կամ իրենց վրա ճնշում են գործադրում կոնկրետ պատասխան տալու համար, ինչպես նաև պետք է խուսափի այնպիսի հարցերից, որոնք բացասաբար կընդունվեն երեխաների կողմից,
- Խուսափի կրկնվող հարցերից, քանի որ դրա պատճառով երեխան կարող է կարծել, թե իր տված նախորդ պատասխանը «սխալ» էր,
- Օգտագործի պարզ, երեխաների տարիքին համապատասխան լեզու, և համոզվի, որ երեխաները հասկանում են հարցի ճիշտ իմաստը,
- Ավելի շատ մանրամասներ ստանալու համար տա հավելող հարցեր, օր.՝ «Իսկ հետո ինչ պատահեց»,
- Փոփոխի հարցազրույցի ռիթմը, որպեսզի այն երեխաների համար շատ ծանծ-

ռալի և հոգնեցուցիչ չլինի:

Անհրաժեշտության դեպքում, երեխաների հետ հարցազրույց վարելիս մշտադիտարկում իրականացնող անձանց կմիանան **թարգմանիչներ**: Այս դեպքում նրանք պետք է պրոֆեսիոնալ կերպով ազատ տիրապետեն երկու լեզվին էլ՝ նախապես պատշաճ կերպով պատրաստվելով, պետք է կարողանան օգտագործել այնպիսի բառեր, որ երեխաները հասկանան, իմանան, որ իրենք չեն կարող միջամտել հարցազրուցավարների ու երեխաների միջև տեղի ունեցող քննարկմանը, և որ չեն կարող ազդել հարցազրույցի ընթացքի վրա՝ սխալ թարգմանելով, ամփոփ ձևով ներկայացնելով ասվածը կամ ասվածից կոնկրետ մասեր բաց թողնելով: Նրանց պետք է նաև հիշեցնել, որ պարտավոր են պահել գաղտնիություն և որ իրենց անձնական պահվածքը, հագուստը և վերաբերմունքը առանձնահատուկ կարևորություն ունեն երեխաների հարցազրույցի համար վստահելի միջավայր պահպանելու համար: Ինչ վերաբերում է հարցազրուցավարներին, երեխաների բացատրությունները լսելիս դեմքին չպետք է երևա ոչ մի կանխակալ վերաբերմունքի ազդանշան:

Տես Բաժին 4.1. / Զ., էջ 54 և Բաժին 4.2. / Է., էջ 65

Եզրափակելիս հարցազրուցավարները պետք է համոզվեն, որ.

- երեխաները չունեն լրացուցիչ հարցեր կամ լրացուցիչ մտահոգություններ, որոնք կցանկանային բարձրացնել,
- երեխաները հասկացել են իրենց աշխատանքի սահմանափակումները և կեղծ հույսեր չունեն՝ կապված նրա հետ, թե ինչ կարող են նրանց համար անել մշտադիտարկում իրականացնող անձինք,
- դրականորեն են արձագանքում երեխաներին՝ իրենց տված տեղեկությունների և այն մասին, թե որքան կարևոր են նրանք մշտադիտարկման գործընթացն ավարտուն տեսքի բերելու հարցում,
- նրանց տալիս են իրենց կոնտակտային տվյալները, որպեսզի կարողանան կապ հաստատել իրենց հետ՝ ճնշամիջոցների կիրառման, հարցերի դեպքում կամ եթե ցանկանում են լրացուցիչ տեղեկություններ հաղորդել,
- գրառումներ կատարելն ավարտում են հարցազրույցն ավարտելուն պես, որպեսզի չմոռանան ոչ մի մանրամասն և ունենան հարցազրույցի ընթացքում ասվածի, լսածի ու զգացածի հնարավորինս ճշգրիտ արձանագրությունը:

Ավելին, շատ կարևոր է **այս փորձառությունն իմաստալից դարձնել երեխաների** և ոչ միայն մշտադիտարկման գործընթացի համար: Գործընթացին նրանց ունեցած ներդրման կարևորության վերաբերյալ գնահատանքի ցանկացած ձև օգտակար կարող է լինել, օրինակ՝ մասնակցության վկայագիր տալը, հարցազրույցի ավարտին բառերով շնորհակալություն հայտնելը, այցն ավարտելուց հետո երեխաներին տված դրական արձագանքը, և այլն:

Ֆոկուս խմբեր

Ընդհանրապես, իրենց առանձնահատուկ խոցելիության պատճառով, անազատության մեջ գտնվող երեխաների հետ առանձնազրույցները ֆոկուս խմբերից գերադասելի են:

Սակայն, **տարբեր պատճառներ** կարող են մշտադիտարկում իրականացնող թիմին

դրդել հարցազրույցի համար երեխաներին հավաքել մի խմբում.

- որոշ երեխաներ նախընտրում են խոսելու համար խմբի մաս կազմել, որպեսզի չնույնացվեն և ավելի քիչ անհանգստանան հավանական ճնշամիջոցների մասին,
- ունեցած ժամանակը կարելի է օպտիմալացնել՝ երեխաների հետ խմբերով հանդիպելու դեպքում,
- ոչ մի երեխա կամավոր չի ցանկանում առանձնազրույցի մասնակցել,
- այլ:

Այս հանգամանքներում, հարցերը պետք է ներառեն նույն թեմաները, ինչ առանձնազրույցների ժամանակ, սակայն դրանք պետք է հարմարեցնել խմբային քննարկում վարելու և **ցանկացած նուրբ հարցից խուսափելու համար**, որը, հավանական է, որ երեխային անհարմար դրության մեջ կդնի իր հասակակիցների առջև: Օրինակ՝ խմբային քննարկման ժամանակ պետք է խուսափել խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի մասին հարցերից, քանի որ դա բարոյական տեսանկյունից բոլորովին ճիշտ չէ և վտանգավոր է:

Հնարավորինս քիչ մեծահասակներ պետք է ներկա լինեն (առանձնազրույցների ժամանակ), որպեսզի երեխաները կարողանան ավելի ազատ խոսել:

Կարևոր է նաև երաշխավորել, որ խմբերում քննարկված **ոչ մի տեղեկություն չի բացահայտվելու**՝ տվյալ երեխային (երեխաներին) վնաս պատճառելու կամ նրա (նրանց) նկատմամբ ճնշամիջոցներ գործադրելու վտանգից խուսափելու նպատակով: Քննարկումների ընթացքում հարցազրուցավարը պետք է ուշադրություն դարձնի նրան, որ պատմելու գործում հավասարապես **ներգրավի բոլոր երեխաներին**՝ առանց ճնշում գործադրելու այն երեխաների վրա, որոնք անկաշկանդ չեն զգում իրենց հասակակիցների ներկայությամբ կոնկրետ հարցի շուրջ խոսելու համար: Նկատի ունեցեք, որ **հնարավոր են խմբային ճնշումներ և երեխաների միջև ոչ ֆորմալ հիերարխիաներ, ահաբեկում, մատնություն, և այլն:**

Ֆոկուս խմբերի միջոցով հավաքագրած տեղեկությունները կարող են հաստատել առանձնազրույցների ժամանակ հավաքած տվյալները, սահմանել ընդհանուր խնդիրները կամ մտահոգությունները կամ, օրինակ՝ պարզել, թե ով կարող է հետաքրքիր լինել առանձնազրույցի համար: Երբ ի հայտ է գալիս հակասական կամ կասկածելի տեղեկություն, անհրաժեշտ կլինի խաչաձև ստուգել դա առանձնազրույցների ժամանակ՝ մշտադիտարկում իրականացնող անձանց դիտարկումների և (կամ) այլ աղբյուրների միջոցով:

Ե. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Շատ կարևոր է թույլ տալ **աշխատակիցներին** խոսել և արտահայտել իրենց տեսակետները՝ իրենց առօրյա կյանքի, աշխատանքային պայմանների, ղեկավարի, իրենց գործընկերների ու երեխաների հետ հարաբերությունների, ինչպես նաև ռեժիմի մասին իրենց ընկալման, երեխաների իրավունքները հարգելու և անազատության մեջ պահելու վայրում ցանկացած այլ խնդրի վերաբերյալ: Եթե ժամանակը թույլ տա, տեղեկությունների լրացուցիչ աղբյուր կարող է լինել արհմիությունների ներկայացուցիչների հետ քննարկումը: Այցելած հաստատության հետ **կառուցողական երկխոսություն** ձևավորելու նպատակով օգտակար է ընդունել այնպիսի հորիզոնական մոտեցում, որը կարելի լինի դիտարկել որպես համագործակցություն և ոչ թե վերահսկողություն: Ցանկացած լավ գործելակերպ պետք է հատուկ ընդգծել և ըստ պատշաճի հաշվի առնել բարելավման հետ կապված ցանկացած առաջարկություն:

Մշտադիտարկում իրականացնող անձանց և աշխատակազմի անդամների միջև փոխհարաբերությունները միշտ պետք է մնան պրոֆեսիոնալ մակարդակի վրա, հատկապես երեխաների ներկայությամբ՝ իրենց հարաբերությունների բնույթի վերաբերյալ ցանկացած տեսակի շփոթությունից և **գաղտնի համաձայնության կամ կողմնակալության որևէ հնարավոր կասկածից** խուսափելու համար:

Կարևոր է սահմանել **ընտրության հստակ գործընթաց**՝ որոշելու, թե աշխատակազմի որ անդամներից հարցազրույց վերցնել, որպեսզի խուսափեք հարցազրույց վերցնել այնպիսի աշխատակցից, որին ղեկավարը կվստահեր՝ տվյալ հաստատության մասին միայն լավ արտահայտվելու համար:

Դրանից բացի՝ **արտաքին ծառայություն մատուցողներն** անազատության մեջ պահելու վայրի պայմանների ու երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին տեղեկությունների մեկ այլ լրացուցիչ աղբյուր են, և սա կարող է օգնել կատարել այլ աղբյուրներից հավաքած տեղեկությունների խաչաձև ստուգում:

Աշխատակազմի և արտաքին ծառայություն մատուցողների տարբեր կատեգորիաներ, որոնց հետ կարելի է հարցազրույց վարել.

- անվտանգության աշխատողներ,
- ուսուցչական կազմ,
- բուժաշխատողներ,
- սոցիալական աշխատողներ,
- հոգեբաններ,
- հաստատությունում ակտիվ գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ,
- փաստաբաններ,
- կրոնական կամ փիլիսոփայական ոլորտի ներկայացուցիչներ,
- այլ:

Նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ տարբեր մոտեցում կարելի է ցուցաբերել՝ կախված նրանից, թե ինչպես են հարաբերվում երեխաների հետ, և այն դերից, որ կատարում են այն կողմերի առնչությամբ, որոնց պետք է ուշադրություն դարձնել մշտադիտարկման գործընթացի շրջանակում: Այնուամենայնիվ, նրանց բոլորին էլ կարելի է տալ նույն հարցերը՝ տեղեկությունները խաչաձև ստուգելու նպատակով:

Զ. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՍԵՐՏ ԿԱՊԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Հանգամանքներից ելնելով՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու և (կամ) այլ աղբյուրներից հավաքած տվյալները խաչաձև ստուգելու նպատակով, մշտադիտարկում իրականացնող անձինք կարող են խնդրել հարցազրույց վերցնել արտաքին անձանցից, որոնք սերտորեն առնչվում են անազատության մեջ գտնվող երեխաների հետ՝: **Այդ անձինք** կարող են լինել.

- ծնողը (ծնողները),
- խնամակալը (խնամակալները),
- դաստուն (դաստուները),
- նշանակված սոցիալական աշխատողը (սոցիալական աշխատողները),
- նշանակված փաստաբանը (փաստաբանները),
- այլ:

Է. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ. ԱՅՑԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Մշտադիտարկման այցը պետք է ավարտվի հաստատության ղեկավարի կամ տնօրինության որևէ անդամի հետ ֆորմալ հանդիպմամբ: Դրա նախապատրաստությունը և բովանդակությունը կարող են տարբեր լինել՝ կախված կատարված այցի նպատակից ու տեսակից:

Նման հանդիպման նպատակն է **անմիջապես հետո զեկուցել** կարևոր բացահայտումների մասին, ինչպես նաև **քննարկել** այցի ընթացքում հայտնաբերված **կոնկրետ խնդիրներն ու մտահոգությունները և դրանց հավանական պատճառները**: Ուշադիր եղեք չզեկուցել այնպիսի տվյալների կամ խնդիրների մասին, որոնք չեք կարող բավարար չափով հիմնավորել ուժեղ ապացույցներով: Հակառակ դեպքում, կթուլանա մշտադիտարկում իրականացնող մարմնի հանդեպ վստահելիությունը:

Այս հանդիպումը կարող է առիթ լինել բարելավումներին ուղղված **նախնական առաջարկություններ անելու** համար, և մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է անպայման **նշեն լավ գործելակերպերի մասին** (և վերջին այցից ի վեր կատարված բարելավումների մասին, եթե դա առաջին մշտադիտարկման այցը չէ):

Մշտադիտարկման գործընթացի վերջում ղեկավարին այդ մասին տեղեկացնելը և դա քննարկելը անազատության մեջ պահելու վայրի կառավարման համար պատասխանատուների հետ **կառուցողական երկխոսություն ձևավորելու** մաս են կազմում:

Որքան մեծ լինեն հանդիպման նպատակները, այնքան շուտ պետք է այն պլանավորել: Արդյունքում, այց կատարող թիմը պետք է վերջում բավարար ժամանակ տրամադրի միասին հանդիպելու, իրենց բացահայտած տվյալները փոխանակելու, հաստատության ղեկավարին ներկայացնելու ենթակա կոնկրետ առանցքային կետերը և դրական արձագանք ստանալու համար դրանք ներկայացնելու ձևը որոշելու համար:

Արտակարգ իրավիճակի դեպքում, մասնավորապես, երբ հայտնաբերվում են խոշտանգումների, լուրջ չարաշահումների դեպքեր կամ դաժան վերաբերմունքի այլ ձևեր, մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է դրանց մասին հայտնեն անմիջապես վերին օղակի մարմիններին՝ բռնության մասին հայտնած անձանց նկատմամբ ճնշամիջոցների ցանկացած վտանգից խուսափելու նպատակով:

Երբ այցը ուսումնասիրության բնույթ ունի, տեղին չի լինի կոնկրետ բողոքի ուսումնասիրության ընթացքում կարծիքներ ու առաջարկություններ ներկայացնել:

4.4. Հետևող մշտադիտարկման այցեր / Կատարման ենթակա գործողություններ

- ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՄՓՈՓՈՒՄ-ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԹԻՄԻ ՀԵՏ
- ՍԿՍԵԼ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ
- ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՐՏԱՔԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ
- ԿԱԶՄԵԼ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- ՏԱՐԱԾԵԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ
- ՀԵՏԵՎԵԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ
- ԳՆԱՀԱՏԵԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
- ՍԱՀՄԱՆԵԼ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այցին հետևող գործողությունների փուլը և դրանց արդյունքում պարտադիր կատարման գործողությունները այցին հաջորդող **վճռորոշ քայլեր** են՝ **մշտադիտարկման առաքելությունը լիարժեք կատարելու համար**: Այցն ինքնին բավարար չէ: Իրավունքների խախտումները կարելի է փաստագրել կամ դիտարկել, սակայն փոփոխություն տեղի չի ունենա առանց գործուն հետևող գործողությունների: Այցի ընթացքում հավաքած տեղեկություններն ու բացահայտած տվյալները պետք է ի մի բերել, վերլուծել և հաղորդել համապատասխան մարդկանց, այսինքն, նրանց, ովքեր ունեն քայլեր ձեռնարկելու կարողություն, ինչը կարող է բարելավել անազատության մեջ գտնվող երեխաների նկատմամբ վերաբերմունքն ու անազատության մեջ պահելու վայրի պայմանները, և այդպես վարվելով, հարգել այդ երեխաների իրավունքները: Զեկույցներում ներառված և պատկան մարմիններին հասցեագրված առաջարկությունների արդյունավետ իրականացմանը նույնպես պետք է հետևել ինչպես հարկն է: Այս գործընթացը պահանջում է նույնքան ուշադրություն և պլանավորում, որքան բուն այցը, եթե ոչ ավելին:

Հետևող գործողությունների տեսակը և այլ գործողությունների կատեգորիաները, որոնք պետք է պլանավորել առաջարկությունների իրականացումը կենսագործելու նպատակով, կախված կլինեն կատարված այցի տեսակից ու կոնկրետ նպատակներից: Հետևող գործողությունների գործընթացի պլանավորումը պետք է ներառել մշտադիտարկման ռազմավարության ընդհանուր ժամանակացույցի մեջ:

Որպես նախապես մշակված իրավահենք մոտեցման մաս՝ օգտակար կլինի բացահայտած տվյալների ու տեղեկությունների վերլուծությունը կատարել՝ հաշվի առնելով **երեխաներին վերաբերող ցուցիչները** *Տես Բաժին 5., էջ 93:* Վերլուծություն կատարելու եղանակը պետք է նաև թույլ տա կատարել **տարբեր այցերի արդյունքների համեմատություն**՝ երեխաների իրավունքները հարգելու առնչությամբ բարելավումների մակարդակը չափելու համար: Այդ նպատակով մշտադիտարկում իրականացնող թիմը պետք է սահմանի **բարելավումների ցուցիչներ** և պետք է դրանք օգտագործի որպես հիմք՝ հաջորդ այցի նախապատրաստման համար:

Ա. ՆԵՐՔԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

Արդյունքների ամփոփման թիմային հանդիպումներ

Կախված նրանից, թե որքան ժամանակ է հատկացվել մշտադիտարկման այցին, առաջարկվում է **բուն այցի շրջանակում** կազմակերպել **մեկ կամ մի քանի հանդիպում** ամբողջ թիմի հետ՝ **տեղեկություններ փոխանակելու, բացահայտումները խաչաձև ստուգելու, կոնկրետ խնդիրներ բարձրացնելու**, ինչպես նաև դրանց հավանական պատճառները քննարկելու համար: Արդյունքների ամփոփման այս առաջին հանդիպումը (հանդիպումները) թիմին հնարավորություն կտա նախապատրաստվել հաստատության ղեկավարի հետ հավանական վերջնական հանդիպմանը և (կամ) համաձայնության գալ զեկուցման ենթակա առանցքային մտահոգությունների շուրջ:

Արդյունքների ամփոփման այս առաջին հանդիպումից (հանդիպումներից) բացի՝ թիմին կամ մշտադիտարկում իրականացնող կոնկրետ անձին կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ ամփոփիչ հանդիպում՝ նպատակ ունենալով **այլ գործընկերների հետ կիսելու հուզական և (կամ) հոգեբանական հավանական դժվարությունները**, որոնց բախվել է այցի ընթացքում: Նման ներքին քննարկումները կարող են թիմին ամեն նոր այցի ժամանակ «թարմ» տեսք ունենալու հնարավորություն տալ և կանխել մասնագիտական այրման ախտանիշների ի հայտ գալն ու մշտադիտարկում իրականացնող մարմնի անդամների բարձր հոսունությունը, ինչն ազդում է նրա արդյունավետության վրա:

Բ. ՆԵՐՔԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԵԿՈՒՅՑ

Այցն ավարտելուց (ղեկավարի հետ վերջնական հանդիպումից) անմիջապես հետո մշտադիտարկում իրականացնող թիմը պետք է աշխատի **ներքին փաստաթղթի վրա՝ հիմնվելով համաձայնեցված առանցքային մտահոգությունների ու բացահայտումների** վրա, որոնք ներկայացվել են այցելած հաստատության ղեկավարին:

Տեղեկությունների որևէ կորուստ կանխելու համար կարևոր է տեղեկությունների այս վերլուծությանն ու ամփոփմանն անցնել **այցից անմիջապես հետո**:

Գ. ԱՐՏԱՔԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

Կախված մշտադիտարկում իրականացնող մարմնի կարգավիճակից, կատարած այցի տեսակից ու նպատակներից և թիրախ լսարանից՝ մշտադիտարկում իրականացնող թիմը կարող է կազմել **մի քանի տեսակի զեկույցներ**: Ամեն դեպքում, արտաքին զեկույցներին պետք է անդրադառնալ **այցն ավարտելուց հետո հնարավորինս շուտ**, որպեսզի դրանք հիմնված լինեն թարմ տեղեկությունների վրա:

ԶԵԿՈՒՅՑ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԻՆԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ճշտություն և ճշգրտություն
2. *Անձնական տեղեկությունների գաղտնազերծում միայն բացահայտ և տեղեկացված համաձայնության դեպքում և ըստ անհրաժեշտության*
3. *Լեզվի ու եզրաբանության համապատասխանություն*
4. *Ժամանակայնություն*
5. *Գործողություններին միտվածություն*

ԽԿԿ. Ազատությունից զրկելու հարցերով միջազգային կոալիցիա, ՄԱԿ ՄԻԽ, «Իմիգրացիայի (ներգաղթի) հիմքով անազատության մեջ պահելու մշտադիտարկում. գործնական ուղեցույց», էջ 76 [APT – International Detention Coalition – UNHRC, "Monitoring Immigration Detention, Practical Guide"]

Այցի մասին զեկույցներ

Այցի մասին զեկույցները պետք է ներառեն.

- Առանցքային բացահայտումներ (ուժեղ ապացույցներով հիմնավորված)
- Կոնկրետ խնդիրներ ու մտահոգություններ, ինչպես նաև դրանց հավանական պատճառները
- Բարելավումներին ուղղված առաջարկություններ
- Հայտնաբերված լավ գործելակերպեր
- Բարելավումներ՝ վերջին այցից ի վեր (եթե դա մշտադիտարկման առաջին այցը չէ)
- Ցանկացած հարց, որ բարձրացվել է ղեկավարի հետ վերջնական հանդիպման ժամանակ

Ուշադրություն դարձրեք, որ երբ տեղեկությունները հավաքվում են հարցազրույցների (անհատական կամ խմբային) միջոցով, պետք է հետևել **մեկուսացվածության ու գաղտնիության** կանոններին՝ հարգելով չվնասելու սկզբունքը *Տես Բաժին 3.4., էջ 37:*

Նման զեկույցները պետք է **հասցեագրվեն** այցելության համար ընտրված անազատության մեջ պահելու վայրի համար պատասխանատու **մարմիններին**՝ այցն ամփոփելուց և ներքին զեկույցի նախնական տարբերակը կազմելուց անմիջապես հետո: Կարևոր է ընդգծել հաստատության աշխատակազմի հետ հաստատված կառուցողական երկխոսության դինամիկան, եթե այդպիսին կա:

Եթե մշտադիտարկում իրականացնող թիմը կարծում է, որ այցի մասին համապարփակ ու մանրամասն զեկույցը հիմնավորված չէ, այցելած հաստատության համար պատասխանատու մարմիններին պետք է գոնե **պաշտոնական նամակ** ուղարկել՝ ամփոփ ներկայացնելով այցի հիմնական արդյունքները և առաջարկելով բարելավման մի քանի եղանակ:

Պարբերական զեկույցներ

Նման զեկույցներ կազմվում են պարբերական կտրվածքով և պետք է ներառեն ազատազրկման ցանկացած տեսակի հաստատություն տվյալ ժամանակահատվածում մշտադիտարկում իրականացնող թիմի կատարած այցերի կամ որոշակի ժամանակահատվածում միևնույն անազատության մեջ պահելու վայր կատարած բոլոր այցերի բոլոր բացահայտումներն ու առանցքային խնդիրները:

Այսպիսի զեկույցները կազմվում են, որպեսզի հնարավորություն տան համեմատություն կատարել տվյալների միջև, տալ կոնկրետ ժամանակահատվածում իրավիճակի ընդհանուր նկարագրությունը և պահել արված առաջարկություններն ու հետևել, թե ինչպես են դրանք իրականացվել որոշակի ժամանակահատվածում:

Թեմատիկ զեկույցներ

Թեմատիկ զեկույցները կարող են անդրադառնալ մեկ կամ ավելի խնդիրների, որոնք ունեն բարելավման կարիք մեկ, բազմաթիվ կամ բոլոր հաստատություններում, որտեղ երեխաները զրկված են ազատությունից, օրինակ՝ մեկուսի բանտարկության, լուրջ վնասի կամ խոշտանգման մասին:

Տարեկան զեկույցներ

Տարեկան զեկույցի նպատակն է ընդհանրացնել մշտադիտարկում իրականացնող մարմնի կատարած բոլոր այցերը:

Տարեկան զեկույցը կարող է նաև առիթ լինել.

- կատարելու այցերից բխող հիմնական հարցերի ու մտահոգությունների հիմնական պատճառների խոր վերլուծություն,
- կապեր ստեղծելու առավել կարևոր բացահայտումների ու դիտարկումների միջև,
- չափելու տարեցտարի արված առաջարկությունների իրականացման մակարդակը,
- ներկայացնելու կատարված բոլոր այցերի և բոլոր բացահայտումների ու առաջարկությունների կատալոգ՝ վայր առ վայր,
- կենտրոնանալու մեկ կամ մի քանի թեմատիկ/կոնկրետ խնդրի վրա:

Թեմատիկ կամ տարեկան զեկույցները պետք է դիտել որպես փոխլրացում այցերի վերաբերյալ զեկույցներին, որոնց վրա դրանք հիմնված են:

Դ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ

Զեկույց պատրաստելու գործընթացում խիստ կարևոր է բարելավումներին ուղղված առաջարկությունների մշակումը, և դրան պետք է հատկացնել անհրաժեշտ ուշադրություն և պետք է զգույշ լինել:

Առաջարկությունների ձևակերպումը որոշիչ դեր ունի այն առումով, թե ինչպես դրանք արդյունավետորեն ու հաջողությամբ կիրականացվեն: Դրանք պետք է լինեն հստակ, կոնկրետ, փաստագրված տեղեկություններով հիմնավորված և խոր վերլուծության վրա հիմնված: Բացառությամբ երեխաների իրավունքների խախտումների լուրջ դեպքերի, օրինակ՝ խոշտանգման, դաժան վերաբերմունքի կամ ավելի վատ դեպքերի, դրանք պետք է գրված լինեն այնպես, որ առաջարկվող բարելավումը գործնական առումով հասանելի լինի և ընկալվի ոչ թե որպես դատապարտում՝ կոնկրետ չափորոշիչների չհամապատասխանելու համար, այլ որպես մարտահրավեր նետող հնարավորություն՝ գործելակերպը բարելավելու, և այդպիսով՝ անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքներն ավելի լավ հարգելու համար: Քանի որ առաջարկությունները կարող են ենթադրել անհրաժեշտ ռեսուրսների առկայություն, օգտակար կլինի նախանշել, որ առաջարկություններն իրականացնելու համար կպահանջվեն ավելի շատ ֆինանսական և (կամ) նյութական, մարդկային ռեսուրսներ:

Առաջարկությունները պետք է լինեն «ՍՄԱՐԹ» [SMART]

Կոնկրետ. Մեկ առաջարկություն կոնկրետ մեկ խնդրի վերաբերյալ, յուրաքանչյուր

առաջարկություն պետք է ներկայացնի մեկ կոնկրետ լուծում և ոչ թե աղոտ ցանկություն:

Չափելի. Հետևող այցերի կամ հետագա մշտադիտարկման այցերի ժամանակ պետք է հնարավոր լինի գնահատել նախկին առաջարկությունների իրականացման աստիճանը:

Հասանելի. Առաջարկությունները պետք է գործնականում կիրառելի լինեն՝ պայմանով, որ պետությունները դրանց համար տրամադրեն բավարար ռեսուրսներ:

Իրատեսական. Առաջարկվող գործողությունները պետք է հանգեցնեն իրատեսական արդյունքների:

Ժամանակային առումով որոշակի. Առաջարկությունները պետք է հստակ նշեն իրականացման ժամանակահատված (կարճ, միջին, երկար ժամկետում):

Նրանց ձևակերպումից բացի՝ առաջարկությունները պետք է **ուղղված լինեն թիրախ հասցեատերերին** և **պատկան մարմինների ճիշտ մակարդակին**: Այլ կերպ ասած, առաջարկությունները պետք է ուղղված լինեն պատկան մարմինների այն մակարդակին, որն ունի բարելավման համար համապատասխան փոփոխություն կամ որոշում կայացնելու լիազորություն:

Այդ իմաստով դրանց մեծամասնությունը պետք է ուղղված լինի անմիջականորեն անազատության մեջ պահելու վայրի կառավարման համար պատասխանատու մարմնին (հաստատության ղեկավարին), սակայն, եթե որևէ խնդրի հիմնական պատճառն այլ տեղ է, առաջարկությունները պետք է ուղղել ավելի բարձրաստիճան օղակի (կամ մի քանի օղակի) (վարչակազմին կամ նախարարությանը): Այդ նպատակով անհրաժեշտ կլինի առանձին զեկույց:

Ավելին, արտակարգ իրավիճակի դեպքում առաջնահերթություն պետք է տալ բարձրաստիճան մարմնի հետ հաղորդակցությանը՝ նուրբ կամ լրջագույն փաստեր բացահայտած երեխային վնաս պատճառելու որևէ վտանգից խուսափելու համար:

Ե. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Առաջին փուլի ընթացքում զեկույցի տարածումը կարելի է հետաձգել, որպեսզի հաստատությանը հնարավորություն տրվի նախքան հրապարակումը հարցեր ուղղել որոշ փաստական հարցերի վերաբերյալ: Սա կարող է հեշտացնել **պատկան մարմինների հետ երկխոսությունը** և հնարավորություն տալ խմբագրել մեկնաբանությունները, խաչաձև ստուգել տեղեկություններն ու հետաքննել հաղորդած կամ ենթադրյալ չարաշահումները: Տրված վերջնաժամկետից և առաջարկությունների շուրջ համաձայնության գալու բոլոր փորձերը կատարելուց հետո զեկույցը կարելի է **հրապարակել**: Այդ իմաստով պետք է հավասարակշռություն պահպանել, մի կողմից, ճկուն լինելու անհրաժեշտության ու կառուցողական երկխոսություն խթանելու և, մյուս կողմից, թափանցիկության ու հաշվետվականության անհրաժեշտության միջև:

Լավ գործելակերպը ենթադրում է, որ վերլուծական զեկույցները, ինչպես օրինակ՝ պարբերական ու տարեկան զեկույցները, պետք է միշտ հրապարակել և, հետևաբար, պետք է հեշտությամբ հասանելի լինեն և լայնորեն տարածվեն, մասնավորապես, այլ շահագրգիռ կողմերի, հատկապես, մշտադիտարկում իրականացնող այլ մարմինների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շրջանում, որոնք կարող են կարևոր դերակատարում ունենալ առաջարկությունները շեշտադրելու գոր-

ծում (քարոզչություն և շահերի պաշտպանություն):

Ըստ նպատակահարմարության՝ զեկույցները կամ զեկույցների առանցքային տարրերը կարելի է փոխանցել լրատվամիջոցներին: Հարկ է նշել, որ մշտադիտարկում իրականացնող մարմինը պետք է հատուկ ուշադրություն դարձնի **լրատվամիջոցներին հաղորդվող** տեղեկությունների ձևակերպմանն ու բովանդակությանը, խնդիրները սենսացիա դարձնելուց խուսափելու և, ամենակարևորը, «մի՛ վնասիր» սկզբունքն ու աղբյուրների գաղտնիությունը հարգելու համար:

Կարող է օգտակար լինել նաև զեկույցները **միջազգային կազմակերպություններին**՝ ԽԿԿ-ին, ԽԿԵ-ին, ԽԴԿ-ին, ԵԻԿ-ին, Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողին կամ ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարին ուղարկելը՝ նրանց հետագա այցերն ուղղորդելու և վերջին ու թարմ տեղեկություններին նրանց առնչակից դարձնելու նպատակով:

Զ. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետևող գործողությունների փուլը կարող է մի քանի ձև ընդունել.

- Տեղեկությունների փոխանակում և աշխատանքային քննարկումներ՝ **պարբերական հաջորդական հանդիպումների կամ կլոր սեղանների** միջոցով՝ հավաքելով բոլոր շահագրգիռ կողմերին,
- **Պարբերական պաշտոնական նամակների** փոխանակում,
- Հայտարարված կամ չհայտարարված **ստուգիչ այց (այցեր)**,
- **Առաջարկությունների կարգավիճակի** մասին հաշվետվություններ (հաջողությամբ կատարված, առկախ, դեռևս չիրականացված) մշտադիտարկում իրականացնող մարմնի տարեկան զեկույցում:

Պատկան մարմինների՝ զեկույցն ու առաջարկությունները դիտարկելու ակնհայտ ու ոչ ակնհայտ հանձնառության բացակայության դեպքում մշտադիտարկում իրականացնող մարմինը ստիպված կլինի ձեռնարկել դրանց **հարկադիր կատարման այլ միջոցներ**, ինչպես օրինակ.

- **Դիմել ավելի բարձր օղակի և (կամ) օղակների,** որոնք, հավանական է, որ ճնշում կգործադրեն տվյալ հաստատության համար պատասխանատուների վրա,
- Զեկույցը հասանելի դարձնել լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության ու միջազգային կազմակերպությունների համար,
- որոնք միգուցե կարողանան ազդել առաջարկությունների իրականացման գործընթացի վրա,
- **Դիմել խորհրդարանի անդամներին կամ մշտադիտարկում իրականացնող այլ մարմինների,** որոնք գտնվում են խորհրդարանի ենթակայության տակ:

Ավելին, մշտադիտարկում իրականացնող մարմինը պետք է **հետադարձ կապ ապահովի այն երեխաների հետ**, որոնք ցանկություն են հայտնել տեղեկանալ այցի հետևող գործողությունների մասին: Այս դեպքում շատ կարևոր է համոզված լինել, որ բանավոր կամ գրավոր հաղորդակցությունը կկատարվի պատշաճ և հասկանալի լեզվով և երեխաների համար կեղծ ակնկալիքներ չեն ստեղծվի:

Է. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մշտադիտարկում իրականացնող մարմնի աշխատանքի արդյունավետությունը կարելի է գնահատել ժամանակի ընթացքում նրա զեկույցների ու առաջարկությունների ազդեցությունը գնահատելու միջոցով: Այդ գնահատումը կատարելու համար մշտադիտարկում իրականացնող մարմինը պետք է տեսնի, թե **ինչպես են դիտարկվել զեկույցներն ու առաջարկությունները և արդյոք արդյունավետորեն են իրականացվել, թե ոչ**: Այնուամենայնիվ, նա պետք է ուշադրություն դարձնի նաև իր մշտադիտարկման գործընթացի տարբեր փուլերին, որպեսզի վերանայի և գնահատի, թե **որքան արդյունավետորեն են դրանք նախապատրաստվել, պլանավորվել, կատարվել ու իրականացվել**՝ նախատեսած նպատակներին ու ակնկալվող արդյունքներին հասնելու համար:

Մեթոդաբանությունը, որն ընտրվել է մշտադիտարկման առաջադրանքը կատարելու համար, կարելի է վերանայել՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- *Ինչ ենք արել:*
- *Ինչի՞ ենք հասել:*
- *Որքա՞ն լավ ենք արել դա:*
- *Ինչ դրական փոփոխություն ենք առաջ բերել:*
- *Ինչպե՞ս ենք իմանում այդ մասին:*
- *Իր հերթին, սա պետք է պատասխանի հետևյալ հարցերին.*
- *Ինչ գիտենք այժմ, որ առաջ չգիտեինք:*
- *Կա՞ն ինչ-որ բացեր կամ թերություններ մեր մշտադիտարկման գործընթացում:*
- *Եղե՞լ են բաց թողնված հնարավորություններ:*
- *Ինչը կարող էինք ավելի լավ անել:*
- *Ինչ դրական փոփոխություն կարող էր դա առաջ բերել:*

ԽԿԱ. Ազատությունից զրկելու հարցերով միջազգային կոալիցիա, ՄԱԿ ՄԻԽ, «Իմիգրացիայի (ներգաղթի) հիմքով անազատության մեջ պահելու մշտադիտարկում. գործնական ուղեցույց», էջ 83 [APT – International Detention Coalition – UNHRC, "Monitoring Immigration Detention, Practical Guide"]

Ը. ՀԵՏԵՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կախված իրենց մանդատի շրջանակից, մշտադիտարկման իրականացման մեթոդաբանության արդյունավետությունից և իրենց առջև դրած նպատակների ծավալից՝ մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են մշակել լրացուցիչ և (կամ) փոխլրացնող գործողություններ՝ իրենց առաքելության իրագործմանը հետևելու համար, այդ թվում.

- Օրենսդրության և (կամ) վարչական կարգերի ու կանոնակարգերի ուսումնասիրություն

  ԽԴԿԿԱ-ի շրջանակում ստեղծված ԿԱԿ-ն ունի *«գործող օրենքի կամ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ու դիտարկումներ ներկայացնե-*

լու» լիազորություն.

- Լրացուցիչ ուսումնասիրություններ, անհատական միջամտություններ կամ ուղղորդումներ

  Արտակարգ իրավիճակի, երեխաների իրավունքների չարաշահման կամ խախտման մասին մեղադրական հայտարարությունների կամ բողոքների դեպքում, *Տես Բաժին 4.1. / Է., էջ 56 և Հավելված 3., էջ 160.*
- Շահերի պաշտպանություն.
- **Մամուլի հաղորդագրություն կամ հոդված.**
- **Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների, ինչպես օրինակ՝ ԵԻԿ-ին ու ԽԴԿ-ի հետ անհատական հաղորդակցման կամ բողոքների ներկայացման ընթացակարգ,** մասնակցություն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացին, տեղեկությունների փոխանակում մարդու իրավունքների հետ կապված այլ տարածաշրջանային կամ միջազգային կառույցների կամ մշտադիտարկում իրականացնող մարմինների հետ.
- **Առաջարկություններ** երեխաների անազատության մեջ պահելու վայրերի աշխատակազմերի անդամների համար **կարողությունների զարգացման ու վերապատրաստման մասին**:

Հետևող ռազմավարությունների և մշտադիտարկման իրականացման կառուցակարգերի ազդեցությունը մեծացնելու եղանակների մասին լրացուցիչ ընթերցանության համար տես Լյուդվիգ Բոլցմանի անվան Մարդու իրավունքների ինստիտուտի և Բրիստոլի համալսարանի «ԿԱՄ-ի ազդեցության մեծացում» նյութը, մայիս, 2015 թ.

5. ԱՅՑԻ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Այցի՝ երեխաներին վերաբերող ցուցիչները հիմնված են **երեխաների հիմնարար իրավունքների հետ կապված միջազգային ու եվրոպական չափորոշիչների** վրա և հիշատակվում են դրանցում: Երեխաների վրա հատուկ կենտրոնացվածությունը մասնավորապես հաշվի է առնում ազատությունից զրկվելու հետևանքով նրանց խոցելիությունը, հատուկ կարիքները և պահանջվող խնամքը:

Դրանք մշակվել են որպես **գնահատման գործիք**, որի հիման վրա մշտադիտարկում իրականացնող անձինք կկարողանան ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում հնարավորինս անաչառ գնահատել, թե ինչպես են հարգվում անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքները:

Դրանք ներկայացված են այնպես, որ հարմար լինեն մշտադիտարկում իրականացնող անձանց համար, որոնք ենթադրվում է, որ կօգտագործեն դրանք որպես **Ուղեցույցներ** մշտադիտարկման գործընթացի ամբողջ ցիկլի ընթացքում (ուսուցում, նախապատրաստում, դիտարկում, ուսումնասիրում, հարցազրույցի վարում, խորհրդատվության տրամադրում, զեկույցի ներկայացում, առաջարկությունների նախնական կազմում և հասցեագրում, զեկույցին հետևող գործողությունների կատարում):

Անազատության մեջ գտնվող երեխաների նկատմամբ **կիրառվող չափորոշիչները ձևակերպված են որպես հարցեր**, որ մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է տան իրենք իրենց՝ մշտադիտարկման այցերը կատարելու ժամանակ: Այնուհետև մի շարք **ցուցիչներ** կօգնեն մշտադիտարկում իրականացնող անձանց հավաքագրել տեղեկություններ, ապացույցներ ու փաստեր, որպեսզի կարողանան իմանալ՝ արդյոք պայմանները և անազատության մեջ գտնվող երեխաների նկատմամբ վերաբերմունքը համապատասխանում են չափորոշիչներին, թե ոչ: Նշվելու են, թե որ մարդկանցից հարցազրույց վերցնել (**ՀԱՐՑՆԵԼ**), կոնկրետ որ կողմերն ուսումնասիրել (**ԴԻՏԱՐԿԵԼ**) և ինչ բաղադրիչներ, օրինակ՝ գրանցամատյաններ ու արձանագրություններ, ստուգել (**ՍՏՈՒԳԵԼ**), որոնք օգտվողներին կուղղորդեն դեպի մշտադիտարկման իրականացման ընթացքում տված հարցերի պատասխաններ:

Ցուցիչների առաջարկվող **ցանկը** սպառիչ չէ, և այն պետք է **լրացնեն** մշտադիտարկում իրականացնող անձինք՝ ըստ իրենց փորձի՝ իրենց այցերից առաջ, դրանց ընթացքում և դրանցից հետո: Այս նպատակով գրառումներ կատարելու տեղ է նախատեսվել:

Ուղեցույցի կազմի ետնամասում զետեղված է հիշեցում հապավումների մասին, որն օգտագործվում է այն չափորոշիչների աղբյուրները պարզելու համար, որոնց հղում է արված: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին հղում է արված հակիրճ ձևով (ըստ դեպքի և որոշման թվի): Տես Հավելված 4-ը, որտեղ ներառված են մեջբերված բոլոր որոշումները, համապատասխան հղումներով [integrally referenced] և ըստ այբբենական կարգի դասավորած:

Հասկանալի է, որ, ելնելով նրանից, թե ում հետ պետք է հարցազրույց վարել՝ կոնկրետ բաղադրիչի մասին տեղեկություն ձեռք բերելու կամ կոնկրետ կողմ ստուգելու համար, հարցերը պետք է ձևակերպել պատշաճ ձևով և դրան հարմարեցնելով: **Երեխայի տեսակետը, նրա ընկալումը և զգացմունքները պետք է միշտ հաշվի առնել:** Հավաքագրած տեղեկությունները կարելի է խաչաձև ստուգել, ինչպես բացատրվել է վերը:

5.1. Անազատության մեջ պահելու ընթացակարգերը

Ա. ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Արդյո՞ք կան ապացույցներ, որ երեխային անազատության մեջ պահելու որոշումն ընդունվել է որպես ծայրահեղ միջոց, կարճ ժամանակահատվածով և ելնելով երեխայի լավագույն շահից:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Անձնական գործը (վարչական մաս), պարզել՝ արդյոք պաշտոնական որոշումն ընդունվել է իրավասու մարմնի կողմից (դատական, վարչական կամ այլ պետական մարմին), պարզել, թե ինչն է դրդել դրան և թե ինչպես է բացատրվում այլընտրանքային միջոցների փոխարեն անազատության մեջ պահելու միջոցի կիրառումը, պարզել անազատության մեջ պահելու տևողությունը և արդյոք այդ որոշումը պարբերական վերանայման ենթակա է, թե ոչ:
- Այլընտրանքային միջոցները, պարզել՝ արդյոք ազգային օրենսդրությունն անազատության մեջ պահելու փոխարեն այլընտրանքային միջոցների հնարավորություն տալիս է, թե ոչ, պարզել, թե գործնականում ինչ տարբերակներ գոյություն ունեն՝ որպես անազատության մեջ պահելուն փոխարինող այլընտրանքային միջոցներ, պարզել, թե կոնկրետ տվյալ երեխայի դեպքում որ տարբերակն է (տարբերակներն են) արդեն կիրառվել:

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացիություն ունեցող երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Անկանոն կարգավիճակով միգրանտ երեխայի անչափահասության հետ կապված անորոշությունը, պարզել՝ արդյոք երեխային վերաբերվում են որպես անչափահասի, մինչև չապացուցվի հակառակը, այսինքն, եթե այդ ընթացքում նրան զրկեն ազատությունից
- Երեխաների անազատության մեջ պահելը, այդ թվում՝ առանց ուղեկցության և ընտանիքից առանձնացված երեխաների[9], պարզել՝ արդյոք երեխայի լավագույն շահի առումով դա հիմնավորված է

9 «Առանց ուղեկցության երեխաները» (նաև անվանում են «առանց ուղեկցության անչափահասներ») այն երեխաներն են, որոնց առանձնացրել են իրենց երկու ծնողներից և մյուս հարազատներից, և որոնց մասին հոգ չի տանում ոչ մի չափահաս անձ, որն օրենքով կամ սովորույթի ուժով պատասխանատու է դրա համար: «Ընտանիքից առանձնացված երեխաները» նրանք են, որոնց առանձնացրել են իրենց երկու ծնողներից կամ նախկին իրավական կամ սովորական առաջնային խնամողից, բայց ոչ անպայմանորեն այլ հարազատներից: Հետևաբար, սա կարող է ներառել ընտանիքի այլ չափահաս անդամների կողմից ուղեկցվող երեխաներին: / ԽԿԿ/Inf (2009)27, IV, 97, էջ 82:

- Անհապաղ ազատումը, պարզել՝ արդյոք բոլոր ջանքերն են գործադրվել առանց ուղեկցության և ընտանիքից առանձնացված երեխաներին ավելի համապատասխան հաստատությունում տեղավորելու համար

.....

.....

.....

ԵԻԿ 3 (1), 37 (բ) | Պեկինյան կանոններ 14, 17.1 (գ), 18, 19.1 | ՍՀՓ 2 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ 46 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 1, 2, 17, 20, 21 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 2, 6, 8 | ԵԻԿ - ԸՄ թիվ 10 §1, 11, 23, 28, 70, 79-80 | ԿԲՀՎԿ 57, 59, 64 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 7 | ՄԻԵԿ 5 | ԵԲԿ 11.1-2, 14 | ԱԻԵԿ 5, 10 | ԵԿԱՈՒ IV.A.6.19, IV.A.6.74 | ԽԿԿ/Տեղ. (2009)27, IV, 97 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 96 | ՄԻԵԴ Մուբիլանզիլա Մայեկան և Կանիկի Միտունգան ընդդեմ Բելգիայի (Գործ թիվ 13178/03 3), Մուսխաջիևան և այլք ընդդեմ Բելգիայի (Գործ թիվ 41442/07), Ռահիմին ընդդեմ Հունաստանի (Գործ թիվ 8687/08), Պոպովն ընդդեմ Ֆրանսիայի (Գործ թիվ 39472/07 և 39474/07), Մահմունդին և այլք ընդդեմ Հունաստանի (Գործ թիվ 14902/10)
[CRC 3 (1), 37 (b) | RAJJ 14, 17.1 (c), 18, 19.1 | BOP 2 | GPJD 46 | RPJDL 1, 2, 17, 20, 21 | RNCM 2, 6, 8 | CRC - GC n°10 §1, 11, 23, 28, 70, 79-80 | RTWP 57, 59, 64 | SMR 7 | ECHR 5 | EPR 11.1-2, 14 | ERJO 5, 10 | GCF]: IV.A.6.19, IV.A.6.74 | CPT/Inf (2009)27, IV, 97 | CPT/Inf (2015)1, V, 96 | ECtHR Mubilanzila Mayeka et Kaniki Mitunga v. Belgium (No 13178/03 3); Muskhadzhiyeva and Others v. Belgium (No 41442/07); Rahimi v. Greece (No 8687/08); Popov v. France (No 39472/07 and 39474/07); Mahmundi and others v. Greece (No 14902/10)]

Բ. ՓԱՍՏԱԲԱՆԻ / ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք փաստաբանը / իրավական հարցերով խորհրդատուն / իրավաբանական օգնությունը հասանելի են երեխաներին և արդյոք նրանք կարող են արդյունավետ, գաղտնի և ազատ կերպով օգտվել նրանց ծառայություններից:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին | Երեխաներին | Փաստաբանին | Ծնողներին | Խնամակալներին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Սենյակը (սենյակները), որտեղ տեղի են ունենում հանդիպումները, պարզել՝ արդյոք հարգվում են առանձնության, գաղտնիության սկզբունքները, պարզել՝ արդյոք այն կահավորված է տեսահսկման համակարգով (ՏՀՀ) և արդյոք հանդիպումները տեղի են ունենում երրորդ անձի (պահակներ, դաստիարակներ, այլ) ներկայությամբ

5

- Հեռախոսը, պարզել՝ արդյոք այն տեղադրված է այնպիսի տեղ, որ հարգվեն հեռախոսային զրույցների առանձնությունն ու գաղտնիությունը (հեռավորությունն աշխատակազմի գրասենյակից, և այլն)

ՍՏՈՒԳԵԼ.

- Փաստաբանի օգնությունը, պարզել՝ արդյոք երեխան արդյունավետ կերպով ստացել է փաստաբանի օգնություն դատավարությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո, ինչպես նաև անազատության մեջ պահելու ընթացքում (այսինքն, ձերբակալման ժամանակ, ոստիկանությունում լսումների ընթացքում, դատավորի առջև, դատարանում, ազատազրկման ժամանակահատվածում), պարզել՝ արդյոք երեխայի անձնական գործում հղում կատարված կոնկրետ փաստաբանի / իրավական հարցերով օգնականի, պարզել՝ արդյոք այցելուների գրանցամատյանում գրառում կա իրավական հարցերով խորհրդատուների / փաստաբանների մասին (ամսաթվեր, տևողություն, հաճախականություն), տեսնել երեխայի կողմից իր իրավական հարցերով օգնականին / փաստաբանին կատարած հեռախոսազանգերը և նամակագրության մասին գրառումները
- Իրավաբանական օգնության հասանելիությունը, պարզել՝ արդյոք իրավաբանական օգնության հասանելիությունը կանոնակարգված է ներքին կանոններով և ինչպես է կանոնակարգված, մասնավորապես, պարզել՝ արդյոք երեխան կարող է կապ հաստատել իր փաստաբանի/իրավական հարցերով օգնականի հետ, արդյոք կա որևէ սահմանափակում, ինչ պայմաններում (առանձնություն, գաղտնիություն, ժամանակացույց, տեսահսկման համակարգի ներքո, երրորդ անձի ներկայությամբ, և այլն), պարզել հաստատությունից և դատարանից և (կամ) փաստաբանի գրասենյակից հեռավորությունը
- Անվճար իրավաբանական օգնության համակարգը երեխայի և նրա ընտանիքի համար, պարզել՝ արդյոք այն կազմակերպվում է օրինական ձևով, արդյոք իրականացվում է արդյունավետ ձևով և արդյոք հեշտությամբ հասանելի է և որակավորված
- Իրավաբանական օգնության որակը, պարզել՝ արդյոք երեխան գոհ է իր փաստաբանի և իրավակախորհրդատուի միջամտությունից, արդյոք նա հասկանում է, թե ինչ է ասվել, արվել, որոշվել, արդյոք փաստաբանը/իրավակախորհրդատուն մասնագիտացած է երեխաների իրավունքների հարցերում և ծանոթ է երեխաներին անազատության մեջ պահելու տարբեր համատեքստերին (անչափահասների արդարադատություն, հոգեկան առողջության հաստատություններ, վարչական կալանք, և այլն)

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացիություն ունեցող երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Կոնկրետ տեղեկությունները և փաստաբանի / իրավաբանական օգնության ու թարգմանության հասանելիությունը, պաշտոնական փաստաթղթերի թարգմանությունը, տեղեկությունների առկայությունը (այդ թվում՝ ներքին կանոններ, բողոքարկման կառուցակարգերի ուղեցույցներ, և այլն)՝ երեխայի համար հասկանալի լեզվով

.....

.....

.....

ԵԻԿ 37.դ, 40.2.բ.ii | Պեկինյան կանոններ 7.1, 15 | ՍՀՓ 11, 17-18 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ7.1, 15.1 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 18.ա, 24, 60-61, 78 | ԵԻԿ ԸՄ թիվ 10 §49, 52, 81, 82, 92 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 120 | ՄԻԵԿ 6 | ԵԲԿ 23.1-6, 37.4, 98 | ԱԻԵԿ 105.4, 120.1-120.3 | ԵԿԱՈՒ IV.Գ.28, 30, IV.Դ.2.37, 39, 41, IV.Ե.75, 77, V.դ, զ, §8, 46, 67, 101, 103, 104 | ԽԿԿ/Տեղ (2009)27, IV, 97 | ԽԿԿ/Տեղ (2015)1, V, 98 | ՄԻԵԴ Դուշկան ընդդեմ Ուկրաինայի (Գործ թիվ 29175/04), Սալդուզն ընդդեմ Թուրքիայի [GC] (Գործ թիվ 36391/02), Սոյկանն ընդդեմ Թուրքիայի (Գործ թիվ 47368/99), Պանովիցն ընդդեմ Կիպրոսի (Գործ թիվ 4268/04), Ադամկիևիչն ընդդեմ Լեհաստանի (Գործ թիվ 54729/00)
[CRC 37.d, 40.2.b.ii | RAJJ 7.1, 15 | BOP 11, 17-18 | GPJD 7.1, 15.1 | RPJDL 18.a, 24, 60-61, 78 | CRC - GC No 10 §49, 52, 81, 82, 92 | SMR 120 | ECHR 6 | EPR 23.1-6, 37.4, 98 | ERJO 105.4, 120.1-120.3 | GCFJ IV.C.28, 30, IV.D.2.37, 39, 41, IV.E.75, 77, V.d, f, §8, 46, 67, 101, 103, 104 | CPT/Inf (2009)27, IV, 97 | CPT/Inf (2015)1, V, 98 | ECtHR Dushka v. Ukraine (No 29175/04); Salduz v. Turkey [GC] (No 36391/02); Soykan v. Turkey (No 47368/99); Panovits v. Cyprus (No 4268/04); Adamkiewic v. Poland (No 54729/00)]

Գ. (ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ՁԵՐԲԱԿԱԼԵԼԸ, ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼԸ ԵՎ ԱՅԼՆ

Արդյո՞ք ոստիկանատանը կալանքի տակ պահելու, կալանքի տակ վերադարձնելու (նախքան դատավարությունը) ժամանակ երեխային անազատության մեջ պահելը սահմանափակվում է բացառիկ հանգամանքներով, հնարավորինս կարճ ժամանակահատվածով, և արդյո՞ք հարգվում են անմեղության կանխավարկածը, արժանապատվությունը և անձի անձեռնմխելիությունը:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին | Երեխաներին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Սենյակը, որտեղ պահում են երեխային, պարզել չափը, կահավորանքը և նյութական պայմանները
- Հաստատության ընդհանուր միջավայրը, պարզել՝ արդյոք այնտեղ միայն երեխաներ են, թե երեխաներ ու մեծահասակներ, տղաներ ու աղջիկներ, մեծ ու փոքր տարիքի երեխաներ, կալանքի տակ պահվող ու դատապարտված երեխաներ, և այլն:

ՍՏՈՒԳԵԼ.

- Անձնական գործը, պարզել երեխայի՝ այնտեղ եղած ժամանակահատվածը, բժշկական քարտը
- Տևողությունը, պարզել՝ արդյոք տևողությունը երկարացվել է 24 ժամից ավելի

5

- Տեղը, պարզել՝ արդյոք հարմարությունները հարմարեցված են երեխաների համար, արդյոք երեխաներն առանձնացված են մեծահասակներից ու դատապարտված երեխաներից
- Անազատության մեջ պահելու (օր.՝ ձերբակալելու) մասին ծանուցումը, պարզել՝ արդյոք իրավապահ մարմինները անազատության մեջ պահելու մասին պաշտոնապես ծանուցել են երեխայի հարազատին կամ մեկ այլ չափահաս անձի, որին երեխան վստահում է
- Փաստաբանի և վստահելի չափահաս անձի ներկայությունը, պարզել՝ արդյոք երեխային հարցաքննել և (կամ) պահանջել են որևէ հայտարարություն անել կամ որևէ փաստաթուղթ ստորագրել՝ առանց այս անձանց պարտադիր ներկայության, պարզել, թե երբ, ինչպես և ինչ հաճախականությամբ են երեխայի համար հասանելի եղել նշված անձինք, *Տես Բաժին 5.1. / Բ., էջ 95*
- Հատուկ տեղեկատվական թերթիկը, պարզել՝ արդյոք վերոհիշյալ երաշխիքները սահմանված են տեղեկատվական թերթիկում, որը տրվում է անազատության մեջ գտնվող երեխային՝ իրավապահ հաստատություն բերելուց անմիջապես հետո, պարզել՝ արդյոք այն ընկալելի է երեխայի համար, արդյոք գրված է պարզ ու հստակ լեզվով և արդյոք այդ թերթիկից կա տարբեր լեզուներով, պարզել՝ արդյոք երեխան լիովին հասկացել է այդ իրավիճակում իր իրավունքները
- Դաժան վերաբերմունքի նշանները կամ դրանց մասին հայտարարությունները *Տես Բաժին 5.7. / Գ., էջ 139*
- Խափանման միջոցները *Տես Բաժին 5.3. / Գ., էջ 108*
- Աշխատանքը, կրթությունը, միջին մասնագիտական կրթությունը, ժամանցը, պարզել՝ արդյոք երեխան կարողացել է շարունակել աշխատել և (կամ) սովորել, ինչպես նաև հանգստանալ և ժամանակ անցկացնել այդ համատեքստում *Տես Բաժին 5.6. / Գ., էջ 127 / Դ., էջ 129 / Զ., էջ 131*

.....

.....

.....

ԵԻԿ 37.բ,գ,դ | ՍՀՓ 12, 28, 36, 37 | Պեկինյան կանոններ 10.3, 13 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 2, 17, 18, 21 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 5, 6 | ԵԻԿ ԸՄ թիվ 10 §79, 83, 85, 89 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 7, 11-17, 111-120 | ՄԻԵԿ 5 | ԵԲԿ 11.1, 15.1, 18.8-9 | ԱԻԵԿ 10, 78.4, 78.5, 108 – 113.2 | ԵԿԱՈՒ §73-74 | ԽԿԿ/Տեղ (2015)1, V, 98, 99 | ՄԻԵԴ, Գյուվեչն ընդդեմ Թուրքիայի (Գործ թիվ 70337/01), Սալդուզն ընդդեմ Թուրքիայի [GC] (Գործ թիվ 36391/02), Սոյկանն ընդդեմ Թուրքիայի (Գործ թիվ 47368/99), Պանովիցն ընդդեմ Կիպրոսի (Գործ թիվ 4268/04)
[CRC 37.b,c,d | BOP 12, 28, 36, 37 | RAJJ 10.3, 13 | RPJDL 2, 17, 18, 21 | RNCM 5, 6 | CRC - GC No 10 §79, 83, 85, 89 | SMR 7, 11-17, 111-120 | ECHR 5 | EPR 11.1, 15.1, 18.8-9 | ERJO 10, 78.4, 78.5, 108 – 113.2 | GCF] §73-74 | CPT/inf (2015)1, V, 98, 99 | ECtHR, Güveç v. Turkey (No 70337/01); Salduz v. Turkey [GC] (No 36391/02); Soykan v. Turkey (No 47368/99); Panovits v. Cyprus (No 4268/04)]

Դ. ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ԺԱՄԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Արդյոք տեղափոխելու և ընդունելու ժամանակ երեխան ապահովված է բավարար և հարմարեցրած տեղեկատվությամբ, որը նրան հնարավորություն է տալիս ամբողջովին հասկանալ իր իրավունքներն ու պարտականությունները անազատության մեջ պահելու ընթացքում:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին* | *Աշխատակազմին* | *Երեխաներին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Տեղափոխելու և ընդունելու մասին տեղեկությունները, պարզել՝ արդյոք ծնողներին, խնամակալներին կամ հարազատներին տեղեկացրել են
- Երեխաներին տրամադրվող տեղեկությունները, պարզել՝ արդյոք սա ներառում է հաստատությունը ղեկավարող կանոնների օրինակ, երեխայի իրավունքների գրավոր նկարագրություն, տեղեկություններ բողոքարկման կառուցակարգերի մասին, կոնտակտային տվյալներ իրավաբանական օգնության համար, պարզել՝ արդյոք այս տեղեկությունները հասանելի են եղել երեխաների համար (գրավոր ձևով, հասկանալի լեզվով, ընկալելի և ըմբռնելի ձևով մատուցված) և արդյոք նրան օգնել են հասկանալ այդ տեղեկատվությունը
- Առաջին սկրինինգը (հոգեբանական - բժշկական - սոցիալական) *Տես Բաժին 5.7. / Ա., էջ 135*
- Տեղափոխման պայմանները, պարզել՝ արդյոք տեղափոխումը թույլատրված է եղել իրավասու մարմնի կողմից, և արդյոք դա իրականացվել է այնպիսի պայմաններում, որտեղ հարգվում է մարդկային արժանապատվությունը (համապատասխան օդափոխությամբ և լուսավորությամբ)

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացիություն ունեցող երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հաղորդակցությունը հյուպատոսության կամ դիվանագիտական առաքելության հետ և դրանց հասանելիությունը
- Նախնական հարցազրույցը, պարզել՝ արդյոք այն կատարվել է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից, երեխային հասկանալի լեզվով, պարզել՝ արդյոք այն ներառում է երեխայի առանձնահատուկ խոցելի կողմերի գնահատում (այդ թվում՝ տարիքի, առողջության, սոցիալ-հոգեբանական գործոնների և պաշտպանության հետ կապված այլ կարիքների առումով՝ ներառյալ նրանք, որոնք բխում են բռնությունից, թրաֆիքինգից կամ տրավմայից)

Հատուկ խումբ. երեխաներ խնամելու պարտականություններ ունեցող աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Այդ երեխաների համար պայմանավորվածություններ ձեռք բերելու թույլտվությունը, պարզել՝ արդյոք կա անազատության մեջ պահելը ողջամիտ ժամանակով կասեցնելու հնարավորություն՝ հաշվի առնելով երեխաների լավագույն շահերը

5

.....

.....

.....

Պեկինյան կանոններ 10.1, 13.3 | ՍՀՓ 10, 13, 16 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 22 – 27 | ԿԲՀՎԿ 2 | ԵԲԿ 15, 30, 37.1-5 | ԱԻԵԿ 62.3, 62.5, 62.6 | ԵԿԱՈՒ IV.A.1-5, IV.A.1 | ԽԿԿ/Տեղ (2009)27, IV, 98 | ԽԿԿ/Տեղ (2013) 29, 73 | ԽԿԿ/Տեղ (2015) V, 114
[RAJJ 10.1, 13.3 | BOP 10, 13, 16 | RPJDL 22 – 27 | RTWP 2 | EPR 15, 30, 37.1-5 | ERJO 62.3, 62.5, 62.6 | GCFJ IV.A.1-5, IV.A.1 | CPT/Inf (2009)27, IV, 98 | CPT/Inf (2013) 29, 73 | CPT/Inf (2015) V, 114]

Ե. ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

Արդյո՞ք հաստատությունը յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ կազմում է ամբողջական, գաղտնի և ապահով արձանագրություն:

ՀԱՐՑՆԵԼ *Ղեկավարին | Աշխատակազմին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Արձանագրությունները, պարզել՝ արդյոք դրանք ներառում են տեղեկություններ երեխայի ինքնության, անազատության մեջ պահելու փաստի, պատճառների և պատասխանատու մարմնի, ձերբակալման օրվա, ժամի և վայրի, ընդունելու, տեղափոխելու և ազատ արձակելու օրվա ու ժամի մասին, մանրամասներ անազատության մեջ պահելու ժամանակ իրենց խնամքի տակ գտնվող երեխայի յուրաքանչյուր ընդունման, տեղափոխման կամ ազատ արձակման վերաբերյալ ծնողներին և խնամակալներին ծանուցելու մասին, մանրամասներ ֆիզիկական ու մտավոր առողջության հետ կապված հայտնի խնդիրների մասին, այդ թվում՝ թմրանյութերի և ալկոհոլի չարաշահում, նկատելի վնասվածքներ և բողոքներ նախկինում դաժան վերաբերմունքի մասին, նրա անձնական ունեցվածքի գույքացուցակի մասին, ընտանիքի, խնամակալների կամ ներկայացուցիչների բոլոր կոնտակտային տվյալները, փաստաբանի կոնտակտային տվյալները
- Անձնական գործը, պարզել՝ արդյոք այն ներառում է անազատության մեջ պահելու վավերական ու մանրամասն հրաման (դատական, վարչական կամ այլ պետական մարմնի կողմից), իրավական արձանագրություն, բժշկական քարտ, կարգապահական ընթացակարգերի և երեխայի խնամքի անհատական ծրագրի ձևի, բովանդակության և մանրամասների վերաբերյալ այլ փաստաթղթերի մասին արձանագրություն, պարզել՝ արդյոք այն թարմացվում է և որտեղ է այն պահվում (ապահով վայրում)
- Գաղտնիությունը, պարզել՝ արդյոք արձանագրություններն ու անձնական գործերը պահվում են գաղտնի, պարզել, թե ում են դրանք հասանելի (լիազորված անձինք)
- Հասանելիությունը երեխայի համար, պարզել՝ արդյոք երեխային հասանելի են իր անձնական գործն ու իր մասին արձանագրությունները (պայմանները)

.....

.....

.....

Պեկինյան կանոններ 21 | ՍՀՓ 12 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 19, 20, 21, 70 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 3.12, 13.6 | ԿԲՀՎԿ 3 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 6-9, 39.2, 51 | ԵԲԿ 15.1 | ԱԻԵԿ 34.1, 34.2, 62.2, 62.5
[RAJJ 21 | BOP 12 | RPJDL 19, 20, 21, 70 | RNCM 3.12, 13.6 | RTWP 3 | SMR 6-9, 39.2, 51 | EPR 15.1 | ERJO 34.1, 34.2, 62.2, 62.5]

Զ. ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄ ԵՎ ՀԵՏԽՆԱՄՔ

Արդյո՞ք երեխան ունի վաղաժամկետ ազատվելու հնարավորություն, որը կօգնի նրան վերադառնալ հասարակություն, ընտանեկան կյանքին, իր կրթությանն ու աշխատանքին:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին | Երեխաներին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Անհատական պլանը, պարզել՝ արդյոք ռեժիմով գործողությունները ներառում են նախապատրաստում ազատ արձակմանը և հետխնամքին, պարզել, թե ինչ գործողություններ են կատարվում և արդյոք դրանք ներառված են երկրի կրթության ու միջին մասնագիտական կրթության համակարգում, պարզել՝ արդյոք այդ պլանը ներառում է ցուցում ազատ արձակելուց հետո համապատասխան միջոցների մասին, պարզել՝ արդյոք դրանք իմաստ ունեն երեխայի համար
- Հետխնամքի հետ կապված կարգավորումները, պարզել՝ արդյոք ազգային իրավական դաշտն ապահովում է կոնկրետ երաշխիքներ, ինչպիսիք են՝ ազատ արձակելուց հետո արձանագրությունների կնքում և դատվածության հանում, ինչպես նաև երեխայի ինստիտուցիոնալացման մասին ոչ մի նշում ազատությունից զրկված լինելու ժամանակ տրված դիպլոմներում կամ ուսումնական վկայագրերում, պարզել, թե ովքեր են հետխնամքի հետ կապված աշխատանքներում ներգրավված դերակատարները (ներքին և արտաքին), պարզել, թե ինչպիսի կարգավորումներ գոյություն ունեն (ազատվելու և նախկին ազատությունից զրկվածների համար նախատեսված սոցիալական վերականգնման կենտրոնների, աշխատանքի կամ կրթության նպատակով ազատ արձակելու, պայմանական վաղաժամկետ ազատման տարբեր ձևերի, պատասխանատվությունից ազատելու, ներման մասին, և այլն)

5

- Վաղաժամկետ ազատման ընթացակարգը, պարզել, թե որոնք են վաղաժամկետ ազատման պայմանները, ով է որոշում կայացնում, ինչ տարրերի հիման վրա և արդյոք երեխան լսել է իրեն ազատ արձակելու մասին, պարզել, թե ինչպիսի աջակցություն է ապահովվում երեխայի համար, որպեսզի խնդրագիր ներկայացվի նրա վաղաժամկետ ազատման համար:

.....

.....

.....

ԵԻԿ 37.բ, դ, 40 (1) | Պեկինյան կանոններ 10.2, 19.1, 28 | ՍՀՓ 38, 39 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 20, 40, 79 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 9 | ԿԲՀՎԿ 46, 55, 63 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 4, 5, 9, 87, 90, 91, 98, 103, 104, 107, 108, 110 | ԵԲԿ 26.3, 28.7, 30.3, 33, 35.3, 103.2, 103.4, 107 | ԱԻԵԿ 49.2, 50.1, 51, 77 (օ), 78.5, 79.3, 100-103
[CRC 37.b, d, 40 (1) | RAJJ 10.2, 19.1, 28 | BOP 38, 39 | RPJDL 20, 40, 79 | RNCM 9 | RTWP 46, 55, 63 | SMR 4, 5, 9, 87, 90, 91, 98, 103, 104, 107, 108, 110 | EPR 26.3, 28.7, 30.3, 33, 35.3, 103.2, 103.4, 107 | ERJO 49.2, 50.1, 51, 77 (o), 78.5, 79.3, 100-103]

5.2. Անձնակազմ/ կադրային ապահովում

Ա. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ

Արդյո՞ք կա անազատության մեջ գտնվող երեխաների հետ աշխատելու համար աշխատակազմի ընտրության և աշխատանքի ընդունելու կոնկրետ գործընթաց:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին | Երեխաներին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Աշխատակազմի անդամների թիվն ու գործառույթները, պարզել՝ արդյոք այն բազմամասնագիտական է, պարզել մասնագետների թիվը, այդ թվում՝ անվտանգության աշխատողներ, դաստիարակներ, միջին մասնագիտական ուսուցման մասնագետներ, խորհրդատուներ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ ու հոգեբույժներ, առողջության մասնագետներ, և այլն
- Աշխատակազմի անդամների բազմազանությունը, պարզել սեռը, լեզուն, էթնիկ պատկանելությունը
- Աշխատակազմի անդամներ-երեխաներ հարաբերակցությունը
- Կադրային քաղաքականությունը
- Վերջին շրջանում աշխատանքի ընդունվածների աշխատանքի նկարագրությունը
- Որակավորման չափորոշիչները, պարզել՝ արդյոք դրանք ներառում են հասունություն, բարեվարքություն, մարդասիրություն, երեխաների հետ աշխատելու ունակություն և մասնագիտական կարողություն, աշխատանքի համար պիտանիություն

Հատուկ վայր. ոստիկանության բաժիններ

ՍՏՈՒԳԵԼ.

- Ոստիկաններին, պարզել՝ արդյոք նրանք անցել են հատուկ վերապատրաստում և հրահանգավորում, պարզել՝ արդյոք գոյություն ունեն երեխաների հարցերով զբաղվող հատուկ ոստիկանական ստորաբաժանումներ

Հատուկ վայր. հոգեկան առողջության հաստատություններ

ՍՏՈՒԳԵԼ.

- Օժանդակ աշխատակազմը, պարզել՝ արդյոք նրանց ուշադիր են ընտրել, արդյոք անցել են համապատասխան վերապատրաստում՝ նախքան իրենց պարտականությունները ստանձնելը, և մասնակցել են որակավորման բարձրացման դասընթացների, արդյոք նրանք գտնվում են որակավորված առողջապահական աշխատակազմի աչալուրջ հսկողության տակ և նրա ենթակայության ներքո

5

Հատուկ վայր. օտարերկրյա քաղաքացիություն ունեցող երեխաներին պահող հաստատություն

ՍՏՈՒԳԵԼ.

- Սոցիալական աշխատողին, հոգեբանին, պարզել՝ արդյոք հաստատությունում նրանց ներկայությունը կրում է կանոնավոր բնույթ և արդյոք անհատական շփում են ունենում երեխաների հետ
- Խառը գենդերային կազմով աշխատակազմը

.....

.....

.....

ԵԻԿ 3.3 | Պեկինյան կանոններ 12, 22.2 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 51, 54, 55, 81, 82, 83, 86 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 15.2, 16 | ԵԻԿ ԸՄ թիվ 10 §85, 89 | ԿԲՀՎԿ 21, 31, 32, 33, 34, 35 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 46(1), 47(2), 49, 50, 51, 52, 53, 74-82 | ԵԲԿ 8, 76, 77, 81.1, 81.3, 89.1 | ԱԻԵԿ 89.4, 128.1, 128.3 | ԽԿԿ/Տեղ (1998)12, Բ., 28 | ԽԿԿ/Տեղ (2009)27, IV, 99 | ԽԿԿ/Տեղ (2015)1, V, 119
[CRC 3.3 | RAJJ 12, 22.2 | RPJDL 51, 54, 55, 81, 82, 83, 86 | RNCM 15.2, 16 | CRC - GC No 10 §85, 89 | RTWP 21, 31, 32, 33, 34, 35 | SMR 46(1), 47(2), 49, 50, 51, 52, 53, 74-82 | EPR 8, 76, 77, 81.1, 81.3, 89.1 | ERJO 89.4, 128.1, 128.3 | CPT/Inf (1998)12, B., 28 | CPT/Inf (2009)27, IV, 99 | CPT/Inf (2015)1, V, 119]

Արդյո՞ք աշխատողներին աշխատանքի են ընդունել այնպես, որ, ապահովվի, մի կողմից, երեխաների բուժման շարունակականությունը, և, մյուս կողմից, իրենց պարտականությունների արդյունավետ կատարումը:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Սպասարկման պայմանները
- Բարեկեցությունն աշխատավայրում
- Հաղորդակցումը տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցների միջև և աշխատողների ու ղեկավարության միջև

ՍՏՈՒԳԵԼ.

- Պայմանագրի տեսակը և պայմանները (մշտական / ժամանակավոր, լրիվ դրույքով/ կես դրույքով, վարձատրվող / կամավոր, վարձատրության դրույքաչափերը, և այլն)
- Կադրերի հոսունությունը, պարզել ժամանակավոր անաշխատունակության արձակուրդում գտնվող աշխատողների թիվը, վերջին շրջանում գործադուլի (գործա-

դուլների) առկայությունը

- Աշխատողների աշխատանքային գրաֆիկները
- Հանդիպումների ժամանակացույցը՝ տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցների միջև և աշխատողների ու ղեկավարության միջև
- Գոյություն ունեցող ներքին և (կամ) արտաքին օժանդակության ու աջակցության ձևերը (դատական պաշտպանության միջոցներ տրամադրող, կրթական, բարոյական, հոգևոր, այլ)
- Համագործակցությունը համայնքի արտաքին դերակատարների հետ

.....

.....

.....

Պեկինյան կանոններ 1.6, 24-25 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ VII. 60 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 81, 83, 84, 86, 87 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 15.3 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 46 (3) | ԵԲԿ 7, 52.2, 78, 79.1 | ԱԻԵԿ 19, 42, 131.1, 132, 133, 134.2
[RAJJ 1.6, 24-25 | GPJD VII. 60 | RPJDL 81, 83, 84, 86, 87 | RNCM 15.3 | SMR 46 (3) | EPR 7, 52.2, 78, 79.1 | ERJO 19, 42, 131.1, 132, 133, 134.2]

Արդյո՞ք կան անազատության մեջ գտնվող երեխաների հետ աշխատող աշխատակիցների համար հատուկ վերապատրաստում, կանոնավոր, շարունակական վերապատրաստումներ, համապատասխան վերահսկողություն, հետևող գործողություններ և աշխատանքի գնահատում:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Աշխատակազմի անդամների և երեխաների միջև վարքագծային դրսևորումներն ու շփումները

ՍՏՈՒԳԵԼ.

- Անհրաժեշտ նախնական և շարունակական վերապատրաստումների մակարդակը (երեխայի հոգեբանության, երեխայի բարեկեցության և մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների ու նորմերի, երեխայի իրավունքների թեմաներով), պարզել աշխատողների վերապատրաստումների համապատասխանությունը նրանց գործառույթներին
- Աշխատողներին առաջարկվող շարունակական վերապատրաստումների ծրագիրը (կազմակերպված վերջին ու հաջորդ դասերի ամսաթվերը)
- Վերապատրաստումների տեսակը՝ տեսություն, պրակտիկա, գիտելիքներ, վարք, և այլն
- Աշխատակազմի կողմից ներկայացվող վերապատրաստումների պահանջը,

5

- Աշխատողների գնահատման ընթացակարգը, աշխատակազմի զարգացումը

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Կարողությունների զարգացումը, պարզել՝ արդյոք դրանք աշխատողներին թույլ են տալիս բավարարել անազատության մեջ գտնվող աղջիկների սոցիալական վերաինտեգրման հետ կապված հատուկ պահանջները
- Վերապատրաստումների հավասար հասանելիությունը տղամարդ ու կին աշխատողների համար
- Հատուկ վերապատրաստումը, պարզել՝ արդյոք այն ներառում է դասընթացներ գենդերին առնչվող նրբությունների և խտրականության ու սեռական ոտնձգության արգելման, անազատության մեջ գտնվող աղջիկների՝ սեռին բնորոշ կարիքների ու մարդու իրավունքների, աղջիկների առողջության հետ կապված հարցերի, ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների մասին

Հատուկ վայր. ոստիկանության բաժիններ

ՍՏՈՒԳԵԼ.

- Նախնական ու շարունակական մասնագիտացված վերապատրաստումները, պարզել՝ արդյոք դասընթացները ներառում են անչափահասների հանցավորության կանխարգելումը

.....

.....

.....

Պեկինյան կանոններ 12, 22 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ 58 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 16.3 | ԵԻԿ ԸՄ թիվ 10: 89 | ԿԲՀՎԿ 29, 32, 33, 34 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 47(2), (3) | ԵԲԿ 8, 54.3, 76, 81.1, 2, 3, 4 | ԱԻԵԿ 129.1, 2, 3 | ԽԿԿ/Տեղ (2015), V, 100, 101, 120
[RAJJ 12, 22 | GPJD 58 | RNCM 16.3 | CRC GC No10: 89 | RTWP 29, 32, 33, 34 | SMR 47(2), (3) | EPR 8, 54.3, 76, 81.1, 2, 3, 4 | ERJO 129.1, 2, 3 | CPT/Inf (2015), V, 100, 101, 120]

Արդյոք կա աշխատողների համար հատուկ դասընթաց երեխաների միջև կռիվներին առանց ուժի կիրառման միջամտելու թեմայով:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին | Երեխաներին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Աշխատակազմի վերաբերմունքը (բռնության գործադրումով) միջադեպի դեպքում

ՍՏՈՒԳԵԼ.

- Բռնության գործադրումով միջադեպի կառավարման թեմայով առկա դասընթացը (այդ թվում՝ լարվածությունը թուլացնելու բանավոր հնարքները և զսպման պրոֆեսիոնալ հնարքները)
- Բռնության գործադրումով միջադեպի վարման ներքին ընթացակարգը
- Միջադեպերի արձանագրությունները
- Բողոքների արձանագրությունները
- Կարգապահական միջոցների մասին արձանագրությունները
- Բժշկական փաստաթղթերը

Հատուկ վայր. հոգեկան առողջության հաստատություններ

ՍՏՈՒԳԵԼ.

- Զսպման հատուկ միջոցների, դեղորայքի, դեղամիջոցների, զսպաշապիկների օգտագործումը

.....

.....

.....

ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 24, 25, 64, 75-78 | ԵԻԿ ԸՄ թիվ 10: §89 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 36, 38, 76, 82.2 | ԵԲԿ 66 | ԱԻԵԿ 90.3, 129.3(q) | ԽԿԿ/Տեղ (2015), V, 120
[RPJDL 24, 25, 64, 75-78 | CRC GC No 10: §89 | SMR36, 38, 76, 82.2 | EPR 66 | ERJO 90.3, 129.3(f) | CPT/Inf (2015), V, 120]

.....

5

Արդյոք աշխատակազմի անդամներն իրենց լավ են պահում և այնպես են կատարում իրենց պարտականությունները, որով կազդեն անազատության մեջ գտնվող երեխաների պահվածքի վրա՝ լավ օրինակ ծառայելով և նրանց հարգանքը վաստակելով:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Աշխատակազմի վարքն ընդհանրապես, պարզել՝ արդյոք աշխատակազմի անդամներին ընկալում են որպես մարդասեր, պրոֆեսիոնալ, արդարամիտ, արդյունավետ, հարգանք ներշնչող և երեխաների նկատմամբ հարգալից՝ դրական օրինակ ու կերպար ներկայացնելու համար
- Աշխատակիցների փոխհարաբերությունները երեխաների հետ
- Աշխատակազմի հագուստը, պարզել՝ արդյոք նրանք կրում են համազգեստ
- Աշխատակազմի անվտանգության գործիքները, պարզել՝ արդյոք կրում են մահակներ, ձեռնաշղթաներ, զենքեր, վնասազերծող հեղուկացիրներ կամ զսպման այլ միջոցներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Միջադեպերի գրանցամատյանը
- Կարգապահական պատժամիջոցների գրանցամատյանը
- Մեկուսացումների գրանցամատյանը
- Բողոքների գրանցամատյանը

.....

.....

.....

ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 65, 87 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 48 | ԵԲԿ 64.1, 66, 69.1, 69.3, 72.4, 75 | ԱԻԵԿ 90.3, 92, 129.3(q) | ԽԿԿ/Տեղ (2015), V, 120
[RPJDL 65, 87 | SMR 48 | EPR 64.1, 66, 69.1, 69.3, 72.4, 75 | ERJO 90.3, 92, 129.3(f) | CPT/Inf (2015), V, 120]

5.3. Անվտանգություն և երաշխիքներ

Ա. ԽՈՇՏԱՆԳՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Արդյո՞ք առկա են բոլոր անհրաժեշտ երաշխիքները՝ խուսափելու խոշտանգման ցանկացած գործողություն պատճառելուց, հարուցելուց կամ հանդուրժելուց կամ ցանկացած կոպիտ, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից, պատժից, ուղղիչ կամ կարգապահական միջոցառումից՝ ցանկացած հիմնավորմամբ կամ հանգամանքներում:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Աշխատակազմի վարքագիծն ընդհանուր առմամբ
- Երեխաների վարքագիծը և արտաքինը (սթրեսի, տրավմայի, վնասվածքի, հեմատոմայի ցանկացած նշանի առկայություն)

ՍՏՈՒԳԵԼ.

- Ներքին կանոններ. պարզել՝ արդյոք խոշտանգման ցանկացած գործողություն և վատ վերաբերմունքի ցանկացած այլ եղանակ հստակորեն արգելված են
- Պատահարների գրանցամատյան. պարզել՝ արդյոք բոլոր պատահարները գրանցված են
- Պատժամիջոցների և կարգապահական միջոցառումների գրանցամատյան. պարզել՝ արդյոք դրանք կարող են մեկնաբանվել որպես խոշտանգում կամ վատ վերաբերմունք (ֆիզիկական պատիժ, մեկուսացում կամ մեկուսի բանտարկություն, բռնի կերակրում և այլն, ու ցանկացած այլ պատիժ, որը հնարավոր է խախտի խնդրո առարկա երեխաների ֆիզիկական և/կամ մտավոր/հոգեկան անձեռնմխելիությունը, ինչպիսիք են սննդի կրճատումը, ընտանիքի անդամների և արտաքին աշխարհի հետ շփման սահմանափակումը կամ արգելումը)
- Աշխատակիցների կողմից ուժի կամ սահմանափակումների կիրառման արձանագրություններ
- Բողոքների գրանցամատյան. պարզել՝ արդյոք խոշտանգման կամ վատ վերաբերմունքի որևէ (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) բողոք է գրանցվել
- Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի մասին հայտարարություն երեխաների կողմից
- Բժշկական արձանագրություններ ⇒ *Տես գլուխ 5.7. / Գ – էջ 139*

.....
.....
.....

5

ԽԴԿ *1 - ԸՄ 2 §3* | *37 (ա) (դ)* | **ԽԴԿԿԱ** *3, 17-23* | **Պեկինյան կանոններ** *17.3* | **ՍՀՓ** *6* | **ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ** *VI.54* | **ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ** *67, 87 (ա)* | **ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ** *1, 8(դ), 32(դ), 34, 43* | **ՄԻԵԿ** *2, 3* | **ԵԲԿ** *60.3* | **ԵԿԱՈՒ** *III.c.2* | **ԽԿԿ** */Տեղ (2015), V, 126* | **ՄԻԵԴ**, *«Դուշկան ընդդեմ Ուկրաինայի» [Dushka v. Ukraine] (No 29175/04); «Տարարիևան ընդդեմ Ռուսաստանի» [Tarariyeva v. Russia] (No 4353/03), «Մուբիլանզիլա Մայեկան և Կանիկի Միտունգան ընդդեմ Բելգիայի» [Mubilanzila Mayeka et Kaniki Mitunga v. Belgium] (No 13178/03 3), «Մուսխաջիևան և մյուսներն ընդդեմ Բելգիայի» [Muskhadzhiyeva and Others v. Belgium] (No 41442/07), «Ռահիմին ընդդեմ Հունաստանի» [Rahimi v. Greece] (No 8687/08), «Պոպովն ընդդեմ Ֆրանսիայի» [Popov v. France] (No 39472/07 և 39474/07), «Մահմունդին և մյուսներն ընդդեմ Հունաստանի» [Mahmundi and others v. Greece] (No 14902/10), «Գյուվեչն ընդդեմ Թուրքիայի» [Guvec v. Turkey] (No 70337/01), «Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի» [M.S.S v. Belgium and Greece] [ԸՄ (Թիվ 30696/09)*

Բ. ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ ԵՎ ՄԵՆԱԽՈՒՑ ՏԵՂԱՎՈՐԵԼ

Արդյոք մեկուսի բանտարկության և մեկուսացման պրակտիկան նվազագույնի է հասցված և խստորեն կանոնակարգված, և արդյոք այն ցանկացած դեպքում գործի է դրվում որպես վերջին միջոց և բացառապես պաշտպանության կամ անվտանգության նկատառումներով:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Մեկուսացման խցեր և ցանկացած այլ խուց, որը կարող էր օգտագործվել մեկուսի բանտարկության կամ մեկուսացման համար
- Նյութական պայմաններ. ստուգել պատուհանները, լույսերը, մահճակալները, զուգարանները, սանիտարական հարմարությունների հասանելիությունը
- Երեխաների վարքագիծն ու արտաքինը (սթրեսի, տրավմայի, վնասվածքի, հեմատոմայի ցանկացած նշանի առկայություն)

ՍՏՈՒԳԵԼ.

- Ներքին կանոններ և կանոնակարգեր. պարզել՝ արդյոք որոշումը կայացվել է իրավասու մարմնի կողմից, ինչ ընթացակարգ է կիրառվել, ում պետք է տեղեկացնել/ծանուցել որոշման, դրա գործողության երկարաձգման, վերանայման մասին (դատավոր, փաստաբան, ծնողներ), ում հետ պետք է խորհրդակցել, ով կարող է այցելել երեխային տվյալ միջոցառումների ընթացքում, որքան հաճախ, որքան ժամանակով
- Մեկուսացման և մեկուսի բանտարկության գրանցամատյան. պարզել նպատակը, հիմնավորումը, տևողությունը, հաճախականությունը, ով է կայացրել որոշումը, ով է տեղեկացվել, ով է այցելել երեխային, երբ և որքան ժամանակով
- Կարգապահական միջոցառումների և պատժամիջոցների գրանցամատյան. պարզել, թե արդյոք պատժամիջոցները կարող են կապվել մեկուսացման կամ մեկուսի բանտարկության հետ
- Տեղեկություն. պարզել, թե արդյոք իրավասու մարմինը պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացվել է, արդյոք երեխայի փաստաբանը ծանուցվել է

- Բժշկական արձանագրություններ. պարզել՝ արդյոք բուժաշխատակիցն անմիջապես տեղեկացվել է, և արդյոք նրա համար հասանելի է եղել երեխան, և արդյոք նա իսկապես այցելել է երեխային, որքան հաճախ
- Բողոքների գրանցամատյան. պարզել՝ արդյոք գրանցվել է որևէ (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) բողոք որևէ երեխայի կողմից՝ մեկուսացման կամ մեկուսի բանտարկության երկարաձգված կամ ոչ իրավաչափ միջոցառումների վերաբերյալ
- Մեկուսացման կամ մեկուսի բանտարկության տևական կամ ոչ իրավաչափ միջոցառումների մասին մեղադրանքներ:

.....

.....

.....

ԵԻԿ 37 (ա) (դ) | *ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 66, 67-70* | *ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 43 §1 ա) բ)* | *ՄԻԵԿ 2, 3* | *ԵԲԿ 60.5* | *ԱԻԵԿ 94.1* | *ԽԿԿ/Տեղ (1998)12, 49-50* | *ԽԿԿ/Տեղ (2015), V., 128, 129*
[*CRC* 37 (a) (d) | *RPJDL* 66, 67-70 | *SMR* 43 §1 a) b) | *ECHR* 2, 3 | *EPR* 60.5 | *ERJO* 94.1 | *CPT/Inf* (1998)12, 49-50 | *CPT/Inf* (2015), V., 128, 129]

Գ. ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԵՎ ԶՍՊՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Արդյոք զսպման և ուժի գործադրման կառուցակարգերի կիրառումը սահմանափակվում է բնույթով բացառապես զսպիչ պայմաններով և ուղղված է միայն երեխաներին ինքնավնասելուց, այլոց վնասելուց կամ սեփականությունը լրջորեն վնասելուց հետ պահելուն:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Զսպիչ գործիքներ, որոնք առկա են աշխատակիցների տրամադրության տակ կամ հասանելի են նրանց (ձեռնաշղթաներ, զսպաշապիկներ, զենք և այլն)
- Երեխաների վարքագիծը և արտաքինը (սթրեսի, տրավմայի, վնասվածքի, հեմատոմայի ցանկացած նշանի առկայություն)

ՍՏՈՒԳԵԼ.

- Ներքին կանոններ և կանոնակարգեր. պարզել՝ արդյոք կիրառումը սահմանափակվում է բացառիկ դեպքերով, երբ վերահսկման բոլոր մյուս եղանակները սպառված են և չեն հաջողել, և միայն ինչպես հստակորեն լիազորված և սահմանված է օրենքով ու սահմանված կարգով, պարզել՝ որն է բացառիկ դեպքի սահմանումը
- Ուժի կիրառմանը վերաբերող ընթացակարգ. պարզել՝ արդյոք դրույթները ներառում են ուժի կիրառման տարբեր տեսակները, որոնք, հնարավոր է, գործադրվեն. հանգամանքները, որոնց պարագայում այդ ուժը կարող է գործադրվել, աշխատա-

5

կիցները, որոնք իրավասու են ուժ կիրառել, պատասխանատվության մակարդակը, որն անհրաժեշտ է՝ լիազորելու ուժի կիրառումը, զեկույցը, որ պետք է պատրաստվի կիրառումից հետո, և զեկույցների դիտարկման գործընթացը

- Տևողություն. պարզել՝ արդյոք այն փաստացի կիրառվում է հնարավոր ամենակարճ ժամանակահատվածում
- Աշխատակիցներիի հատուկ վերապատրաստում. ⇒ տես Գլուխ 5.2, էջ 101
- Միջադեպերի գրանցամատյան. պարզել՝ որքան հաճախ են արձանագրվում զսպման և ուժի կիրառման գործիքների գործադրման դեպքեր, պարզել՝ հիմնավորումը համապատասխանո՞ւմ է երեխաներին ինքնավնասումից, այլոց վնասելուց կամ սեփականությունը լրջորեն փչացնելուց հետ պահելու դրույթին, պարզել՝ արդյոք նշված են միջոցի կիրառման մեկնարկի և ավարտի ժամանակները, գործի հանգամանքները, միջոցին դիմելու պատճառները, իրավասու այն պաշտոնյայի անունը, որը տվել է հրամանը կամ հաստատել է այն, և այն վնասվածքների քանակը, որ կրել են երեխաները և/կամ աշխատակիցները
- Բժշկական արձանագրություններ. պարզել՝ արդյոք ֆիզիկական զսպման կամ ուժի կիրառման յուրաքանչյուր դեպքից հետո երեխան հետևողականորեն բուժզննություն է անցել բուժաշխատողի կողմից
- Բողոքների գրանցամատյան. պարզել՝ արդյոք երեխաները որևէ (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) բողոք ներկայացրել են՝ կապված աշխատակիցներիի կողմից զսպման կամ ուժի կիրառման գործիքի ոչ համաչափ կիրառման հետ, պարզել՝ ինչ է արվել բողոքի հետքերով (ուսումնասիրություն, հարցազրույցներ, հետազոտություններ)
- Երեխաների ընկալումը. պարզել՝ արդյոք երեխաները վիրավորված, ստորացված և նվաստացված են զգում աշխատակիցներիի կողմից ուժի կամ զսպման միջոցների կիրառման հետևանքով

Հատուկ վայր. հոգեկան առողջության հաստատություններ

ՍՏՈՒԳԵԼ.

- ֆիզիկական զսպման մեթոդներ (ամրուցիչներ, զսպաշապիկներ, զսպաթոռ և այլն), պարզել՝ արդյոք առկա է ներքին քաղաքականություն և մանրակրկիտ արձանագրություն այս մեթոդներին դիմելու վերաբերյալ, պարզել՝ արդյո՞ք որոշումը բուժաշխատողի կողմից կայացվել կամ նրա կողմից վավերացվել է այդ մեթոդների կիրառումից անմիջապես հետո, պարզել միջոցի կիրառման տևողությունը:
- Դեղամիջոցների չարաշահումներ ⇒ *Տես Գլուխ 5.7 / Ա. – էջ 135*

.....

.....

.....

ԵԻԿ 19, 37 (ա) (դ) | ՍՀՓ 6, 21 | Պեկինյան կանոններ 17, 1. (բ) | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 63, 64 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 43.2, 47-49 | ՄԻԵԿ 2, 3 | ԵԲԿ 64.1, 64.2, 65, 68.2-4, 69.3 | ԱԻԵԿ 7, 90.1 – 90.4, 91.1 – 91.3, 92 | ԽԿԿ/Տեղ. (1998)12, 47-50 | ԽԿԿ/Տեղ. (1997)10, Ե(Ε), 36 | ԽԿԿ/Տեղ. (2006) 35,37-38 | ԽԿԿ/Տեղ. (2015)1,II, 53

Դ. ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք խուզարկության օգտագործվող մեթոդները հիմնված են երեխաների արժանապատվության, ֆիզիկական և հոգեկան վիճակի կայունության, ինչպես նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության նկատմամբ հարգանքի վրա:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Երեխաների, աշխատակիցներիի, այցելուների և տարածքների զննության ընթացակարգերը. պարզել, թե ինչ պայմաններում են դրանք լիազորվում, դրանց բնույթը (օր.՝ անձնական խուզարկություն, տեսախցիկների օգտագործում ՏՀՀ զննության սենյակներում), ինչպես է առաջարկվում օգտագործել այս մեթոդները (ներքին կանոններ, ազգային օրենսդրություն և այլն)
- Աշխատակազմին. պարզել՝ արդյոք միայն միևնույն սեռի աշխատակիցներին է լիազորված զննություն իրականացնել, պարզել՝ արդյոք ինտիմ զննությունները, արդարացված հիմնավոր կասկածով, իրականացվում են միայն բուժանձնակազմի կողմից, պարզել՝ արդյոք անձնակազմը վերապատրաստված է ամենաբարձր մակարդակով՝ ունակ լինելու կառավարել այսօրինակ գործընթացը՝ առանց խաթարելու երեխայի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը
- Զննության արձանագրություններ
- Երրորդ անձի ներկայություն. պարզել՝ արդյոք երեխային աջակցել է նրա փաստաբանը կամ որևէ այլ չափահաս վստահյալ անձ
- Զննության այլընտրանքային մեթոդներ. պարզել՝ արդյո՞ք մշակվել են սկանավորման կամ այլ մեթոդներ
- Բողոքների գրանցամատյան. պարզել՝ արդյոք որևէ (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) բողոք գրանցվել է որևէ երեխայի կողմից՝ կապված զննության մեթոդների կիրառման հետ

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հատուկ պահանջները. պարզել՝ արդյոք գործուն միջոցներ ձեռնարկվել են՝ զննության ժամանակ պաշտպանելու աղջիկների արժանապատվությունը և պահպանելու նրանց նկատմամբ հարգանքը, արդյոք դրանք իրականացվում են կին աշխատակիցների կողմից, որոնք ինչպես հարկն է վերապատրաստված են զննության պատշաճ մեթոդների հարցում

.....

.....

.....

ԵԻԿ 37 (գ) (դ) | ՍՀՓ 1 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 28 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 50-53 | ՄԻԵԿ 3 | ԵԲԿ 54.1-54.8 | ԱԻԵԿ 89.1 – 89.4 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 73

Ե. ԵՐԱՇԽՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Արդյոք հաստատության վարչակազմը պատշաճ և բավարար նախազգուշական միջոցառումներ և միջոցներ է ձեռնարկում՝ պաշտպանելու երեխաների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, ինչպես նաև բարեկեցությունը:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Զեկուցման, միջադեպերի և չարաշահումների ու երեխաներին ճնշամիջոցներից պաշտպանելու ընթացակարգ ⇒ *Տես Գլուխ 5.7 / Գ. – էջ 139*
- Միջադեպերի գրանցամատյան. պարզել տեղի ունեցած դեպքերը, դրանց արձանագրությունները, ինչպես է կատարվել դրանց վարումը, և ինչպես են երեխաներն ընկալել այս միջադեպերը և ձեռնարկված համապատասխան միջոցները
- Բողոքների գրանցամատյան. պարզել երեխաների կողմից ներկայացված (ֆորմալ և ոչ ֆորմալ) բողոքները, ինչպես է դրանց ընթացք տրվել, ինչ որոշում է կայացվել, և ինչպես են երեխաներն ընկալել իրենց բողոքին հետևած կարգավորման գործընթացը
- Բժշկական արձանագրություններ. պարզել, թե ինչ խնամք և բուժում է տարվել երեխաների նկատմամբ, պարզել միջադեպերը, որոնց հետ դրանք, հնարավոր է, կապված լինեն, և թե ինչպես են երեխաներն ընկալել իրենց ստացած խնամքը
- Անվտանգության պահպանման հատուկ միջոցառումներ, որոնք կիրառվում են հետևյալ երեխաների նկատմամբ. ավելի փոքրահասակ անչափահասներ, հղի աղջիկներ և երեխամայրեր, թմրամիջոցներից և ալկոհոլից կախվածության մեջ գտնվողներ, ֆիզիկական և մտավոր առողջության հետ կապված խնդիրներ ունեցող երեխաներ, երեխաներ, որոնք, որպես բացառություն, ազատազրկվել են երկար ժամանակով, երեխաներ, որոնք ֆիզիկական, հոգեկան կամ սեռական բռնության են ենթարկվել, սոցիալապես մեկուսացած անչափահասներ և այլ հատկապես խոցելի իրավախախտ խմբեր

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Աղջիկների պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցառումներ. պարզել՝ արդյոք ներքին կանոններում առկա է գենդերային հայեցակետ, պարզել՝ արդյոք առկա են աշխատակիցներիի վարքագծի հստակ կանոնակարգեր՝ ուղղված աղջիկներին գենդերային հիմքով ցանկացած ֆիզիկական կամ վերբալ (բանավոր) բռնությունից, չարաշահումից, սեռական ոտնձգությունից պաշտպանելուն (առկայություն, իրականացում)

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Պաշտպանության հավելյալ միջոցառումներ՝ պաշտպանելու իրենց ծնողներից կամ այլ խնամողներից առանձնացված կամ առանց ուղեկցողի, ծնողների, խնամողների կամ հարազատների երեխաներին

.....

.....

.....

ԵԻԿ 19, 37 (դ) | ՍՀՓ 1 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ VI. 52, 53 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 87 | ԿԲՀՎԿ 31, 36 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 2.2, 76 բ) | ԵԲԿ 1 | ԱԻԵԿ 54, 64, 73 | ԽԿԿ/Տեղ. (2009)27, IV, 97 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 121

Զ. ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Արդյոք վարչակազմը պատշաճ քայլեր է ձեռնարկում՝ հասցեագրելու երեխաների շրջանում միմյանց նկատմամբ ծաղրանքի ու ահաբեկման [bullying] և հասակակիցների միջև բռնության խնդիրը:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Շփումներ երեխաների միջև
- Հաղորդակցություն աշխատակիցներիի և երեխաների միջև և հենց երեխաների հաղորդակցությունը միմյանց հետ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հատուկ քաղաքականություն և ընթացակարգ՝ հասցեագրելու երեխաների **շրջանում** միմյանց նկատմամբ ծաղրանքի ու ահաբեկման և հասակակիցների միջև բռնության խնդիրը (ներառյալ ֆիզիկական և սեռական ոտնձգություն, բանավոր վիրավորանք, շորթում և անչափահասին պատկանող իրերի գողություն). պարզել, թե որոնք են համապատասխանաբար կանխարգելելու, ահազանգելու, արձագանքելու միջոցառումները
- Աշխատակիցների հատուկ վերապատրաստում ⇒ *Տես Գլուխ 5.2 – էջ 101*
- Միջադեպերի գրանցամատյան
- Կարգապահական միջոցառումների և մեկուսի բանտարկության գրանցամատյան
- Մեկուսի բանտարկության արձանագրություններ

.....

.....

.....

ԵԻԿ 6 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 38, 76 c) | ԵԲԿ 56.2 | ԱԻԵԿ 88.2 | ԽԿԿ/Տեղ (2015)1, V, 121

5.4. Կարգ և կարգապահություն

Ա. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ

Արդյո՞ք կարգապահական միջոցառումների շրջանակը խստորեն, հստակորեն և ճշգրտորեն կարգավորված է: Արդյո՞ք այն լիարժեքորեն ուշադրության է առնում երեխաների հիմնարար բնութագրերը, կարիքներն ու իրավունքները:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Գրքույկներ, տեղեկատու թերթիկներ, որոնք երեխաների համար հասկանալի լեզվով տեղեկացնում են կարգապահական խախտում հանդիսացող վարքագծի, պատժամիջոցների տեսակի և տևողության, պատկան մարմնի մասին

ՍՏՈՒԳԵԼ.

- Կարգապահական միջոցառումներ/պատժամիջոցներ. պարզել՝ արդյոք դա հստակորեն նախատեսված է տվյալ հիմնարկի/հաստատության ներքին կանոններով, այդ թվում՝ յուրաքանչյուր կարգապահական միջոցառման/պատժամիջոցի առարկան և նպատակը, պարզել՝ արդյոք ընթացակարգը համահունչ է միջազգային և տարածաշրջանային չափանիշներին և երեխաների ազատազրկման համատեքստում կիրառելի իրավական շրջանակներին (հաշվի առնելով երեխայի արժանապատվությունը, նրա լավագույն շահը և նրա հիմնարար իրավունքները, ծայրահեղ միջոց՝ կիրառված պատշաճ ամենակարճ ժամանակով)
- Կարգապահական միջոցառումների/պատժամիջոցների գրանցամատյան. պարզել պատճառները, անհրաժեշտության և համաչափության սկզբունքների առնչությամբ ձեռնարկված միջոցառումները, տևողությունը, հաճախականությունը, ով է առաջարկում ձեռնարկել այս միջոցառումները, և ով է լիազորում դրանք
- Միջադեպերի գրանցամատյան. պարզել, թե արդյոք որևէ միջադեպ որևէ կերպ կապված է կարգապահական միջոցառումների/պատժամիջոցների հետ
- Մեկուսի բանտարկության և մեկուսացման խցի գրանցամատյան. պարզել՝ արդյոք կարող է որևէ կապ լինել երեխային մեկուսի բանտարկության ենթարկելու որոշման և նրա նկատմամբ կիրառված կարգապահական միջոցառումների, պատժամիջոցների միջև
- Բողոքների գրանցամատյան. պարզել՝ արդյոք երեխան ներկայացրել է որևէ (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) բողոք կարգապահական միջոցառումների/պատժամիջոցների վերաբերյալ
- Տեղեկատվություն. պարզել՝ արդյոք հաստատության ներքին կանոնները ներկայացվում և բացատրվում են երեխաներին, արդյոք երեխաները հասկացել են դրանք

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի հանդիսացող երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Բանավոր թարգմանություն. պարզել՝ արդյոք այս երեխաների համար հասանելի է բանավոր թարգմանությունը, որ նրանք հնարավորություն ունենան հասկանալու հաստատության ներքին կանոնները, այդ թվում՝ յուրաքանչյուր կարգապահական միջոցառման/պատժամիջոցի առարկան և նպատակը

.....

.....

.....

ԵԻԿ 2, 3, 6, 12, 37, 40 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 66, 70 | ԵԻԿ ԸՄ Թիվ 10 § 11, 23, 79 | ԿԲՀՎԿ 22-23 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 36-46 | ՄԻԵԿ 3 | ԵԲԿ 49, 50, 56.1-62 | ԱԻԵԿ 94.1, 94.3 | ԽԿԿ/Տեղ. (2015) 1, V, 126

Արդյո՞ք կոնֆլիկտների կարգավորման վերականգնողական մոտեցումն ավելի հաճախ է կիրառվում, քան ֆորմալ կարգապահական ընթացակարգերն ու պատժամիջոցները:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Երեխաների և աշխատակիցների շփումներ
- Երեխաների շրջանում միմյանց վրա հոգեբանական ճնշման, ոտնձգության, միմյանց նկատմամբ բռնության ցանկացած դրսևորում
- Հաշտեցման սենյակներ, որևէ վայր, որտեղ հնարավոր է ստեղծել անվտանգ և ապահով միջավայր
- Միջավայր, որն անվտանգ է, ապահով, չի խաթարում երեխաների արժանապատվությունն ու ֆիզիկական անձեռնմխելիությունը

ՍՏՈՒԳԵԼ.

- Առկա կարգապահական միջոցառումների շրջանակը. պարզել՝ արդյո՞ք կան ֆորմալ կարգապահական միջոցառումների/պատժամիջոցների այլընտրանքներ, պարզել՝ արդյոք առանձնակի ուշադրություն է հատկացվում խոցելի երեխաների պաշտպանությանն ու զոհականացման կանխարգելմանը
- Անվտանգության և ապահովության հարցում մոտեցում. պարզել, թե արդյոք առկա է աշխատակիցների կողմից մշակված դինամիկ մոտեցում՝ երեխաների հետ դրական փոխհարաբերություններ կառուցելու
- Երեխաների ընկալումը. պարզել՝ արդյոք նրանք փաստացի անվտանգ ու ապահով են զգում, և որ նրանց արժանապատվությունն ու ֆիզիկական անձեռնմխելի-

ությունը հարգվում է աշխատակիցների ու տարեկիցների կողմից, պարզել՝ արդյոք նրանք խրախուսվում են անհատապես և խմբովին հանձն առնել հաստատությունում պահպանելու կարգուկանոն, և ինչպես է դա խրախուսվում

- Աշխատակիցների հատուկ վերապատրաստում ⇒ *Տես Գլուխ 5.2 – էջ 101*

.....

.....

.....

ԵԻԿ, 40 | *ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 66* | *ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 38.1* | *ԵԲԿ 56.2* | *ԱԻԵԿ 88.1 – 88.4, 94.1* | *ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 126*

Արդյո՞ք կարգապահական ընթացակարգերը բավարար երաշխիքներ և պաշտպանություն են ապահովում երեխայի համար

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Ծանուցում. պարզել՝ արդյոք երեխայի փաստաբանը/իրավախորհրդատուն ծանուցվել է ձեռնարկված կարգապահական միջոցառումների մասին
- Հասանելիություն. պարզել՝ արդյոք երեխաների համար առանց սահմանափակման հասանելի են իրենց փաստաբանները/ իրավախորհրդատուները, արդյոք նրանք ունեն հանդիպելու հնարավորություն, արդյոք փաստաբանը/իրավական օգնականը ներկա է եղել, երբ իրավասու պատկան մարմնի կողմից լսվել է նրա գործը
- Բուժօգնություն. պարզել՝ արդյոք երեխաների համար հասանելի են բուժաշխատողի և հոգեբանի ծառայությունները
- Վերանայում. պարզել՝ արդյոք կարգապահական միջոցառումները ենթակա են կանոնավոր վերանայման, որքան հաճախ և ում կողմից
- Վարույթներ. պարզել՝ արդյոք կարգապահական վարույթները համապատասխանում են անմեղության կանխավարկածի սկզբունքին և մրցակցային սկզբունքին, պարզել՝ արդյոք երեխային և բոլոր շահագրգիռ կողմերին հնարավորություն տրվել արտահայտվելու այն կարգազանցության մասին, որը դիտարկվում է անկողմնակալ պատկան մարմնի կողմից, պարզել՝ արդյոք որոշումը պատկան մարմնի կողմից կայացվում է գործի համակողմանի քննությունից հետո
- Պաշտպանության իրավունք. պարզել՝ արդյոք այն ներառում է բողոքելու իրավունքը և անկախ պատկան մարմնին բողոքարկելու իրավունքը, պարզել պայմանները (հետաձգումներ, միջոցներ և այլն)
- Արձանագրություններ. պարզել՝ արդյոք առկա են կարգապահական վարույթների և միջոցառումների/պատժամիջոցների ամբողջական արձանագրություններ (ամսաթվեր, փաստեր, հիմնավորումներ, հարցազրույցներ, ուսումնասիրություն, որոշում, բողոքարկում, ծանուցումներ և այլն)

- Բողոք. պարզել՝ արդյոք երեխան ներկայացրել է որևէ (ֆորմալ կամ ոչ ֆորմալ) բողոք կարգապահական միջոցառումների/պատժամիջոցների վերաբերյալ

.....

.....

.....

ԵԻԿ 37 (դ), 40§2(բ)ii | Պեկինյան կանոններ 7.1 | ՍՀՓ 7 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 68, 70 | ԵԻԿ - ԸՄ թիվ 10, §12, §89 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 41, 54-57 | ԵԲԿ 58, 59, 61 | ԱԻԵԿ, 93.2, 94.2, 94.3, 94.4

Բ. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Արդյո՞ք երեխաների համար հասանելի են բողոքի կառուցակարգերն ու իրավական պաշտպանության արդյունավետ կառուցակարգերը

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Հաղորդակցության միջոցներ (հեռախոս, գրիչ, թուղթ, ծրարներ, նամականիշներ, փոստարկղներ, համակարգիչներ), դրանց գտնվելու վայրն ու հասանելիությունը
- Հատուկ սենյակներ երեխայի և նրա փաստաբանի/իրավական հարցերով օգնականի միջև (գաղտնի / մասնավոր) հանդիպումների համար
- Փաստաթղթեր և տեղեկատվություն. պարզել՝ արդյոք երեխան իր տրամադրության տակ ունի հաստատության ներքին կանոնների օրինակը, բողոքների ներկայացման Ուղեցույցի օրինակը կամ ցանկացած այլ փաստաթուղթ, որը նկարագրում է, թե նա ինչպես կարող է իրացնել բողոք ներկայացնելու իր իրավունքը

ՍՏՈՒԳԵԼ.

- Բողոքի կառուցակարգեր. պարզել՝ արդյոք հաստատության ներքին կանոնները ներառում են դիմումների և բողոքների կառուցակարգերի վերաբերյալ բաժին, պարզել՝ արդյոք այն ներառում է ներքին և արտաքին կառուցակարգեր, անհատական և կոլեկտիվ ընթացակարգեր, արդյոք այն ապահովում է երեխայի համար հասկանալի բացատրություն, թե ինչպես ներկայացնել բողոք, արդյոք այն տրամադրում է բողոքի կառուցակարգերի մանրակրկիտ կոնտակտային տվյալներ, արդյոք սահմանված են երեխաների բողոքներին արձագանքելու վերջնաժամկետներ
- Տեղեկատվություն. պարզել՝ երբ և ինչպես են տեղեկությունները տրամադրվում (հստակ և հասանելի լեզվով) երեխաներին՝ բողոքի նրանց իրավունքի, իրենց բողոքի արդյունքի և բողոքարկելու նրանց իրավունքի վերաբերյալ, պարզել՝ արդյոք

այս տեղեկությունները տրամադրվում են երեխայի, նրա փաստաբանի / իրավական օգնականի, ընտանիքի կամ խնամակալների դիմումի դեպքում

- Գաղտնիություն. պարզել՝ արդյոք հարգվում է նամակագրության գաղտնիությունը, ով կարող է բացել երեխայի նամակները և ինչ պայմաններում, պարզել՝ արդյոք բողոքների արկղը կողպված է, ով ունի բանալին, և որքան հաճախ է այն բացվում, պարզել՝ արդյոք երեխայի հեռախոսազանգերը լսվում են որևէ աշխատակցի կողմից, պարզել՝ արդյոք հանդիպումների սենյակում տեղադրված է ՏՀՀ կամ հսկման այլ միջոցներ
- Ձևաթղթեր. պարզել՝ արդյոք գոյություն ունեն բողոքի ներկայացման ձևաթղթեր, արդյոք հասանելի են (անհրաժեշտության դեպքում, ազատորեն հասանելի վայրում կամ երեխայի սենյակում), և արդյոք դրանք ձևակերպված են երեխայի համար հասկանալի եղանակով (պատկեր, նկար, պաստառներ և այլն), պարզել՝ արդյոք առկա են այլընտրանքային տարբերակներ, որոնք կախված չեն գրագիտությունից, և այլ լեզուներով տարբերակներ
- Բողոքների գրանցամատյաններ կամ արձանագրություններ. պարզել՝ արդյոք այն լրացվում և թարմացվում է, պարզել, թե ինչ տեղեկություններ են ներկայացնում
- Փաստաբանի / իրավական օգնականի հասանելիություն. պարզել՝ արդյոք կազմակերպվում է իրավաբանների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ծառայություններից կամ բողոքի արտաքին կառուցակարգերից ամենշաբաթյա պարբերականությամբ օգտվելու հնարավորություն 📖 *Տես Գլուխ 5.1 – էջ 95*
- Երեխաներ. պարզել՝ արդյոք նրանք տեղյակ են բողոքելու իրենց իրավունքի մասին, արդյոք նրանք հասկանում են բողոքի ընթացակարգը, արդյոք նրանք արդեն բողոք ներկայացրել են ուղղակիորեն կամ իրենց ծնողների, խնամակալների կամ փաստաբանի / իրավական օգնականի միջոցով, արդյոք նրանք կարող են հարցում ուղղել իրենց բողոքի վերաբերյալ և ում, պարզել՝ արդյոք երեխաները լիարժեքորեն ընկալում են բողոքի առկա կառուցակարգերը
- Ոչ ֆորմալ բողոք. պարզել՝ արդյոք գոյություն ունի ոչ ֆորմալ բողոքների կամ դիմումների համակարգ, և ինչպես է այն աշխատում գործնականում (ով է զբաղվում դիմումներով և արձագանքում դրանց, ինչ ձևով կարող է ներկայացվել բողոքը՝ բանավոր կամ գրավոր և այլն), պարզել՝ արդյոք կիրառվում է միջնորդություն և որ դեպքերում
- Բողոքի ընթացակարգ. պարզել՝ արդյոք այն ներառում է հաստատության ղեկավարի կողմից փաստաթղթերի վերանայում, արդյոք լսվում է խնդրո առարկա երեխաների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի և վկաների, այդ թվում՝ աշխատակիցների տեսակետը, բժշկական և այլ փորձագետների տեսակետի հարցում և դիմում այլ պատկան մարմինների՝ տեղեկությունների համար, պարզել՝ արդյոք բողոքի մերժման պատճառները բացատրվում են և ինչպես, պարզել՝ արդյոք առկա են ուղիներ որոշումը բողոքարկելու այլ պատկան մարմնի (ներքին կամ արտաքին)

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Բանավոր թարգմանություն. պարզել՝ արդյոք նրանց համար հասանելի է կոնկրետ համատեքստի իմացությամբ բանավոր թարգմանչի ծառայությունը

.....

.....

.....

ԽԴԿ 13 | ԵԻԿ, 12, 37(d), 40 | Պեկինյան կանոններ 35, 36 | ՍՀՓ 33 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 75-78 | ԵԻԿ – ԸՄ թիվ 10, §89 | ԿԲՀՎԿ 25 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 54-57 | ԵԲԿ 70.1-70.7 | ԱԻԵԿ 121 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 131 | ՄԻԵԴ, «Տարարիևան ընդդեմ Հունաստանի» [Tarariyeva v. Russia] (Թիվ 4353/03), «Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի» [M.S.S. v. Belgium and Greece] [ԸՄ] (Թիվ 30696/09)

5.5. Նյութական պայմաններ

Ա. ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ

Արդյո՞ք երեխաների տարբեր խմբերը պահվում են առանձին հաստատություններում՝ հաշվի առնելով նրանց սեռը, տարիքը, քրեական անցյալը, նրանց ազատազրկման իրավական պատճառը և նրանց ուղղման անհրաժեշտությունը:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Բնակության պայմաններ. խցեր, սենյակներ, ընդհանուր ննջասենյակներ, առանձին կառույցներ և այլն
- Ուրիշների հետ շփման վայրեր. նախասրահ, վերելակներ, աստիճաններ, փոխադրամիջոցներ և այլն
- Ընդհանուր գոտիներ/ համայնքային տարածքներ. ճաշարան, գրադարան, դասասենյակներ, ներքին բակեր, մարզադահլիճ, այցելությունների սրահ և այլն

ՍՏՈՒԳԵԼ.

- Տարանջատում. պարզել՝ արդյոք առկա է երեխաների և չափահասների, աղջիկների և տղաների, տարբեր տարիքային խմբերի երեխաների, չդատված և դատապարտված երեխաների, մտավոր առողջության խնդիրներով երեխաների հստակ տարանջատում, պարզել՝ արդյոք տարանջատումը չի հանգեցնում այնպիսի հանգամանքների, որոնք ստեղծում են մեկուսացում, պարզել՝ արդյոք տարանջատումը բխում է երեխայի լավագույն շահերից
- Վերահսկողություն, պարզել՝ արդյոք երեխաները գտնվում են պատշաճ վերահսկողության ներքո, երբ խառնված են երեխաների այլ խմբերի կամ չափահասների հետ կամ երբ համատեղ գործողություններ են անում

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Ընտանիք. պարզել՝ արդյոք իրենց ծնողների կամ մոտ հարազատների ուղեկցությամբ գտնվող երեխաներն առանձնացված են նրանցից

.....

.....

.....

ԵԻԿ, 37(գ) | Պեկինյան կանոններ 13.4, 26.3 | ՍՀՓ 8 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, III, 17, 28, 29, 53 | ԿԲՀՎԿ 41.դ | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 11, 93, 109, 112 | ԵԲԿ 12.1, 18.8-9, 21, 35.4, 47,

104.1 | ԱԻԵԿ, 54, 57, 59.1 - 60 | ԽԿԿ/Տեղ. (1998)12, B., 29 | ԽԿԿ/ Տեղ. (2000)13, 24 | ԽԿԿ/ Տեղ. (2009)27, IV, 100 | ԽԿԿ/ Տեղ. (2015)1, V, 101-104 | ՄԻԵԴ, «Ջյոշելավն ընդդեմ Թուրքիայի» [Coselav v. Turkey] (1413/07), «Մահմունդին և մյուսներն ընդդեմ Հունաստանի» [Mahmundi and others v. Greece] (No 14902/10), «Գյուվեչն ընդդեմ Թուրքիայի» [Guvec v. Turkey] (Թիվ 70337/01)

Բ. ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԳԵՐԲՆԱԿԵՑՈՒՄ

Արդյո՞ք կան անհատականացված հարմարություններ, որոնք չեն խաթարում երեխայի արժանապատվությունն ու մասնավոր կյանքը:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Բնակության պայմաններ. խցեր, սենյակներ, ընդհանուր ննջարաններ, առանձին կառույցներ և այլն
- Ընդհանուր միջավայրը և մթնոլորտը

ՍՏՈՒԳԵԼ.

- Քնելու հարմարությունները. պարզել՝ արդյոք դրանք բաղկացած են անհատականացված, առանձին ննջասենյակներից, և եթե ոչ, որոնք են պատճառները, և ինչ կերպ են դրանք բխում երեխայի լավագույն շահերից, արդյո՞ք երեխաների հետ խորհրդակցում են նախքան նրանցից պահանջելը՝ ուրիշների հետ համատեղ օգտագործել ննջարանը, և արդյո՞ք նրանց հարցնում են այն մասին, թե ում հետ կուզեին տեղակայվել, պարզել, թե ինչ չափի և ինչպիսին է կահույքը, պատուհանի չափը, բնական լույսը, օդը, լոգարանի վիճակը (տաք ջրի առկայությունը), անձնական դեկորների առկայությունը
- Հաստատության ընդհանուր միջավայրը. պարզել՝ արդյոք այն դրական է, երեխայի համար նպաստավոր և համահունչ գիշերօթիկ հաստատությունում երեխային պահելու վերականգնողական նպատակին՝ պատշաճ կերպով հաշվի առնելով երեխայի՝ մասնավոր կյանք ու զգայական խթաններ ունենալու կարիքը, հասակակիցների հետ շփվելու և մարզական, ֆիզիկական պատրաստության ու ազատ ժամանցի գործողություններին մասնակցելու հնարավորությունները, արդյոք պատշաճ ուշադրություն է դարձվում կլիմայական պայմաններին և հատկապես սենյակների չափերին, օդի ծավալին, լուսավորությանը, ջեռուցմանն ու օդափոխությանը
- Վերահսկում. պարզել՝ արդյոք այն կանոնավոր է, աննկատ, արդյոք վերաբերում է բոլոր ննջատարածքներին, այդ թվում՝ անհատական սենյակներին և խմբային հանրակացարաններին՝ ապահովելու յուրաքանչյուր երեխայի պաշտպանությունը, պարզել՝ արդյոք առկա է տագնապի արդյունավետ համակարգ, որը կարող է օգտագործվել արտակարգ իրավիճակների պարագայում

.....

.....

.....

ԵԻԿ, 37(գ) | Պեկինյան կանոններ 27.2 | ՍՀՓ 1 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 28, 32 և 33 31-37, 41, 47 | ԸՄ-ԸՄ Թիվ 10 §89 | ԿԲՀՎԿ 4, 5 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 12-17, 18, 19-21, 22, 23, 42-43, 64, 89, 113 | ԵԲԿ 17.1-18.10, 19.1-7, 20.1-21, 27, 28, 36.3, 96 | ԱԻԵԿ, 63.1-64, 65, 66, 67 | ԽԿԿ/Տեղ. (92) 3, 46 | ԽԿԿ/ Տեղ. (2015)1, V, 101 | ՄԻԵԴ, «Պոպովն ընդդեմ Ֆրանսիայի» [Popov v. France] (Թիվ 39472/07 և 39474/07)

Գ. ՍՆՈՒՆԴ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ

Արդյո՞ք անազատության մեջ գտնվող երեխաների համար հասանելի է պատշաճ սնունդն ու խմելու ջուրը՝ բավարար նրանց առողջ զարգացման համար:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին (խոհարարներ և բուժաշխատողներ) | Երեխաներին*

ԴԻՏԱՐԿԵԼ / ՍՏՈՒԳԵԼ.

- Խմելու ջուր. պարզել՝ արդյոք այն մշտապես հասանելի է
- Սնունդ. պարզել՝ արդյոք երեխաներին սնունդ է տրվում պատշաճ ժամերի (օրական երեք կերակրում, դրանց ողջամիտ ընդմիջումներով, պարզել՝ արդյոք սնունդը բավարար քանակի և որակի է, այսինքն՝ ավելի էական և սննդարար բան է, քան սովորական բուտերբրոդը)՝ դիետոլոգիայի, հիգիենայի և առողջության չափորոշիչներին, և, որքանով որ հնարավոր է, կրոնական և մշակութային պահանջներին համապատասխան
- Հատուկ սննդակարգային ռեժիմներ (բուժական, մշակութային, կրոնական և առողջական պատճառներով). պարզել՝ արդյոք դրանք պահպանվում են, և եթե ոչ, ապա ինչու
- Խոհանոց. մաքրությունը, հիգիենան, սարքավորումների պահպանության ընդհանուր վիճակը

Հատուկ վայր. հոգեկան առողջության հաստատություններ

ՍՏՈՒԳԵԼ.

- Սննդի ընդունման պայմաններ. պարզել՝ արդյոք դրանք արժանապատիվ են (պատշաճ սպասքով՝ սեղանի շուրջ նստած)

Հատուկ խումբ. հաշմանդամություն ունեցող երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Սննդի մատուցման պայմաններ. պարզել՝ արդյոք ստեղծվել են հատուկ պայմաններ

.....

.....

.....

ԵԻԿ, 14, 24§2 (գ) | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 37 | ԿԲՀՎԿ 5, 48 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 22, 42, 43.1.դ) | ԵԲԿ 22, 44 | ԱԻԵԿ, 68.2, 68.3 | ԽԿԿ/Տեղ. (1998)12, 35 | ԽԿԿ/Տեղ. (2002)15, 47 | ՄԻԵԴ, «Մ.Ս.Ս-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի» [M.S.S v. Belgium and Greece] [ԸՄ] (Թիվ 30696/09)

Դ. ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՀԻԳԻԵՆԱ

Արդյոք անազատության մեջ գտնվող երեխաների համար հասանելի են պատշաճ, արժանապատիվ, առանձնացվածությունը պահպանող և հիգիենիկ միջոցներով սանիտարական պայմանները:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Սանիտարատեխնիկական պայմաններ. պարզել ընդհանուր կարգը և հարմարությունները (անհատական կամ կոլեկտիվ, զուգարանակոնքերի քանակը, ցնցուղների քանակը), սարքավորումներ (զուգարանակոնքեր, ցնցուղները շուրջկալող վարագույրներ), պահպանության վիճակը (լավ պահպանված կամ հնամաշ), մաքրությունը, պատշաճությունը, հսկողությունը (անվտանգության աշխատակիցների ներկայություն, ՏՀՀ)
- Հիգիենիկ պարագաներ. օճառ, շամպուն, ատամի մածուկ և խոզանակներ, սրբիչների քանակն ու վիճակը և այլն

ՍՏՈՒԳԵԼ.

- Հասանելիություն. պարզել, թե երբ են սանիտարական հանգույցները հասանելի և որքան հաճախ (ցնցուղ ընդունելու հաճախականությունը). եթե զուգարանները խցից դուրս են, պարզել՝ արդյոք երեխան կարող է օգտվել դրանցից դիմելու դեպքում, պարզել՝ արդյոք հասանելի է հոսող ջուրը և որտեղ
- Անձնական տարածք և մասնավոր կյանք. պարզել՝ արդյոք ըստ երեխաների հարգվում է իրենց անձնական կյանքի անձեռնմխելիությունը և մասնավոր կյան-

5

քը, պարզել, թե որ դեպքերում են պաշտպանությունը և անվտանգության ապահովումը գերակա համարվում անձնական կյանքի անձեռնմխելիության և մասնավոր կյանքի նկատմամբ

Հատուկ խումբ. հաշմանդամություն ունեցող երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հատուկ հարմարություններ և սարքավորումներ

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Սանիտարական և լվացման հատուկ հարմարություններ և հիգիենիկ պարագաների առկայություն, ինչպիսիք են անվճար սանիտարական սրբիչներն ու միջադիրները, արյան բծերով պարագաների ապահով հեռացում, ջրի կանոնավոր մատակարարում երեխաների և աղջիկների անձնական կարիքների համար, մասնավորապես այն աղջիկների, որոնք հղի են, կրծքով կերակրում են կամ դաշտանային ցիկլում են

.....

.....

.....

ԵԻԿ, 37(c) | Պեկինյան կանոններ 8.1 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 31, 34 | ԿԲՀՎԿ 5 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 15-18, 19.2 | ԵԲԿ 18.1, 19 | ԱԻԵԿ 63.1, 65.1 – 65.4 | ԽԿԿ/Տեղ. (1998)12, II, 34 | ԽԿԿ/ Տեղ. (2000)13,31 | ԽԿԿ/ Տեղ. (2002)15, 47 | ԽԿԿ/ Տեղ. (2015)1,V,105

Ե. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք անազատության մեջ գտնվող երեխաների համար հասանելի է պատշաճ լուսավորությունն ու օդափոխությունը

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին | Երեխաներին*

ՍՏՈՒԳԵԼ / ԴԻՏԱՐԿԵԼ.

- Բնական լուսավորություն և արհեստական լուսավորություն. պարզել՝ երկու դեպքում էլ, արդյոք լուսավորությունը բավարար է ընթերցելու համար, չհաշված քնելու ժամանակահատվածը
- Ինքնավարություն. պարզել՝ արդյոք երեխան կարող է վերահսկել լուսավորությունը (անջատել/միացնել լույսը, բացել/փակել շերտավարագույրները, վարագույրը, բացել/փակել պատուհանը)

- Պատշաճ ջեռուցում և օդափոխություն. պարզել՝ արդյոք համապատասխան է կլիմային և եղանակներին
- Մաքուր օդի հասանելիություն

.....

.....

.....

ԵԻԿ, 37(գ) | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 26, 31 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 13-14, 73.2 | ԵԲԿ 18.1-2, 32.2 | ԱԻԵԿ, 63.1 | ԽԿԿ/Տեղ. (2001)16, 30 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 104

Զ. ՀԱԳՈՒՍՏ ԵՎ ԱՆԿՈՂԻՆ

Արդյո՞ք անազատության մեջ գտնվող երեխաներն ապահովված են պատշաճ հագուստով և անկողնային պարագաներով:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ / ԴԻՏԱՐԿԵԼ.

- Հագուստ. պարզել՝ արդյոք երեխաներին թույլատրվում է կրել իրենց սեփական հագուստը, արդյոք նրանք, ովքեր սեփական հարմար հագուստ չունեն, հաստատության կողմից ապահովվում են հագուստով, պարզել, թե արդյոք այդ հագուստները հիշեցնում են համազգեստ
- Անկողին. պարզել՝ արդյոք յուրաքանչյուր երեխա ապահովված է առանձին մահճակալով և պատշաճ անկողնային սպիտակեղենով, արդյոք դրանք պատշաճ վիճակում են և փոխվում են բավականին հաճախ՝ ապահովելու մաքրությունը, պարզել՝ արդյոք ներքնակն ու վերմակները մաքուր են և լավ վիճակում, արդյոք անկողինը կանոնավոր կերպով փոխվում է

.....

.....

.....

ԵԻԿ, 14, 37(գ) | ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 27.2 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 31, 33 և 36 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 19-21, 35, 67, 115 | ԵԲԿ 19.5, 20-21, 97 |ԱԻԵԿ, 65.4, 66-67 | ԽԿԿ/Տեղ. (2002)15, 47 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 106 | ՄԻԵԴ, «Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի» [M.S.S v. Belgium and Greece] [ԸՄ] (Թիվ 30696/09)

Է. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՕՐԱԳԻՐ, ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ ՊԱՀԵԼ ԵՎ ԱՅԼՆ)

Արդյոք հարգվում է անազատության մեջ գտնվող երեխաների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակիցներին | Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ / ԴԻՏԱՐԿԵԼ.

- Անձնական իրեր. պարզել՝ արդյոք երեխաները հնարավորություն ունեն օրագիր պահելու, անձնական իրեր ունենալու իրենց մոտ, ինչպիսիք են նկարները, գրքերը, առարկաները և այլն
- Գույքագրում. պարզել՝ արդյոք ժամանման պահին երեխայի ունեցած անձնական իրերի գրանցում կատարվել է (ընդունման ընթացակարգի ժամանակ և երեխային ազատ արձակելիս)
- Պահոցներ. պարզել՝ արդյոք այսօրինակ հարմարություններ կան երեխաների համար, և արդյոք նրանք կարող են կողպել դրանք (ինքնուրույն)
- Դեկորացիա. պարզել՝ արդյոք երեխաներին թույլատրվում է իրենց ցանկությանը համահունչ ձևավորել իրենց ննջարանը
- Վերահսկողություն. պարզել՝ արդյոք երեխաներին մշտապես հետևում են

.....

.....

.....

ԵԻԿ 16, 40 § 2(բ) vii | ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 8.1 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ, 35, 36, 65 (64?), 87(ե) | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 7, 19-20, 67, 115 | ՄԻԵԿ 1 | ԵԲԿ 15.1(դ), 31, 33.4-5, 54.8, 97 | ԱԻԵԿ, 16, 62.2, 63.1 | ԽԿԿ/Տեղ. (1998)12, Գ, 34

5.6. Սոցիալ-մանկավարժական կանոնակարգում, սոցիալ-կրթական ռեժիմ և անձնական զարգացում

Ա. ՌԵԺԻՄ ԵՎ ԾՐԱԳԻՐ

Արդյո՞ք կա անհատականացված պլան/ծրագիր՝ յուրաքանչյուր երեխայի համար կազմված նրա՝ հաստատություն ժամանելուն պես, նրա անձնական զարգացումը, կրթությունը, վերականգնումը և հասարակությանը վերաինտեգրմանը նախապատրաստումը խթանելու նպատակով:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին (դասավանդողներ, մասնագիտական ուսուցիչներ, սոցիալական աշխատողներ)* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Ռեժիմի (ներքին կանոնների) նկարագրություն. պարզել՝ արդյոք այն առանձնահատուկ տեսակի է, և հոգատարության մակարդակը
- Անհատական ծրագիր. պարզել՝ արդյոք այն ընդգրկում է կրթությունը, մասնագիտական ուսուցումը, առողջարարական (մարզական) ֆիզիկական գործունեություն, խորհրդատվություն / խնամք, հասարակությանը վերաինտեգրվելուն ուղղված գործողություններ, ովքեր են կազմակերպում այս գործողությունները, և քանի երեխա է մասնակցում
- Պարզել՝ արդյոք այն հիմնված է բժշկական, հոգեբանական և սոցիալական զեկույցի վրա և հաշվի է առնում տարիքը, անհատականությունը, սեռը, սոցիալական և մշակութային հենքը, զարգացման փուլը և անազատության մեջ պահելու հանգամանքները
- Նպատակները, ժամանակացույցը և միջոցները. պարզել՝ արդյոք դրա նպատակն է զարգացնել հմտություններ և կարողություններ, որոնք երեխային կօգնեն վերաինտեգրվել հասարակությունում
- Հաստատությունում գտնվող երեխաների քանակը. պարզել՝ արդյոք այն բավարար փոքր է՝ անհատականացված խնամքի հնարավորություն ընձեռելու
- Երեխայի անհատական ծրագրի վերաբերյալ տեղեկություն և դրա մտահղացում . պարզել՝ արդյոք դա արվում է ժամանելուն պես, երեխայի համար նպաստավոր եղանակով, երեխայի (և գուցե նրա ընտանիքի կամ խնամակալների) մասնակցությամբ
- Անհատական ծրագրի իրականացում. պարզել՝ արդյոք պրակտիկան համապատասխանում է տեսությանը, և արդյոք պլանը համահունչ է բժշկական, հոգեբանական և սոցիալական զեկույցին, պարզել, թե ինչպիսին է երեխայի բնութագրական օրը հաստատությունում (վերկացի, սննդի ընդունման, դպրոցի, դասընթացների, ազատ ժամանցի, մարզական գործունեության ժամանակացույցը, այն խցերի բացման և փակման ժամերը, որոնք պետք է բաց լինեն որքան հնարավոր է երկար ժամանակ)

- Խրախուսանքների համակարգ. պարզել, թե որ դրական վարքագծի հետ կապված ինչ խրախուսանք է նախատեսված, պարզել՝ արդյոք հնարավոր է ժամանակավոր արձակուրդ, որքան հաճախ և ինչ տևողությամբ
- Անհատական ծրագրի ընկալումը երեխայի կողմից. պարզել՝ արդյոք այն նպատակային է նրա համար

Հատուկ խումբ. հատուկ կարիքներով երեխաներ՝ սեռի, էթնիկական ծագման, փոքրամասնության, ֆիզիկական կամ մտավոր կարողությունների, սեռական կողմնորոշման և այլ հանգամանքների հիմքով

ՍՏՈՒԳԵԼ.

- Անհատական ծրագիր. պարզել՝ արդյոք այն ներառում է հատուկ դրույթներ, որոնք հաշվի են առնում այս երեխաների հատուկ կարիքները և մասնագիտացված աշխատակիցներիի կողմից մատնանշված կոնկրետ խոցելիությունը
- Արդարացի և հավասար վերաբերմունք

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Տեղեկատվություն և պլանավորում. պարզել՝ արդյոք այն հաշվի է առնում երեխայի լեզուն և հնարավոր մշակութային առանձնահատկությունները
- Կառուցողական գործողություններ և կրթություն

.....

.....

.....

ԵԻԿ 40(1) | ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 1.2, 26 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ, IV. 10, B. 20-31, Գ. 32-39, V. 45 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 24, 25, 27, 28 | ՏՈԿԻՈՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 7 | ԿԲՀՎԿ 2.1 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 94 | ԵԲԿ 35.1, 103.1, 103.2, 103.3, 106.1, 106.2, 106.3 | ԱԻԵԿ 50.1, 53.4, 62.6, 76.1 – 77, 79.1 | ԽԿԿ/Տեղ. (2009)27, IV, 99 | ԽԿԿ/Տեղ. (2015) 1, 107-112 | ՄԻԵԴ, «Պոպովն ընդդեմ Ֆրանսիայի» [Popov v. France] (Թիվ 39472/07 and 39474/07)

Արդյոք հաստատությունն անհրաժեշտ և բավարար միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու ազատ արձակումից հետո խնամքի շարունակականությունը:

ՀԱՐՑՆԵԼ. *Ղեկավարին | Աշխատակազմին (դասավանդողներ, մասնագիտական ուսուցիչներ, սոցիալական աշխատողներ)*

ՍՏՈՒԳԵԼ.

- Միջոցառումները՝ երաշխավորելու խնամքի շարունակականությունը, այդ թվում աջակցությունը (սկզբից և ազատազրկման ցանկացած ժամանակահատվածում) այն ծառայությունների / գերատեսչությունների / կազմակերպությունների կողմից, որոնք հնարավոր է հոգ տանեն երեխայի մասին ազատ արձակումից հետո
- Համաձայնություններ համայնքի արտաքին համապատասխան ծառայությունների հետ. պարզել, թե արդյոք կա իրական սերտ փոխադարձ գործունեություն և համագործակցություն դրսի և ներսի միջև
- Անհատական ծրագիր. պարզել՝ արդյոք այն ներառում է հասարակությունում երեխայի վերաինտեգրման համար օգտակար հմտությունների զարգացմանն ուղղված գործողություններ
- Արտաքին կոնտակտային անձ. պարզել՝ արդյոք երեխայի ու նրա արտաքին կոնտակտային անձի (օրինակ՝ սոցիալական օգնական, հոգեբան, ուսուցիչ) միջև շփումը պահպանվել է, խթանվել, ընդհատվել

.....
.....
.....

ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 38-46, 49, 53, 79-80 | ԿԲՀՎԿ 46-47 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 4.1, 87, 104.2, 107, 110 | ԵԲԿ 7, 26.3, 26.12, 28.7, 33.3, 33.7, 33.8, 35.3, 43.3.j, 107.4 | ԱԻԵԿ 15, 50.1, 51, 53.5, 77, 78.5, 79.3, 100.1-102.3 | ԵԿԱՈՒ §21.գ

Բ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք երեխայի մասնակցությունը ազատազրկման ընդհանուր պայմաններին և ռեժիմի հետ կապված գործողություններին առնչվող հարցերին համարժեք ու բավարար մակարդակի է:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Հաստատության քաղաքականությունը որոշումների կայացմանը երեխայի մասնակցության վերաբերյալ և բոլոր մնացած միջոցներով ու գործողություններով, որոնք նրանց թույլ են տալիս արտահայտել իրենց տեսակետն ու լսելի դարձնել իրենց ձայնը
- Միջոցառումներ՝ խրախուսելու երեխային քննարկել և արտահայտվել (ֆորմալ և ոչ ֆորմալ եղանակով, անհատապես և կոլեկտիվ), այդ թվում՝ պարբերական հանդիպումներ աշխատակիցներիի և/կամ ղեկավարի հետ, երիտասարդական խորհուրդ, առաջարկությունների արկղիկ, հարցաշարեր և այլն
- Արտաքին մտահոգ ծառայությունների / գերատեսչությունների / կազմակերպությունների, ծնողների կամ դասավանդողների հետ միասին մասնակցություն անհատական ծրագրի կանոնավոր իրականացմանն ու թարմացմանը
- Հնարավոր խոչընդոտներ, որոնց կարող է բախվել երեխան որոշումների կայացմանը մասնակցության հարցում
- Երեխայի ընկալումն իր մասնակցության վերաբերյալ (հաշվի առնված, օգտակար, խրախուսված կամ ոչ). պարզել՝ արդյոք աշխատակիցներիը և ղեկավարն անձամբ գիտեն երեխային

.....
.....
.....

ԵԻԿ 12 | *ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ 50* | *ԵԲԿ 103.3* | *ԱԻԵԿ 13, 62.6 (դ), 76.1, 79.4*

Գ. ԿԱՊ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Արդյո՞ք երեխաների համար պատշաճ կերպով հասանելի է հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Այցելությունների սենյակը. պարզել՝ արդյոք այն ընձեռում է առանձնացվածության, շփման և չսահմանափակված հաղորդակցության հնարավորություն
- Հեռախոսի և համակարգչի տեղադրությունը. պարզել՝ արդյոք այս տարածքներում պահպանվում է մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը
- Հաղորդակցության նյութերի (թուղթ, գրիչ, ծրարներ, նամականիշներ, համացանց) և տեղեկատվության աղբյուրների (թերթեր, պարբերականներ, հրատարակություններ, ռադիո, հեռուստատեսություն և համակարգիչ) առկայություն

ՍՏՈՒԳԵԼ.

- Հաղորդակցության միջոցներ ընտանիքների, ընկերների և այլ անձանց, պաշտպանական խորհրդի կամ անչափահասի հետաքրքրության առարկա հանդիսացող որևէ իրավասու ակումբի կամ կազմակերպության հետ կապի համար (հեռախոսով, նամակագրությամբ, համացանցի կամ այցելությունների միջոցով)
- Հաղորդակցության այս միջոցների հասանելիություն և հաղորդակցության պայմաններ (անսահմանափակ, առանձնացված, ժամանակացույցներ, գին, բացօդյա և այլն)
- Այցելությունների ժամանակացույց և պայմաններ (երբ, որտեղ, ով, որքան հաճախ)
- Այցելությունների գրանցամատյան. պարզել՝ արդյոք այցելությունները կանոնավոր են և հաճախակի (ըստ էության շաբաթական մեկ անգամ և ոչ պակաս, քան ամսական մեկ անգամ)
- Հաղորդակցությունների գրանցամատյան. պարզել՝ արդյոք հեռախոսազանգերն ու նամակները (ստացված և ուղարկված) կանոնավոր են և հաճախակի (ըստ էության առնվազն շաբաթական երկու անգամ՝ երեխայի նախընտրած անձի հետ)
- Մուտքերի ու ելքերի գրանցամատյան. պարզել՝ որքան հաճախ և որքան ժամանակով է երեխաներին հնարավորություն տրվել դուրս գալ թույլտվությամբ (կրթական, մասնագիտական դասընթացի մասնակցելու կամ այլ կարևոր նպատակով, ինչպիսին է նրանց վերահնտեգրման նախապատրաստումը) կամ տոներին
- Հաղորդակցվելու և այցելուների ընդունելու սահմանափակումներ. պարզել՝ արդյոք դրանք օրինական են (այսինքն՝ քննությունները շարունակելու, կարգուկանոնը, անվտանգությունն ու ապահովությունը պահպանելու, հանցանքները կանխելու և հանցագործության զոհերին պաշտպանելու պահանջների առումով անհրաժեշտ), և արդյոք դրանք, այդուհանդերձ, հնարավորություն տալիս են շփման նվազագույն մակարդակի առկայության
- Մամուլի (հոդվածներ, թերթեր, պարբերականներ, հրատարակություններ և այլն), մեդիայի (ռադիո, հեռուստատեսություն, համացանց) և ընդհանրապես արտաքին աշխարհից տեղեկատվության հասանելիություն
- Շփումների, հաղորդակցության և տեղեկատվության որակ

5

- Կարգապահական միջոցառումներ, որոնք կարող են կասեցնել / չեղարկել շփումներն արտաքին աշխարհի հետ

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Այցելություններ ու արտաքին աշխարհի հետ շփման այլ ձևեր. պարզել՝ արդյոք շփումների թույլատրված եղանակները փոխհատուցում են նրանց սոցիալական մեկուսացվածությունը

.....

.....

.....

ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 26.5 | ՍՀՓ 15, 19 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 59, 60, 61, 62 | ԵԻԿ ԸՄ թիվ 10: § 87, 89 | ԿԲՀՎԿ 2, 26-28 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 43.3, 58-63 |ԵԲԿ 24.1-12, 60.4, 99 | ԱԻԵԿ 83-86.2, 104.5 | ԵԿԱՈՒ 21 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 122 – 125, 127

Արդյո՞ք հաստատությունը տեղակայված է այնպիսի վայրերում, որոնք հեշտ հասանելի են, դյուրացնում են շփումը երեխաների և նրանց ընտանիքների միջև, և ինտեգրված է համայնքի սոցիալական, տնտեսական և մշակութային միջավայրում:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Տեղադրությունը՝ կապված քաղաքային միջավայրի հետ. արդյոք հաստատությունը տեղակայված է գյուղական բնակավայրում, քաղաքի մոտ կամ ներսում (կենտրոն, արվարձան)
- Արտաքին միջավայր. պարզել՝ արդյոք այն մեկուսացած է կամ գտնվում է համայնքի ներսում
- Հանրային տրանսպորտի հասանելիություն. պարզել՝ արդյոք հաստատություն հասնելը հեշտ է ու արագ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հեռավորությունը հաստատության և երեխայի տան, դատարանի, փաստաբանի գրասենյակի միջև
- Հաստատության հեռավորությունը ամենամոտ քաղաքային բնակավայրից և այնտեղ հասնելու ուղիները (հանրային տրանսպորտով, ավտոտրանսպորտով, ոտքով և այլն)

- Սոցիալական, տնտեսական և մշակութային միջավայրի նկարագրություն. պարզել՝ որքանով է հաստատությունն ինտեգրված տեղական համայնքում
- Համաձայնություններ և համագործակցություն արտաքին կազմակերպությունների հետ՝ տեղական համայնքից

.....

.....

.....

ՍՀՓ 20 | *ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 30* | *ԵԻԿ ԸՄ թիվ 10, §87* | *ԿԲՀՎԿ 4, 26, 43* | *ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 59* | *ԵԲԿ 17.1* | *ԱԻԵԿ 53.5, 55*

Դ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Արդյո՞ք երեխաների համար հասանելի են կրթությունն ու մասնագիտական ուսուցումը՝ հարմարեցված նրանց կարիքներին և կարողություններին և նախագծված այնպես, որ նրանց նախապատրաստեն հասարակություն վերադառնալուն:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին (ուսուցիչներ, դասավանդողներ, մասնագիտական ուսուցանողներ, սոցիալական աշխատողներ)* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Որևէ դասընթացի կամ մասնագիտական ուսուցման հաճախող երեխաների քանակը/տոկոսը
- Ուսուցիչներ/մասնագիտական ուսուցանողներ. քանակ, մասնագիտացում/ոլորտ, որակավորում, պարզել՝ արդյոք նրանք պատշաճ որակավորված են և արդյոք ինչպես հարկն է վերապատրաստվել են՝ հարմարեցնելու իրենց մեթոդը կոնկրետ համատեքստին և լսարանին, պարզել՝ արդյոք նրանք հաստատությանն աշխատող են, թե՞ աշխատում են դրանից դուրս
- Կրթական/մասնագիտական ուսուցման ծրագիր (օրական, շաբաթական). պարզել՝ արդյոք կազմակերպվում է հաստատության ներսում և/կամ դրանից դուրս, արդյոք այն ինտեգրված է երկրի կրթական համակարգին
- Կրթության/մասնագիտական ուսուցման մասնաբաժինը ընդհանուր անհատական ծրագրում. պարզել՝ արդյոք երեխաները հնարավորություն ունեն հետևելու դրան կանոնավոր հիմունքներով
- Կրթության/մասնագիտական ուսուցման որակ. պարզել՝ արդյոք այն համարժեք է տվյալ համայնքում կրթության որակին և արդյոք այն որակավորում է (դիպլոմների կամ կրթական վկայագրերի շնորհում կամ ոչ՝ անկախ հատուկ հաստատությունում պահվելու հանգամանքից)

- Երեխայի կողմից կրթական/մասնագիտական ուսուցման ծրագրի ընկալումը. պարզել՝ արդյոք այն նպատակային է նրա համար, և արդյոք հավանական է նրան հետագա կրթության և/կամ աշխատանքի համար պատրաստելը

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի երեխաներ, հատուկ կրթական կամ էթնիկական կարիքներով երեխաներ, գիտակցական կամ ուսումնական դժվարություններ ունեցող կամ գրագիտությունից զուրկ երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Կրթական/մասնագիտական ուսուցման հատուկ դասընթացների ապահովում՝ նրանց հատուկ կարիքներին համահունչ

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Ձեռնարկվող հատուկ միջոցառումներ՝ ապահովելու հավասար վերաբերմունք

.....

.....

.....

ԵԻԿ 28, 29, 40 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ V. 47 | ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 26.1-2, 26.6 | ՍՀՓ 28 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 27, 38-46 | ԿԲՀՎԿ 37 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 4, 104, 107 | ԵԲԿ 26.5, 26.16, 28, 35.1-2, 89.1, 103.4, 106 | ԱԻԵԿ 2, 28, 62.2.զ, 62.6, 77-79.3, 102.1, 129.3.գ | ԵԿԱՈՒ 21.b, 82 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 107 - 112

Ե. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Արդյոք հաստատությունն ապահովում է (արդարացի) վճարովի աշխատանք կատարելու հնարավորություն

ՀԱՐՑՆԵԼ. երեխաներին | *Աշխատակազմին* | ղեկավարին

ՍՏՈՒԳԵԼ.

- Աշխատող երեխաների քանակը/տոկոսը, շաբաթական քանի ժամ են աշխատում և ինչ գործ են կատարում
- Աշխատելու հնարավորություն. պարզել՝ արդյոք դրանք արդարացի են (աշխատանքի վարձատրությունը) և արդյոք կան ներքին ու արտաքին առաջարկներ (համայնքում)

- Ընդհանուր ծրագրում աշխատանքի մասնաբաժինը. պարզել՝ արդյոք առաջնահերթություն է տրվում կրթությանն ու մասնագիտական ուսուցմանը, քան աշխատանքին
- Աշխատանքի իմաստալից լինելը. պարզել՝ արդյոք այն խրախուսող բնույթ ունի և կրթական արժեք և որ պատժամիջոց, կարգապահական միջոցառում չէ և պարտադրված չէ (հարկադիր աշխատանք)

.....

.....

.....

ԵԻԿ 32 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 18.բ, 42-46, 67 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 4.2, 96-98, 100.2, 103, 116 | ԵԲԿ 26.1-17, 100.1-2, 105.1-5 | ԱԻԵԿ 78.1, 82.1-.3

Զ. ԲԱՑՕԴՅԱ ՎԱՐԺԱՆՔ, ԱԶԱՏ ԺԱՄԱՆՑ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք երեխաների համար կա ամենօրյա ողջամիտ ժամանակահատված՝ մասնակցելու ակտիվ հանգստի/մարզական/ֆիզիկական գործունեության

ՀԱՐՑՆԵԼ. երեխաներին | Աշխատակազմին | ղեկավարին

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Պատշաճ տարածք, սարքեր ու պարագաներ (բացօդյա և սենյակային, չափ, ընդհանուր տեսք)
- Բացօդյա գործունեություն

ՍՏՈՒԳԵԼ.

- Ակտիվ հանգստի/մարզական/ֆիզիկական գործունեության ամենօրյա ծրագիր. պարզել՝ արդյոք ամեն օր առնվազն երկու ժամ տրամադրվում է այսօրինակ գործունեությանը և արդյոք առնվազն մեկ ժամ՝ բացօդյա
- Մշակութային գործունեություն, մարմնակրթական գործունեություն, ազատ ժամանց. պարզել արդյունքները, ծրագրերը, ժամանակացույցը
- Կարգապահական այնպիսի միջոցառումների առկայություն, որոնք կարող են կասեցնել այսօրինակ գործունեությունը

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Ֆիզիկական գործունեության հասանելիություն. պարզել՝ արդյոք նրանց համար հավասարապես հասանելի են ֆիզիկական գործունեությունը, ազատ ժամանցն ու ակտիվ հանգիստը

.....

.....

.....

ԵԻԿ 31 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 32, 47 | ԵԻԿ ԸՄ 10 §89 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ: 23, 105 | ԵԲԿ 27 | ԱԻԵԿ 77, 80.1-2, 81 | ԵԿԱՈՒ 21.բ | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 108

Է. ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՎԱՆԱՆՔ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Արդյո՞ք երեխաներն իրավունք ունեն բավարարելու կրոնական և/կամ հոգևոր կյանքի իրենց կարիքները, ինչպես նաև հավատարիմ մնալ իրենց մշակութային սովորույթներին

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Կրոնական կամ հոգևոր պաշտամունքի գրքերի կամ իրերի առկայություն

ՍՏՈՒԳԵԼ.

- Արարողությունների առկայություն, ժամանակացույցներ և հաճախում
- Այցելությունների գրանցամատյան. պարզել՝ արդյոք հոգևոր կամ փիլիսոփայական որևէ խորհրդատու կամ երեխայի ընտրած որևէ կրոնի ներկայացուցիչ պարբերաբար այցելում է երեխային կամ անձնակազմի մաս է
- Երեխաների մոտ կրոնական կամ հոգևոր պաշտամունքի անհրաժեշտ գրքերի և/կամ իրերի առկայություն
- Կրոնական արարողություններին չմասնակցելու և ազատորեն կրոնական կրթությունից հրաժարվելու իրավունք

.....

.....

.....

ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 48 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 2, 65 | ԵԲԿ 29, 35.1, 38.2 | ԱԻԵԿ 87.1-3

Ը. ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք երեխաների բարեկեցությունն էական կերպով հաշվի է առնվում նրանց ազատազրկման շրջանակում:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Երեխաների հոգեկան վիճակն ու առողջությունն առաջին հայացքից, պարզել երեխաների զգայական վիճակը

ՍՏՈՒԳԵԼ.

- Ներքին կանոններ. պարզել՝ արդյոք հաստատությունում կիրառվում է բարեկեցության-խորհրդատվության որևէ կոնկրետ քաղաքականություն, պարզել խորհրդատվությունից օգտվելու պայմանները և պահանջները
- Բժշկական արձանագրություններ. պարզել՝ արդյոք խորհրդատվություն առաջարկելու համար առկա է ախտորոշման գործընթաց, երբ է այն տեղի ունենում և որքան հաճախ, ով է խորհրդատուն և ինչ որակավորում ունի
- Հնարավոր բոլոր ռեսուրսների հավաքագրում. պարզել՝ ով է ներգրավված երեխայի բարեկեցության խթանմանն ուղղված միջոցառումներում ու ծառայություններում (նրա ընտանիքը, կամավորներ, համայնքային խմբեր, դպրոցներ, համայնքային այլ հաստատություններ և այլն)

.....
.....
.....

ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 1, 1.2, 17.1 (դ)

5

Թ. ՎԵՐԱՀԻՆՏԵԳՐՄԱՆԸ/ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդյո՞ք երեխաներն օգտվում են պատշաճ ընթացակարգերից, որոնք նախատեսված են նրանց օգնելու ազատ արձակումից հետո հասարակություն, ընտանեկան կյանքին, կրթությանը կամ աշխատանքին վերադառնալու հարցում:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին | Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Վերահինտեգրմանն ուղղված գործողություններ (նպատակներ, միջոցներ, ժամանակացույցներ, հաստատության ներսում և/կամ դրանից դուրս՝ համայնքում և այլն)
- Այդ գործողությունների մասնաբաժինը անհատական ընդհանուր ծրագրում
- Կապեր հաստատության ներսում տրամադրվող ծառայությունների և համայնքում տրամադրվող համապատասխան ծառայությունների միջև. պարզել՝ արդյոք դրանք սերտորեն առնչվում են (ֆորմալ համաձայնություն, այցելություններ հաստատությունում – դուրս գալու թույլտվություն – պայմանական ազատ արձակում)
- Ազատ արձակմանը նախապատրաստող ծառայությունների ապահովում (հարմար բնակավայր, աշխատանք, հագուստ, ինքն իրեն ապահովելու բավարար միջոցներ)
- Այս գործողությունների ընկալումը հենց երեխայի կողմից. պարզել՝ արդյոք դա նրա համար նպատակային է, և արդյոք հավանական է, որ դրանք կնախապատրաստեն նրան՝ վերադառնալու հասարակություն, ընտանեկան կյանքին, հետագա ուսմանը և կամ/աշխատանքին

Հատուկ խումբ. օտարերկրյա քաղաքացի երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հատուկ գործողություններ՝ ուղղված իրենց ծագման երկրում նրանց վերահինտեգրմանը. պարզել՝ արդյոք կա՞մ որևէ համագործակցություն անչափահասների բարեկեցության և արդարադատության գերատեսչությունների հետ՝ երաշխավորելու անհրաժեշտ աջակցություն նրանց ծագման երկիր ժամանելուն պես

.....

.....

.....

ԵԻԿ 40(1) | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 8, 38, 40, 42, 45, 59, 67, 79, 80 | ԵԻԿ – ԸՄ Թիվ 10 §23, 29, 77, 89 | ԿԲՀՎԿ 29, 40, 43, 45-47 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 4, 25, 59,87 | ԵԲԿ 6, 26.3, 28.7, 33, 35.3, 42.3.ժ, 103.2, 103.4.դ, 107 | ԱԻԵԿ 50.1, 51, 77, 78.5, 79.1 – 79.4, 100.1 – 103, 104.3, 110 | ԵԿԱՈՒ 21.գ

5.7. Առողջապահություն

Ա. ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ (ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

Արդյո՞ք երեխաների համար հասանելի են բուժական խնամքի նույնպիսի ծառայություններ, ինչպիսիք հասանելի են հաստատությունից դուրս գտնվող հիվանդների համար:

Արդյո՞ք երեխաների համար առողջապահական/բժշկական խնամքի ծառայությունները խնամքի բազմաճյուղային (բժշկական-հոգեբանական-սոցիալական) ծրագրի բաղկացուցիչ մասն են:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին (բուժանձնակազմ)* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Առողջապահական հարմարություններ, սարքավորումներ. պարզել՝ արդյոք դրանք ապահովում են առանձնացվածություն, արդյոք պատշաճ զինված են, մաքուր, չեն խաթարում երեխայի արժանապատվությունը
- Դեղամիջոցներ. պարզել՝ արդյոք դրանք ճշտորեն են կառավարվում և ճշտորեն պահվում
- Երեխաների առողջության վիճակը. արդյոք նա ընդհանուր առմամբ առողջական լավ վիճակում է թվում

ՍՏՈՒԳԵԼ.

- Անհատական ծրագիր. պարզել, թե արդյոք այն ներառում է համարժեք (կանխարգելիչ և բուժիչ) առողջապահական/բժշկական խնամքի ծառայություններ (այդ թվում՝ ատամնաբուժական ծառայություններ, ակնաբույժ, հոգեբուժական, հոգեբանական և թերապևտիկ ծառայություններ + դեղամիջոց և հատուկ սննդակարգ), և արդյոք այն ներառում է առողջագիտական կրթությունը
- Բժշկական գրանցամատյաններ. պարզել՝ արդյոք անհատական ծրագիրը կազմվել է հաստատություն ժամանելուն պես անցկացված առաջին հարցազրույցի և բուժզննության հիման վրա
- Հաստատության ներսում առողջապահական հարմարությունների և բուժմասնագետների, ինչպես նաև տեղական համայնքի ծառայությունների առկայություն և համապատասխանություն
- Հաստատության առողջապահական թիմի (բժիշկներ, բուժքույրեր, հոգեբաններ) և անձնակազմի այլ անդամների, մասնավորապես՝ մասնագիտացված դասավանդողներ, սոցիալական աշխատողներ և ուսուցիչների, ինչպես նաև արտաքին ծառայությունների աշխատանքի համակարգում
- Բժշկական գրանցամատյաններ. պարզել՝ արդյոք երեխան կանոնավոր կերպով բուժզննություն անցել է, որ բուժաշխատողի կողմից (հաստատության ներսում թե դրանից դուրս), արդյոք անհրաժեշտության դեպքում կատարվել են հետագա քայլեր, ինչ բուժում է ստանում նա, հիվանդություն-վնասվածք-ցավ-տրավմա, որից նա բողոքել է կամ բուժվել, միջադեպերի և վնասվածքների ամսաթվերի հնարավոր կապերը, պարզել՝ որքան հաճախ են դրանք թարմացվում

- Բժշկական գաղտնիության պահպանում. պարզել՝ արդյոք երեխաների բուժզննությունները իրականացվում են ոչ բժշկական անձնակազմի «աչքերից ու ականջներից հեռու»
- Հերթագրվածների ցանկ. պարզել՝ որքան երկար են երեխաները ստիպված սպասել միջինում՝ պատշաճ առողջապահական ծառայություններից օգտվելու համար
- Առողջապահական/բժշկական խնամքի ծառայությունների ընկալումը երեխաների կողմից

.....

.....

.....

ԵԻԿ 24 | ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 13.5, 26.2 | ՍՀՓ 24, 25 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 49-55, 56 | ԵԻԿ – ԸՄ թիվ 10 §89 | ԿԲՀՎԿ 6, 9, 10, 12, 15, 39 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 24, 25, 27, 30-35, 46.2 | ԵԲԿ 15.1.f, 16.a, 35.1, 39, 40.1-5, 41.1-5, 43.1, 46.1-2, 52.5, 103.5 | ԱԻԵԿ 28, 50.1, 62.2.է, 69.1-2, 70.1-2, 73.դ, 74.1, 74.2 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V,114

Արդյոք բոլոր միջոցառումները ձեռնարկվում են երեխայի ժամանելուն պես և անազատության վիճակում գտնվելու ողջ ընթացքում հայտնաբերելու, պարզելու և բուժելու ֆիզիկական կամ հոգեկան վիճակի ցանկացած վտանգ կամ նշան, որ հնարավոր է՝ ազդի երեխայի վրա և պահանջի բժշկական ուշադրություն:

ՀԱՐՑՆԵԼ. Երեխաներին | *Աշխատակազմին (բուժանձնակազմին)* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Ֆիզիկական կամ հոգեբանական վիճակն արտահայտող արտաքին նշաններով երեխաներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Բժշկական գրանցամատյաններ. պարզել, թե երբ է անցկացվել առաջին հարցազրույցը և բուժզննությունը (ժամանելուն պես կամ ավելի ուշ), արդյոք այն կատարվել է բուժմասնագետի կողմից, արդյոք հայտնաբերվել են հնարավոր առողջական խնդիրներ (օրինակ՝ հոգեկան առողջություն, հաշմանդամություն, թմրամիջոցներից կամ այլ տեսակի կախվածություն, նախկինում արձանագրված վատ վերաբերմունք, ֆիզիկական կամ սեռական ոտնձգություն, սուիցիդալ հակումներ և այլն), արդյոք պատշաճ կերպով ձեռնարկվել են կանխարգելիչ գործողություններ, և բուժման ուղղությամբ ինչ քայլեր են կատարվել, արդյոք բուժանձնակազմը հաստատության ղեկավարին հաղորդել է որևէ փաստ, որը կարող էր վնասակար ազդեցություն ունենալ երեխայի վրա (շարունակվող ազատազրկման, սովի կամ բանտարկության որևէ պայմանի պատճառով), և եթե հաղորդվել է, ապա երբ
- Անհատական պլան. պարզել՝ արդյոք այն հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեբանական վիճակի նշաններն ու ռիսկերը, և ինչ գործողություններ/ծառայություններ (կանխարգելիչ կամ բուժիչ) են տրամադրվում համապատասխանաբար

.....

.....

.....

ՍՀՓ 24 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 49, 50, 51, 52 | ԵԻԿ – ԸՄ Թիվ 10, §89 | ԿԲՀՎԿ 6, 9 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 25, 31, 46 | ԵԲԿ 15.1.գ, 16.ա, 22.6, 40.4, 41.1, 42.1-3, 43.1-3, 47.2 | ԱԻԵԿ 62.2, 62.5, 70.1-2 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V | ՄԻԵԴ, «Տարարիևան ընդդեմ Ռուսաստանի» [Tarariyeva v. Russia] (Թիվ 4353/03), «Գյուվեչն ընդդեմ Թուրքիայի» [Guvec v. Turkey] (Թիվ 70337/01)

Արդյո՞ք դեղամիջոցները տրվում են միայն անհրաժեշտ բուժման նպատակով՝ բժշկական հիմքով և, երբ որ հնարավոր է, խնդրո առարկա երեխայի իրազեկված համաձայնությունն ստանալուց հետո:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին (բուժանձնակազմին) | Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Երեխաների կողմից դեղամիջոցների օգտագործումը

ՍՏՈՒԳԵԼ.

- Բժշկական գրանցամատյաններ. պարզել նշանակված դեղամիջոցների ցանկը, ինչ բժշկական հիմքով են նրանք նշանակվել, արդյոք դրանք նշանակվել են բուժմասնագետի կողմից (հաստատության ներսում կամ դրանից դուրս) և տրամադրվել են նշանակմանը համապատասխան
- Երեխայի համաձայնությունը. պարզել՝ արդյոք համաձայնությունը տրվել է այն բանից հետո, երբ երեխան լիարժեքորեն իրազեկվել է (լիարժեք, ճշգրիտ և հասկանալի տեղեկատվություն) իր առողջական վիճակի և այն բժշկական հիմնավորումների մասին, որոնց հիմքով բուժմասնագետը նշանակել է դեղամիջոցները
- Դեղամիջոցների օգտագործումը. պարզել՝ արդյոք եղել է դեղամիջոցների և բուժման որևէ փորձարարական կիրառում, դեղամիջոցների որևէ կիրառում տեղեկություն կամ խոստովանություն կորզելու նպատակով
- Միջադեպերի գրանցամատյան և կարգապահական միջոցառումների գրանցամատյան. պարզել՝ արդյոք որևէ կապ կամ դեղամիջոցների կիրառման և կոնկրետ միջադեպի, պատժի, կարգապահական միջոցառման կամ զսպման միջոցի միջև

.....

.....

.....

ՍՀՓ 22 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 55 | ԱԻԵԿ 72.1, 72.2, 118 | ԽԿԿ/Տեղ. (1998)12, 41 | ԽԿԿ/Տեղ (2015)1, V, 3, դ, 115

Բ. ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄ (ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ)

Արդյո՞ք բուժանձնակազմը պատշաճ որակավորված և վերապատրաստված է՝ երեխաներին ապահովելու առողջապահական ծառայություններով, որոնք համարժեք են համայնքում մատուցվող ծառայություններին:

ՀԱՐՑՆԵԼ. *Աշխատակազմին (բուժանձնակազմին) | Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Բուժանձնակազմի որակավորում և վերապատրաստում՝ հաշվի առնելով երեխաների կարիքները (ներառյալ կանխարգելիչ առողջապահություն և անհապաղ բժշկական օգնություն պահանջող իրավիճակների վարում, վնասվածքների փաստաթղթային արձանագրում և մեկնաբանություն, զեկուցման պարտականություն և վատ վերաբերմունքի փաստի մասին զեկուցման ընթացակարգ, այն երեխաների հետ հարցազրույցի անցկացման տեխնիկա, որոնք, հնարավոր է, վատ վերաբերմունքի արժանացած լինեն), պարզել շարունակական վերապատրաստման ծրագիրը և վերապատրաստման ամենաթարմ ծրագիրը
- Համայնքում առկա համարժեք ծառայությունների մակարդակն ու կազմը
- Անկախություն
- Կապեր և համագործակցություն ներքին և արտաքին ծառայությունների միջև
- Գաղտնիություն. պարզել՝ որտեղ են պահվում բժշկական գրանցամատյանները, ում համար են դրանք հասանելի և ինչ պայմաններում
- Արտակարգ իրավիճակներ. պարզել՝ ինչպես է բուժանձնակազմը գործում այդ պայմաններում և որքան արագ է այն ունակ արձագանքելու և անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու արտակարգ իրավիճակներում

.....

.....

.....

ԵԻԿ 24 (1), (2)(բ) | ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 13.5 | ՍՀՓ 24, 26 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 19, 49, 51 | ԵԻԿ – ԸՄ Թիվ 10 §89 | ԿԲՀՎԿ 8, 33, 39 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 26, 27.2, 33-34, 46 | ԵԲԿ 40, 41.4, 68.2.b, 81.3, 89.1 | ԱԻԵԿ 69, 71, 128.1, 129.2 | ԽԿԿ/Տեղ. (2013) 29, VII, 82

Գ. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Արդյո՞ք անազատության մեջ գտնվող երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ (անձնակազմի և/կամ հասակակիցների կողմից) բժշկական փաստերի արձանագրման և զեկուցման ընթացակարգերն արդյունավետ են վատ վերաբերմունքի կանխարգելման և դրա դեմ պայքարի առումով:

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին (բուժանձնակազմին)* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Երեխաների տեսանելի վնասվածք(ներ)

ՍՏՈՒԳԵԼ.

- Բժշկական արձանագրություններ. պարզել՝ արդյոք նոր ժամանածների առաջին հարցազրույցը և բուժզննությունը բուժմասնագետի կողմից արձանագրում է որևէ վնասվածք, և դրա հետ կապված հայտարարություններ, արդյոք կատարվում են համակարգային բժշկական հետազոտություններ ամեն անգամ, երբ երեխան փոխանցվում է ոստիկանական ծառայությունների միջոցով, և ամեն անգամ, երբ երեխային ներգրավող բռնի միջադեպ է տեղի ունենում հաստատությունում
- Բժշկական հետազոտության արդյունքներ. պարզել՝ արդյոք դրանցում նշված է երեխայի կողմից արված հայտարարությունների մասին (ներառյալ՝ իր առողջական վիճակի նկարագրությունը երեխայի կողմից և իր նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարություններ), մանրակրկիտ հետազոտության վրա հիմնված ամբողջական բժշկական օբյեկտիվ բացահայտումներ, բուժաշխատողի դիտարկումներն այն մասին, թե արդյոք արված հայտարարությունները և բժշկական օբյեկտիվ բացահայտումները համընկնում են, հավելյալ հետազոտությունների արդյունքները, մասնագիտական խորհրդատվությունների և բուժման մանրակրկիտ եզրակացությունները
- Բժշկական քննության արձանագրություններ. պարզել՝ արդյոք դրանք արված են հատուկ ձևաթղթերի վրա (մարմնի գծապատկերով, լուսանկարներով), արդյոք դրանք ներառված են երեխայի առողջական անձնագրում
- Խնամակալության հանձնման փաստաթղթեր. պարզել՝ արդյոք դրանք պարունակում են ոստիկանական ծառայությունների կողմից ազատազրկման հաստատությանը հանձնման պահին երեխայի վրա տեսանելի վնասվածքի մասին դիտարկումներ, արդյոք այս փաստաթղթերը ուղարկվել են առողջապահական ծառայություններին
- բուժմասնագետների կողմից արձանագրված՝ երեխաների կողմից արված հայտարարությունների հետ համատեղելի վնասվածքների մասին համապատասխան պատկան մարմիններին անմիջապես հաղորդման ընթացակարգ. պարզել՝ արդյոք բժշկական գաղտնիությունը խոչընդոտ չի եղել վատ վերաբերմունքի մասին վկայող բժշկական փաստերի հաղորդման համար, արդյոք հաղորդումն արվել է՝ անկախ խնդրո առարկա անձի ցանկություններից
- Վնասվածքների մասին անհապաղ հաղորդում համապատասխան պատկան մարմիններին. պարզել՝ արդյոք հաղորդումը ներկայացվել է անկախ մարմնի, որը իրավասու է պաշտոնական քննություն անցկացնել, կարգապահական ուսումնա-

5

սիրությունների համար պատասխանատու մարմինների, մշտադիտարկում իրականացնող մարմինների, երեխային և նրա փաստաբանին

- Արդյունավետ միջոցառումներ՝ հաղորդման մեջ նշվող երեխային պաշտպանելու աշխատակիցներիի կամ այլ երեխաների հաշվեհարդարից (փոխանցում, ամենօրյա շփումներից խուսափում, կեցության այլընտրանքային պայմաններ, և այլն)

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Սեռական ոտնձգություն. պարզել՝ արդյոք երեխաներին տեղեկացրել են դատական պատկան մարմիններին դիմելու իրենց իրավունքի մասին, արդյոք նրանց տեղեկացրել են ընթացակարգերի մասին, արդյոք նրանց համար հասանելի է իրավական աջակցությունը, և արդյոք նրանք ունեն անհապաղ մասնագիտացված հոգեբանական աջակցություն կամ խորհրդատվություն ստանալու հնարավորություն, արդյոք հատուկ միջոցառումներ են ձեռնարկվել հաշվեհարդարից խուսափելու համար

.....

.....

.....

ԵԻԿ 37 | ՍՀՓ 6, 33 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 50, 52, 67, 87 a-c-d | ԿԲՀՎԿ 7, 25 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 7, 8, 30, 34, 56-57, 71 | ԵԲԿ 15.1.e, 42.3 | ԱԻԵԿ 62.2.ե | ԽԿԿ/Տեղ. (2013) 29, VII, 71-84

Դ. ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ

Արդյո՞ք աղջիկներն ունեն առողջապահությունից օգտվելու նույն հնարավորությունը (և նույն որակով), ինչ տղաները

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին (բուժանձնակազմին)* | *Ղեկավարին*

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Աղջիկների առողջական վիճակը. պարզել՝ արդյոք նրանք առողջ տեսք ունեն

ՍՏՈՒԳԵԼ.

- Սեռային առանձնահատկությունները հաշվի առնող առողջապահական ծառայություններ, այդ թվում՝ գինեկոլոգիական ծառայություն
- Կին բուժմասնագետներ. պարզել՝ արդյոք նրանք հասանելի են հաստատությունում կամ դրանից դուրս՝ համայնքում
- Բուժմասնագետների որակավորումը, պարզել՝ արդյոք այն ներառում է հատուկ վերապատրաստում կանանց առողջության հարցերով, ներառյալ գինեկոլոգիան

- Կանխարգելիչ առողջապահական միջոցառումներ՝ ուղղված մասնավորապես կանանց. պարզել՝ արդյոք անազատության մեջ գտնվող աղջիկների համար հասանելի է կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի հետազոտությունը
- Հակաբեղմնավորման միջոցներ. պարզել՝ արդյոք աղջիկների համար հասանելի է իրենց հակաբեղմնավորման իրենց նախընտրած միջոցը
- ֆիզիկական անձեռնմխելիություն. պարզել՝ արդյոք աղջիկների համար հասանելի են սեռական ակտից հետո ընդունվող հակաբեղմնավորիչ այն հաբերը և/կամ հղիության ընդհատման այլ եղանակները հղիության ավելի ուշ փուլերում, որոնք հասանելի են ազատազրկման մեջ չգտնվող աղջիկների համար
- Անհատական պլան. պարզել՝ արդյոք այն ներառում է կանանց առողջապահական կրթությունը

Հատուկ խումբ. հղի աղջիկներ և երեխամայրեր

ԴԻՏԱՐԿԵԼ.

- Միջավայրը. պարզել, թե արդյոք այն էականորեն հարմարեցված է մայրերի ու երեխաների կարիքներին, զերծ է բանտարկության տեսանելի հատկանիշներից (համազգեստներ, ճաղեր և ձեռնաշղթաներ)
- Հարմարություններ. պարզել՝ արդյոք իրենց մայրերի հետ գտնվող մանուկներն ու փոքրահասակ երեխաներն ունեն խաղալու և մարզվելու պատշաճ հարմարություններ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հղի աղջիկների հատուկ սննդակարգ. պարզել՝ արդյոք այն պրոտեինով հարուստ սննդակարգ է, ներառում է առատ միրգ և բանջարեղեն
- Նախածննդյան և հետծննդյան խնամք. պարզել՝ արդյոք դրանք համարժեք են համայնքում տրամադրվող համապատասխան խնամքին, պարզել՝ արդյոք մորը թույլատրվում է ծննդաբերել անազատության մեջ պահելու վայրից դուրս և ինչ պայմաններում (տեղաշարժման ազատություն, ձեռնաշղթաներով, հսկողության ներքո և այլն)
- Իրենց մայրերի հետ գտնվող մանուկների և փոքրահասակ երեխաների բուժում և խնամք. պարզել՝ արդյոք այն հիմնված է երեխայի լավագույն շահերի վրա, արդյոք այն վերահսկվում է սոցիալական աշխատանքի և երեխայի զարգացման մասնագետների կողմից
- Մուտքերի և ելքերի գրանցամատյան. պարզել՝ որքան հաճախ են իրենց մայրերի հետ գտնվող մանուկներն ու փոքրահասակ երեխաներն ունենում հաստատությունը լքելու և արտաքին աշխարհում կյանքը վարելու հնարավորություն (մանկապարտեզներ, այցելություն իրենց հորը կամ տատիկ-պապիկներին և այլն)

.....

.....

.....

ԿԲՀՎԿ 6 – 18, 24, 38, 39, 48-52 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 28 | ԵԲԿ 34.3 | ԱԻԵԿ 73 բ., | ԽԿԿ/Տեղ. (2000)13, VI, 26 – 29, 32, 33 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 3, դ, 117

Ե. ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԵՐԵԽԱՆԵՐ

Արդյոք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաներին հատուկ ուշադրությամբ են վերաբերվում, արդյոք նրանց առաջնահերթություն է տրվում հատուկ հաստատություններում՝ բժշկական անկախ վարման պայմաններում

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին* | *Աշխատակազմին (բուժանձնակազմին)* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Բժշկական գրանցամատյաններ. պարզել՝ արդյոք առաջին հարցազրույցի և բուժզննության (առաջին հետազոտություն) միջոցով հայտնաբերվել է հոգեկան հիվանդության որևէ նշան, և բժշկական խնամքի կանոնավոր ինչ ծառայություններ են տրամադրվում
- Համաձայնություններ և/կամ համագործակցություն մասնագիտացված հաստատությունների հետ
- Պայմանավորվածություններ համապատասխան գերատեսչությունների հետ, որոնք ապահովում են հոգեկան առողջապահության շարունակականությունն ազատ արձակվելուց հետո
- Բժշկական գրանցամատյաններ և անհատականացված պլան. պարզել՝ արդյոք առկա են հատուկ պարտավորություններ կամ պայմանավորվածություններ (երեխաների հոգեբուժական հետագա վերահսկողություն, հոգեթերապիա, խորհրդատվություն, մասնագիտացված մանկավարժների ապահովում և այլն)

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Հոգեկան առողջապահության և վերականգնողական ծրագրեր. պարզել՝ արդյոք դրանք անհատականացված են, արդյոք դրանք գենդերային տեսանկյունից զգայուն են, ներառում են վնասվածքների մասին տեղեկությունները և սպառիչ են

.....
.....
.....

ԵԻԿ 23 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ V. 45 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 21.ե, 28, 50-51, 53 | ԿԲՀՎԿ 6.բ, 12-13, 41.դ | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 25, 31, 32.1.ա, 109-110 | ԵԲԿ 12.1-2, 40.4, 42.3.բ, 47, 81.3 | ԱԻԵԿ 57, 73 (դ), 117-119 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 116

Զ. ԿԱԽՅԱԼՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ (ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ, ԱԼԿՈՀՈԼԻՑ ԵՎ ԱՅԼՆ) ԵՐԵԽԱՆԵՐ

Արդյոք կա՞մ թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահման կառավարման ռազմավարություն և խնդրո առարկա երեխաների համար հասանելի վերականգնողական ծրագիր:

ՀԱՐՑՆԵԼ. Երեխաներին | *Աշխատակազմին (բուժանձնակազմին)* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահման կառավարման համակողմանի ռազմավարություն (կանխարգելում և բուժում)
- Վերականգնողական ծրագիր. պարզել՝ արդյոք այդպիսին կա հաստատության ներսում կամ արդյոք գոյություն ունի համագործակցություն/համաձայնություններ արտաքին ծառայությունների հետ (դետոքսիկացիոն հաստատություններ և այլն), արդյոք այն հարմարեցված է տարիքին, սեռին և խնդրո առարկա երեխայի այլ պահանջներին, արդյոք երեխային տրվել է ընտրություն՝ մասնակցելու այդ ծրագրին, կամ արդյոք այն պարտադիր է
- Առողջության վերաբերյալ տեղեկատվություն/կրթություն դեռահասների համար առանձնահատուկ կարևորության այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահումը և վերականգնողական ծրագրերը
- Տեղեկատվության-կրթության-վերականգնողական ծրագրի համար պատասխանատու աշխատակիցներիի որակավորում և վերապատրաստում. պարզել՝ արդյոք այն վերաբերելի է
- Երեխաների կողմից թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահման և վերականգնողական ծրագրի (ներառյալ տեղեկատվությունը և առողջապահական կրթությունը) վերաբերյալ ինստիտուցիոնալ քաղաքականության ընկալումը. պարզել՝ արդյոք այն ընկալվում է որպես օգտակար և իմաստալից

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Բուժման մասնագիտացված ծրագրեր՝ նախատեսված աղջիկների համար. պարզել՝ արդյոք այն հաշվի է առնում զոհականացումը, հղի աղջիկների և երեխամայր աղջիկների հատուկ կարիքները, ինչպես նաև նրանց բազմազան մշակութային հենքը

.....

.....

.....

ԵԻԿ 24 (1), 33 | ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 15 | ՌԻԱԴՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐ V. 45, VI. 59 | ՀԱՎԱՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 21.ե, 51, 53, 54 | ԿԲՀՎԿ 6.դ, 15 | ԵԲԿ 42.3.դ | ԱԻԵԿ 71, 73.c, 75

Է. ԻՆՔՆԱՎՆԱՍՄԱՆ ԿԱՄ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻՆ ԵՆԹԱԿԱ ԵՐԵԽԱՆԵՐ

Արդյոք կա՞մ ինքնավնասման և ինքնասպանության միտումների կանխարգելմանն ուղղված ռազմավարություն

ՀԱՐՑՆԵԼ. *Երեխաներին | Աշխատակազմին (բուժանձնակազմին) | Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Կանխարգելող առողջապահական ծրագիր. պարզել՝ արդյոք այն ներառում է *ինքնավնասման և ինքնասպանության միտումների կանխարգելումը*
- Առողջապահական տեղեկատվություն/կրթություն դեռահասների համար առանձնահատուկ կարևորության այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են ինքնավնասումն ու ինքնասպանությունը
- Տեղեկատվության-կրթության-վերականգնողական ծրագրի համար պատասխանատու աշխատակիցներիի որակավորում և վերապատրաստում. պարզել՝ արդյոք այն վերաբերելի է
- Երեխաների կողմից ինքնավնասման և ինքնասպանության կանխարգելման վերաբերյալ ինստիտուցիոնալ քաղաքականության ընկալումը. պարզել՝ արդյոք այն ընկալվում է որպես օգտակար և իմաստալից

Հատուկ խումբ. աղջիկներ

ՍՏՈՒԳԵԼ.

- Անազատության մեջ գտնվող աղջիկների հոգեկան առողջության քաղաքականություն. պարզել՝ արդյոք այն ներառում է համապատասխան, գենդերային հատկանիշները հաշվի առնող և մասնագիտացված աջակցություն

.....
.....
.....

ԿԲՀՎԿ 6.Բ, 16 | ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 30.գ | ԵԲԿ 47.2 | ԱԻԵԿ 70.2 | ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 116 | ՄԻԵԴ, «Ջյոշելավն ընդդեմ Թուրքիայի» [Coselav v. Turkey], 9.10.2012, 1413/07 (կյանքի իրավունք) | ՄԻԵԴ, «Ջյոշելավն ընդդեմ Թուրքիայի» [Coselav v. Turkey] (Թիվ 1413/07), «Գյուվեչն ընդդեմ Թուրքիայի» [Guvec v. Turkey] (Թիվ 70337/01)

Ը. ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ (ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼՆ)

Արդյո՞ք անազատության մեջ գտնվող երեխաների համար հասանելի է սեռական առողջության կրթությունը՝ որպես կանխարգելիչ առողջապահության ծրագրի մաս:

ՀԱՐՑՆԵԼ. Երեխաներին | *Աշխատակազմին (բուժանձնակազմին)* | *Ղեկավարին*

ՍՏՈՒԳԵԼ.

- Կանխարգելիչ առողջապահական ծրագիր. պարզել՝ արդյոք այն ներառում է սեռական առողջության կրթություն, սեռական ճանապարհով փոխանցվող այնպիսի հիվանդությունների կանխարգելում, ինչպիսին է ՄԻԱՎ-ը (և մորից երեխային փոխանցում), արյան միջոցով փոխանցվող հիվանդություններ, ռիսկային սեռական գործողություններ, սեռով պայմանավորված առողջական պայմաններ, արդյոք այն ներառում է սեռականապես ակտիվ մարդկանց փոխհարաբերությունների, փոխադարձ հարգանքի, ոտնձգությունների բացառման և հավասարության վերաբերյալ կրթություն, խորհրդատվություն
- Սեռական կողմնորոշման իրավունք. պարզել՝ արդյոք երեխաներին վերապահված է սեռական կողմնորոշում իրենց իրավունքը վայելելու իրավունք և ինչ պայմանների ներքո

.....

.....

.....

ԿԲՀՎԿ 6, 14, 17, 18 | *ԱԻԵԿ 71* | *ԽԿԿ/Տեղ. (2015)1, V, 3, դ, 116*

6. ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Այս Ուղեցույցի վերջին բաժինը նվիրված է մի առանձնահատուկ տիրույթի, որը պետք է մշտադիտարկում իրականացնող մարմինների այցելության ժամանակ հատուկ հետաքրքրության առարկան լինի. անազատության մեջ գտնվող երեխաների համար հասանելի բողոքի կառուցակարգերին: Հասանելիություն, որը **երեխաների անազատության մեջ պահելու վայրերում** կապահովվի վարչակազմի կողմից, ի՝ առաջադրանքն ստացած կոնկրետ աշխատակցի կամ **արտաքին մարմնի** միջոցով (թեժ գծով), հասանելի՝ արտաքին մարմիններին (անկախ կամ ոչ) (էլ)նամակների, փոստարկղի, հեռախոսի կամ հաղորդակցության այլ միջոցների միջոցով, որ բողոքը լինի **ֆորմալ կամ ոչ ֆորմալ, անհատական կամ կոլեկտիվ, ներկայացված երեխայի կողմից անձամբ կամ նրա ծնողների/խնամակալների կամ ներկայացուցիչների կամ նրա փաստաբանի կողմից:** Բողոքի կառուցակարգերը անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքների հարգման հիմնարար երաշխիք են: Պատճառը, թե ինչու է այս Ուղեցույցի մի ամբողջական գլուխ նվիրված սրան, պարզ է. անազատության մեջ գտնվող երեխաների համար հասանելի և անվտանգ բողոքի կառուցակարգերն **էական փոխլրացնող մեխանիզմ** են՝ ապահովելու անազատության մեջ գտնվող երեխաների իրավունքների նկատմամբ հարգանք: Ի լրումն, մենք համարում ենք, որ եթե անազատության մեջ գտնվող երեխաների բողոքի իրավունքն իրագործվել է գործուն և արդյունավետ կերպով, ապա փոքր խախտումները, դժգոհությունները և բողոքները կարող են պարզվել և հայտնաբերվել հնարավոր ամենավաղ փուլում՝ հնարավորություն տալով ավելի խթանել երեխաների իրավունքները, և որ ոչ մի երեխա ստիպված չլինի սպասելու մինչև մշտադիտարկման այց տեղի կունենա, որ բարձրացնի բռնության հարցը և պահանջի իրավունքների վերականգնում:

Գործնականում անազատության մեջ գտնվող երեխաները կարող են շատ բարդ համարել բողոք ներկայացնելը՝ թե ներքին, թե արտաքին մարմիններին: Հաճախ նրանցից ակնկալվում է օգտագործել բողոքի ընթացակարգեր, որոնք մշակվել են մեծահասակների օգտագործման համար և հարմարեցված չեն երեխաների կարողությանը և զարգացմանը, տարիքին ու խոցելիության մակարդակին: Երեխաները հայտնվում են անծանոթ և երբեմն թշնամական միջավայրում: Նրանք, հնարավոր է, վախենան բողոք ներկայացնել՝ այն աշխատակիցներիի դեմ բողոքելու բացասական հետևանքների վախի պատճառով, որի հետ շփվում են ամեն օր: Նրանք, հնարավոր է, տեղյակ չլինեն, որ հիմք ունեն բողոքելու, և համարեն, օրինակ, որ բռնության կիրառումը որպես պատժամիջոց ընդունված և տարածված պրակտիկա է: Հավանաբար ամենաէականը՝ նրանք, հնարավոր է, բավարար հավատ և վստահություն չունենան, որ իրենց բողոքներին կհավատան և արդարացիորեն կգնահատեն. այսպես կարող է լինել, մասնավորապես, սեռական շահագործման և ոտնձգության դեպքերում, որոնք կարող են ասոցացվել խարանի, ամոթի և գաղտնիության հետ: Անազատության մեջ գտնվող երեխաների շրջանում հնարավոր է լինի ենթամշակույթ, որ այլ երեխաների կողմից ոտնձգությունների դեմ բողոքելը խստիվ արգելվում է, և իրենք, հնարավոր է, բախվեն հաշվեհարդարի:

6.1. Բողոքարկման կառուցակարգերի նպատակներն ու խնդիրները

Իրենց ազատությունից զրկված երեխաներն իրավունք ունեն դիմում և/կամ բողոք ներկայացնել իրենց պայմանների, բուժման և խնամքի վերաբերյալ՝ **հեշտ հասանելի, երեխայի նկատմամբ զգայուն, արդյունավետ և անվտանգ** կառուցակարգերի միջոցով: Բողոքելու իրավունքի խրախուսումը խիստ կարևոր է անազատության մեջ գտնվող երեխաներին ձայն տալու և նրանց մյուս իրավունքների պաշտպանության առումով: Այսպիսի դիմումները և/կամ բողոքները հնարավոր է առնչվեն առօրյա հարցերի, ինչպիսին է պատշաճ սննդի և ջրի ապահովումը և հանգստի հասանելիությունը: Նրանք կարող են նաև մտահոգություններ բարձրացնել կրթության հասանելիության կամ այցելությունների հետ կապված, հայտարարություններ անել վատ վերաբերմունքի այնպիսի դրսևորումների վերաբերյալ, ինչպիսիք են խոշտանգումը, բռնությունը, ոտնձգությունը և շահագործումը ոստիկանության, աշխատակիցների կամ անազատության մեջ գտնվող այլ երեխաների կողմից: Հաճախ փոքր հարցերով բողոքներին կարող է գործուն և արդյունավետ կերպով ընթացք տրվել ոչ ֆորմալ կառուցակարգերի միջոցով, ինչպիսիք են անհատական կամ կոլեկտիվ բանավոր դիմումները և միջնորդությունը: Այդուհանդերձ, երեխաների համար պետք է երաշխավորված լինի բողոքի ֆորմալ համակարգերի հասանելիությունը, երբ ոչ ֆորմալ կառուցակարգերը սպառվել են կամ հասել են իրենց սահմանին, կամ իրենց իրավունքների խախտումների հասցեագրումն ավելի ընթացակարգային գործընթացի միջոցով: Բողոքի արդյունավետ ընթացակարգերը կարող են դիտվել որպես անազատության մեջ գտնվող երեխաների ուղղման բաղադրիչ, որը նպաստում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ նրանց հարգանքի ամրապնդմանը: Թե ֆորմալ, թե ոչ ֆորմալ բողոքի կառուցակարգերը կարող են ապահովել, որ **երեխաների անազատության մեջ պահելու վայրերը լինեն թափանցիկ և հաշվետու**՝ իրացնելու իրենց խնամքի տակ գտնվող երեխաների իրավունքները: Դրանք կարող են կատարել **երեխաների իրավունքների խախտումների զսպամիջոցի** դեր, որպես լարվածության վաղ լիցքաթափման գործիք, **օգնել վերահնտեգրման հարցում** և երեխաների դեմ լուրջ ոտնձգությունների մասին **տեղեկատվությունը դարձնել հանրության սեփականությունը:** Ավելին, երբ պատկան մարմինները սիստեմատիկաբար վերլուծում են ստացված դիմումները և/կամ բողոքները, սա կարող է օգնել նրանց՝ **պարզելու մարտահրավերները և այն փոփոխությունները, որ անհրաժեշտ է անել քաղաքականության մեջ, գործնականում և օրենսդրական դաշտում:** Երեխաների ազատազրկման այն հաստատությունները, որոնք ունեն բողոքների արդյունավետ (ֆորմալ և ոչ ֆորմալ) ընթացակարգ, նաև հանրությանը վստահություն են տալիս, որ հաստատություններն աշխատում են ապահովել, որ երեխաները տեղյակ լինեն իրենց իրավունքների մասին, որ նրանք իրավազորված են պահանջել հարգանք և վերականգնվում են:

6.2. Որո՞նք են բողոքարկման համակարգերի հիմնական սկզբունքները

Ա. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Նախ և առաջ՝ երեխաները պետք է ոստիկանատուն և կամ անազատության մեջ պահելու վայր **ժամանելուն պես թե բանավոր, թե գրավոր** կերպով տեղեկացվեն ներքին և արտաքին, ֆորմալ և ոչ ֆորմալ, անհատական և կոլեկտիվ բողոքի կառուցակարգերի մասին: Բողոքի **Ուղեցույցի** կրկնօրինակները դիմելու դեպքում պետք է հասանելի լինեն երեխայի իրավախորհրդատուին, ծնողին կամ խնամակալին:

Կան մի շարք **ռազմավարություններ**, որոնք կարող են օգտագործվել՝ ընդլայնելու բողոքի գաղտնի կառուցակարգերի հասանելիությունը, մասնավորապես՝

- օգտագործել կողպվող արկղերի համակարգերը, որտեղ երեխաները կարող են ուղարկել իրենց բողոքները.
- ապահովել երեխաների օգնության գծերի, գրելու նյութերի (թուղթ, գրիչ, ծրարներ և նամականիշներ) կամ նույնիսկ էլեկտրոնային ձևաթղթերի ազատ հասանելիություն.
- կազմակերպել իրավաբանների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ բողոքի արտաքին կառուցակարգերի ծառայությունների ամենշաբաթյա հասանելիություն:

Բ. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Բացի գրավոր Ուղեցույցով ապահովելուց, դիմում և/կամ բողոք ներկայացնելու գործընթացը պետք է **հստակորեն բացատրվի երեխային՝ նրա համար ընկալելի և սպառիչ կերպով ու հասկանալի լեզվով:** Պետք է ապահովվեն հատուկ միջոցներ, օրինակ՝ նկարների և պատկերների օգտագործում: Պաստառների ցուցադրումը նույնպես կարող է օգտակար լինել: Երեխաները պետք է իրավունք ունենան դիմել և/կամ բողոքել ցանկացած հիմքով, որը վերաբերում է նրանց պայմաններին, վերաբերմունքին և խնամքին, նույնիսկ եթե բերանացի փոխանցվող պատմությունների հիման վրա են, և այս հիմքերը չպետք է սահմանափակվեն:

Երեխաները պետք է ապահովվեն **պատշաճ օգնությամբ և/կամ իրավական աջակցությամբ,** որպեսզի հնարավորություն ունենան դիմումներ և/կամ բողոքներ ներկայացնել՝ կանոնակարգերին և Ուղեցույցին համահունչ: Երեխաներին պետք է թույլատրվի դիմում և/կամ բողոք ներկայացնել ուղղակիորեն, կամ նրանց ընտանիքի անդամները կամ իրավական ներկայացուցիչները պետք է թույլտվություն ունենան անելու դա նրանց անունից, երբ որ դա բխում է նրանց լավագույն շահերից: Պետք է հասանելի լինեն նաև **Այլընտրանքային ձևաթղթեր,** որոնց լրացումը կախված չէ գրագիտությունից: Եթե օգտագործվում են բողոքի ձևաթղթերը, դրանք պետք է լինեն պարզ, ազատորեն հասանելի (այսինքն՝ երեխաները չպետք է ստիպված լինեն խնդրել դրանք աշխատակիցներից) և անվճար:

Կախված իրենց մանդատից՝ **քաղաքացիական հասարակության կազմակերպությունները** կարող են հսկայական ներդրում ունենալ՝ ապահովելու, որ բողոքի կա-

ռուցակարգերը լինեն հանրահայտ, հասանելի, արդյունավետ և երեխայի համար ընկալելի, և նրանք կարող են երեխաներին օգնել իրենց բողոքները պատրաստելու հարցում:

Նրանք, հնարավոր է, նաև իրավունք ունենան ներքին բողոք կազմելու երեխայի կամ մի խումբ երեխաների անունից՝ պայմանով, որ ունենան նրանց տեղեկացված համաձայնությունը:

Կարիք չկա, որ դիմումների և/կամ բողոքների ընթացակարգերը ֆորմալ կերպով գրված լինեն՝ արդյունավետ լինելու համար: Հաջորդ հարցը, որ հարկ է դիտարկել՝ արդյոք աշխատակիցների կամ մենթորներ կան նշանակված երեխաների ավելի ոչ ֆորմալ բանավոր դիմումներին արձագանքելու կոնկրետ նպատակով: Երեխաները պետք է հնարավորություն ունենան իրենց բողոքը հաղորդելու իրենց սեփական լեզվով՝ անհրաժեշտության դեպքում թարգմանիչների օգնությամբ: Երեխաները պետք է կարողանան ցանկացած պահի իրենց բողոքի մասին հարցում ուղղել դրանով զբաղվող անձին:

Գ.ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Դիմում և/կամ բողոք կազմելիս և բողոքի ընթացակարգի ողջ ընթացքում երեխաները պետք է ունենան **գաղտնիության պահպանման իրավունք,** թեպետ գործնականում սա հաճախ չի պահպանվում: Սրան կարելի է հասնել բողոքների կողպված արկղ տեղադրելով հասանելի այնպիսի վայրում, որն աշխատակիցների կամ ՏՀՀ մշտական հսկողության ներքո չէ՝ ապահովելով հստակ նորմեր, թե ով կարող է բացել արկղերը և երբ, և ապահովելով պաշտպանված նամակագրության (նամակների և էլեկտրոնային նամակների) գաղտնիությունը: Մշտադիտարկման և/կամ բողոքների մարմինները պետք է նաև մշակեն ռազմավարություններ՝ հաստատություններ այցելելիս հավաքելու դիմումներ և/կամ բողոքներ այնպես, որ բողոքող երեխայի ինքնությունը հնարավոր չլինի բացահայտել անազատության մեջ գտնվող այլ երեխաների և/կամ աշխատակիցներիի կողմից:

Պետք է լինի դրույթ, համաձայն որի դիմումները և/կամ բողոքները կազմվում են անանուն:

Դ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած անազատության մեջ պահելու վայր պետք է ունենա **դիմումների և/կամ բողոքների վարման ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի համակազմ:** Որպեսզի դիմումների/բողոքների ընթացակարգերը լինեն նպատակաուղղված և արդյունավետ, ցանկացած դիմումի և/կամ բողոքի պետք է ընթացք տրվի **անհապաղ:** Ներքին դիմումների և/կամ բողոքների դեպքում ընթացակարգի առավելագույն տևողությունը պետք է սահմանվի գրավոր ուղեցույցում, և **երեխաները պետք է տեղյակ լինեն այն ժամանակացույցին,** որի շրջանակներում կարող են ակնկալել պատասխան:

Փոքր բողոքները կամ դիմումները, ընդհանուր առմամբ, կարող են վարվել գործուն և արդյունավետ կերպով ոչ ֆորմալ կառուցակարգերի միջոցով, ինչպիսին է միջնորդությունը: Այս «թեթև միջամտության» մոտեցումները, որոնք ճկուն են, պետք է խրախուսվեն, որ դեպքերում որ հնարավոր է, քանի որ կողմերին առաջարկում են արագ և փոխշահավետ լուծում:

Ավելի ֆորմալ բողոքների դեպքում պետք է հարուցվի արդյունավետ ուսումնասիրության ընթացակարգ. ներքին բողոքների դեպքում սա կարող է ներառել հաստատության ղեկավարի կողմից փաստաթղթերի վերանայում, խնդրո առարկա երեխայի կամ երեխաների, ինչպես նաև այլ վկաների, այդ թվում՝ աշխատակազմի անդամների լսում, բժշկական և այլ փորձագետների լսում և տեղեկություն տրամադրելու դիմում այլ պատկան մարմիններին: Հաջողված փորձը ենթադրում է հաստատության ղեկավարի այցելություններ դեպքի վայր մասնավորապես այն հայտարարությունների դեպքում, որոնք պահանջում են անհապաղ միջամտություն, օրինակ՝ բռնության կամ ոտնձգության վերաբերյալ բողոքի դեպքում:

Բողոքի արտաքին կառուցակարգերի դեպքում ուսումնասիրության և ընթացակարգային գործընթացները պետք է, առնվազն, ներառեն երեխայի կամ երեխաների՝ դեմ առ դեմ լսելի լինելու իրավունքը՝ ԵԻԿ հոդված 12-ի համաձայն: Բողոքի արտաքին կառուցակարգերը պետք է նաև կանչեն վկաներին և փորձագիտական կարծիք լսեն, երեխաներին պետք է հնարավորություն տրվի օրինականորեն ներկայացված լինել, նրանց համար պետք է հասանելի լինեն գործի համապատասխան նյութերը:

Բողոքի կառուցակարգերը պետք է **համապատասխան իրավական կամ այլ գործողություն** ձեռնարկելու լիազորություն ունենան, ինչպիսիք են զոհին ստացած վնասի համար փոխհատուցելը և/կամ պաշտոնյաների դեմ կարգապահական կամ քաղաքացիական վարույթներ նախաձեռնելը՝ երեխայի և/կամ նրա ծնողների համաձայնությամբ: Անհրաժեշտության դեպքում բողոքի կառուցակարգերը պետք է **բողոքը հղեն դատախազին/մեղադրող մարմնին**՝ քրեական ուսումնասիրության և հետապնդման համար: Գործնականում շատ օմբուդսմաններ հաճախ կարող են միայն պարտադիր ուժ չունեցող առաջարկություններ ներկայացնել ազատազրկման պատկան մարմիններին, և սա կարող է իրավունքների վերականգնման ոչ արդյունավետ եղանակ լինել, եթե այս առաջարկություններն այնուհետև հաշվի չեն առնվում և չեն իրականացվում:

Մասնագետները, որոնք աշխատում են անազատության մեջ գտնվող երեխաների հետ, **պետք է լինեն պատշաճ վերապատրաստված՝** լիարժեքորեն գիտակցելու այն դերը, որ բողոքի կառուցակարգերը կարող են կատարել կարգուկանոն պահպանող, անվտանգ և թափանցիկ հաստատություն ստեղծելու հարցում, և դրանց կարևորությունն այնպիսի միջնորդություն նախաձեռնելու առումով, որը կարող է նպաստել ավելի լուրջ բողոքների և երեխաների իրավունքների խախտումների կանխարգելմանը:

Բողոքների համապարփակ քաղաքականությունը պետք է նաև աշխատակազմին վստահեցնի, որ բողոքների վերաբերյալ ուսումնասիրությունները կլինեն անկողմնակալ և արդար: Երեխաների համար պետք է լինի դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ բողոքելու ֆորմալ, թափանցիկ և հասանելի ընթացակարգ: Նրանք պետք է հնարավորություն ունենան այս ընթացակարգից օգտվելու առանց ի պատասխան մեղադրվելու վախի և հնարավորություն ունենալով դիմելու անկախ պատկան մարմնի: Այսօրինակ հայտարարությունները պետք է անհապաղ ուղղորդվեն դատական հետապնդման մարմնի, որն անկախ է դեպքերում ներգրավված անձանցից:

Բողոքի **ցանկացած մերժման պատճառները** պետք է խնամքով բացատրվեն երեխային, և պետք է **հնարավորություն լինի այս որոշումը բողոքարկելու** մեկ այլ պատկան մարմնի՝ երեխաների արդարադատության համակարգի շրջանակներում գործող, կամ արտաքին՝ դատական մարմնի: Ստացող հաստատությունները կամ այլ պատկան մարմինները պետք է **արձանագրեն բողոքներն** ու համապատասխան բացահայտումները և գործողություններն ու դրանք ամենօրյա դիտարկման առարկա դարձնեն՝ պարզելու ընդհանուր միտումներն ու կրկնվող գործելաոճերը, օրինակ՝

հնարավոր է, որ բողոքներից շատերն առնչվեն անձնակազմի միևնույն անդամին:

Քաղաքականության մշակման և պլանավորման հարցում փաստական հիմք ապահովելու նպատակով թափանցիկությունը խթանելու և չափազանց կարևոր տվյալներ ու տեղեկատվություն ապահովելու համար կանոնավոր հիմունքներով պետք է հրապարակվեն գործերի քանակը, երեխաների կողմից ներկայացված բողոքների բնույթը և արդյունքները՝ միաժամանակ պաշտպանելով ներգրավվածների ինքնությունն ու գաղտնիությունը:

6.3. Ո՞ւմ կարող են երեխաները բողոքել

Բողոքի կառուցակարգերը կարող են շատ տարբեր ձևեր ընդունել, և երեխաների համար պետք է հասանելի լինեն բողոքի եղանակները՝ թե երեխաների արդարադատության համակարգի շրջանակներում, թե դրանից դուրս: Նրանք պետք է հնարավորություն ունենան բողոքներ ներկայացնելու **ներքին մարմիններին,** որոնք պատասխանատու են երեխաների ազատազրկման հաստատության համար, ինչպես **նաև արտաքին անկախ մարմիններին**, ինչպիսիք են օմբուդսմանները, Մարդու իրավունքների ազգային հաստատությունները, անկախ մշտադիտարկման մարմինները և դատական մարմինները:

Կարևոր կապ կա բողոքի ընթացակարգերի և մշտադիտարկման մարմինների միջև, և երեխաները պետք է նաև իրավունք ունենան վստահությամբ խոսելու անազատության մեջ պահելու վայրերում մշտադիտարկում իրականացնող անձանց հետ, որոնք, կախված իրենց մանդատից, կարող են ունենալ լիազորություն՝ ընթացք տալու նրանց բողոքներին կամ դրանք ուղղորդելու իրավասու և համապատասխան բողոքի կառուցակարգերին:

Երեխաները նաև պետք է հնարավորություն ունենան բողոքներ ներկայացնելու **մարդու իրավունքների միջազգային մարմիններին,** ինչպիսիք են ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովը (քանի որ Հաղորդումների ընթացակարգի վերաբերյալ Կամընտիր արձանագրությունն ուժի մեջ է մտել 2014-ի ապրիլին), ինչպես նաև **տարածաշրջանային մարմիններին,** ինչպիսիք են Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն (կոլեկտիվ բողոքների մեխանիզմի միջոցով) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

7. ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Սույն Ուղեցույցի կյանքի է կոչվել՝ հիմնվելով **«Երեխաների իրավունքները ճաղերից այն կողմում»** ծրագրի շրջանակներում եվրոպական 14 գործընկեր-երկրներում իրականացված ազգային հետազոտությունների արդյունքների և 2014 և 2015 թթ-ին կազմակերպված 3 միջազգային սեմինարների ժամանակ վերոնշյալ ծրագրի գործընկերների ու ճանաչված փորձագետների համատեղ աշխատանքի, մտքերի և փորձառության վրա:

Ոգեշնչման աղբյուր են եղել նաև ազատազրկման համատեքստի մշտադիտարկման վերաբերյալ **տարբեր գրքեր և մեթոդաբանական Ուղեցույցներ,** ինչպիսիք են Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի կողմից կազմվածները և «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության **տեղեկատուներն ու վերապատրաստման նյութերը:** Սույն Ուղեցույցում ուշադրության են առնվել նաև արծարծված թեմաների վերաբերյալ բազմաթիվ **հոդվածներ, հրատարակություններ, հետազոտություններ և զեկույցներ**: Սույն Ուղեցույցի ստեղծման ժամանակ որպես աղբյուր օգտագործված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև երեխաներին անազատության մեջ պահելու թեմայի վերաբերյալ **ընթերցանության համապատասխան ողջ նյութն ու հավելյալ տեղեկատվությունը** հասանելի է հետևյալ կայքում.

www.childrensrightsbehindbars.eu

ՀԱՎԵԼՎԱԾ 1: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (պարզեցված տարբերակ)

Մշտադիտարկում իրականացնող մարմինների ոչ բոլոր անդամներն են իրավաբաններ և/կամ ծանոթ մարդու իրավունքների՝ պարտադիր ուժ ունեցող ամենակարևոր փաստաթղթին, որն անդրադառնում է երեխայի կյանքի գրեթե բոլոր կողմերին. 1989 թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային (ԵԻԿ): ԵԻԿ-ով երեխաներին շնորհվող իրավունքներն անքակտելի են և փոխկապակցված: Հավասար կարևորություն պետք է տրվի յուրաքանչյուր իրավունքի, քանի որ այս իրավունքներից յուրաքանչյուրը հիմնարար է երեխայի արժանապատվության առումով: Մշտադիտարկման գործընթացի շրջանակներում ԵԻԿ-ի իմացությունը դյուրացնելու նպատակով մենք կազմել ենք ԵԻԿ-ի պարզեցված երեխաներին անազատության մեջ պահելու որևէ վայր այց կատարող ցանկացած մասնագետի համար հեշտ հասանելի տարբերակ, :

ՉՈՐՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Պաշտպանություն խտրականության բոլոր ձևերից *հոդված 2*

ԵԻԿ-ը կիրառելի է բոլոր երեխաների համար՝ անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից կամ այլ կարգավիճակից:

Երեխայի լավագույն շահերը *հոդված 3 պարբ.1*

Այս սկզբունքը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանա երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում: Այն վերաբերում է բոլոր չափահասներին, որոնք երեխաների վրա ազդեցություն ունեցող որոշումներ են կայացնում, լինեն դրանք սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկներ, դատարաններ, թե վարչական կամ օրենսդրական մարմիններ:

Երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը *հոդված 6*

Կառավարությունները պարտավոր են հնարավոր առավելագույն չափով ապահովել յուրաքանչյուր երեխայի գոյատևումը և զարգացումը:

Երեխայի մասնակցությունը *հոդված 12*

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր հայացքներն այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային, և նրա հայացքները պետք է ընդունվեն լրջորեն: Իր հայացքները ձևավորելու և արտահայտելու երեխայի կարողությունը զարգանում է տարիքի հետ: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵԻԿ-Ի ՆԵՐՔՈ

Յուրաքանչյուր երեխա.

- **Երեխայի սահմանումը** հոդված 1
  որի 18 տարին չի լրացել, իրավունք ունի համարվելու երեխա և վայելելու ԵԻԿ-ով վերապահված իրավունքները
- **Պաշտպանություն խտրականությունից** հոդված 2
  իրավունք ունի խտրականությունից զերծ լինելու
- **Երեխայի լավագույն շահերը** հոդված 3
  իրավունք ունի, որ իրեն վերաբերող բոլոր գործողություններում առաջնահերթ ուշադրություն դարձվի իր լավագույն շահերին
- **Իրավունքների իրացում** հոդված 4
  պետք է վստահ լինի, որ իր կառավարությունը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ԵԻԿ-ով ճանաչված իրավունքների իրականացման համար
- **Ծնողական իրավունքներ և պարտականություններ** հոդված 5
  պետք է վստահ լինի, որ իր կառավարությունը հարգում է իր ծնողների դերը իր դաստիարակության հարցում
- **Գոյատևում և զարգացում** հոդված 6
  ունի կյանքի և գոյատևելու անքակտելի իրավունք և պետք է վստահություն ունենա, որ իր կառավարությունն ապահովում է իր գոյատևումն ու առողջ զարգացումը
- **Գրանցում, անուն և քաղաքացիություն** հոդված 7
  ունի անվան, քաղաքացիության իրավունք, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք
- **Ինքնության պահպանման իրավունք** հոդված 8
  պետք է վստահ լինի, որ իր կառավարությունը պաշտպանում է իր ինքնությունը, այդ թվում՝ իր անունը, քաղաքացիությունը և ընտանեկան կապերը
- **Բաժանում ծնողներից** հոդված 9
  իրավունք ունի ապրելու իր ծնողների հետ և առանձին ապրելու պարագայում անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու նրանց հետ
- **Ընտանիքի վերամիավորում** հոդված 10
  իրավունք ունի վերամիավորվելու և, միաժամանակ, տարբեր երկրներում ապրելու պարագայում անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ
- **Երեխաների ապօրինի տեղափոխումներ** հոդված 11
  իրավունք ունի պաշտպանված լինելու երեխաների ապօրինի տեղափոխումներից
- **Մասնակցություն** հոդված 12
  իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր հայացքները և ակնկալելու, որ դրանք ընդունվեն լրջորեն
- **Արտահայտման ազատություն** հոդված 13
  ունի տեղեկատվության իրավունք և արտահայտման ազատություն
- **Մտքի, խղճի և կրոնի ազատություն** հոդված 14
  ունի մտքի, խղճի և կրոնի ազատություն
- **Միավորումների ազատություն** հոդված 15
  ունի միավորումների և խաղաղ հավաքների իրավունք
- **Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք** հոդված 16
  ունի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք
- **Տեղեկատվություն և զանգվածային լրատվամիջոցներ** հոդված 17
  ունի լրատվամիջոցներից վստահելի, հասանելի և պատշաճ տեղեկատվություն ստանալու իրավունք

- **Ծնողական պարտականություններ** հոդված 18

  իրավունք ունի, որ իր զարգացման և դաստիարակության գործում ներգրավված լինեն երկու ծնողները, և որ անհրաժեշտության դեպքում, նրանց ծնողներն իրենց ծնողական պարտականությունների իրականացման հարցում պատշաճ օժանդակություն ստանան կառավարությունից

- **Պաշտպանություն բռնությունից** հոդվածներ 19-20-21

  իրավունք ունի պաշտպանված լինելու բռնության ցանկացած դրսևորումից, ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան միջավայրից զրկված երեխան իրավունք ունի կառավարության կողմից հատուկ պաշտպանության և աջակցության, պետք է վստահ լինի, որ որդեգրում տեղի կունենա միայն այն դեպքում, եթե այն բխում է երեխայի լավագույն շահերից

  Փախստական երեխաներ հոդված 22

  որը փախստական է (կամ փախստականի կարգավիճակ է հայցում), ունի հատուկ պաշտպանության և մարդասիրական օգնության իրավունք

- **Հաշմանդամություն ունեցող երեխաներ** հոդված 23

  որ հաշմանդամություն ունի, հատուկ խնամքի և աջակցության ու պաշտպանության իրավունք ունի, որպեսզի հնարավորություն ունենա ապրելու արժանավայել կյանքով, ակտիվորեն մասնակցելու հասարակական կյանքին և ապրելու հնարավորինս անկախ

- **Առողջություն** հոդված 24

  իրավունք ունի օգտվելու հնարավոր լավագույն առողջապահական ծառայություններից և հաստատություններից՝ հիվանդության բուժման և առողջության վերականգնման նպատակով

- **Պարբերական վերանայում** հոդված 25

  որը խնամելու, պաշտպանության կամ ֆիզիկական, կամ հոգեկան հիվանդությունների բուժման նպատակով տեղավորվել է իրավասու մարմինների կողմից և չի ապրում իր ծնողների հետ, իրավունք ունի, որ իր կյանքի հետ կապված բոլոր հանգամանքները պարբերաբար վերանայվեն՝ պարզելու, թե արդյոք դրանք շարունակում են լինել հնարավորինս պատշաճ

- **Սոցիալական ապահովություն** հոդված 26

  իրավունք ունի օգտվելու սոցիալական ապահովությունից, այդ թվում՝ սոցիալական ապահովագրության նպաստներից

- **Պատշաճ կենսամակարդակ** հոդված 27

  իրավունք ունի պատշաճ կենսամակարդակի, որը բավականին բարձր է՝ բավարարելու նրանց ֆիզիկական և հոգեբանական կարիքները

- **Կրթություն** հոդված 28-29

  ունի անվճար որակյալ տարրական կրթության իրավունք

- **Փոքրամասնություններ/բնիկ ազգաբնակչություն** հոդված 30

  որը պատկանում են էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնության, իրավունք ունի օգտվելու իր մշակույթից, դավանելու իր կրոնը և նրա ծեսերը կատարելու կամ գործածելու իր մայրենի լեզուն

- **Հանգիստ, ժամանց և խաղեր** հոդված 31

  ունի հանգստի, ժամանցի, խաղալու և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունք

- **Մանկական աշխատանք** հոդված 32

  իրավունք ունի պաշտպանված լինելու տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությանը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը

- **Պաշտպանություն թմրամիջոցներից** հոդված 33
  իրավունք ունի պաշտպանված լինելու վնասակար թմրամիջոցներից և թմրամիջոցների առևտրից
- **Սեռական շահագործում և չարաշահում** հոդված 34
  իրավունք ունի պաշտպանված լինելու սեռական շահագործման և չարաշահման բոլոր ձևերից
- **Առևանգում, առուվաճառք և թրաֆիքինգ** հոդված 35
  պետք է վստահ լինի, որ կառավարությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները երեխաների առևանգումը, նրանց վաճառքը կամ ցանկացած նպատակով և ցանկացած ձևով նրանց առուվաճառքը կանխելու համար
- **Շահագործման այլ ձևեր** հոդված 36
  պետք է պաշտպանված լինի շահագործումից կամ նրա բարեկեցությունն ու զարգացումը վնասող ցանկացած այլ գործունեությունից
- **Ազատազրկում և պատիժ** հոդված 37
  իրավունք ունի պաշտպանված լինելու ցանկացած դաժան կամ անմարդկային վերաբերմունքից: Ոչ մի երեխա չի զրկվում ազատությունից անօրինական կամ կամայական կերպով, և երեխաների նկատմամբ չպետք է կիրառվի մահապատիժ կամ ցմահ բանտարկություն: Անազատության մեջ գտնվող յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, և երեխան պետք է իրավունք ունենա օգտվելու համապատասխան իրավական և այլ օգնությունից, ինչպես նաև կապ պահպանել իր ընտանիքի հետ
- **Զինված հակամարտություն** հոդված 38
  իրավունք ունի պաշտպանված լինելու զինված հակամարտություններից
- **Հոգածություն զոհ դարձած երեխաների նկատմամբ** հոդված 39
  զոհ է դարձել դաժան վերաբերմունքի, շահագործման կամ չարաշահման ցանկացած ձևի, խոշտանգումների կամ ցանկացած այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, զինված ընդհարումների, իրավունք ունի պատշաճ ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնման և սոցիալական վերաինտեգրացման
- **Անչափահասների արդարադատություն** հոդված 40
  որը մեղադրվում է քրեական օրենսդրությունը խախտելու մեջ, ունի իրավական աջակցության և իրավական գործընթացների շրջանակներում արդար վերաբերմունքի իրավունք: Կառավարությունները պարտավոր են սահմանել այն նվազագույն տարիքը, որից ցածր երեխաները համարվում են անընդունակ խախտելու քրեական օրենսդրությունը, և ապահովել դատական կամ այլընտրանքային վարույթների արդարացիության և արագ հանգուցալուծման նվազագույն երաշխիքներ
- **Հարգանք ավելի բարձր չափորոշիչների նկատմամբ** հոդված 41
  իրավունք ունի, որ իրավական այլ դրույթները գերակա լինեն ԵԻԿ-ի դրույթների նկատմամբ, եթե դրանք առավել մեծ չափով են նպաստում երեխայի իրավունքների իրագործմանը
- **Իրավունքների իմացություն** հոդված 42
  իրավունք ունի պատշաճ տեղեկացված լինելու իր իրավունքների մասին

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Անազատության մեջ գտնվող երեխաների հետ մշտադիտարկման ընթացքում անցկացվող հարցազրույցի ընթացակարգեր և էթիկական նկատառումներ

Սույն փաստաթուղթը ապահովում է երեխաների անազատության մեջ պահելու վայրերում մշտադիտարկման այցերի ժամանակ երեխաների հետ հարցազրույցներ անցկացնելու ընթացակարգերը և բարոյական նկատառումները, որոնց պետք է հետևել:

Այս հավելվածը ստեղծված է՝ մշտադիտարկում իրականացնող մարմիններին աջակցելու իրենց սեփական ընթացակարգերի համակազմը և էթիկական Ուղեցույցն ստեղծելու հարցում՝ հաշվի առնելով բոլոր այն սկզբունքները, երաշխիքները և առանձնահատկությունները, որ պետք է նկատի առնել անազատության մեջ գտնվող երեխաների հետ հարցազրույցներ նախապատրաստելիս, անցկացնելիս և արդյունքներն ամփոփելիս:

ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Տես Գլուխ 3.4. – էջ 37

- ՎՆԱՍ ՄԻ ՀԱՍՑՐՈՒ
- ԻՄԱՑԻՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
- ՀԱՐԳԻՐ ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ
- ՎՍՏԱՀԵԼԻՈՒԹՅՈՒՆ
- ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ
- ԱՆՎՏԱԳՈՒԹՅՈՒՆ
- ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ
- ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ
- ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՁՆԱՀՐՈՒՅՑ(ՆԵՐ) / ՖՈԿՈՒՍԱՅԻՆ ԽՈՒՄԲ (ԽՄԲԵՐ) ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Տես Գլուխ 4.3. / Դ. – էջ 73

Հարցազրույցից առաջ.

1 Հարցազրույցի մասնակից երեխաները

- Նույնականացում
- Տեղեկացված համաձայնություն
- Նախազգուշական միջոցառումներ

2 Հարցազրույցի անցկացման վայրը

- Առանձնացվածություն
- Ապահովություն և «հարմարավետություն»

3 Հարցազրույց անցկացնող(ներ)

- Փորձառություն / Նախապատրաստում – վերապատրաստում
- Սեռ
- Թարգմանություն

4 Ձայնագրություն

- Մեթոդներ
- Գաղտնիություն

Ընդհանուր հարցեր և խնդիրներ, որ հավանական է ի հայտ գան հարցազրույցների ժամանակ

Հարցազրույցի ժամանակ.

1 Ներածություն

- *Հարցազրուցավարների, համատեքստի, նպատակների ներկայացում և հավաքված տեղեկատվության բացատրում*
- *Կանխատեսելիություն*
- *Մթնոլորտի ջերմացում/շփման հաստատում*
- *Կեղծ հույսի բացառում*

2 Հարցուպատասխան

- Վստահություն և հավատ
- Հարցազրուցավարի վարքագիծը և ժեստերը
- Անաչառ տեղեկատվություն

❸ Եզրափակում

- Սահմանափակումներ / կեղծ հույսի բացառում
- Դրական արձագանք
- Երախտագիտություն / Փորձառությունը երեխաների համար իմաստալից դարձնել

⊙ Հարցազրույցից հետո.

❶ Խաչաձև ստուգում

- Այլ հարցազրույցներ երեխաների, աշխատակիցներիի, ղեկավարի, այլ անձանց հետ
- Արձանագրություններ և գրանցամատյաններ
- Դիտարկում

❷ Հետագա քայլեր

- Արդյունքների ներկայացում երեխաներին
- Պատասխան գործողություններ
- Հայտարարություններ
- Բողոքներ

❸ Արդյունքների զեկուցում

- *Ներքին*
- *Արտաքին*
- *Տարածում*
- *Հետագա քայլեր*
- *Իրագործման այլ ռազմավարություններ*
- *Ազդեցության գնահատում*

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Երեխայի պաշտպանության քաղաքականություն

Մշտադիտարկման նպատակով երեխաների ազատազրկման հաստատություն այցելող յուրաքանչյուր անձից պետք է պահանջվի ստորագրել երեխայի պաշտպանության վերաբերյալ քաղաքականություն: *Տես Գլուխ 4.1. / Է. – էջ 56*

Այս հավելվածը մտահղացված է՝ մշտադիտարկում իրականացնող մարմիններին օգնելու երեխայի պաշտպանության՝ իրենց սկզբունքներին, մանդատի ընդգրկմանը և գործառույթին համահունչ սեփական քաղաքականության ստեղծման հարցում:

ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ (ԲԱՅՑ ՉՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆՓԱԿՎԻ ԴՐԱՆՑՈՎ) ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ.

***Սկզբունքներ**, որոնց կրողն է մշտադիտարկում իրականացնող մարմինը, երբ մշտադիտարկում է իրականացնում իր այցելած հաստատությունում:*

Օրինակ՝ երեխայի լավագույն շահ, երեխայի ապահովություն և պաշտպանություն բռնության կամ չարաշահման ցանկացած ձևից կամ դրա սպառնալիքից, երեխայի բարեկեցությունը, երեխայի մասնակցությունը, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու իրավունք, կրթության իրավունք, վերականգնում ու վերաինտեգրում հասարակությունում և այլն:

Աշխատակիցներիի հավաքագրում

- Աշխատակիցներիի հավաքագրման գործընթաց, թիմի անդամների ընտրություն
  Տես Գլուխ 4.1. / Զ. – էջ 54
- Թիմի անդամների նախապատրաստում և վերապատրաստում
  Տես Գլուխ 4.1. / Զ. – էջ 54

Անձնական կյանքի անձեռնմխելիություն և գաղտնիություն

Տես Գլուխ 3.3 – էջ 32

Մարդու իրավունքներ. միջազգային և եվրոպական իրավական շրջանակը և չափորոշիչները, որոնք վերաբերելի են երեխաների ազատազրկման համատեքստում:

Տես Գլուխ 1.2. – էջ 17

Բռնություն երեխայի նկատմամբ կամ վատ վերաբերմունք

- Երեխայի նկատմամբ բռնության և վատ վերաբերմունքի սահմանում և տեսակներ (օրինակ՝ անտեսում, հոգեբանական-ֆիզիկական-սեռական բռնություն երեխայի նկատմամբ, վատ վերաբերմունք և այլն)
- Բռնության կամ վատ վերաբերմունքի դեպքերով զբաղվելու իրավասություն ունեցող ծառայություններից (ներքին և արտաքին) յուրաքանչյուրի դերերն ու պարտականությունները
- Կոնտակտային տվյալներ

Երեխայի նկատմամբ բռնության և վատ վերաբերմունքի կանխարգելում

- Ռազմավարություն
- Ընթացակարգեր

Երեխայի նկատմամբ բռնության և վատ վերաբերմունքի մասին հաղորդում և արձագանք

Տես Գլուխ 6.2 – էջ 149 և Գլուխ 6.3 – էջ 152

- Բռնության կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարություններ
- Բռնության կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքներ
- Բռնության կամ վատ վերաբերմունքի նշանների և ախտանիշների հայտնաբերում
- Ներքին հաղորդում և արձագանք
- Դիմում արտաքին մարմիններին
- Արտակարգ իրավիճակների դեպքում կիրառվող ընթացակարգեր
- Դիմումի/բողոքի հետ կապված հետագա քայլեր

Հաշվեհարդար / Վրեժխնդրություն

- Կանխարգելման ռազմավարություններ
- Պաշտպանության ընթացակարգեր
- Հաշվետվություն
- Հետագա քայլեր

ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՄԻԵԴ – Նախադեպային իրավունք

ԳՈՐԾ	ԱՄՍԱԹԻՎ	ՀԱՄԱՐ	ԻՐԱՎՈՒՆՔ(ՆԵՐ)
«Ադամկիևիչն ընդդեմ Լեհաստանի» [Adamkiewic v. Poland]	02.03.2010	Թիվ 54729/00	*Իրավական աջակցության իրավունք* *Արդար դատաքննության իրավունք*
«Ջյոշելավն ընդդեմ Թուրքիայի» Coselav v. Turkey	09.10.2012	Թիվ 1413/07	*Կյանքի իրավունք*
«Դուշկան ընդդեմ Ուկրաինայի» [Dushka v. Ukraine]	03.02.2011	Թիվ 29175/04	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*
«Գյուվեչն ընդդեմ Թուրքիայի» [Guvec v. Turkey]	20.01.2009	Թիվ 70337/01	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*
«Մահմունդին և մյուսներն ընդդեմ Հունաստանի» [Mahmundi and others v. Greece]	31.07.2012	Թիվ 14902/10	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*
«Մ.Ս.Ս-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի» [M.S.S v. Belgium and Greece] [ԸՄ]	21.01.2011	Թիվ 30696/09	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում* *Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք*
«Մուբիլանզիլա Մայեկան և Կանիկի Միտունգան ընդդեմ Բելգիայի» [Mubilanzila Mayeka and Kaniki Mitunga v. Belgium]	12.10.2006	Թիվ 13178/03 3	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*
«Մուսխաջիևան և մյուսներն ընդդեմ Բելգիայի» [Muskhadzhiyeva and Others v. Belgium]	19.01.2010	Թիվ 41442/07	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*
«Պանովիցն ընդդեմ Կիպրոսի» [Panovits v. Cyprus]	11.12.2008	Թիվ 4268/04	*Իրավական աջակցության իրավունք* *Արդար դատաքննության իրավունք*

«Պոպովն ընդդեմ Ֆրանսիայի» [Popov v. France]	19.01.2012	Թիվ 39472/07 և 39474/07	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*
«Ռահիմին ընդդեմ Հունաստանի» [Rahimi v. Greece]	05.04.2011	Թիվ 8687/08	*Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*
«Սալդուզն ընդդեմ Թուրքիայի» [Salduz v. Turkey] [ԸՄ]	27.11.2008	Թիվ 36391/02	*Իրավական աջակցության իրավունք* *Արդար դատաքննության իրավունք*
«Սոյկան ընդդեմ Թուրքիայի» [Soykan v. Turkey]	21.04.2009	Թիվ 47368/99	*Իրավական աջակցության իրավունք* *Արդար դատաքննության իրավունք*
«Տարարիևան ընդդեմ Ռուսաստանի» [Tarariyeva v. Russia]	14.12.2006	Թիվ 4353/03	*Կյանքի իրավունք* *Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում*

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Եվրոպական միությունը Հայաստանի քաղաքացիների համար:
«Մարդու Իրավունքների Խթանում և Պաշտպանություն» ծրագիր

Սույն թարգմանությունն ու հրատարակությունը պատրաստվել են Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ: Հրատարակության բովանդակության համար պատասխանատու է «Երեխաների իրավունքները ճաղավանդակներից այն կողմ» ծրագիրը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը և պարտադիր չէ, որ համընկնեն Եվրոպական միության տեսակետների հետ:

Սույն հրատարակության արտահայտած տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

Իրականացնող գործընկերներ՝

Ֆրանսերեն հրատարակություն
Guide Pratique: Monitoring des lieux où des enfants sont privés de liberté.

Այս հրատարակությունն ստեղծվել է Եվրամիության քրեական արդարադատության ծրագրի, Եվրոպայի խորհրդի, «Fonds Houtman» ասոցիացիայի և *Loterie nationale*-ի (Բելգիա) ֆինանսական աջակցությամբ: Սույն հրատարակության բովանդակության համար պատասխանատու է բացառապես Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպությունը (ԵՊՄԿ/DCI) (Բելգիա), և այն որևէ կերպ չի արտացոլում Եվրահանձնաժողովի տեսակետները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի կամ մեկ այլ դոնորի պաշտոնական քաղաքականությունը:

©2016, Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպություն/Defence for Children International (DCI) – Բելգիա: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակությունում ներառված նյութը կարող է ազատորեն մեջբերվել կամ վերատպվել՝ պայմանով, որ հղում արվի աղբյուրին: Հրատարակությունը վերարտադրելու կամ թարգմանելու թույլտվության վերաբերյալ դիմումները պետք է ուղղել info@defensedesenfants.be հասցեով:

ISBN: 978-2-9601826-2-0

Գրաֆիկական դիզայն և տպագրություն/Graphic design and printing:
Nina Carleer & Julien Bertiaux (Click Click Graphics)
Անգլերեն հրատարակության սրբագրություն/Proofreading of the English edition:
Aishling Heffernan (IPRT) & Paula Jack
Թարգմանություն ֆրանսերեն/Translation into French:
Maryline Van Hove (At-line)

Համակարգող.
Գործընկերներ.
Ասոցացված գործընկերներ.

Համակարգող՝

Defence for Children
DCI-BELGIUM

Գործընկերներ՝

Ludwig Boltzmann Institute
Human Rights

UNIVERSITY OF TARTU

DEFENSA DE NIÑAS Y NIÑOS INTERNACIONAL DNI
DEFENSE DES ENFANTS INTERNATIONAL DEI
DEFENCE FOR CHILDREN INTERNATIONAL DCI
the worldwide movement for children's rights

IPRT
Irish Penal Reform Trust

DEFENCE FOR CHILDREN
International-Italia

REPUBLIC OF LATVIA
OMBUDSMAN

ances
association nationale des communautés éducatives et sociales a.s.b.l.

DEFENCE for CHILDREN
The Netherlands

HELSINKI FOUNDATION for HUMAN RIGHTS

Universitatea de Vest din Timişoara

PROYECTO SOLIDARIO

Ասոցիացված գործընկերներ՝

the Howard League for Penal Reform

OMCT
SOS-Torture Network

Centar za prava deteta

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

unicef

Այս Գործնական ուղեցույցը նշանավորում է վերջնական արդյունքը «Երեխաների իրավունքները ճաղերից այն կողմ» ծրագրի, որը համակարգել է բելգիական Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպությունը և ֆինանսավորել Եվրամիության Քրեական արդարադատության ծրագիրը՝ Եվրոպայի խորհրդի և «Fonds Houtman» (Բելգիա) ասոցիացիայի հատուկ մասնակցությամբ:

Հաշվի առնելով այն պայմանները, որոնցում գտնվում են անազատության մեջ գտնվող երեխաները, այս պարագայում՝ հատկապես խոցելի վիճակում և, ցավոք, չափազանց հաճախ ենթակա բռնության ենթարկվելու խիստ վտանգի՝ արժանապատվության ու մարդկայնության ոտնահարմամբ, սույն Ուղեցույցն ուղղված է նրանց հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքի բարելավմանը:

Սա Եվրոպայում երեխաներին անազատության մեջ պահելու բոլոր վայրերում մշտադիտարկման առաջին Գործնական ուղեցույցն է, որն առաջնորդվում է երեխայի նկատմամբ զգայուն և կանխարգելիչ տեսանկյունով՝ հիմնված երեխայի առանձնահատկությունները հաշվի առնող մոտեցման վրա: Այն ստեղծվել է՝ օգտագործվելու մասնագետների լայն շրջանակի կողմից, որոնք իրավասու են մշտադիտարկում իրականացնել երեխաների անազատության մեջ պահելու վայրերում կամ այցելել այնտեղ:

Գործնական այս գործիքը նախագծվել է այնպես, որ տրամադրում է գործնական ուղղորդման տարբեր մակարդակներ՝ կախված օգտագործողների փորձառության աստիճանից և երեխայի իրավունքների, երեխաների ազատազրկման, մշտադիտարկման գործընթացի ու մեթոդաբանության վերաբերյալ նրանց գիտելիքի մակարդակից:

Սույն Ուղեցույցը պետք է օգտագործվի մշտադիտարկման կառուցակարգերի կողմից՝ պատրաստելու, իրականացնելու իրենց մշտադիտարկման այցելությունները և հետամուտ լինելու հետագա քայլերի: Այն կարող է նաև օգտակար լինել երեխաների անազատության մեջ պահելու վայրերի գնահատման հարցում: Բացի դրանից, այն կարող է օգտագործվել մանկավարժական նպատակներով՝ որպես եվրոպական մակարդակում մշտադիտարկման թիմերի և/կամ դասընթացավարների վերապատրաստման դասընթացի նյութ:

«Հենց սրանում է սույն Ուղեցույցի կարևորությունը: Այն մշակվել է՝ հաշվի առնելով մի շարք ազգային ու միջազգային մարմինների գործնական փորձը և հենվելով այս ոլորտում աշխատող փորձագետների փորձի վրա: Ուղեցույցի նպատակն է օգնել մշտադիտարկում իրականացնող մարմիններին և հզորացնել նրանց կարողությունները, որպեսզի արդյունավետ կերպով այցելեն այն հաստատությունները, որտեղ պահում են երեխաներին՝ մշակելով կիրառական գործիքներով հագեցած քայլ առ քայլ մոտեցում, որը կուղղորդի, թե ինչպես պետք է այց կազմակերպել և որ խնդիրները պետք է ուսումնասիրել: Իմ կարծիքով, այս Ուղեցույցը պետք է լինի յուրաքանչյուր այնպիսի կազմակերպության գործիքակազմի մաս, որը մտադիր է արդյունավետ մշտադիտարկման այց նախաձեռնել երեխաներին ազատությունից զրկման վիճակում պահող ցանկացած հաստատություն»:

Հափված Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) նախագահ
Միկոլա ԳՆԱՏՈՎՍԿՈՒ առաջնորդող խոսքից

Ֆինանսական աջակից՝

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Համաֆինանսավորողներ՝

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Houtman

ONE
OFFICE DE LA NAISSANCE ET DE L'ENFANCE

Loterie Nationale

Այս թարգմանությունն ու հրատարակությունը պատրաստվել են Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և այն ոչ մի ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Defence for Children
DCI-BELGIUM

www.childrensrightsbehindbars.eu